

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 11 - 12  
NOVEM.- DECEMB.  
1930  
PARIS (France)

## «ՀԱՅ ՑԵՂԱՓՈՒԼԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

### ՔՐԻՍՏԱՓՈՐԻ

Յ ա ր՝ ա տ հ ռ կ ո Ւ ռ  
— յանախ եւ երկար  
ժամանակ գուցէ անյաջող՝  
չնայած երեքմն նոյնիսկ  
իր լայն ծաւային,— անա  
թէ ուր է մեր փրկութեան  
բանալին : Պահպանե՛մք,  
շարունակե՛մք կռիւք, որ-  
պէսզի լայնամայ, ընդար-  
ձակի եւ ընդարձակելով՝  
յարատեւի — անա զէպի  
մեր նպատակը տանող մի-  
ակ ճանապարհը : Զշեղւե՛մք  
այդ ճանապարհից, որ  
պատճառների եւ հետե-  
ւանքների կապակցու-  
թեամբ ունի պատմութեան  
մէջ հաստատած օրէ՛նքի  
ոյժ . չշեղւե՛մք այդ միակ  
ճանապարհից, որ սփռւած  
է յուսատու ապագայի գը-  
րաւիչ նարկիներով...



### ՄՏՔԵՐԻՑ

Պատուի է հարկուոր  
բարոյեանքի վրա այն կամ  
այն աւագակապտոյ կամ-  
բով գծւած սահմանները,  
չնքել է հարկուոր այն  
աշխարհագրական ներկե-  
րը, որոնք մեզ բաժանում  
են իրարից եւ որոնք առ-  
հասարակ մշտական չեն,  
իսկ երբեմն շատ կարճա-  
տեւ են լինում : Ո՛չ մի  
բանութիւն, ո՛չ մի հալա-  
ծանք, ո՛չ մի ստեղծ չէ  
կարող բաժանել մի ժողո-  
վուրդ, եթէ նա, տոգոր-  
ւած ընդհանուր շահերի  
գիտակցութեամբ, ունի  
նաեւ կուելու անասան  
*վճարակաւորութիւն* եւ  
կապւած, *միացած է* դա-  
րերով սնւած ու պահպան-  
ւած ընդհանուր բնագը-  
նի ու զգացմունքների  
առողջ զարկերակով :

### Հ. Յ. Դ.

## ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

### ԸՆԿԵՐՆԵՐ.

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲՈՂՈՐԵՑ ԱՐԳԷՆ ԻՐ ԳՈՑՈՒԹԵԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԸ:

ԱՆԽԱՌՆ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՆՔ ԶԳՈՒՄ՝ ՎԵՐՅԻՇԵԼՈՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԳՈՒՂ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ ԱՅՍ ՓՈԹՈՐԿԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ:

ՀՊԱՐՏ ԵՆՔ ՆՐԱՆՈՎ. ՈՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԱՒԱՆԴՆԵՐԻՆ ՀԵՏԵԼՈՎ՝ ԿԵՆԴԱՆԻ ԳՈՐԾՈՎ ԱԶԳԱՑԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԵՐՇՆՁԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ, ՈՐ, ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՎ ԲԱԺԱՆ-ԲԱԺԱՆ ԵՂԱԾ ԵՒ ՅԱՐԱՆԻԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՊԱՌԱԿՏԻԱԾ, ԿՈՐՑՐԵԼ ԷՐ ԻՐ ԱԶԳԱՑԻՆ ԴԻՄԱԳԻԾԸ ԵՒ ԱԶԳԱՑԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ:

ՀՊԱՐՏ ԵՆՔ, ՈՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՎ ՈՒԿՆՈՑԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՒԱՆԴՆԱԿԱՆ ՔԱԶԱՍՏՐՏՈՒԹԻՒՆՆ ԸՆԻ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ, ՈՐՈՆՔ ԲԱԶՄԱԴԱՐԵԱՑ ԱՆԱԶԱՏ ԿԵԱՆՔԻ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԽԱՄՐԵԼ ԷՆԻ՝ ՏԵՂԻ ՏԱԼՈՎ ՍՏՐԿԱԿԱՆ ՄԻ ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ, ՈՐ ԹԱՐԳՄԱՆԻՈՒՄ ԷՐ ԻՔՐԵՒ ՎԱԽԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՐ ԲՈՂՈՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԻ ՄԷՋ ԱՐԳԱՀԱՏԱՆՔ ԱՌԱՋ ԲԵՐՈՒՄ ԴԷՊԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ:

ՀՊԱՐՏ ԵՆՔ, ՈՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱԾԱՆՐ ԲԵՌՆ ԻՐ ԹԻԿՈՒՆՔԻՆ ԱՌԱՍ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱԶՆԻԱԳՈՅՆ ԱՆՁՆԱԶՈՂՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ ՎԱՐԱԿԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՈՐ ԶԱՐԶՈՒՄ, ԳԾԵՒԻ ԵՒ ՇԱՀԱՄՈՂԻ ՀԱՄՔԱԼ ՈՒՆԷՐ ՕՏԱՐՆԵՐԻ ԱԶԳՈՒՄ: ԱՅՍՕՐ ՊԱՐԾԱՆՔՈՎ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՊՆԴԵԼ, ՈՐ ԶՈՂԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԵԱՄԲ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՈՋ ՄԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ ՅԵՑ ԶԷ ՄՆՈՒՄ:

ՀՊԱՐՏ ԵՆՔ, ՈՐ ՕՏԱՐ ԼՈՒԾԻ ՏԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳՎԱՓԱՐԸ ՄՈՌԱՑԱԾ ԵՒ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՑՐԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՇՆՈՐՀԻՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԽՈՆՋ ԶԱՆՔԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆԱՊԷՍ ՀԱՍՈՒՆԱՑԱԾ Է ՄԻՆՁ ԱՅՆ ԱՍՏԻՃԱՆ, ՈՐ ՆԱ՝ ԶՆԱՑԱԾ ԻՐ ԱՅՍՕՐԻԱՑ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ, ԶՆԱՑԱԾ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԲՈՂՈՐ ՍԱԳՐԱՆՔՆԵՐԻՆ՝ ԿԱՌՁԱԾ Է ՄՆՈՒՄ ՄԵՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅՐԵՆՔԻ ՈՒ ՄԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՆԸՇՈՂ ԴՐՕՇԱԿԻՆ:

ՀՊԱՐՏ ԵՆՔ, ՈՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՍԵՐՄՆԱՑԱՆ ՀԱՆԴԻՍԱՑԱԽ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՌԱՄՎԱՎԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԳՎԱՓԱՐՆԵՐԻ ՈՋ ՄԻԱՑՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՆԳԻԱԾՆԵՐԻ, ԱՑԼԵՒ ՄԵՐՁԱՌՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆԵՐԻ ՄԷՋ: ԱՅԻ ԳՎԱՓԱՐՆԵՐՈՎ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑԱԾ ԱՊԱԳԱՑ ՄԱՐԴԱՆՈՒԹԻՒՆԸ ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ ՊԷՏՔ Է ՅԵՇԷ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՅՍ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ԴԵՐԸ ԱՍԻԿԱՆ ԽԱՒԱՐԻ ՄԷՋ ԽԱՐԽԱՓՈՂ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ:

ԵՒ ԵՐԻՑՍ ՀՊԱՐՏ ԵՆՔ — ՄԻ ԿՍԿԾԱԼԻ, ԲԱՅՑ ԱՐԴԱՐ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ — ՈՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ, ԻՐ ՎԷՋ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄՄԱՐ, ԿԱՆԳ ԶԱՌԱՒ ՈՋ ՄԻ ԶՈՀԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ: ՆՐԱ ՔԱՐՈՋԸ ԳՈՐԾԷ ԷՐ: ԳՈՐԾԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԷՐ, ՈՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԼԱՒԱԳՈՅՆ ԱՆԻՄԱՆԵՐԻՆ ԲԱՐՁՐԱՑՆԻ ԶՈՂԻ ՍԵՂԱՆԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻ ՎԱՅՐԿԵԱՆ ԱՆԳԱՄ ՁԵՐԵՐԱՑ ԶՈՂԻ ՄՇԾՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ...

վերցնելու և Վեր ԲԱՀՎԻՐԱՆԵՐԻՆ, Մեր ԲԱԶՄԱՏԵՍԱԿ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ, Մեր ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ. ՆՐԱՆՑԻՑ ՔԱՆԻՐՄՆ ԵՆ ԻՐԵՆՑ ՄԱՀԱԿԱՆՑՈՒՆ ԿՆՔԵԼ ՓԱՓՈՒԿ ԱՆԿՈՂՆԻ ՄԷՋ: ՇԱՏ ՔԶԵՐԸ: ՄՆԱՑԱՍ ԲՈՂՈՐԸ ՆԵՐԿԱՑԱՆՈՒՄ ԵՆ ՄԵՋ ԱՅՍՈՐ ՆԱՀԱՏԱԿԻ ԼՈՒՍԱՊԱՍԿՈՎ՝ ԻՐԻՇԻ ԳԸՆ-ԴԱԿԻ, ՄՐԻ, ԿԱՌԱՂԱՆԻ ԿԱՄ ԲՈՒՄԻՐԻ ԶՈՀԵՐ... ԻՍԿ ԱՅՆ ՄԻՒՍ ՔԻՉԵՐԸ, ՈՐՈՆՔ ԼԶՈՎԵԼՈՎ ԻՐԵՆՑ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ, ԲՆԱԿԱՆ ՄԱՀՈՎ ԵՆ ՄԵՌԵԼ, ԻՆՁ Է ԵՂԵԼ ՆՐԱՆՑ ԶՐԿԱԼԻՑ, ԶԱՐՔԱՇ ԵՒ ՎՏԱՆԳԻՆԵՐՈՎ ՊԱՇԱՐԻԱԾ ԿԵՆՔԸ, ԵԹԷ ՈՉ ԶԱՐԱՏԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ...

ՀԱՄԱՐՁԱԿ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՍԵԼ, ՈՐ ԱՇԽԱՐՀԻՍ ՎՐԱ ՁԻ ԵՂԵԼ ԵՒ ՉԿԱՑ ՄԻ ԵՐԿՐՈՐԳ ԿՈՒՍԱԿ-ՑՈՒԹԻՒՆ, ՈՐ ԱՅՆՔԱՆ ԶՈՀԱՐԵՐԱԾ ԼԻՆԻ ԻՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՔԱՆ ԶՈՀԱՐԵՐԵԼ Է ԴԱՇ-ՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ:

ԱՅՍ ԱՆՈՐԻՆԱԿ, ԶԱՐՀՈՒՐԵԼԻ ԶՈՀԱՐԵՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏԱՒՈՐԵՑՆՈՒՄ Է ՄԵՋ, ԸՆԿԵՐՆԵՐ: ՆԱ ՊԱՐՏԱՒՈՐԵՑՆՈՒՄ Է ԱՄԵՆՔԻՍ ՊՐԿԵԼ ՄԵՐ ՆԵԱՐԴԵՐԸ, ՄՐԵԼ ՄԵՐ ՄԻՏՔԸ, ՍԵՂՄԵԼ ՄԵՐ ԲԸ-ՌՈՒՆՑՔՆԵՐԸ ԵՒ ԱՌԱՋ ԸՆԹԱՆԱԼ ԴԷՊԻ ԱՅՆ ԼՊԱՏԱԿԸ, ՈՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐՆ ՈՒ ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԼԱՒԱԳՈՑՆ ԶԱՒԱԿՆԵՐԸ ՎԱՐ ԴՐԻՆ ԻՐ ԵՆՑ ԹԱՆԿԱԳԻՆ ԳԼՈՒԽՆԵՐԸ: ԵՒ ՄԻՆՁԵՒ ՈՐ ԱՅՍ ՆՊԱՏԱԿԸ ԶԻՐԱԿԱՆԱՆԱՑ, ՄԻՆՁԵՒ ՈՐ ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐ ՀԱՑՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ ԱԶԱՏԻԱԾ ՁԼԻՆԻ ԱՄԷՆ ԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՑԻՆ ԵՒ ՏՆՑՆՍԱԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐԻՑ՝ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՁԷ ԿԱՐՈՂ ՑԱԾ ԴՆԵԼ ԻՐ ԶԷՆՔԵՐԸ: ԿԻՍԱԿԱՏԱՐ ԶԳԵԼ ԵՐԿՈՒ ՀՈՑԱԿԱՊ ՍԵՐՈՒՆԿԵՐԻ ԱՐԻՒՆՈՎ ԿԵՐՏԻԱԾ ԳՈՐԾԸ, ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՈՉ ՄԻԱՑՆ ԴԱՒԱՃԱՆԵԼ ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐԴԱՐ ԴԱՏԻՆ, ԱՅԼ ԵՒ ՆՈՐԻՑ ՄԵՌ-ՑՆԵԼ ՄԵՐ ՆԻՐԱԿԱՆ ՄԵՌԵԼՆԵՐԻՆ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵՍԿԻ ԱՌԹԻՒ ԶԵՋ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԱՆՀՈՒՆ ԵՐԱՌՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՆՀՈՒՆ ԵՐԿԻՂԱԾՈՒԹԵԱՄԲ ԳԼՈՒԽ ԽՈՐԱՐՀԵԼՈՎ ՄԵՐ ՄԵԾԱՆՈՒՆ ԵՒ ԱՆԱՆՈՒՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԱՌՋԵՒ՝ ՄԵՆՔ ԹԱՆՈՒՆ ԲՈՂՈՐ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒՄ ԵՆՔ ՆՐԱՆՑ ՀԱՆՆԻՐԱԼԵԱՆ ՈՒՌՏԸ ԱՅՆ ԲՈՂՈՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԾԱՌԱՑԱԾ ԵՆ ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐԴԱՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ԴԱՇ-ՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԴԷՄ:

ԱՅԳ ՈՒՌՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ, ՄԵՋ ԱՅՍՈՐ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՆԵՐԿԱՑԱՆՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԱՅՆ ՀԱԶԱՐԱՒՈՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԻՐԻՇԻ ԿԵՆԿԱՆԻ ԶՈՀԵՐ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ ԹԻՐԻՔԱԿԱՆ ԲԱՆՏԵՐՈՒՄ, ԲՈՂ-ՇԵՒԿԵԱՆ ԶՆԿԱՆՆԵՐՈՒՄ, ՍԻՔԻՐԻ ՍԱՌՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՒ ԱՅԼՈՒՐԵՔ: ՄԵՆՔ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄՐ ՏԱԳԻՆ ՈՂՋՈՑՆԵՐՆ ԵՆՔ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԱՅՍ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ՝ ՎՍՏԱՀ, ՈՐ ՆՐԱՆՔ ԻՍԿԱԿԱՆ ՑԵՂԱՓՈՒՌԱԿԱՆԻ ՎԱՑԵԼ ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԿՐԵՆ ԻՐԵՆՑ ԽԱՉԸ, ԻՆՁՊԷՍ ՈՐ ԿՐԵԼ ԵՆ ՄԻՆՁԵՒ ՀԻՄԱ:

ԱՅԳ ՈՒՌՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԷՔ ԿԱՆԳԵԱԾ ԵՒ ԴՈՒՔ, ԵՐԿՐԻ ՈՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՈՐԾԻՉ ԵՒ ՇԱՐՔԱՑԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ: ԾԱՆՐ, ԽԵՍՏ ԾԱՆՐ ՕՐԵՐՈՒՄ ԶԵՋ Է ԱՆՑԵԼ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԻՆԱՆՆԵՐԿ ԴՐՕՇԸ: ԴՈՒՔ ՊԷՏՔ Է ԿՐԷՔ ԱՅԳ ԴՐՕՇԸ ՈՉ ՄԻԱՑՆ ՊԱՐԾԱՆՔՈՎ ԱՅԼ ԵՒ ԽՈՐ ԳԻՑԱԿՑՈՒԹԵԱՄԲ, ՈՐ ՄԵՐ ՑԵՂԱՓՈՒՌԱԿԱՆ ՊԱՑՔԱՐԻ ՆԵՐԿԱՑ ԴՉԵՂԱԿ ՊԱՑՄԱՆՆԵՐԸ ՆՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՆ ԴՆՈՒՄ ԶԵՋ ՎՐԱ, ՈՐՈՆՔ ՇԱՏ ԼՈՒՐՋ ԵՒ ՇԱՏ ԱՆՁՆԻԷՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ:

ԱՅԳ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ, ԻՐ ԱՀԱՒՈՐ ՊԱՑՔԱՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԳ ՏԱՍՆԱՄԵՍԿԸ ԹԵՒԱԿՈՒՆՈՂ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ԶԵՋ ՄԻՇՏ ՊԱՍՐԱՍՏ ԳՏՆԻ: ՊԱՏՐԱՍՏ ԾԱՌԱՑԵԼՈՒ ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ ԱՅՆ ԱՆՎԵՐԱՊԱՀ ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹԵԱՄԲ, ՈՐ, ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՊԱՆԾ ԴՐՕՇԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ, ԶԵՋ ԱՒԱՆՐ ԵՆ ԶԳԵԼ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵՍԿԸ ՊԱՍԿԱԶԱՐԴՈՂ ՀԵՐՈՍՆԵՐԸ:

**Հ. Յ. Դ. Բ Ի Ի Ր Օ**

# «ԴՐՕՇԱԿ»Ն ԻՐ ԴԻՐՔԻ ՎՐԱ

Հ. Յ. Դաշնակցութեան քառասնամեակի առթիւ իր խօսքն ունի ասելու նաև «Դրօշակ»ը:

«Դրօշակ»ը, որ Դաշնակցութեան սերանն է հանդիսանում նրա հիմնադրութեան առաջին տարիներէն սկսած:

«Դրօշակ»ը, որի մէջ ամփոփւած են Դաշնակցութեան դիւցազնապատումի ամենասըրտազբաւ էջերը:

«Դրօշակ»ը, վերջապէս, որի աշխատակիցներն են եղել շատերը այն աննման հերոսներէն, որոնք Դաշնակցութեան փառքն են կազմում:

Ինչպէս բովանդակ կուսակցութեան, նոյնպէս եւ նրա Օրդանի համար, Դաշնակցութեան քառասնամեակը յօբելիանական տօն չէ, այլ նախ և առաջ մի բացառիկ առիթ՝ ոգեկոչելու այն հերոսական ղէպներն ու ղէմքերը, որոնցից կերտւած է Հայկական Ազատամարտը:

Իէպէտ որ ղէմքեր, որոնք իրենց մէջ մարմնացնելով երկու հոյակապ սերունդների անասհման հայրենասիրութիւնը, աննման անձնփրութիւնը եւ անպատում քաջութիւնը՝ սրտաբուխ ոգևորութեան և սրտայոյզ երախտադիտութեան ալբեր պէտք է հանդիսանան ոչ միայն դաշնակցականների, այլ և ամէն հայ մարդու համար, որի կրծքի տակ ազգային հպարտութեամբ առեցուն մի սիրտ է տրփում:

Անցեալի վերյիշումի հետ միասին, Դաշնակցութեան քառասնամեակը առիթ է տալիս «Դրօշակ»ին՝ իր բովանդակ կարողութեամբ արծազանգ տալու Դաշնակցութեան աննահանջ պայքարի Ուխտին:

Պայքար բոլոր արտաքին թշնամիների դէմ, որոնք ծառայած են հայ ժողովրդի ազատութեան ոգորումների ճանապարհին:

Պայքար բոլոր ներքին թշնամիների դէմ, որոնք հակայեղափոխական խօսքով եւ գործով ջանում են նորից մղել հայ ժողովուրդը ղէպի ստրկական համակերպութեան ճահիճները:

Պայքար բոլոր մութ ուժերի դէմ, որոնք հատաճական կամ յարանանական պառակտումներով ձգտում են քանդել մեր ազգային վերածնութեան շէնքը, որի հիմնական շաղախն է կազմում Դաշնակցութեան կրծքից հոսած արիւնը:

Քառասուն տարի շարունակ, Դաշնակցու-

թիւնը մղել է այս պայքարը Կենդանի ԳՈՐԾՈՎ, եւ «Դրօշակ»ը, դիւրացնելու համար այդ Գործը, ըստ ամենայնի ջանացել է մերկացնել հայ ժողովրդի դոյութեան եւ ազատութեան դէմ նիւթւած դաւերը, հիմնադրել նրանց դէմ յեղափոխական պայքար մղելու անհրաժեշտութիւնը, ուսումնասիրել այս պայքարի պայմանները եւն եւն:

Այժմ, երբ Դաշնակցութիւնը — ազգային, քաղաքական եւ հանրային նոր պայմանների մէջ — հայ ժողովրդի ազատագրութեան պայքարը դիւցազնական կորովով եւ Կենդանի ԳՈՐԾՈՎ առաջ տանելու Ուխտն է կրկնում՝ «Դրօշակ»ի վրա նոր եւ լուրջ պարտականութիւններ են ծանրանում այդ Ուխտի իրականացմանը զարկ տալու համար: — Յրել այն սեւ յուսալքութիւնը, որ վերջէն ահաւոր փլուզումները առաջ են բերել շատերի մէջ, վճռականորէն հակազդել ամէն կարգի հակայեղափոխական եւ հակաազգային տարրերին, որոնք ձգտում են օգտագործել այդ յուսալքութիւնը՝ հայ ժողովուրդը ազատագրական պայքարից շեղելու, կամ հատաճական պառակտումներով նրա ազգային կամքը անդամալուծելու համար, ուսումնասիրել Հայ Յեղափոխութեան նոր պայմանները եւ ձեւակերպել նրանցից բխող ազգային-քաղաքական առաջադրութիւնները, արծարծել Դաշնակցութեան յեղափոխական աւանդութիւնները նորահաս սերունդի մէջ եւ հասունացնել նրան քաղաքականապէս, որպէսզի կարողանայ արժանաբար բռնել նախորդ հերոսական սերունդների տեղը — ահա թէ ի՞նչ լուրջ պարտականութիւնների առաջ է դրւած «Դրօշակ»:

«Դրօշակ»ը սիրով ստանձնում է այս պարտականութիւնները, վստահ՝ որ մեր ձեռնհաս մտաւորականութիւնը, դաշնակցականի պատրաստակամութեամբ, իր եռանդուն աշխատակցութիւնը կը բերէ նրանց իրականացման համար:

Դաշնակցութիւնը կոչ է անում, որ կուսակցական բոլոր մարմիններն ու ընկերները պատրաստ կենան իրենց դիրքերում:

Դաշնակցութիւնը պէտք է պատրաստ դնի կուսակցութեան ղեկավար միտքը «Դրօշակ»ի դիրքերում:

«ԴՐՕՇԱԿ»

# ՄԵՐ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԸ

Շրջան մը, հարուստ՝ մեր նորագոյն պատմութեան մեծագոյն եղելութիւններով, որուն բովանդակութիւնը պիտի բաւէր դարերու պատմական ամառութիւնը լեցնելու: Շրջան մը, յորդ արիւնով ու խանդավառութիւնով, ուր, սակայն, պարտութեան սուգը և յաղթանակին փառքը հաւասարապէս ներշնչող եղան խոյանքին ու ներումին համալըով:

Հպարտ ենք մենք, որ լայնք ու խորք տւինք այդ շրջանին:

Քառասուն տարիներ մենք մտրակեցինք մեր պատմութեան հրեղէն նոսրը, որ անարգած ժողովուրդ մը սարկութեան զետնաբարձ սողակումներէն արեւմեակ ճախրանքներու փառքին հասցուց:

Մահամբձ ժողովուրդի մը զօսպած երակներէն վերագարձուցինք մոռցած առաջինութիւններու զնահատութեան, բարոյական արժէքներու խանդավառութեան:

Յեղափոխութեան փրփրերախ ալիքով ցեղին հողին մաքրեցինք իր դարաւոր ապակնութիւններէն ու ճշւած կամբերու մակնթացութիւնը շղթայագրծեցինք՝ ադատադրութեան սրբազան բարիքներուն համար:

Ինքնամանալութեան սարսուռը հաղորդեցինք մենք ընդարացած հողիներուն և այլասերած ու անկրպարան զանգաձը դիտակից ազգի մը վերածեցինք:

Այդ Ազգը...

Քառասուն տարիներ անիկա տառապեցաւ ապտութեան աղետալ երկունքով և ոյժ ու իմաստութիւն արձակեց իր արզանդէն՝ մեր պատմութեան ամենէն

յաւազին, ըայց ամենէն փառայեղ շրջանը կերտելու համար:

Քառասուն տարիներ անիկա պայքարին խողքը նախընտրեց դիւրահաճ խաղաղասիրութեան մը վճարանգնեղէն և համամարդկային պատմութեան յանձնեց դիւցազնութեան ու զոհարերութեան ամենէն դրախչ օրինակները:

Քառասուն տարիներ անիկա խիզախեց խաւարակուտ բռնակալութեան մը հարածներուն դէմ և թըքնած արդարութեան հատուցումը պահանջեց արիւնի ուժով:

Ու քառասուն տարիներ պատմութեան իր տուրքը տւաւ պատմութեան և մարդկութեան անհաղորդ խղճմտանքին առջև սուրբորէն թափեց զոհերուն ամենէն ընտիրներու արիւնը:

Մեր զոհէ՛րը...

Ազգ մըն են անոնք, քանակով ու որակով ու տակաւին, անաւարտ պայքարի մը հրձիղները կը մնան: Ազատագրութեան ճամբուն անհանգիստ մեռելներն են անոնք, որ տակաւին, չիբաղործած տենչերու կըրակովը կը տառապին:

Փառք իրենց՝

Որովհետեւ՝

Անոնց մահը թխադրական եղաւ անխուսափելի զոյամարտին սրբազան զինուորագրութեանը համար և անոնց պարտութիւնը նոր խոյանքներու մենակէտը եղաւ նորերուն համար:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԵՆԱՎԱՍՏՐԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

# Պիտի ապրի Դաշնակցութիւնը

Այս տարի լրանում է մեր կուսակցութեան գոյութեան քառասուն տարին: Ժողովուրդների պատմութեան մէջ մեծ թիւ չէ դա, սակայն, մեր ժողովրդի պատմութեան համար մի նշանակալից ժամանակամիջոց է և լաւագոյն մի երաշխիք Դաշնակցութեան կենսունակութեան:

Չափազանց շատ են այս քառասնամեակի ընթացքում հայ ժողովրդի գլխով անցած աղետները, որոնք նրա բնաջնջման սպառնացել են, սակայն, միշտ էլ բախելով Հ. Յ. Դաշնակցութեան պողպատէ պատնէչին վրիպել են իրենց նպատակից:

Չափազանց շատ են այս քառասնամեակում մեր ժողովրդի խիզախ խոյանքները ազատութեան պայքարի դժուարին ճամբին, որոնց ոգի էր ներշնչում Հ. Յ. Դաշնակցութիւնը իր ռազմական կարողով և եղակի

անձնւիրութեամբ:

Մեր կուսակցութիւնը կարողացաւ կերտել հայ աշխատուոր զանգաձաների քաղաքական իղէշալը և դժել նրա հերոսական գործի ուղին: Ստեղծեց մի հատիկ մտայնութիւն և մի հատիկ կամք աշխարհի բոլոր շայրերում ցրւած հայկական բեկորները համար և կապեց բոլորին մայր երկրի հետ, ուր նա գործադրում է իր ճիգերի մեծադոյնը:

Դաշնակցութեան զազախարական շնչով և անձնէր ջանքերով վերացան բռնապետների ստեղծած սահմանները, որոնք անշատելով և մասնատելով մեր փոքրիկ ազգը ձգտում էին մեզ դարձնել թոյլ և անգոր մեր պայքարի գործում:

Դաշնակցութիւնն էր վերջապէս, որ միատեղելով բոլորի կամքը հայ ժողովրդի անօրինակ պայքարին

տալիս էր անհրաժեշտ ձևը, ուղղութիւնը և հայթաթում լաւագոյն միջոցները:

Այսօր, երբ մեծագոյն աղէտներից ճղակոտոր ցրած ենք ազգովին Ատլանտանի ու Ոսղազականի ափերից մինչև արաբական անապատները, դարձեալ Դաշնակցութիւնն է, որ հողպպէս միատեղում է բոլորիս հայ ժողովրդի մեծագոյն իրէալի՝ անկախ հայրենիքի գաղափարական դրօշի տակ:

Պիտի ապրի՝ Դաշնակցութիւնը:

Սա ոչ միայն մի պարզորոշ ցանկութիւն է, որ թրջում է այսօր բոլորիս սրտից ու զիտակցութիւնից, այլ մի հզօր թելադրանք, որ բխում է հայ ժողովրդի կամքից:

Պիտի ապրի՝ Դաշնակցութիւնը, որովհետև այսօր նա նոյնքան խոր հաստօք է ներշնչում մեզ մեր պայքարի արդարութեան և մեր վերջնական յաղթանակի մասին, որքան ներշնչում էր քառասուն տարի առաջ:  
Հ. Յ. Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

### ՄԻՇՏ ՆՈՅՆ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄԱՐ, ՄԻՇՏ ՆՈՅՆ ԿՈՐՈՎՈՎ

Ո՛չ մէկ ժողովուրդ դարերու պատմութեան ընթացքին, ճանչցեր է ցաւը որ մերն է եղած և այսօր տակաւին մերը կը մնայ ժառանգական ուխտի մը խորհուրդով ու ծանրութեամբ:

Փոքր ազգ ենք և ունենք դատ մը առեղծածի բարդութեամբ Գործիւն ճանգոյց մը, որ աշխարհի հզօրացոյն պետութիւնն իսկ պիտի փորձէր կտրելու լո՛կ Ալեքսանդրի սուրով:

Ու ո՛չ մէկ ժողովուրդ այնքան զո՛ւ տւաւ բոլոր տեսակի բռնութեանց որքան հայութիւնը:

Ո՛չ մէկ ժողովուրդ իր դուրսից և ուխտի համար այնքան մատաղ կտրեց որքա՛ն հայութիւնը:

Եւ իբր հարագատ ծնունդը հայ ժողովուրդին, ո՛չ մէկ կուսակցութիւն այնքան զոհեր ձգեց ազատութեան ճամբուն վրա, որքան Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ իր նպատակներու մաքրութեամբ ու նւիրականութեամբ, իր գործունէութեան գերագանց պահանջներով, նախ համարատու մը հանդիսացաւ ցեղին լաւագոյն ընդունակութիւններուն և ազնւագոյն ձգտումներուն:

Հայ հողիէն Դաշնակցութիւնը սրբեց դարաւոր գերութիւններու ժանգը:

Եւ այսօր, երբ քառասուն տարիներու փորձառութեամբ բեռնաւոր, կը ներկայանանք պատմութեան դատաստանին, կրնանք անցեալի հպարտութեամբ ու վաղւան մտահոգութեամբ, լսել անոր վճիռը:

Հայ կեանքի պայմաններուն մէջ, քառասուն տարին ինքնին արդէն հերոսութիւն մըն է տակաւին

կանգուն և միշտ կենսունակ կուսակցութեան մը համար:

Այսքանն իսկ պիտի բաւէր յաղթանակի դափնին հիւսելու: Բայց եթէ, քառասնամեակի դրան առջև, չենք յամենար փառքի, հերոսութեան ու գերմարդկային գոհարութեան դրազներու յիշատակումով, որովհետև, կը տեսնենք,— Գործը կը շարունակի:

Ու մեր պերճափառ ու արիւնալի անցեալէն՝ կառնենք դասը ու կը քայլենք անոր հպարտութեամբ:

Ու Գործը, որ սկսած էր գալիքին համար, կը հետապնդէի անցեալին ուժով ու ներկայի գործադրութեամբ և այս անգամ, աւելի յանդուգն ու անողոք, կը պահանջէ աւելի կամք, աւելի կորով, աւելի արթնութիւն ու յաւատ գոհողութիւն՝ նոյնքան և աւելի՛:

Քառասուն տարիներ անընդհատ քալեցինք անվրհատ՝ արիւնի ճամբէն, որ ճակատադրի անողոք խաղերով՝ մեր առջև բացաւ այլամերժ աշխարհներու քառուղիները:

Իայց, եթէ պէտք է զեռ քանի մը անգամ քառասուն տարիներ, պիտի քայլենք նոյն նպատակին համար ու միշտ նոյն կորովով:

Եւ այս զիտակցութեամբ ու պատրաստութեամբ, կը դռնենք՝

Հայ ժողովուրդի փրկութեան համար՝  
Կեցցե՛ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը

Հ.Յ.Դ. ԵՐԻՐՈՂԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

### Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՈԱՍՆԱՄԵԱԿԸ

«Նա է արժամի ազատութեան և կեանքի, ով ամէմ օր կուով մտնում է նրանց»:

Ճիշտ քառասուն տարի առաջ, հայ ժողովրդի ֆիզիքական և ազգային դուրսից հարցը հարկադրեց մեր մեծ ռահիվրաներին պարզել ըմբոստութեան դրօշակը՝ հիմ դեկրով Հայ Յեղափոխական Դաշնակցութեան:

Ընթացք քառասուն տարւայ, նա եղած է մարմնա-

ցումը հայ ժողովրդի ազատագրական ճիգերի: Ընթացք քառասուն տարւայ, հայ ժողովրդի ծոցէն ծնւած այդ մարտական կուսակցութիւնը, նշանաբան ընտրելով «Ազատութիւն կամ մահ»՝ անասան վճռականութեամբ պայքարել է հայ ժողովրդի ազատագրութեան համար և հասցրել նրան 1918թ. Մայիս 28-ին, որի ակնկալու-

Թեամբ հերոսաբար նահատակեցան հայ ժողովրդի լուսազոյն և անձնէր զաւակները:

Ներկայիս, երբ հայ ժողովրդի նւիրական նաճու՝ մը՝ անկախութիւնը՝ ոտնահարած է Պոնտօսիտական» և «հանրապետական» րանակալներու կողմէ, երբ մեր երկիրը կապրի ծանր տառնապի օրեր, չ. Յ. Գալ-նակցութեան պայքարի կիզակետը է և կը մնայ հայ ժողովրդի անկախութիւնը:

Թող Դաշակցութեան քառասնամեայ գործունէութիւնը, սրբագործւած բիւրաւոր նահատակների ա-

րիւնով, ներշնչման դաս լինի մեր նոր սերունդի համար, անկախութեան պայքարի յորձանքի մէջ նետուելու՝ հայրենիքն ազատելու վճռականութեամբ կամ նրա համար մեռնելու պատրաստակամութեամբ:

Այս վեճ պայքարի ճանապարհին Դաշակցութիւնը միշտ պատրաստ կը գտնէ Կարպատի շրջանի ընկերներին և հայրենասէրներին:

Չ. Յ. Դ. ԿԱՐՊԱՏԻ  
ՄԵԿՈՒՍԻ ԿՈՄԻՏԷ

ՅԱՐԳԱՆՔ ԳԱՂԱՓԱՐԻԴ, ՅԱՐԳԱՆՔ ՀԵՐՈՍՆԵՐՈՒԴ

«Երկներ երկին և երկիր, երկներ և ծիրանի ծով»...

Դարերու տառապանքէն, արեան ծովերէն ու բլրազացած կմախքներու մէջջն ծնունդ առած, ամբողջ քառասուն երկար տարիներ առաջնորդեցիր մարտիրոս ցեղը դէպի ազատութիւն, դէպի մի վարդապետն արշալոյս: Այդ սրբազան իրէկալը բարձր բունած ազատութեան սեղանին է խնդիր, որպէս ողջակէզ տւիր զաւակներուդ ամենէն ընտրանին:

Քու ծննդեանդ առաջին օրերուն իսկ, խիզախ ու յանդուգն քայլերով եղար սարսափը անազորոյն թըշնամոյն, և պահապան հրեշտակ հայ շինականին:

Սարկացած ցեղիդ հողուն մէջ անթեղւած վրէժի սուրբ հնոցէն հոմերեան հերոսներ հանցիր, որոնք հայ ժողովրդի բազմաթիւ ու բազմադոյն բորենիներուն դէմ անհաւասար կռիւններու մէջ ինկան: Ինկան, բայց չմեռան. անոնց կրծքերէն ժայթքած արեան իւրաքանչիւր շիթերէն հազարներ դուրս եկան աւելի՛ անվահեր, աւելի՛ անյաղթելի, որոնք վերջապէս ծունկի բերելով թշնամիներէդ ամենէն ոխերիմը՝ յարգանք պարտադրեցին դէպի երէկւայ «ուսան»:

Դո՛ւն եղար մեր վերջին կէս դարու փառայեղ ու հերոսական պատմութեան դիւխաւոր դերակատարը. առանց զեղի անապատ և ամայնութիւն պիտի տիրէր հոն:

Հայ կրօնական և միշտ գթութիւն աղերսող համայնքէն, ազնիւ և ինքնավստահ ազգ մը կերտելով, անոր հողուն խորը հայրենիքի դաղափարը դրօշմեցիր:

Ու երջանիկ օր մըն ալ եռազոյնը տնկելով մայր Հայաստանի կրծքին՝ հիմը դրիր հայ պետականութեան:

Եղար մարմնացումն ու արտայայտիչը ցեղիդ լուսազոյն իղձերուն, պալտպանը անոր արժանիքներուն ու սրբութեանց:

Քու անհաւասար ու անեղ ոգորումներուդ ստեն, ունեցար յաղթութեան ու պարտութեան, փառքի ու

յուսահատութեան օրեր, սակայն, երբեք մի օր չդաւաճանցիր ջու պատմական առաջելութեանդ: Մնար ժողովրդին ծոցէն, ապրեցար անոր հետ, միշտ պատրաստ մեռնելու անոր համար:

Յարգանք ջու սրբազան դրօշիդ, անթիւ հերոսներուդ...

Ու այսօր, երբ քառասուն տարւայ չէ՛մին կանգնած, յետադարձ ակնարկով մը կուզենք շափել այն հսկայ անլրպետը, զոր անցաւ մեր աւազ սերունդը, այն երկար ու դժւարին ճանապարհը, զոր վիճակած է մեզ քայլելու, մեր ներսը ո՛չ վախի, և ո՛չ ալ յուսահատութեան զգացումը կապրի. այլ աւելի խիզախ ու զրահաւորւած ցեղին անլուր տառապանքէն, պիտի առաջնորդենք զայն մինչև փրկութեան նաւահանգիստը:

Տե՛ս, ահա դունդադունդ կուզան զինուորադրելու դրօշիդ տակ: Նոր սերունդն է, որ կուզայ խտացնելու շարքերդ, փոխարինելու ինկածներուն, յոգնածներուն և յուսալքածներուն: Այս այն սերունդն է, որ անապատին մէջ կենաց առաւ ու արեան ճապողիքներու մէջ աչքերը բացաւ: Ան համակ մարմնացումն է ցեղին դարերու վրէժին, ու իր պատմական մեծ դերին խոր գիտակցութիւնը ունի:

Քալէ՛ անյողողող, ու միշտ կենսունակ, ջու սըրբազան ճարէչդ ո՛վ մարտական մեծ կուսակցութիւն: Չորս ծաղերուն ցրւած ցեղիդ բեկորները ակնկառոյց լեզ կը սպասեն, ջու անյաղթ դրօշիդ ապաւինւած՝ կուզեն օր մը մայր հայրենիքին մէջ վերաշինել իրենց քանդւած օճախները:

Մեծ է ու սրբազան ջու պատմական միախառն: Յարգանք ջու մեծ դաղափարիդ, յարգանք բոլոր մեծ ու անանուն հերոսներուդ:

Չ. Յ. Դ. ՈՎԱՍԻՍԻ  
ՄԵԿՈՒՍԻ ԿՈՄԻՏԷ

# Յ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Ա. ՄԱՆԻՓԵՍԸ

1890 թ .

Հայեր,

Այսօր հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում: Դարերից է վեր սարուկ թիւրքահայաստանը ազատութիւն է պահանջում:

Հայը, որ դեռ երէկ շինքը ծուծ Եւրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզելով, որ օտարի վրա դրած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...

Դարերով ճնշուել է հայ ժողովուրդը թիւրք բռնապետներին լծի տակ: Դարերի ընթացքում ցանկ է, բայց պտուղը երբեք չի վայելել. աւագակ տիրողը յափշտակել է:

Դարերի ընթացքում անարգել են նրա սրբութիւնները, բայց հայը կրել է այս բոլորը, կրել է համբերութեամբ, շարունակելով ողողել հայրենի հողը իր քրտինքով... Դարերի ընթացքում հայը կարծէք թէ կամեցաւ ապացուցանել մարդկութեան, թէ կարելի է ազատութիւն ձեռք բերել կուլտուրական ճանապարհով: Քաղաքակիրթ Եւրոպան խոստացաւ վերջ տալ թուրքերի բարբարոսութիւններին Հայաստանում:

Սակայն, անցան տարիները տարիների յետևից և հայերի դրութիւնը իրենց հայրենիքում ոչ թէ միայն չլուացաւ, այլ աւելի ծանրացաւ և այժմ միանգամայն անտանելի, դժոխային է դարձել: Հայի պէս համբերող ազգն անպամ անկարող է շարունակել իր դրութիւնը այդպիսի երկրում:

Բայց համբերութիւնն էլ ունի իր սահմանը: Գազաթնակէտին հասցրած հայածանցները վերջապէս սթափեցրին հային. այսօր նա վճռել է կամ մեռնել կամ ազատել: Եւ ահա էջգրումը և ապա Կ. Պոլիսը աներկիւղ բողոքում են յանրապետութիւնների դէմ. հայը այլևս չէ խնդրում, այլ պահանջում է, և պահանջում է գէնքը ձեռնի:

Սուլթանը սարսափահար է. թուրք կառավարութիւնը գլուխը կորցրել է:

Այսօր Եւրոպան իր առաջ տեսնում է մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները:

Այդ ժողովուրդը հասկացել է, որ իր ոյժը իր մէջ է. երէկայն սարուկ, համբերող հայաստանցին այսօր յեղափոխական է դարձել:

Հայոց հարցի յետաձգելը այլևս անկարելի է: Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պէտք է դրադեցնի ամէն մի լուրջ հայրենասէրի, — այդ բոլոր յեղափոխական ուժերի միութեան և դաշնակցութեան հարցն է:

Այդ յեղափոխական պաշտպարի դրօշակակիրն է «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը», որ ստանով դիմում է բոլոր հայերին և հրաւիրում է կանգնել մի դրօշակի տակ:

«Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը» թէև նոր է հանգէս գալիս իբրև կազմակերպութիւն, բայց նա վաղուց դործող խմբերի միութիւնն է. խմբերի, որոնք նոյն իսկ հայ ժողովրդի ձգտումները ծնունդ են: «Դաշնակցութիւնը» ձգտելու է միացնել բոլոր ուժերը, կապելով իր հետ բոլոր կենտրոնները: Նպատակ դնելով թուրքաց-Հայաստանի քաղաքական և անտեսական ազատութիւնը. «Դաշնակցութիւնը» մտել է այն կուռի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչև վերջին արեան կաթիլը կուռի հայրենիքի ազատութեան համար:

Միանանք ամէնքս ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրօշակը. նա, ով երես կը դարձնի ժողովրդից և չի հետևիլ նրան, նա այդ ժողովրդի հակառակորդն է, նրա թշնամին է...

Ուրեմն, եղբայրներ, միանանք յանուն սուրբ գործի ընդհանուր թշնամու դէմ:

Եւ դուք, երիտասարդներ, միշտ և ամէն տեղ վրսեմ գաղափարների պաշտպաններ, միացէ՛ք ժողովրդի հետ:

Եւ դուք, արեղարդ ծերունիներ, ոգևորեցէ՛ք ձեր որդոց և օգնեցէ՛ք նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ:

Եւ դուք, հարուստներ, բաց արէ՛ք ձեր քսակները, գէնք հայթայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ: Եւ դու, հայ կին, ոգի ներշնչիր գործի մէջ:

Եւ դու, հայ հոգևորական, օրհնիր ազատութեան գինւորներին...

Սպասելու ժամանակ չէ...

Համախմբուե՛ք, հայեր, և քաջութեամբ առաջ տանէ՛ք հայրենիքի ազատութեան սուրբ գործը:

«ՀԱՅ ՅԵՂՎՓՈՒՅԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»



# ԿՈՒԻՆ ՍԿՍՈՒԱԾ Է


Դ Ր Օ Շ Ա Կ - Ի

ԹՌՈՒՑԻԿ ԹԵՐԹ

1891

Ն. Յ. Դաշնակցութիւնը, հրատարակելով այս քերթը, յայտնում է, որ մօտիկ ապագայում փանթոնայ իր օրգանը «Դրօշակ» անունով, ուր, ի միջի այլոց, կը պարգտարանի Դաշնակցութեան ծրագիրը:

Կուի ազատութեան համար, կուի գոյութեան համար: Մի կողմից դարերով տանջւած հայ ժողովուրդը, միւս կողմից, ոտից ցլուրէ ապականւած, քայքայուող Թուրք կառավարութիւնը, ահա կուսղները:



Ա Ր Ա Ր Օ

Մարտափելի կուիւր այժմեանից յուսահատցնում է Թերահաւատներին: Նոքա հարցնում են. «մո՞նչ կարող է անել հայը. ոչ Թնդանօթ ունի, ոչ զօրք, ոչ պաշտպան»:

Աւելորդ Թերահաւատութիւն: Ժողովրդական կուիւրի ժամանակ՝ Թնդանօթ — ժողովրդի զգացմունքն է, զօրքը — ինքը ժողովուրդը, պաշտպանները — ժողովուրդի միութիւնը:

Երբ ժողովուրդը միացած է և պատրաստ կուիւր ոգևորւած միևնոյն վեհ զգացմունքով — այլևս ոչինչ չարժէ ոչ Թնդանօթ զօրանակը, ոչ Թնդանօթը, և ոչ օտարի պաշտպանութիւնը:

Ազատութեան ժողովուրդը առապելական եօթ վլխանի վիշապ է: Կը կտրես նրա մի գլուխը, տեղը կը բնի երկուսը: Ժողովրդական ազատութիւնը ճնշելը, Հրեհեհը հանգցնել չէ: Կը ճնշես ազատամբութիւնը մի տեղ, նա կը պայթի մի ուրիշ տեղ: Իսկ երկրորդ օրը՝ Թէ այստեղ և Թէ այնտեղ: Ահա Թէ ինչու այդ շարժումը յուսատու է մեզ համար, վտանգաւոր Թնդանօթ համար:

Հայ ժողովուրդը սկսել է մի մեծ, սուրբ կուիւր:

Այդ կուի մէջ մտնում է ամբողջ ազգը: Թնդանօթ պատրաստուել է: Մի կողմից ճնշումն է սաստկանում, իսկ միւս կողմից՝ ժողովրդի դիմադրական ոգին: Ահա փաստերը: — Թուրքաց կառավարութիւնը լսել չի ուզում հայերի պահանջները, նա շարունակ բանտարկում, ճնշում, աքտորում և նեղում է ամէն մի հայի: Պոլսից սկսած մինչև Վան, Բագււից մինչև Թուրքի հեղեղել է իր լրտեսներով. լրտեսներ հայ հողերականի շրթերով, լրտեսներ բանտերում, հայ քաղաքական յանցաւորներ դիմակի տակ:

Նա զինում է զրդերին և Թուրքերին հայերի շարժումը արմատախիլ անելու համար: Նա աքտորում է նրիփեանին, դժարացնում է ամէն մի օտարահայտակ հայի Թուրքիա մտնելը: Նա դռով ստիպում է հայերին շնորհակալական ուղերձներ ստորագրել: Նա պաշտպաններ է որոնում Թէ օտար տէրութիւնների և Թէ հայերի մէջ:

Յիշենք, օրինակ, այն լուրը, որին դժարանում ենք հաւատալ, Թէ ոռւս կառավարութիւնը համերաշխ է Թուրքիայի հետ. յիշենք դաւանան պատրիարքին, Պոլսոյ էֆէնդիները ուղերձը, Մամբրէ վարդապետի մատնութիւնները. շնորհանք և Արփիարեանի զարշիլի մեղան:

Սակայն, շնայելով այդ բոլոր անյաշող պայմաններին և Թուրքաց կառավարութեան կողմից սաստկացող ճնշումներին՝ շարժումը չի կանգնում և աւելի ու աւելի խոր արմատներ է ձգում հայ ժողովրդի մէջ, որի ոգևորութեան շափի մասին գաղափար են տալիս հետեւեղ փաստերը:

— Վանում ընդհարում է պատահել հայերի և Թուրքերի մէջ: Մեզ դրում են, որ երկու կողմից մօտ 30 հոգի սպանուել են: Թուրք կառավարութիւնը ստակում է այդ տեսակ ընդհարումներից, որովհետև կարծում է Թէ դա ընդհանուր հայկական ապստամբութեան սկիզբն է:

— Մեր ներկայացուցիչները տեղեկացնում են մեզ, որ Վանում փորձ փորձեցին սպանել մի հայի, որ առաջ վարժապետ է եղել և այժմ ոստիկան լինելով՝ սկսել է լրտեսութիւն անել: Վէրքը մահացու չէր: Վնուած է անպատճառ սպանել նրան և նրա հետեղորդներին:

— Մեզ հաղորդում են Կ. Պոլսից. «Գուտաացի հայերը, համայնները, կը պատրաստեն մի բողոք ներկայացնել Պատրիարքին, որ նա յեն առու իր նորժարական՝ ոտնակտի ընելով ազգային ժողովի իրաւունքները և պատիւը: Հարկ կայ Պատրիարքին յիշեցնելու Գում-Գամփուրի դէպքը, ըստ որում, ինչպէս կը տեսնուի, նա Թոյլ յիշողութիւն ունի»:

— ժողովրդի հասարակ դասակարգից ամէն օր կամաւորներ են դուրս գալիս, որոնք հայրենիքի պատուութեան են ուզում ծառայել: Թէ ինչպէս է վերաբերւում ժողովուրդը դէպի այդ կամաւորները՝ դադափարը կարող է տալ հետեւեալը:

Սահմանազրկի բաղաձայնից մէկում մի կամաւորի թաղումն էր: Եկեղեցում անց դէպք տեղ չկար: Երբ ներկայ եղողներից մէկը սկսեց ճառ խօսել և արտասանեց հետեւեալ խօսքերը. «Հանգուցեալը Հայաստանի ազատութեան կամաւոր գինուր էր», ներկայ եղող բազմութեան ոգևորութիւնը սաստկացաւ:

Դազազը եկեղեցուց դուրս բերելիս ամէնքը միմիանց ձեռքից էին խլում: ժողովուրդը դազազին հետեւեց մինչև գերեզմանատուն: Երբ դազազը պէտք է գերեզման իջնցնէին, մտտեցաւ մի արհեստաւոր, որը որդին նոյնպէս կամաւոր էր եղած և մի բնօճարման ժամանակ սպանուած էր, խնդրեց, որ իրեն թոյլ տան իր ձեռքերով դազազը գերեզման իջնցնելու: Դազազը իջնցնելիս, մէկը առաջարկեց յարգել հանգուցեալի յիշատակը, և առաջին բազմութիւնը ծունկ չոքեց ձիւնի և սառույցի վրայ: Մերերը ջանհիշերին յորդորեցին օրինակ վերցնել նրանից: Ներկայ եղողները հետացան, իրենց հետ մի-մի բուռ հող տանելով, և ուխտեցին հետեւել հանգուցեալի օրինակին:

Հայրենակ մի դիւղում, սրանից մի ամիս առաջ, անցնում էին մի խումբ կամաւորներ: Գիւղացիները նրանց հիւրասիրեցին և ճանապարհ դեցելիս տալիս էին նոցա փող, դէնք, չոր և այլն: Մի շքաւոր այրի կին, գիմելով խմբասպետին, ասաց. «Ես ոչ փող ունեմ և ոչ դէնք: Ինչ որ ունեմ, այն եմ տալիս. սա էլ թող լինի իմ փայտ»: Այս ասելով կինը բունց իւր միակ որդու թեկից և տւեց խմբասպետի ձեռքը...

— Ամէն օր բերկրով լուրեր են հասնում մեկ զանազան կողմերից: Շատ տեղ գիւղացիները ծախում են եզները և դէնք են առնում: Յաճախ պատահում է, որ կանայք իրենց դուխի դարդարանքները և մատանիները տալիս են իրենց մարդուց և յորդորում, որ ծախեն և դրանով դէնք առնեն: Զմեռային երկար երկիւղներին՝ հայ գիւղացու խօսակցութեան նիւթը՝ Հայաստանի ազատութիւնն է: Այդտեղ առասպելական չափազանցույթեան հասցրած դէպքեր են պատմում, որոնք արդէն աշուղները երգի նիւթ են դարձել:

— Մի հայ կամաւոր հետեւան է հաղորդում. «Վ. գիւղի մէջ սրտամոխիկ ստաւարանի հանդիպեցինք: Մեզ հետ ուզում էին միանալ երկու եղբայրներ: Մեծ եղբայրը ասում էր, թէ ինքը կերթայ, իսկ փոքրը ազաւում էր, որ իրեն թողնեն գնալու: Երկու եղբայրները դիմեցին ձերուկի շօրը, որ նա վճռի այդ բանը: Մերուկին, մի փոքր մտածելով, ասաց. «Դուք կարող է՞ք գնալ, ես չե՞մ կարող: Երեքիս մէջ չոքի (վիճակ) պցենք՝ ում կը ընկնի, թող նա գնայ»: Վիճակն ընկաւ փոքր եղբորը: «Ես հայ եմ և առանց վիճակի էլ կերթամ», ասաց յուզած ձայնով ձերուկին ու միացաւ կամաւորներին:

— Հայաստանի զանազան կողմերից «Գիւղացուցութեան» զործակալները ողբերգի լուրեր են հաղորդում: Գաղաքներում և գիւղերում պատող պրոպագանդիստները մեծ համակարգութեամբ են ընդունում: ժողովուրդը

զը խմբում է նոցա շուրջը: Կազմակերպութեան գործը արագ կերպով առաջ է գնում: Շատ տեղեր արդէն կապում են միմիանց հետ: Ամէն տեղ ժողովուրդը զինք է ուզում: Շատերը փողով են դնում:



Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ա Ղ Ա

— Հայաստանի մի գիւղում, ինչպէս յայտնում է «Գիւղացուցութեան» զործակալներից մինը, տեղի է ունեցել հետեւեալ փաստը: Այնտեղ բոլոր գիւղացիք վճռել են չցանել իրենց արտերը: Երբ հարցնում են դուրս պատճառը, մի ալեգարը, պատկառելի ձերուկի պատասխանում է. «Ենչի՞ ցանեմք, ի՞նչ ցանելու վախտ է. դարձանք տեսնելու ենք ոչ թէ ոսկեգոյն ցորենի արտեր, այլ արեւնով ներկւած ամալի դաշտեր»...

— Գեկտեմբերի 22-ին, Սալմաստում տեղի է ունեցել մի արտասովոր սպանութիւն: Սպանւած է հայ կաթնիկ վարդապետ՝ հայր Սրապիոնը: Սպանողը անյայտ է: Մտնելով վարդապետի բնակարանը, անյայտ մարդը մի փոքր խօսակցում է հայր սուրբի հետ և ապա հանելով խանջալը՝ խրում է վարդապետի թրանը, դռնելով. «Այս է մասնիշնչի վարձը»: Վարդապետը տեղն ու տեղը մեռնում է: Պարսից կառավարութիւնը որոնում է սպանողին, որը անյայտացել է: Սալմաստի մէջ այդ վարդապետը յայտնի է կղև իբրև մատնիչ:

— Եւրոպայի աչքերին թող փչելու և հայոց խաբւած պատրիարքի բերանը ջաղցրացնելու համար, թիւրքաց կառավարութիւնը նորերս ուղարկեց աշխարհի բոլոր կողմերը հետեւեալ հեռագիրը. Սուլթանը ներումն չնորհեց ջաղաքական հայ բանտարկւածներին:

րին»։ Երբ այդ լուրը Տրսպիգոն հասաւ, վալին բանտից արձակեց քաղաքական յանցաւորներին, և հայերը ուրախացած գոհացողական մաղթանքներ կատարեցին Սուլթանի կեանքի համար։ Բայց այդ ուրախութիւնը երկար չտևեց։ Շուտով Կ Պոլսից հեռազիր ստացուց անմիջապէս նորից բանտարկել արձակածներին, որովհետև ներումն է չնորհած Պոլսի բանտարկւածներին միայն։ Գուցէ հայերը փոշմանեցին իրենց աղօթքի համար, բայց արդէն ուշ էր։ Սակայն, Պոլսում խրմբած դաւաճացի հայ ժողովուրդը և նորա շարժման ղեկավարները ուրիշ կերպ ընդունեցին կառավարութեան խորամանկութիւնը. այդ ցոյց է տալիս նորերումս Պոլսի թաղերում և նոյն իսկ Սուլթանի պալատի մօտ ձգւած մի յայտարարութիւն, որից բերում ենք հետևեալ կտորը.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ Կ. ՊՈԼԻՍ  
Արթնցե՛ք, հայե՛ր.

«Ուշադրութեամբ շփեցե՛ք ձեր աչքերը և տեսե՛ք ինչ հրապուրիչ որոգայթներ կը լարեն ձեր շուրջը.

մի կարծե՛ք, թէ Սուլթանը շնորհ մը արած լինելու համար արձակեց այն 87 հայ երիտասարդներն, որ արդէն անմեղ էին։ Այս արձակում մի օտարափոխ կեղծաւորութիւն կը նշանակէ, որ նպատակ ունի առ ինքն ձգել հայութեան սիրտը։ Պէտէ է ընենք ամէն ցանք, չզաւանգ մը մի աշխատութիւն և իրականութիւն դարձնենք Հայաստանն ազատելու արք և վսեմ գործը։ Այլ բաւ տանջեցանք, բարբարոս թուրք կառավարութիւնն ալ բաւ խմց մեր արիւն։ Թոթօնեմ օտրկութեան ինկզդարեան ժանր բեռը, ջարդելով նորա ամուր շրջափաներ, որ կաշկանդիւր են մեր անդամներն»։

Ահա մի քանիսը այն փաստերից, որոնք միանգամայն մեղ համարձակութիւն, ոյժ, եռանդ են ներշնչում աներկբայ հետևելու ժողովրդի մարտական հրահրներին։ Այլ ևս ժամանակ չէ տատանելու... Հաւատացե՛ք, հայեր, միացե՛ք, եղբայրներ, վսեմ կուի համար։ Գուցէ հեռու չէ այն օրը, երբ մեր անբախտ Հայրենիքը պիտի պահանջէ մեզնից մեր կայքը, մեր արիւնը...

Վիեննա Դաշնակցութեան Ազատ Տպարան



Ս Ա Ր Գ Ի Ս Կ Ո Ւ Կ Ո Ւ Ն Ե Ն Ա Ն

# 1892 թ. № 3-ի ԽՄՐԱԳՐԱԿԱՆԸ

Փետրար, 1892 թ.

«Դրօշակ»ի 1 և 2 համարներում բերած էին, թէ Դանակցութեան յղարտական գործունէութիւնը առաջնորդող զլիաւոր սկզբունքները և թէ նորա ընթացիկ կռիւ ընդհանուր նախադիւրը:

Այժմ կարևոր ենք համարում համառոտապէս հիմնաւորել ընդհանուր ձևով բերած սկզբունքները և առաջ բերել մեր այն պահանջները, որ ձեռք պիտի բերուին ապստամբական ճանապարհով:

Պատմութիւնը մեզ ուսուցանում է, թէ ամէն մի հասարակական դրութիւն, հետեանք լինելով նախընթաց պայմաններին, միևնոյն ժամանակ պատճառ է այն ապագային, որը երևան է դալիս վաղը:

Ինչպէս ներկայիս մէջ կարող ենք գտնել անցեալի բոլոր զլիաւոր և ապրելու արժանի կողմերը, նոյնպէս կարող ենք ստել, որ ապագայի կազմակերպութեան բոլոր տարրերը կարող են զարգանալ միայն ներկայից: Հետևաբար այս կամ այն հասարակական հաստատութիւնները իրականացնելու համար բաւական չէ ունենալ կամք, նոյնիսկ կարողութիւն ձեռելու հասարակական կազմակերպութիւնը այս կամ այն մոտելից (քնական թէ իդէալական). գորա համար անհրաժեշտ է, իբրև հիմք, վերջնել ժամանակին ու տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին, նաև ընդհանուր կերպով որոշում են մօտիկ ապագան:

Տնտեսական (ինչպէս հասարակական ու պատմական) խնդիրներ շօշափելիս, ասում էինք մենք Դրօշակի առաջին համարում, պէտք է ղեկավարել երկրի կուլտուրայով և նրա ազգային ու պատմական առաջնայատկութիւններով:

Սա որոշ օրէնք է, որը սկսած կօնտից մի շարք փալլուն ուսումնականների շնորհիւ ընդհանրացաւ բոլոր դիտութիւնների վերաբերմամբ և որը յայտնի է Էվոլյուցիոնալ օրէնքի անուն տակ: Էվոլյուցիոնալ տեսակէտը զարգանալով, զարգանալով՝ բռնեց նաև փառաւոր տեղ ժամանակակից թաղաքական կուսակցութիւնների ծրագրերում: Դեռ մեր օրերում ամբողջ Գերմանիայի ուսմկավարական կուսակցութիւնը իր ամենապրոպի և ամենաուսանողն զործիչ Բեքելի բերանով բազմատեսակ սէղանտների հասցէին ասաց հետեւեալ խօսքերը. «Մինչդեռ ամբողջ Եւրոպայում մենք չենք կարող ստել, ինչ քաղաքական փոփոխութիւններ կը լինեն վաղը, մեզանից պահանջում են մանրամասնօրէն նկարագրել այն ապագայ կազմակերպութիւնը՝ որի միայն կերպարանքը կարող ենք նմարել այժմ»: Նոյն միտքը յայտնեց և Բրիւսելում համագալսյին ուսմկա-սոցիալիստական ժողովը:

Ինչպէս յայտնի է, միակ իրական և զլիաւոր պահանջը, որը ընդունւած է այդ ժողովում՝ դա 8 ժամեայ աշխատանքի խնդիրն է: Լինելով գործի և ոչ թղթի մարզ, Բեքելը անկարող է հետեւել 30ական և 60ական

Թեականների յեղափոխականներին և պահանջել այն, ինչ որ միայն իր կուսակցութեան կամքի մէջն է:

Կոնգրէսը՝ բաղկացած լինելով զարգացած մարդկանցից, իր կուսակցութեան ապրելու և զարգանալու համար դիմում է այնպիսի պահանջների, որոնց դրաշա



ԿՈՆԿՐԵՍԱՆԻ ԽՐԱԻ ԱՅՐՈՒՐԱԾ ԱՆՎԱՆՆԵՐԸ

կի տակ կարող է միանալ եւրոպական ամբողջ բանւոր դասակարգը և որոնք իրագործելի են հէջ այժմ:

Ահա այն պատճառները՝ որոնք վաղւայ կազմակերպութեան տեսակէտից ստիպում են մեզ մեր ուժերը կենտրոնացնել ներկայ հանգամանքների վրայ:

Ինչպէս հետևոր անցեալին, նոյնպէս և իդէալական ապագային, մենք տայիս ենք երկրորդական նշանակութիւն:

Ամէն օր Հայաստանի այս կամ այն անկիւնում կատարւում են սպանութիւններ, բռնի կրօնափոխութիւններ և ուրիշ հազար ու մի տեսակ բարբարոսութիւններ:

Ի հարկէ, այս բոլորի մէջ կառավարութիւնը ունեցել է մեծ դեր, սակայն, անկարելի է անուշադիր լինել և դէպի միւս պատճառները:

Քիւրք ազգաբնակութեան մեծ մասը, բաժանւած լինելով ցեղերի, դեռ ևս պարապում է իսանարածութեամբ, վարում է կիսաթափառական կեանք: Նրա ձգտումները, բարոյական սկզբունքները բոլորովին

տարբերում են այն վարք ու բարքից, որոնք առաջ են դալիս և դարգանում, երբ մարդս սկսում է պարագել հողագործութեամբ, որոշ տեղում մշտական բնակութիւն է հաստատում, ենթարկում է հասարակական



Ռ Ո Ւ Ի Բ Ե Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ն Ա Ն  
ՂԱՋԱՆՅԵՒ, ԿՈՒՎՈՒՆԵԱՆԻ ԽԲԲԻՑ

կեանքի պահանջներին: Բայց և թէ ջերբը, իբրև բարոյականութեան հիմք, ընդունում է ցեղի շահերը, վրէժխնդրութիւնն և քաղութիւնը. և թէ նա չի հասկանում պնձի սրբութիւնը, արճամարհանքով է վերաբերում դէպի հողագործական ծանր աշխատանքը, դէպի այն բոլորը, ինչ բխում է աշխատանքի, քրտինքի գաղափարից — խաղաղ մշակ հայն իր կայութեան վէճն ու տաճարը կառուցանում է աշխատանքի վրա, ղեկավարում է ազգային շահերով և ընդունում է այն բոլոր կաղերի ու պարտականութիւնների անհրաժեշտութիւնը, որոնք հետեանք են աւելի բարդ հասարակական պայմանների:

Այդպիսով սկսում է մրցում, պատերազմ երկու տարբեր շրջանների պատկանող փոքրվուրդների մէջ: Կասկած չկալ, որ ապագայում ցեղական սկզբունքը պիտի ոչնչանայ: Ինչպէս որսորդութեան շրջանից մարդս դիմեց խաչարածութեան, նոյնպէս անհրաժեշտ է ներկայումս, որ ջերբը դառնայ հաստատութեան, ղիմէ հողագործութեանը: Մինչև այս պատմական բարեշրջութիւնը չկատարի, խաղաղութիւնը չի հաստատուի, չի էլ կարող հաստատուել Հայաստանում: Սպանութիւնները և առաջակութիւնները թէև կը մեղմանան, բայց կը պահեն իրենց քրօնիքական բնուրութիւնը: Հասկանալի է դառնում, որ քաղաքակրթութեան շահերը պահանջում էին ոյժ տալ հողագործի ձգտումներին, ապահովել նրա կեանքը, կայքը, աշխատանքը և խստիւ հետևիլ օրինադասցններին: Այդպէս վարելով, կառավարութիւնը կատարած կը լինէր իր պարտքը և աշխրջութիւնը քայքայման հետ միասին կապահովէր լուսաւորութեան տարածումը: Այո՛, մեր կուրբ տաճիկ կառավարութեան դէմ ոչ միայն ազգա-

յին կուր է, այլ և եւրոպական քաղաքակրթութեան ու մարդկային իրաւունքների դատ (Դրօշակ № 1):

Անցնենք մեր կեանքի միւս գլխաւոր պայմաններին: Հայաստանը նւաճող մահմետական սուլթանները ու գորպայտները չհաստատեցին տիրած երկրում ժողովրդի համար փոքր ի շատէ ապահով դրութիւն, չստեղծեցին այն ամենատարրական պայմանները, որոնք անհրաժեշտ են ժողովրդի բազմանալու, զարգանալու համար: Նւաճած ազգերի ստրկութիւնը պահպանելու համար ամբողջ ուղղափառ տարբը ստացաւ մի դինուրական իշխող դասակարգի տիպար: Դարերի ընթացքում ուղղափառ տաճիկը արճամարհանքով էր վերաբերում դէպի գեալուր հալը. պատիւ ու պարծանք էր համարում ճնշել, կողոպտել, անպատուել գեալուրին: Միաժամանակ մահմետական պաշտօնեան ոչ միայն անտարբեր է եղել դէպի քրիստոնեաների շահը, այլ և անիրաւարար միւտ մեղադրել, զրպարտել, բանտարկել, ամէն կերպ ճնշել, վնասել է հային: Այսպիսով, շնայելով, որ հաւասարաբար յայտարարած էր կեանքի ամենազխաւոր սկզբունքներից մէկը, տաճիկ մոլեռանդութիւնը գրկեց հային և այս նահապետական առաւելութիւնից:

Իրաւունք չունենալով գէնք ևս կրելու, որ հարկաւոր դէպքում կարողանար զոնէ ինքը իրեն սլաշտպանել, հայը ակամայ պիտի ընկնէր այս կամ այն քրդի կամ բէգի հովանաւորութեան տակ, պիտի գնէր



Դ Ա Ռ Ի Բ Զ Ո Ղ Ա Ն Ն Ա Ն  
ՎԱՐՆՈՅ ԳՈՒՂԻՆԻՑ, ԿՈՒՎՈՒՆԵԱՆԻ ԽԲԲԻՑ

իր ապահովութիւնը այս կամ այն վարձատրութեամբ: Այդ կապը թէև ստիպողական չէր կառավարութեան կողմից, բայց լինելով անհրաժեշտ հետեանք ժամանակակից պայմանների, օժեցեալ գանապան սովորութիւններով — և ստացաւ յայտնի զոյն՝ որը իր բա-

ցասական կողմերով նմանում է, ինչպէս եւրոպական միջնադարեան սիստեմային՝ նոյնպէս և հայ նախադարականին, որը իրենք տածիկները Հայաստանը նաեւ ինչ, հայ ժողովրդի անկացութեամբ, ջնջեցին յանուն հաւասարութեան: Այդպիսով այն ճնշման վերաւ, որը հետեանք էր թափառական-խաշնարած կեանքի, աւելացաւ մի ուրիշը. ազգաբնակութեան մի մասի իշխումը միտի վրա: Այդ անիրաւութիւնն էլ ոչընչացնելու համար պէտք էր կառավարութիւն, որը սակայն չկար:



Մ ՈՒՐԱՃ Մ Ա Ն ՈՒ Կ Ե Ա Ն  
ՇԻՐԱԿԻ ՀՈՌՈՄ ԳԻՒՂԱՅԻ ԿՈՒՎՈՒՆՆԱՆԻ ԽՄԻՅՑ

Չկար, ասում ենք, որովհետեւ Պոլսոյ ամիրաների հիմնած կազմակերպութիւնը ստեղծւած էր միայն դարացի ազգերի հետ մրցելու, քրիստոնեաների ստրկութիւնը պակասելու ու հարուստ դասակարգի շահերին ծառայելու համար: Հարկաւ, այդ կառավարչական մեքենան չթեթեւացրեց ժողովուրդի որեւէ ցաւը, դարձան չարեց նրա վերքերին: Ոչ սուլթան Մէջլիթի Թանգիւմաթը, ոչ էլ սահմանադրութիւնը չլեղեցին ժողովրդի կեանքը ճնշման ճանապարհից: Աշխատող տարրը, ենթակարգելով զանազան սահմանափակումների, մտցնելով նորա կեանքի մէջ աւելի զկարգ ու կանոն և միաժամանակ կառավարութեան ղեկը, շնորհից ցնցի, յանձնելով հարուստ դասակարգին՝ այս զկարգադրութիւնները՝ աւելի նպաստեցին նախկին չարքահներին սերնդին հարստացրել աշխատող ամբողջ Նախկին և նոր դրութեան մէջ զանազանութիւնը նրանում էր, որ հարստահարութիւնը ստացաւ աւելի կարևոր ձև: Այսպէս՝ կառավարութեան եկամուտը ապահովելու համար, էֆէնդիները և պաշտօնեաները ստեղծել են մի այնպիսի սիստեմ, որով Հարկերի ծանրութիւնը ընկնում է դիւզացու և աղքատ արհեստաւորի վրա. թող մէկը միւսից հարուստ լինի ստաք, հաղար անպաճ, փոյթ չէ. դոքա պիտի վճարեն համարեա թէ հաւասար. վաշխառուներն դրամագլուխը և այն բոլորը ձեռնարկութիւնները, որոնք իրենց սէրերին մեծ դամարներ են տալիս, վճարում են համեմատաբար չնչին քան: Հարկերի մեծ մասը, լինելով կողմնակի,

կենսական մթերքների վրա, ընկնում է հաւասար ծանրութեամբ աղքատ մշակի ու հարուստ բէգի վրա: Յիշե՛ք արդեօք զհեւրական տուրքի մասին, որ վերջին ժամանակներս հասել է ամէն մի քրիստոնեայ արեւմադարից՝ 38 դահեղների: Ասե՛ք արդեօք՝ քրդերի, Պոլսոյ բնակիչների, մուլանների, ճահանաների մասին, որոնք թեթեւացրած լինելով հարկերից, այդպիսով իրենց բոլոր ձգում են էլի աշխատաւոր դասակարգի վրա:

Վերջապէս, ժողովուրդը աւելի հաստատ կերպով հարստահարելու համար, կառավարութիւնը ստեղծել է տեսակ-տեսակ մոնոպոլիաներ (ծխախոտի, աղի, երկաթուղիների, հանքերի), որոնց նպատակն է մշակի գրպանից հանել իր աշխատանքի մի մասը և յանձնել եւրոպացի կամ տեղացի դրամատէրերին:

Ժամանակի ընթացքում կառավարութեան յիշեալ հարստահարութիւնների վրա աւելացաւ և մի ուրիշը, ոչ այնքան նկատելի, սակայն նոյնքան զզուելի. դա զանազան վաշխառուների, էֆէնդիների, բէգերի հարստահարութիւնն է: Չնայելով, որ մահմետականների տեսակէտից սոկոսը հայալ չէ համարում, չնայելով, որ հողը պատկանում է մշակողին, որ ամէն մարդ ազատ և հաւասար է միւսին՝ հարուստները օգտուելով ամբոյսի անտանելի դրութիւնից հազարաւոր դիւզացի գրկեցին մշակած հողից, շինած տնից, դարձրին նոցա իրենց՝ հլու հպատակ: Հայաստանում կարելի է մատնացոյց անել ամբողջ գիւղեր, որոնք այս էֆէնդու կամ այն բէգի սեփականութիւնն են դառել:

Հասկանալի է, որ այս անտանելի պայմանները այսօր զգացում են ամենածանր հետեւանքներով: Ժողովրդի աղքատութիւնը օրէցօր սաստկանում է և, նեղ դրութիւնից դուրս դալու համար, նա ստիպւած է աւելի և աւելի մեծացնել զաղթականութիւնը իր հետ կապւած թշուա հետեւանքներով: Հոսանք այնքան մեծ է, որ Հայաստանում կարելի է գտնել շատ աւաններ, որոնց բնակիչների կիսով չափ կամ ամբողջովին դադարած են հեռաւոր երկիրներ: Սկսելով հայերից և յոյներից՝ պանդխտութիւնը վերջերս արժատ է ձգել և խաղաղ մահմետական ազգաբնակութեան մէջ:

Թշուաութիւնը հասել է այն ստիճանի, որ ժողովուրդի անձուր Նկատուելի կերպով թուլացել է, եթէ դադարած չէ արդէն մի քանի դաւառներում: Այսպէս քանի դնայ՝ այս ընթացքը աւելի ոյժ պիտի ստանայ, որովհետեւ՝ տուրքերը շատացնելով՝ կառավարութիւնը ոչ մի միջոցների չի դիմում՝ երկրի արդիւնաբերութիւնը բարձրացնելու համար:

Հազորակցութեան ու հետեւապէս՝ երկրագործական մթերքների արտահանութեան հարցը, որը ունի կենսական նշանակութիւն Հողագործ հայ ժողովուրդի համար, մնացել է քաց, չնայելով ճանապարհատուրքի ծանրութեանը: Չնապզան պատահական շարժումներից (ազար, երաշտ, կարկուտ և այլն) ժողովրդի ապահովութեան խնդիրը չկայ կարծես տածիկ կառավարութեան համար: Այն շարժագործական սնդուկը, որը այդպիսի ճանապարհներում պիտի օգնութեան դարձաւ ժողովրդին — զանազան ձևակառուութիւնների պատճառով ծառայում է միայն վաշխառուների շահերին, իսկ ժողովուրդը նրա դոյութեան մասին զաղափար

անգամ չունի: Նոյնն է և պարտադիր ուսման օրէնքը. դորա համար վերցրած տուրքը ծախսուում է գլխաւորապէս մի քանի միջնակարգ դպրոցներին վրա, որոնք յաճախուում են միայն հարուստ քաղաքացի մահմետականներին որդիքը: Չպիտի մոռանանք և այն, որ այս վերջին երկու տուրքերի (ուսումնական. և երկարգ. սնտուկի) մեծ մասը ծախսուում է բոլորովին տարբեր հիմնարկութիւններին վրա:

Վերջապէս, հարկաւոր է յիշել և մի երեւոյթ կառավարութեան ներքին քաղաքականութեան մէջ. այն է՝ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը նկատեցնելու և եթէ կարելի է նոյնիսկ ջնջելու դիտարկական ձգտումը: Քրիստոնեաներին աննշան թիւը համեմատաբար այլազգիների թւի հետ, ի հարկէ, կառավարութեան ձեռքում կը լինէր ամենատեղի մի միջոց վերանորոգումներ պահանջող ամէն տեսակ ձայների դէմ կուեցու համար:

Այդպիսով այս համառօտ ընդհանուր տեսութիւնից պարզուում է, որ սահկահայ ժողովրդի դրութիւնը միանգամայն սարսափելի է շատ կողմերից:

Ազատել ժողովրդին այդ անստանկ զրութիւնից, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թոյլ տան նրան մտնել ընդհանուր մարդկութեան զարգացման շաղի մէջ՝ կարելի է միայն յեղափոխութեամբ, կարելի է միայն միաժամանակեայ փոփոխութիւններով Հայաստանում տիրող բարձրասակ պայմաններին:

Հիմնելով մեր նպատակը և պահանջները այդ Մայր-Հայաստանում իշխող դրութեան վրա, մենք չպիտի անուշադիր լինենք նոյնպէս դէպի ուրիշ ազգերի օրինակները:


Ամբողջ կուլտուրական աշխարհի պատմութիւնը հաղարար տարիներին ընթացեում ցոյց է տալիս մեզ՝ որ յանձնել ամբողջ ժողովրդի բախար մի դասակարգի՝ որը իր կարգութեամբ կարող է հաստատել ծագման, ֆիզիքական և նիւթական ոյթի, կամ թէ չէ նոյնիսկ ուսման վրա, տալ կառավարութեան ղեկը որևէ դասակարգի, կը նշանակէ ստեղծել ճշնում այդ դասակարգի, դարձնել ժողովրդը ծառայող այդ փոքրիկ մասի ու միաժամանակ անբարոյականացնել իշխող պոլիտիկաններին:

Իրա հետ զուգորթացաբար հասարակական կեանքի ալիքը թուլացնելով առանձին անհատի դազանական ձգտումները և Պպակասեցնելով նիւթական անհատաբարութեան հետ անխախտ կապում ճնշումը՝ տանում է մեզ դէպի եզրայրական սկզբունքները, դէպի ընկերական, համայնական հաստատութիւնները:

Արդարութեան ամենապիտաւոր պահանջը թէ ամէն մարդ իր քրոխնքով պիտի աշխատէ կերած հացը, թէ հաւասար աշխատանքի հետ անհարձ պիտի ունենայ նոյնպէս հասարակ իրաւունք կեանքից օգուելու, տարածուում է աւելի և աւելի: Դեմոկրատիայի յաղթութիւնը այնպիսի հսկայ քայլերով է առաջ դնում, որ շատ ժամանակ չանցած հասարակութեան ղեկավարող տարրը, գանազան առանձնաշնորհումների տեղ լինելու է աշխատանքը իբրև ընդհանուր բարօրութեան միակ միջոց:

Ա) Ահա այս է պատճառը, որ հայ յեղափոխականները, միշտ դէմ լինելով որևէ առանձնաշնորհումներին,

ընդ կը զարգացնեն ու կընդլայնեն դարերի ընթացում հայութեան մէջ տեղի ունեցած ու խորը արմատ ձգած ընտրողական սկզբունքը: Ապագայ ազատ Հայաստանում իշխող ռամկավարական սահմանադրութիւնը, ծառայելով ընդհանրութեան շահերին, պիտի և՛ հաստատուած լինի ամէն հասակաւոր բնակչի հաւասար ընտրողական իրաւունքի վրա անունք որևէ ցեղի, իսկ այդ շահերը իրականապէս պաշտպանելու համար, ընտրողական սկզբունքը կառավարչական բովանդակ գործողութիւններից սկսած դէպի առաւել նեղ դաստականը ու համայնականը պիտի ստանայ առաւելագոյն լայն ծաւալ:



Գ Ե Տ Ր Ո Ս Յ Է Ի - Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն  
ԳՈՒՍԵՅԻ, ԳՈՒԿՈՒՆԵԱՆԻ ԽՄԻՅՑ

Այսպիսի սահմանադրութեան վրա հիմնած կառավարութիւնը, անշուշտ, կը հաստատէ:

1. Անձի և կայքի ազատութիւն ամենախիստ միջոցներով.
2. Տարբեր ազգութիւնների ու դասանութիւնների հաւասարութիւնը օրէնքի առաջ.
3. Ազատութիւն խօսքի, մամուլի և այլ՝ ռամկավարական երկիրներում ընդունած արտօնութիւնների:

Բ) Նոյնքան մեծ, եթէ ոչ աւելի, նշանակութիւն ունի հայութեան վերածնման համար դեւղացու ազատութիւնը ներկայ աղքատ դրութիւնից: Որպէսզի ժողովրդը ոչ միայն խօսքով, այլ և իրականապէս օգուտի իր ձեռք բերած ազատութիւնից, որպէսզի նա միջնչև անգամ կարողանայ պահպանել իր ազատութիւնը և ոչ թէ չուտով կրկին գրկի դրանից, հէնց առաջին քայլերում ժողովրդի ներկայ թշուա դրութիւնը օգնելու համար մենք անհրաժեշտ ենք համարում.

1. Տալ չունեցողին հող և համաձայն դարերից ի վեր դրութիւն ունեցող նոյնիսկ տանկական սովորական ու գրական օրէնքի իմաստին որոշ կերպով ապահովել մշակողին հողից օգուտելու կարելիութիւնը:
2. Ամէն տեսակ տուրքերի ենթարկող բոլոր իրերի դնահատումը պիտի կատարի առանց ցեղի ընտրած չինական և թաղական ժողովներում, որոնք պէտք է առաջնորդեն հայութեան մէջ խորը արմատ ձգած և եւրոպական յառաջադիմող հասկանութիւն-

նից չտարբերող «կարողութեան», «համբայական» սկզբունքով:

3. Ոչնչացնել զինւորական տուրքը, հաստատելով տեղի և ժամանակի պահանջներին համաձայն զինւորագրութիւն:

3. Ոյժ.տալ զիւղացու համայնական սկզբունքներին, զարգացնելով այն ընկերական հիմնարկութիւնները ու ձևերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վրա, տեղական ու դատական հանդամանքների ազդեցութեան տակ, լայնացնել այդ հիմնարկութիւնների



Ս Ի Մ Ո Ն Ջ Ա Ի Ա Ր Ե Ա Ն

Գ) Հայաստանը յառաջդիմութեան ճանապարհի վրա գնելու համար անհրաժեշտ են նաև.

1. Ամէն կերպ նպաստել ժողովրդի զարգացմանը և ուսմանը.

2. Զարգացնել ժողովրդի արդիւնաբերութիւնը, մտցնել վերջինիս մէջ նոր ձևեր, լայնացնել արտահանման միջոցները և այլն.

սահմանը զիւղից, թաղից, սկսած մինչև դաւառը, մինչև ամբողջ տէրութիւնը և այդպիսով միանգամայն ապահովել համայնքի ամէն մի անդամին՝ բնութեան և ընթացիկ կեանքի պատահական հարւածներից:

Ս.ՋԱԻԱՐԵԱՆ,

ԳՐ.ՄԻՔԱԹԷԼԵԱՆ



# ՎԵՐՋԻՆ, ԴԵՊՐԵՐԻ ԱՌԹԻԻ

Մայիս, 1894.

Մարտ ամսի 13ին Յակոբ անունով մի երիտասարդ փորձեց սպանել Ալըղեան պատրիարքին. փորձն անախտ դէպք էր:

Սա առաջին դէպքը չէ. Հայ ժողովուրդը շատ անգամ և տարբեր ձևերով է յայտնել սրբազանին իր բողոքը, բայց միշտ անխելի է մնացել նրա արդար ձայնը:



Պ Ե Տ Օ

Ազգաբնակութեան խուլ, ճնշած բողոքի հետ միաժամանակ՝ տեղի է ունեցել և ծայրայեղ, տերորիստական փորձ. — ընթերցողներն անշուշտ յիշում են յուլիս 15-ի յայտնի ցոյցը: Ալըղեանը չիրատեց. Համարելով այդ ցոյցն իբրև արդիւնք օտար խռոնակի տարրերի, յոյսը դնելով վաղմ ընդ մի աշխուրջ ոտտիկանների վրա, աւելի մեծ եռանդով շարունակեց իր զգուշի արարքները: Բայց ահա դուրս եկաւ ժողովրդի խաւերից նրա զուակներից մէկը — Յակոբը, որն արտայայտիչ հանդիսացաւ ժողովրդի եռացող բողոքներին:

Ի՞նչ է այս փաստը: Ո՞վքեր են այդ Ալըղեանը և իր նմանները, ի՞նչ բանի են դրանք ձգտում, յանուն ո՞ր սկզբունքի են դրանք ունատակ տալիս ժողովրդի ամենատարբ. անձեռմխելի իրատւնքները:

Տաճկական յոճակով կառավարութիւնը ժողովրդի թշնամին է, այստեղ ոչ մէկ կատկած չկայ, ամէն մի բնակալուծութիւն թշնամի է աշխատար ժողովրդին և պէտք է լինի: Նա պէտք է աշխատի զայլաբանած պահել նրա նիւթականը, մութ խաւար թաղաւորեցնել նրա մտաւոր աշխարհում. փչացածութիւն, լիտիութիւն, լրակատութիւն, Կողմութիւն և այլ հազար ու մի արտօնք սերմանել նրա բարոյական կեանքում, որ ինքը կարոյանայ հասաստ ու անասան մտալ, որ ինքը կարոյանայ հոգ ունենալ իր ոտքերի տակ: Ժողովրդական կեանքի այդ երեք կողմերից որն էլ զարգանայ՝ վնաս

սպանիչ, մահացու վնաս է բնակալուծութեան: «Ուզո՞ւմ էք ժողովուրդը պահել հնազանդութեան մէջ, դրում է իր յիշատակարանում Բիշկէօն, աղքատացրէք նրան և մի՞շտ աղքատ պահեցէ՞ք»:

Ինչո՞ւ ժողովրդի նիւթական բարօրութիւնը դէմ է և բնակալուծութեանը: — Պարզ է, որովհետև միշտ նիւթական հարստութեան հետևում է ուշ թէ շուտ մտաւոր ու բարոյական հարստութիւն: Եւ ուր կայ մտաւոր ու բարոյական զարգացում՝ այնտեղ չի կարող երկար դիմանալ որևէ բնակալուծութիւն. զարգացած մարդը չի թողնի, որ իրեն կեղեքեն տասանորդով, զլիաճարկով, ուղղակի և անուղղակի բազմաթիւ հարկերով, գինւորական տուրքով, «դիշխերէտի»ով և այլն:

Մտաւոր և նիւթական հարստութիւնը ժողովրդի կեանքում անբախակելի կերպով կապուած են իրար. մէկը հայ՝ կայ և միւսը: Եւ եթէ բնակալուծութիւնը կատարի թշնամի է հանդիսանում այդ Ֆակտորների, դա պարզ է ամենքի համար: Բայց ինչո՞ւ են դէմ ժողովրդին Ալըղեանները, Սիմոն բէյերը, Պօղոս Եպիսկոպոսները, Վանի և Էրզրումի փոքատէր վաշխատուները ու դունտ-դունտ լրտեսները:

Ի՞նչ են ուզում դրանք ժողովրդից: Ինչո՞ւ մէկը յանուն «ազգային Առաքելական Ս. Եկեղեցու», միւսը յանուն «ազգային և ժողովրդական սիրոյ և բարօրութեան», երրորդը՝ յանուն «խոհմտութեան» և այլն՝ հնազանդութիւն են զարդում տանջած ու տանջող, ուժասպառ ժողովրդին:

Ի՞նչն է դրում դրանք դէպի այդ ստոր վարմունքը: Ի՞նչն է ստիպում Ալըղեան պատրիարքին գրել ամենատարբ. ու զգուշի բովանդակութեամբ շրջաբարկաններ, այս, այն «առաքելական հայտաւան» եկեղեցու խօսել չնափայել զարգացներ. վերջապէս, ի՞նչն է ստիպում այս կամ այն դատաւի վաշխատու աղաներին «շնորհակալութեան թղթեր» կազմել և ուղարկել, մատնել տէրութեան իր համազարգացիներին, իր ծոնօթներին, մինչև խիկ արևնակից բարեկամներին. ամբողջ աշխարհի ստալ աւազակ, խառնակիչ և մարդսպան հրատարակել ամէն մի յեղափոխական գործչու:

Ինչո՞ւ: — Որովհետև նրանց նեղ, խմբական շահն է այդ պահանջում: Ինչո՞ւ են դողն ու գայլը մութ դիշխերներ որոնում, ինչո՞ւ են ջրի պղտոր ժամանակ ձուկ որսում, դուրս գալիս: — Արհեստի շահն է այդ պահանջում:

Բնակալ է կառավարութիւնը, տգէտ է ժողովուրդը, խեղճ, աղքատ է նա — աւելի շուտով կը հարստանան, աւելի հեշտ կը կարողանան փառքի, պատուի տիրանալ, շքանշաններ ստանալ ժողովրդի այդ ցեցերը:

Երուսաղէմի Յարութիւն պատրիարքի մի զարդը, որի մասին գրել էինք մեր անցալ Համարներից մէկում, զարդչին արժանացրեց մեծ եպարկոսի տեսութեանը և սուլթանի ամենաողորմածաբար շարտաւած ոսկիներին: Ալըղեան պատրիարքը և Սիմէոն բէյը

Ազգային ժողովը փակեցին, նրանք ևս արժանացան որովհետև զրանք զիտեն յաճախ խաբել տգէտ ժողովը զէզին մետաղի մի քանի կտորներին: Մատնում է մի ստորաբաբը Հայ այս կամ այն մեղաւոր կամ անմեղ մարդուն, — նա ևս ստանում է փող... Մի՛շա փող: Եւ այդ փողը նման է այն ոսկորներին, որ տէրը ողորմածաբար ածում է շան առաջ, իսկ շունը հաւատարմաբար պաշտպանում է նրա կայքը:



Խ Ա Չ Ի Կ Գ Ն Ո Ւ Ն Ի ( Շ Ա Լ Է Ն Ի )

Աչըղեանի նման մի հողերական քար դեցե կրօնական ժողովի վրա, փակեց նրան, որովհետև այստեղ կար մի ուրիշ բունպետական ձգտում. այսուհետև նա մեռակ կամ իր գոյակից ընկերներով կը կտաւորէր ժողովրդին, մեռակ կը կողպայտէ:

Իրարմէ՛ք աչքերը գէպի վան, էրզրում, Մուշ, Երզնկա... Ո՛վքեր են այդ բազմաթիւ լրտեսները: Համարեա լուրրն էլ մեծ և փոքր վաշխատուները, ժողովրդի այդ տղուկները: Նրանք մատնում են, նրանք սուտ վկայութիւններ են տալիս, նրանք զրոյգարտում, մեղադրում են այս այն ողորմելի զիւղացուն, խեղճ արհեստաւորին իբրև յեղափոխականներ, որ դուք զան վախկին, որ այս կամ այն կապալը աժան ձեռք ձգեն, որ իրենց հնարովի հրէճաւոր մուրհակները սաղացնեն:

Առանց փաշայի կամ դատիի քաղցր աչքն իր վրա դարձնելու, նրանք չեն կարող անել այն դարհուրելի քանակութեամբ կտաւորող ոճիրները, որ տեղի են ունենում այսօր:

Բռնակալութիւնը մուժ, խաւար գիշեր է, որի մէջ վաշխաւուն և լրտեսը, էֆենդին ու բէլը, պատրիարքն ու եպիսկոպոսը հանդիստ ու վստահ կարող կը լինեն գողանալ, կողոպտել, ծծել ժողովրդի արիւնր, որքան ուզում են:

Օ՛, նրանք շատ են զգում, որ ամէն մի յեղափոխական իրենց մահացու թշնամի է: Նրանք լա՛ւ են գզում, որ այդ մտակցող յեղափոխութիւնն իրենց համար լաւ բան չի խտանում: Եւ դուք ուզում էք, որ այդ հրէշներն օպնեն յեղափոխական գործին: Ո՛չ, դրանք չեն կարող օպնել. դրանք յեղափոխութեան կատաղի թշնամիներն են և աւելի վտանգաւոր, քան տաճիկ բախրոպուկ վարչութիւնը, որովհետև զրանք շատ սոնգամ գինւած են լինում՝ ազգութեան, եկեղեցու, կրօնի, սրբութեան, խոհեմութեան և այլ գէնքերով,

որովհետև զրանք զիտեն յաճախ խաբել տգէտ ժողովը:

Սով է վանում, էրզրում, սով է ամէն կողմ: Բազմաթիւ մանր ու խոշոր վաշխաւուններէ ժամանակը հասել է, նրանք էլ իրենց աստաները սքել և որսի են սպասում: Այժմ արդէն տաճիկ վաշխութիւնը երախտագիտաբար պիտի վարձատրէ այդ վաշխաւու լրտեսներին և բունակալութեան փթած հիմքը պաշտպանող տղորուկներին: Եւ ահա սրբում է նրանց ազատ ասպարէզ սմբարները լեցնեն հազարաւոր փութ ցորենով և չըլուած գներով ծախել:

Բացում է մի տեղ մի իւղայի պաշտօն, իսկոյն նստեցնում են մի մատնիչ յրեսիսի, որ ի արիտուր իր արած բոլոր ծառայութիւնների, ծծի ուժասուղտ ժողովրդի արիւնը:

Ամէն կողմ տղորուկներ, մատնիչներ, լրտեսներ, Աչըղեաններ, բէյեր, ու էֆենդիներ. ծծեցէ՛ք, ծծեցէ՛ք ժողովրդի արիւնը՝ որովհետև մտնում է ձեր վերջը, հանում է ձեր օրհասը: Յեղափոխութեան սուր սուսերը ձեր դէմքին է և արդէն փայլում է: Վա՛յ ձեզ...

Բայց ի՞նչ վայ. դրանք զիտեն հանդանմանքներին յարմարել: Տեսաք, տասնիկ բունակալութեան կործանման հետեւալ օրն և կթ նրանք կը հանդիսանան յատազով, պաշտպան կտաւորած իրողութեան և այստեղ ևս կաշխատեն որոնել իրենց անհատական օգուտը:

Ընթերցո՛ղ, կարդացո՛ր եւ «Լուսադէմին» վէպը. յիշէ՛ր Հալի Միրսատին: Նա մատնում էր յեղափոխական գործիչներին, իսկ երբ յաղթութիւնը անցաւ վերջիններէս կողմը, ոգևորած ընկել էր յաղթական զորքերի առաջն իբրև յեղափոխական, իբրև գործիչ...

Հայ յեղափոխականը չպիտի խաբւի դրանցից. նա չպէտք է կանչ առնի. թշնամի են դրանք մեղ այսօր, աւելի վտանգաւոր թշնամի կը լինին տաճիկ բունակալութեան անկումից ցտայ: Այդ մարդկանց համար սրբութիւն չկայ: Նրանց միակ սրբութիւնն իրենց զրգանն է և իրենց հանգիստ կեանքը:

Իրանցից էին այն Հայ մատնիչները, որոնք ընկան վանում, տեղական մասնախմբի դաշոյնի հարածից: Իրանցից է զնրակահար եղած ոչն Կրպօն, դրանցից են Թարգբիրաշեանը, որ հազիւ առողջացաւ իր ստացած վէրքից, Տէր-Պողոսանը, որ ազատուց յեղափոխական զնրակից, Գրանցից է Աչըղեանը, որի վրա փորձեց երիտասարդ Յակոբ իր արքանաակի հարածները: Ոչէ՛նչ, այդ չյաջողակց, մի ուրիշը կը յաղորդէ: Առա՛ջ դեմ, յեղափոխական գործիչ, — այդ է ուղիղ ճանապարհը. ով ժողովրդի թշնամին է, նա սէտք է ընկի, ինչ քողով էլ ծածկւած լինի նա՛ մեղ համար միևնոյն է. եկեղեցական է նա, թէ աշխարհական. էֆենդի է, թէ բէյ կամ փաշա, — փոյթ չէ՛, նա պիտի մեռնի: Յակոբը ժողովրդի դաւակն էր, նա ինքնուրոյն, անկախ յեղափոխական էր, նա ժողովրդի անկաշառ, ինքնածիլ փրտակցութեան արտայայտիչն էր, և նրա ստալին փորձը Աչըղեանի, ժողովրդի ցեցիլից այդ ամենամեծի վրա եղաւ:

Դա՛ է միակ ուղիղ ճանապարհը, զո՛վ է տանում մեզ դէպի նպատակ:

Գ. ԽԱՇԱԿ

# Ր Ե Ֆ Ո Ր Մ Ն Ե Ր Ը

1 Յուլիսի, 1895 թ.

Տաճկահայաստանում մտցելիք երեք պետութիւնների կազմած բեֆորմները, որ մի ժամանակ խստութեամբ իբրև գաղտնիք էին պահուում, այժմ հրատարակելի վրա են դրած իրենց ամբողջութեամբ:

Դեռ այդ բեֆորմները չհրատարակած, դեռ բոլորովին անձանօթ նրանց բովանդակութեան, մենք ստանց մի որեէ վերապահութեան, բացարձակապէս վերաբերել ենք բացասօրէն, իսկ այսօր կարող ենք քնորոշել հետեւեայ խօսքով. — Սարը երկունքի մէջ էր

Տաճկահայաստանի և նրա ժողովուրդների շահերի, պահանջների համեմատ, որովհետև ո՛չ զիպլոմատիան և ո՛չ էլ սուլթանի կառավարութիւնը երբեք չեն դեկավարել այդ երկրի, այլ «իրենց պետական շահերով», մինչդեռ եթէ զիպլոմատիայի հետ մասնակցէին և երկրի ներկայացուցիչները, մեզ ենթադրել կը տային, թէ զուցէ մասամբ երկրի ժողովուրդների շահերը կարող կը լինեն այնտեղ տեղ բռնել: Մենք ասում ենք՝ արդէն մեզ բաւական է, որ բեֆորմներ կազմող բացասապէս զիպլոմատիան էր, — մի կողմ թողնելով մինչև իսկ, որ այդ բեֆորմները պէտք է սուլթանի



Յ Ո Վ Ն Ա Ն Ն Ի Է Ո Ր Թ Ա Ն Ս Գ Ա Ի Թ Ա Ն Ն Ե Ր

և վիժեց: Հէնց սկզբից էլ մենք այլապէս չէինք կարող վերաբերել, որովհետև բաւական էր մեզ, որ բեֆորմները կազմում է մենմենակ զիպլոմատիան, և ոչ մինչև իսկ նոյն երկրի ժողովուրդներից ընտրած ներկայացուցիչների անկացութեամբ մի կողմից, իսկ միւս կողմից էլ, որ նրանք, բեֆորմները, այսպէս թէ այնպէս, սուլթանի կառավարութեան հաւանութիւնը պիտի ստանային. հետեւապէս և այդ բեֆորմները իրենց էութեամբ երբեք չէին կարող լինել կազմած երկրի,

կառավարութեան հաւանութիւնը գտնէին՝ ոյժ ու ցօրութիւն ստանալու համար, — որ մենք հէնց սկզբից բացասօրէն վերաբերէինք՝ առանց ծանօթ լինելու անգամ նրանց բովանդակութեանը, որովհետև զիպլոմատիայի հասարակական վարդապետութիւնը ոչ թէ մարդկային իրաւունքների հաւասարութիւնն է, ոչ թէ անհատական ու հասարակական ազատութիւնն է, նրա ոգին՝ ոչ թէ մարդասիրական գաղափարներն են, իսկ հաւատը՝ թոյլերին, կեղեքողներին, հալածողներին,

րոնաբարևոգնեղին պաշտպանները, դիպլոմատիան շա՛տ շա՛տ հետո է զբանից, այլ որ նրա ամբողջ գոյութիւնը հիմնուած է զպետական շահերի վրա, և դրանից զուրս նա ոչինչ չի ճանաչում՝ նա ամէն ինչ որ է կը բերի պահն, այլ որ նրա զործուէնէութեան զորդէ ոյժը, իւր պետութեան համար «չաղ կտոր» ձեռք բերեն է՝ ի վնաս ինչի և ում էլ ուզում է լինի, այդ միևնոյն է։ Գիպլոմատները բերնում յորջորջող մարդասիրութիւն, քաղաքակրթութիւն, կամ ինչպէս շատ են սիրում սակ Նայիական խնդրում, «քերտանէութիւն» բառերը գատարկութիւններ են և զբանք միայն իբրև դէմք են, միջոց են նրանց ձեռքում իրենց նպատակին ծառայեցնելու, զբանք գիմակներ են գիմակատրոյն իրենց պետական շահերը։

Գիպլոմատիայի ձեռքով կազմած ընթրոմները ամենից ատու պետի բուսականութիւն տային Տաճկահայաստանում շահ ունեցող իւրաքանչիւր պետութեան ատանձին-ատանձին և ոչ թէ այդ երկրում ապրող ժողովրդին։ Երկրորդ՝ ընդհարում շատանցնելու համար, նրանք պիտի համերաջինեցնէին հակաակերպ պետութիւնների շահերը։ Երրորդ՝ նրանք միևնոյն մամանակ համ պիտի պաշտպանէին սուլթանի կառավարութեան իշխանութիւնը, չորրորդ՝ համ էլ հայ ժողովրդի աչքին թող փնչելով, հայիկական յեղափոխութեան ատմին ատնէին, որպէսզի հնարաւոր լինի պահպանել քաղաքական կացութիւնը, STATUS QUO։

Ահա թէ գիպլոմատիան ի՞նչ մտտիւնեցրով է ղեկավարել Տաճկահայաստանի համար ընթրոմներ խմբարդելիս, ահա Տաճկահայաստանի համար ծրագրուող ընթրոմները բացարայկս դիպլոմատիայի ձեռքով կազմած, պիտի անցնէին այս բարդ և վերին աստիճանի դժուարին ճանապարհներով, մինչև որ նրանք կարողանային հասնել բուն երկիրը։

Նրանք անցան ճանապարհի մի մասը, բայց դեռ միւս մասը չեն անցել։ Դուցէ նրանք վաղը կանցնեն, այդ միևնոյն է, զբանք նեխած, լուծած դիակներ են, ի՞նչ պէտք է սպասել...

Ինչպէս միշտ, այնպէս էլ ներկայումս Հայիկական ննդրով հետաքրքրող կառավարութիւնները, որ ղեկավարում են իրենց պետական շահերով, ոչ մի կասկած չկայ. ձեռ առնեն և պատմութիւնը, ձեռ առնեն և նոյնիսկ ինքը, ևրեք պետութիւնների կազմած «իրեն թղթին շարժող», «լիտու ընթրոմների» թարմ ծրագիրը և վերջապէս ժամանակը։—

Այլ ընթրոմները ծրագրել են Տաճկահայաստանի համար, իբր վերջ տարւո տիրող պայմաններին. այդ պայմանները շա՛տ վաղուց գոյութիւն ունին, զբանք ոչ երէկայ ծնունդ են և ոչ էլ անցելի օրւայ. դիպլոմատիան այդ շատ լաւ գիտէ, ի՞նչ է արել. ոչինչ։ Մի րոպէ մոռանանք ճշմարտութիւնը և ենթադրենք, թէ դիպլոմատիային Տաճկահայաստանի իբրև դրութիւնը յայտնի եղաւ միայն Սասունի կոտորածից յետոյ։

Իսկ ահա շուտով լրանում է տարին, ի՞նչ է արել նա.— Սասունի տմարդ կոտորածից յետոյ անցան ձիւր ամիսներ, դիպլոմատիան երկար տատանելուց յետոյ, զործին հաղիւ պաշտօնական բնուորութիւն տաւ։ Երկար քանակցութիւններից յետոյ միայն բարեհաճեց ուղարկել Քննիչ-Յանձնախումբ՝ Սասունի կոտորածը քննելու. իսկ այս տարւայ մարտ-ապրիլ ամիսներին խմբագրեց ընթրոմների ծրագիրը, մինչդեռ բաշխութեան ներկայացեց մայիսին, այժմ արդէն յուլիս ամիսն է սկսում և այդ ողորմելի ընթրոմներից զեռ քաշչւում են երեք պետութիւնների ղեկավարների։ Բարձր Գրան մէջ, իսկ միամամանակ այն երկրում, որի համար խորհում են պետութիւնները, շարունակում են նախկին պայմանները, շարունակում է նոյն զժոխային կեանքը, սեղի են ունենում նոյն հրէշային զգանձութիւնները։ Խորհրդակցեցէք նրանց հետ։ Մի-թէ՞ այս փաստերից յետոյ էլ կարելի է կասկածել, որ պետութիւններին դրողեցնողը իսկապէս երկրի շահերը չեն։ Եթէ պարզ է, որ պետութիւնները ղեկավարում են իրենց շահերով, պարզ է նոյնպէս, որ նրանք պիտի լինեն ի վնաս ժողովրդեան, այս է լողիզական հետեղութիւնը վերոյիշեալ դատողութեան, որովհետև ներկայ պետութիւնները իրենց կազմակերպութիւնով ոչ այլ ինչ են, եթէ ոչ որոշ դասակարգերի շահերի արտայայտիչ, հետևապէս և նրանց պաշտպանը. ներկայ պետութիւնները աթման արող դասակարգի պահանջներին, ներկայ Հասարակական կազմակերպութեան ու նրա տնտեսական յարաբերութեան մարմնացումն են. և որովհետև տիրող դասակարգը իր էութեամբ բոլորովին հակառակ է աշխատաւոր դասակարգի պահանջներին, պարզ է, որ ներկայ պետութիւնները ևս պիտի հակառակ լինեն. ինչպէս տիրող դասակարգը իր գոյութիւնը հիմնում է աշխատաւոր դասի աշխատանքի վրա, իր գոյութիւնը պահպանում է ժողովրդի բերնից խլած կոտորով, նրա վրին նստած, նոյնն են և ներկայ պետութիւնները, իբրև հաւատարիմ արտայայտիչները տիրող դասակարգի պահանջներին։

Ներկայ պետութիւնների էութիւնը լինելով՝ պաշտպանել մի որոշ դասակարգի շահերը ի վնաս ընդհանրութեան, աշխատաւոր ժողովրդի, հասկանալի է, որ նրանց կազմած ընթրոմներն էլ չեն կարող լինել Տաճկահայաստանի ժողովուրդին բաղձանքների հաւատարիմ արձագանքը։ Եւ այսօր իրենք, երեք պետութիւնների ծրագրած ընթրոմները պարզապէս հաստատում են, որ զբանք հալածող, տանջող, բռնաբարւող ժողովուրդի շահերը պաշտպանելու համար չեն խմբագրւած, այլ պահպանելու այդ երկրում քաղաքական ներկայ պայմանները, STATUS QUO, ինչպէս պահանջում էին իրենց պետական շահերը։

ՅՈՒՆԱՆ ԴԱԹԵԱՆ

# Հրայրի յայտարարութիւնը

Հրայրը «Դժոխք» ստորագրութեամբ թղթակցութիւններ կը գրէր Երկրի կարևոր անցեբաւ մասին և այդ թղթակցութիւնները կը դրկէր թէ՛ «Դրօշակ»-ին և՛ թէ՛ «Հնչակ»ին: «Հնչակ»ը հրապարակ եկաւ յայտնելու, թէ Դժոխքը «Դրօշակ»ին չէ գրած, այլ խմբագրութիւնը իրացուցած է «Հնչակ»ի թղթակցութիւնները: Հրայրը նամակով մը յայտնած էր, որ միշտ էր թէ ինք իր թղթակցութիւնները կը դրկէ Երկու թերթերուն ալ: Սակայն, վէճը չիպակեցաւ, «Հնչակ»ը իր յարձակումները շարունակեց:

Հրայրը, որ 1890-էն սկսած գործօն յեզափսխութեան վարիչներէն մէկն էր, անընդունելի կը գտնէր տարամբժ կուսակցական ելոյթները և կողմնակից էր ուժերու կեդրոնացման: Արդէն 1894-95-ին սերտօրէն կապուած էր Դաշնակցութեան հետ, միշտ մնալով այն տեսակէտին թէ յեղափոխական գործօն ուժերը, ո՛ր կուսակցութեան ալ որ պտակամբն, պիտի գտնին համակրանք, երբ անոնք պատերազմի ճակատի վրա են: 1895-ի գարնան, Հրայրը ստիպուեցաւ հետեւեալ յայտարարութիւնը գրելի «Դրօշակ»-ին, որ Երկրի բոլոր գործողներու գայլոյթի արտայայտութիւնն է:

Հրայրը այնուհետև դարձաւ Հ. Յ. Դաշնակցութեան սխումբերէն մէկը և ամբողջ տասնամեակ մը մնաց Երկրի յեղափոխութեան վարիչը:

Մամօթ. ԽՄԲ.

յՕ... 95 մայիս 2.

Վաղուց անտի հայ յեղափոխական դործի մէջ նըշմարելի էր անձնական կրից և ետական փառաց արդիւնք եղող ահագին վեհաները, հայ հասարակութեան շահերին, նորա կենսական հարցերին: Ժողովրդին քաղաքական, տնտեսական և բարոյական հալածանաց ներկայ ժամանակ, փոխանակ այդ ետը կորչելու և անհետանալու յօգուտ Ժողովրդի, դնալով աւելի և աւելի հակապական կերպարանք կը ստանայ, որով այն եղբակացութեան կը յանգիմք, որ այդ արեան հեղեղում, Ժողովրդի ներկայ օրհասի մէջ, կուսակցական բաժանմունքը, անձնական կրքերէն բխած կուրուքիւնը, ետական փառքը, Ժողովրդը կը տանի յաւտեսնական կորուստի գուրը...

Մինչ ցարդ լռելնուս պատճառը՝ միայն այն յոյսն էր, որ այդ ճիւղերը իրենց փոքր դրութեան մէջ արմատախիլ պիտի լինեն. զժբախտարար, այդ յոյսը ի դերև կնիւնով, այսօր յարմար ժամանակ կը դռնեմ բացատրելու և հայ հասարակութեան առջև բաց անելու մի զվառուր կէտի մասին, մեր հայեացքն ու զգացումները:

Իբրև նմուշ վեր կանոնի մյն կէտն, որ մի քանի ամիսներէ ի վեր հայ յեղափոխական կուսակցութեանց միջև իրար վիճաբանութիւններ և զրպարտութիւններ յառաջացուցած է. մինչ ցարդ լռելուս պատճառը խորին զգանքն և ի սրտէ վիշտս էր, իսկ այսօր, երբ այլ

ևս ոստ կը դնեմ Ժողովրդի ցաւոց մասնակից լինելու ուղիի վրա, ինչո՞նք կը հրաւիրէ ինձ այլ ևս արհամարհական լուծութիւնը ի բաց թողուլ, և պաշտպանել բարոյական կէտ մը, որն արդէն լրջութեամբ խորհողի մը առջև պարզ և մէկէն է...

Ես մօտէն դիտակից լինելով անմահանուն Պ. Մուրատի դործունէութեան և մասնակից, լստ կարևաց, նորա ձեռնարկներին, — մենք հարիւրաւոր փորձերով համոզուեցինք, որ կուսակցական բաժանմունքը, երբ



Հ Ր Ա Յ Ր

այդ յառաջ կուզայ իբրև հետևանք զազափարներն արմատական տարբերութեան, երբ կուսակցութիւնը կը պայմանաւորուի մի որևէ հասարակական հարցի կամ երևոյթի մասին, տարբեր աշխարհայեցողութիւնից, Ժողովրդի խաղաղ ժամանակին, անբարոյականութիւնները, բարոյականութիւնից գողոց, ճշմարտութեան արտայայտել, և Ժողովրդի քայլերը յառաջ տանողն է: Իսկ յեղափոխական դործի մէջ, պատերազմի դաշտում, Ժողովրդի ներկայ դրութեան և իրերի այս տաղանապալից վիճակի մէջ, մանաւանդ երբ չկայ գազափարի տարբերութիւն, երբ հիմնաքարը՝ երկու կողմից էլ, մարդկանց նեղ «ետ»-ի մէջ է կայանում, աղպիտ կուսակցութիւնները Ժողովրդի հիմը քանդող ու սուպալող են... Այդպիսի կուսակցութիւններն են, որ զուգապատեւ են Ժողովրդի իրական շահուց դաւաճանութեան...

Այսօր Պ. Մուրատը, Ժողովրդական այդ հերոսը, բանտի անկիւններ կը տնջի, բայց ես ազատ լինելուս համար, անհրաժեշտ պարտք կը զղամ նորա լայն հայեացքները շծածկել մութ անկիւններում, բարոյապէս չմեղեցնել նորա զգացմունքները, որ Ժողովրդի իրականց պաշտպանութեան ներկում էր: Նա Ժողովրդի ցաւերը իր կաշիի վրա կրելով, դարձաւ Ժողովրդի արդար պաշտպան. նա իր կեանքը ներկեց Ժողովրդի արդար դատին և ո՛չ այս կամ այն կուսակցութեանց ետական փառքին... Նոյնը և ամէն մի արջիւն դործողի

պարտականութեանց այդ ու բնը պէտք է լինի: Ժողովուրդի անմիջական շահը կը պահանջէր և միշտ կը պահանջէ, ընդիմաբար ու ծերի միացում: Ինչո՞ւ... Որովհետև թշնամին (չժամկենք) ուժեղ է, համեմատաբար, խիստ ուժեղ: Եւ այդ նպատակաւ էր, որ այդ հերոսը, թէ՛ մանաստր անհատների և թէ՛ գաղափարակից ընկերների հետ միացած՝ իւր ամէն շնքը չէր



ՊԱՆՈՍ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ-ՏՈՂՈՎՐԳԻ

խնայել ձեռք բերել այդ ցանկալի նպատակի իրագործումը: Թէ ինչը Մուշատը և թէ ես գրղեալ այս և շատ մը երկար և արդար պատճառներից, մենք մեր քաղաքացի-քիւնները կուզարկէինք երկու կուսակցութեանց ևս. մեզ ցանկալի էր, եթէ լինէր տասնաւոր յեղափոխական թերթեր, նոյն ծրագրով, նոյն գործին ներկած, բոլորի մէջն էլ նոյն թղթակցութիւնները հրատարակած տեսնել. ոչ թէ մեր եսական փառքի համար, այլ ժողովրդի անտանելի ցաւերը շատ քով մարդկանց ակամօքն հասցնելու և գիտակից դարձնելու համար:

Թող այդ կուսակցութիւններէն ամէն մէկը իւր խղճին հարցնէ թէ արդեօք այդ կուսակցական բաժանմունքը չէ՞ր գլխաւոր և բուն պատճառը Մասնոյ մ: աւերակաց տակ ծածկելուն. և անշուշտ, այդ անձնական կրից և կուսակցութեանց այսպիսի վտանգաւոր հետևանքները մեզ գիտել կուտար և պիտի տայ, որ ուրեմն դուք, կուսակցութիւններդ անխղճաբար ժողովրդի ոչխարի պէս մորթելուն և նորա անարատ արեան հեղեղի պէս թափելուն վրա հանդիսատես լինելով՝ հաճոյք մը կը գգաք: Դո՛ւք, կուսակցութիւններդ, ի բաց թողած ժողովրդի դրական ուժի կենտրոնացումը և նրա կենսական պէտքերը, անձնական մանրակրկիտ հաշիւներով գրաւած էք: Կարծեմ անկեղծ գործող մը խիղճը հանգիստ կը լինի այն ժամանակ, երբ մինչև իւր կենաց վերջին կաթիլը, իւր ամէն շնքն, ջիւղն ու արիւն ներքած է հասարակութեան ընդհանուր շահերին և ո՛չ հսակա՛ն ձգտմանց, անձնական հաւոյս և այլն և այլն: Արդեօք այլ ևս ի՞նչ կը նշանակեն ձեր այդ երկան ճառերն ու խմբագրականները, կարծես պրելու նիւթ բան չլինէր...

«Մենք այսպիսի նահատակ ենք ունեցել», «Երօրա՛կ»

անուն մի թերթ դրական գողութիւն է արել», «Մեր նամակներն ու թղթակցութիւնները իւրացրել, ևն ևն»:

Դա բարոյական մահ է. նամանաւանդ այն պատճառով, որ Հ-ի կուսակցութիւնը լաւ գիտէր, ու չէր կարող չգիտնալ, որ թղթակցութիւնները չեն գողցւած, չեն իւրացուցած, քանի որ այդ կէտն լաւ ևս յայտնի էր «Ատրպատականի և Կովկասի ներկայացուցիչ»...

Եւ մեր նպատակն է ո՛չ միմիայն թշտութեան մասնաձեռն ժողովուրդը թիրք վայրենութիւններէն ազատել, այլ նոյնիսկ թէ ֆիդիքական և թէ բարոյական բռնութիւնների դէմ բողոքել... Թո՛ղ պարծի ինքը ժողովուրդը, Թո՛ղ հանգստանայ ժողովրդի խիղճը, Թո՛ղ նայի իւր աքտրեալ, բանտարկեալ որդոց, Թո՛ղ աչքը յառէ՛ դէպի կախաղաններ, դէպ ի Հայաստանի հովիտն ու ձորը, ահա այնտեղ է, որ ժողովրդի արեան գորշին այլուձ տուններու ծխոյն հետ խառնելով հայ յեղափոխական գործի ղեկավարների գլխի շուրջը կամար կապած, բողո՛ք և լուսա՛նք կը տեղայ:



Գ Լ Ո Ր Գ Զ Ա Ռ Ո Ւ Շ

Բաւական է, պարոններ, բաւական է, ժամանակ է գրալ ձեր ամարդի ընթացքը: Ժամանակ է գրալ, որ Մասունի 10,000 նահատակների ձեռին, 8-10 հրացան միայն տալու կարողութիւն ունեցող մի կարգավերպութիւն՝ ինքզինք փիղ Ոկարնի, իսկ Մասունի բարձունքը քանդող, աւերող ամեհի գազաններին՝ թոթոթ՝ գա միայն ծաղրածունների գարծ է: Գոթոթ է նկարուած նաև Դաշնակցութիւնը՝ որը՝ եթէ քիչ էլ է գարծել.

գտնէ համեստութիւն է ունեցել չգտայու, ընթերցող-  
ների ակամօքը իրացնելու չափ՝ «մե՛նք դարկինք»,  
«մե՛նք ջարեցինք»...

«Մե՛նք»... շարունակ «մե՛նք»...

Եւ դու՛, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, որ  
ինքզինքդ կը յորջորջես այդ խոշոր բառերով, արդեօք  
խղճէ խայթ չե՞ս դգար, երբ Մուրատի երեսին փակե-  
ցիր քո դուռը, անօգնական թողլիք նրան, միայն այն  
պատճառով, որ նա պատկանում էր Հնչակեան խմբին,  
այսինքն՝ առիթ չէր ունեցած քեզ հետ անձամբ ծանօթ  
լինելու:

Եւ թողի՛ր, դու՛, որ նա դատարկածնոն դառնայ  
ողապագայաբար, որպէս իր անհոգի անդր... Միթէ՛  
գա՛րս կը պարտաւորեմք քեզ քո՞ «Դաշնակցութիւն»  
մեծահնչուն անունը: Մ՛րտեղ է, ու՛րեմն, քո «դաշին-  
քը», ո՛ւր է քո կոչման բարձրութեան վրա պտնելը,  
երբ յեղափոխականների լաւալոյսի կարկառած ձեռ-  
քում... քար միայն դրիք հացի անդ... ք

Շնորհակալութիւն դաւաններին... Նո՞նա պիտցան  
բուն դաշնակցական լինելը, նո՞նա զրկարաց ընդունե-  
ցին վշտացած հերոսին՝ իւր ընկերներով, և նա մու-  
ցաւ մեզանից ստացած վիրաւորանքը, մուցաւ նա,  
որովհետեւ սիրտը՞դի էր իսկական սիրով, սիրով՝ դէ-  
պի թշւառ ժողովուրդը, որ էրեն կը սպասէր... Այո՛,  
անմահ Մուրատի մեղքը միայն անոր մէջ կը կայանար,  
որ նա «անպայմաններէք» չէր: Անպայման Հնչակեան  
է պահանջում լինել «Հնչակ»ը, այսինքն, գիտնայ բո-  
լոր դաշնակցականներին գրականական դողեր, աւա-  
ղակներ անանել, պիտնայով հանդերձ, որ յոս զրպար-  
տութիւն է, ստո՛ր զրպարտութիւն... ք

Անպայման դաշնակցական լինել է պահանջում նաև  
Դաշնակցութիւնը, այսինքն հայոյոյն հնչակեաններին  
աչ ու ձախ, չխնայելով նոյնիսկ Տամատեաններին,  
Մուրատներին, գիտնայով հանդերձ, որ նոքա հերոս-  
ներ էին... Բաւական է... ք

Ի՞նչ ունիք բաժանելու կըրայք... Փա՛ռք... Թո-

ղէ՛ք, դա՛ Տամատեաններին և Մուրատներին, Վար-  
դաններին և Մարգարեներին, Զաքարեաններին և Ղևոն-  
ներին, նաև Արապոսներին է սեփական... Դրա՛մ...  
Ձէ՞ որ Ղազարոսի պէս աղքատ էք երկուսդ էլ, համե-  
մատելով դորձի յանճուս մեծ պահանջների և անմի-  
ջական կարիքների հետ:

Ի՞նչ ունի՛ք, ի՞նչ... Մ՛րն է այն զաղափարը, որ  
մեզ ի միմիանց կը ջոկէ, ի՞նչ կէտի վրա է ձեր հա-  
կացողութիւնների մէջ կողմ տարբերութիւնը, որ  
դուք ձեր ողորմելի ուժերը միացնելու տեղ կը ջլա-  
տէք, և ձեր պաշտպանութեան յանձնած թշւառ ժո-  
ղովուրդի տունը հիմնալստակ կը տապալէր...

Աժօ՞թ է, յանցա՛նք է... Դ՛ժՈՒԹ

Այս գրութիւնից մի ամիս յետոյ, Գժոխէն «Իրօ-  
շակ»-ի խմբագրութեան ռեդակում է մի կարգ բացա-  
ւորակամ, հետևակ թղանդակութեամբ...

95 ՅՅս. 13.

Մայիս ամսուայ մէջ շ-ի (կարդա՛ Հնչակ՝ Մ. Ո.)  
և Դ-ի (կարդա՛ Դաշնակցութիւն՝ Մ. Ո.) կուսակցո-  
թեանց Մուրատի և իմ հայացքները պարզած եմ մի  
յօդւածով, զոր զրկած եմ երկու թերթերին էլ. այս-  
պէս թէ յայտէս, ի մօտոյ դիտակից լինելով ճշմար-  
տութեան, նոյն յօդւածի մէջ գրած մի քանի կէտն-  
բու մասին կանեմ հետևեալ դիտողութիւնները...

Ա.— Ծանոթանալով Դաշնակցութեան ծրագրի  
սպակներտրոնացման, ճշմարտութեան զգժ մեղանշած  
կը լինեմ, մեղադրել ամբողջ Դաշնակցութիւն՝  
Մուրատին ձեռք չկարկառելուն առթիւ, քանի որ մի-  
այն Տ...-ի խուճըք մերժել է նրան իբր անպայման  
հնչակեանի... ք

Բ.— Դաշնակցականները՝ կուսակցական լինելով  
մէկտեղ, նրանք հայտնում են շ-ի կենտրոնին, խըմ-  
բագրութեան, և անձնական կրքերից կուրացող պոռո-  
տախօսներին, մինչդեռ կը յարդեն բոլոր անձնուրաց  
գործիչները՝ խոստովանելով, որ նրանք հելլասներ են:



# Վ Ն Ա Ս Ա Կ Ա Ր Տ Ա Ր Ր Ե Ր

Ամէն անգամ, երբ յեղափոխական փոքրամասնութեան անձնագրէն, տողուն և անվճատ գործունէութեան շնորհիւ յեղափոխական կազմակերպութիւնը ձեռք է բերում ոյժ և ազդեցութիւն, կենքի մէջ ստեղծուած է հաստ դէպի գործի յաջողութիւնը և հարկուած է որոշ աստիճանով յեղափոխական ուղին. ամէն անգամ էլ հասարակութեան տարրեր խաւերի մէջ իրարանցում է ընկնում: Բայց ընդհանրութեան յեղափոխական ոգու բարձրանալու հետ միատեղ, ամէն մի տեղից վեր կացող բախտախնդիր, ամէն մի վաշխառու, կեղեքիչ, մինչև իսկ մատնիչներ, դաւաճաններ, մի խօսքով ամէն տեսակ սողուններ, որոնք գիտնէ հիանալի կերպով յարմարել շանդամանքներին և ամէն տեսակ ջրերում ձուկ որսալ, ասպարէզ են դուրս գալիս իբրև «յեղափոխականներ» կամ յեղափոխութեան համակրող բարեկամներ: Վնասակար են այդ սողունները այդպիսի բուսկներում, երբ փրուն խօսքեր փչելով և փարիսեցիական ձևեր բանեցնելով, շահագործում են ամբոխի դիւրահաստութիւնը ու տգիտութիւնը: Իսկ անտանելի են, ցաւ ու պատուհաս են դրանք յեղափոխական շարժման համար այն ժամանակ, երբ յեղափոխութիւնը կրում է ժամանակաւոր անյաջողութիւն և սկսում են տիրել աւելի վատթար պայմաններ յեղափոխական գործիչներին համար:


Այդ ժամանակ այդ զագրելի արարածները սուս ու փուս քաշում են իրենց բները և արդէն «խոհեմութիւն», «հեռատեսութիւն», «տողովրդասիրութիւն»-«միութիւն» և այլ դիմակների տակ ղլարձեալ շարունակում են խաղալ ժողովրդի հետ, աշխատելով մի կերպ ջողարհել իրենց իսկական գոյնը: Եարունակելով կրել «յեղափոխական», «ազգասէր» սխողոսները, դրանք դառնում են իսկական յեղափոխական գործի ամենամնասակար խոչընդոտներ:

Այդ արարածները աղբեր են, որոնք մեծ ու փոքր կոյտերով, տեսակ-տեսակ բուրժուանքներով ու գոյներով թափած յեղափոխական ճանապարհի վրա, ապականում են յեղափոխական միջավայրը:

Ամէն մի յեղափոխական գործիչ ստիպած է ժամանակ առ ժամանակ թողնել իր բուն գործը և գրադուել այդ աղբերով, որոնք ընկնում են ոտքերի տակ և խանգարում իր կանոնաւոր ընթացքը: Ժամանակ առ ժամանակ, կամայ ակամայ նա իր վրա պէտք է առնի այդ զգրելի աշխատանքը, իմանալով շանդերձ, որ իր ցարխաւիին հէնց առաջին հարւածից այդ կոյտերը միանգամից կը բացեն և կը լեցնեն օդը իրենց դարչահոտութիւններով: Արժանազոծ բամբասանքների, զբր-պարտութիւնների, իտարիչների միջնորդութի միջով պէտք է դիմել իսկական յեղափոխական գործիչը դէպի իր բուն նպատակը:

Կենքի մէջ տեսնում էինք կուսակցութիւնների միութիւն քարոզող ուտողութիւններ, այդ միութեան անունով նոր, իրենց անձնակամ կուսակցութիւններ կազմողներ և այս ձևով բուն գործից խոյս տւող սնափառներ, անվերջ պատրաստութիւնների ձգտող և ոչ

մի պատրաստութիւն չտեսող խոհեմ յեղափոխականներ, գանազան տեսակ խարբաններ, շարժատաններ. այժմ էլ քիչ չէ բարեսրտութեան դիմակի տակ մտած բախտախնդիրների թիւը, որոնք իրենց ետեից տանում են միամիտների մի բանակ: Դրանք սկսել են նոր ձևի տակ մի նոր արշաւանք «Դաշնակցութեան» դէմ, որի առթիւ աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել:



Ռ Ո Ս Տ Ո Մ

«Ժամանակ չէ այլևս յեղափոխութեամբ պարայել, այժմ հաց պէտք է տալ ժողովրդին և ոչ թէ գէնք» լսած ենք ամէն կողմից ժողովրդի դրութեան վրա կոկորդիլոսեան աղի արցունք թափող փարիսեցիներից:

Իսկապէս, ահա ամենայրմար բուսկն երևան գալու իբր վերին աստիճանի բարի, զգալուն, փափուկ սրտի տէր մարդ, իբր խոհեմ, ժամանակի պահանջներին յարմարող, ժողովրդի ցաւերը ճանաչող գործիչ:

Բացի այդ, բարեգործութեան դիմակի տակ կարելի է և վտանգի չենթարհել իւր անձը, որն այնքան թանկ է հայրենիքի համար, իբրև արթուն հովիւ պէտք է հսկել իւր սիրեցեալ ժողովրդի վրա, չլինի թէ նա մոլորի և տարւի «ծայրայեղ» յեղափոխականների դէպի կրօտեան անդունդը տանող գործունէութեամբ:

Ահա ամենայրմար բուսկն ամենաթամ զնով ու ամենամիտանող ճանապարհով իսկական ազգասէր մեծ հույժ ձեռք բերելու:

«Ժողովրդին հաց պէտք է տալ», ասում են մեր ժողովրդի «իսկական բարեկամները»: Ո՞վ է հակառակը պնդում. ո՞վ է ասում, թէ հարկաւոր չէ հաց տալ: Բայց դուք ինքներդ ինչո՞ւ գոնէ այդ չէք անում, ինչո՞ւ այդ պարտքն էլ ծանրանում էք յեղափոխական կազմակերպութիւնների վրա: Ո՞ր է կէք դուք, երբ Սասունի կոտորածից յետոյ « Դաշնակցութիւնը »



ստիպւած եղաւ մասամբ շեղել իւր բուն դործունէութիւնից և բարեգործութեամբ զբաղուել՝ իւր սեփական միջոցներէրց զբամական նպատակներ բաժանելով բոլորովին անօգնական մնացած երկրին: Ո՛ր է ի՞նչ դուք վերջին կոտորածներէրց յետոյ, երբ զարձակ «Գալ-նակցութիւն» և առաջինն եղաւ թշուա, թալանւած, արեւնաքամ ժողովրդին անմիջական դրամական օգնութիւն հասցնողը:

Այժմ էլ, երբ դուք զբաղւած էք միայն հայրենասիրական քարոզներ արտասանելով և շնչին կոպէկներ էք միայն անում ձեր հաստափոր բարեկամներէր զըրպաններէրց, զարձեայ ամբերիկացի, անգլիացի, մինչև իսկ դերմանացի և չլիցարացի պատորներն են մեր ժողովրդին օգնութիւն հասցնողը:

Աժժ՛ի՛ մեզ...

«Ժողովրդին այլևս գէնք չպէտք է տալ»: Այս խօսքերն արտասանում են այն ժամանակ, երբ փաստերը պարզ ցոյց են տւել, որ ինքնապաշտպանութեան համար գէնքի հարկաւոր քանակութիւնը չկար, երբ արդէն ձեռքի տակ ունենք փայլուն ապացոյցներ, որ այն տեղիբը, որտեղ մենք ունեցել ենք գէնք կամ գինւած հայտուկներ, կուել, պաշտպանել են իրենց կայքը, զոյքը կամ թէ՛ բողոքովին ազատ են մնացել յարձակութիւնէրց: Այս խօսքերն արտասանում են այն ժամանակ, երբ Տաճկահայաստանի ամէն կողմերում, մանաւանդ ազատ մնացած վայրերում, օրէ օր սպասում են նորանոր ընդհարումներ, երբ կոտավարութիւնը պատրաստ իւր արամարութեան տակ է պատճում իրեն ծառայութիւններ մատուցած համիտական զնդերին և միւս կիսափայրենի լեռնականներին. երբ միւս կողմից գէնքի նշանակութիւնը հասկացած հայ ժողովուրդը յուսահատական աղաղակներ է՛ անում և ձեռքերը պարզած գէնք է՛ հայտնում. երբ թալանւած դիւրերն իրենց իրենց մէջ հանդանակութիւն են բաց անում, իրենց վերջին կոպէկները դուրս են հանում գէնք ձեռք բերելու համար:

Ժողովուրդը գէնք է պահանջում, իսկ մեր խոհեմ գործիչներն աշխատում են հաւատացնել ժողովրդին, որ նա սխալում է, նրան ոչ թէ՛ գէնք է հարկաւոր, այլ հաց...

Հաւատա՞նք այդ խոհեմների անկեղծութեան:

«Հարկաւոր է դադարեցնել յեղափոխական շարժումը», պահանջում են նրանք: Այս կէտում դրանց հետ միանում են և նրանք, որոնք վերջին կոտորածների տպաւորութիւններէրց դեռ չեն ազատուել և խօսում են աւելի զգացմունքով, քան թէ՛ ինկրով:

Մենք արդէն քանիսց անգամ ստի՞թ ենք ունեցել ցոյց տալ, որ յեղափոխական շարժումը անհնարին է կանխեցնել, քանի՞ որ նա հետեւանք է Տաճկահայաստանում տիրող անտանելի պայմանների, և քանի՞ վատթարանան այդ պայմանները, այնքան աւելի սաստիկ պէտք կը զգացի ուժեղ յեղափոխական շարժման:

Միմիայն իրերի անկարգ դրութեան բարեփոխումը կարգ է վերջ տալ յեղափոխական շարժման:

Պահանջելով դադարեցնել յեղափոխական շարժումը, դրանք կողմնակի կերպով մեղադրում են յեղափոխականներին, համարելով նրանց այդ բոլոր պէտաների պատճառը: «Աստուածների պատասխանաւ...»

Թիւնը յեղափոխականների վրա բարդելով և յուսահատութեան մէջ ընկնելով, այդ կարճատևները մոռանում են մարդկային պատմութիւնը, մոռանում են, որ ուրիշ աղբեր աւելի սուսկայի արհաւիրքներ միևից են անցել և իրենց աղատութեանը հասել. մոռանում են և հայոց պատմութիւնը, դարերի ընթացքում հայերի կրած դժոխային տանջանքները:

Դառնալով վերջին կոտորածներին, հարցնում ենք. չե՞նք չափազանցում արեւօք դրանց բացասական նշանակութիւնը:

Վերջին դէպքերը մեծ հարւած էին հայ ժողովրդի համար, այդ անհերքելի է. ամենքն այդ զգացին և սուսկային՝ թէ՛ մենք և թէ՛ ուրիշները. զգացնք, սրովհետև մեր թշնամիները գործում էին սրբով, հրացաններով, որովհետև ամենքի աչքի առաջ արին էր հոսում, և այդ բոլորը կատարում էր ազատ համարձակ:

Սակայն, մենք մինչև այժմ էլ նոյնպէս գոհեր էինք տալիս, հայ ժողովուրդը արեւնաքամ էր լինում, հայաքանակ դաւառներն ամայանում էին կամ բռնում քրդերով, չեքքեղներով և այլ լեռնականներով, բայց ոչ ոքի վրա այս հանցամանը հարկաւոր ազդեցութիւնը չէր թողնում, ոչ ոք չէր սուսկում, չէր կատարում. ոչ ոք չէր մտածում հարկաւոր չափով ժողովրդի այս անտանելի պայմանների մասին: Այստեղ սուրբ հազիւ էր խաղում, արեւը հազիւ էր հոսում, բայց և այնպէս ժողովուրդը ուժասպառ էր լինում և լուռ ու մուկ կտորում երկրի ընդհանուր պայմանների ճնշման տակ:

Ո՛ր են մեր բազմամարդ հայաքանակ դաւառները, ո՛ր են նրանց չարքաշ քնակիչները: Թողնե՛ք հեռաւոր անցեալը: Մեր աչքի առաջ դատարկում են զգալի կերպով Մշոյ Դաշտը, Մասկոտականը, Կարնոյ և Բաբերդի շրջակայքը, Խնուսը, Բասիսը... Մեր աչքի առաջ Արաշէրտը Բայազետի հետ միասին կրցրին իրենց քնակիչների 9/10 մասը: Զուտ հայաքանակ Խիզանում մնացել են հազիւ մի երկու գիւղ: Մինչդեռ ոչ ոք չի լսել, որ այդ կէտերում կտորած եղած լինի:

Ձէ՛, հայ ժողովուրդը անկարող է ապրել Տաճկահայաստանում տիրող կարգերում. նա ուժասպառ է լինում, նա մեռնում է. նա չի կարող չբողբել, ոտի չկանգնել և չդիմել յեղափոխութեան, իրրե իւր միակ փրկարարին: Մեր «խոհեմ աղապատներէրց» բոլոր քարոզները շատ-շատ կու՛նեն բացասական նշանակութիւն, կը դանդաղեցնեն յեղափոխական ընթացքը: Կարո՞ղ էք արմատախիլ անել հայ ժողովրդի արեան մէջ մտած կեանքի նորանոր պահանջները, կարո՞ղ էք փոխել նրա ուղեղը և նեարդերը. յոյս ունէ՞ք նրան զննել ստրկութեան, անտանական դրութեան մէջ, — եթէ՛ այո՞, փորձե՛ք՛, և այն ժամանակ դուք կարող էք յոյս ունենալ յեղափոխութեանը վերջ տալու:

Ժողովուրդը սկսել է յեղափոխութիւնը և նա կր տանի մինչև վերջը, իսկ ա այժմ նրան մնում է լաւ ճանաչել յեղափոխական ճանապարհի վրա ընկած գանազան տեսակ աղբերի իսկական նշանակութիւնը և մի կողմը չլորտել դրանց, անարդէլ կերպով շարունակել իւր փրկարար կոխը:

ՌՈՍՏՈՒ

# Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ի Ց

Մենք, Հայերս, որ կուլտուրապէս աւելի բարձր ենք, քան թէ մեր բնակակից կիսավայրենի ժողովուրդները, լուսաւորեալ աշխարհից պահանջում էինք մեր իրաւունքները՝ յանձն առած ամէն զոհողութիւններ:

Այսօր բերաւոր զոհեր սալուց յետոյ, հակառակ

մեր յոյսերին, մտացւեցանք, արհամարհեցինք քաղաքակիրթ աշխարհից...

Սակայն, թո՛ղ Քիւրքիան՝ Եւրոպայի այդ նախատինքը, չկարծէ թէ կոտորելով, ջլատելով Հայերս, կարող էր լինի խնդրել մեր մէջ ազատութեան ողին,



Վ Ա Ռ Գ Ե Ե Ն Ն Ո Ւ Մ Բ Ե Լ

արդար բողոքի ձայնը. թո՛ղ կեղտոտ դիպլոմատիան, քսան տարիէ ի վեր խաբէրով մեզ և այսօր էլ խաղաւ մոռացութեան տալով մեր հարցը, երբ այսքան բիւրուաւոր զոհերի արեան մէջ թաթախուած է ինքը, չկարծէ թէ, զերջապէս սիտի յաջողի լքման դատասպարտել հայ ժողովուրդը և քնջել նրա անկապտելի իրաւունքները:

Բալկանը իւր անմահ հերոսների փառքով խայտառակեց քանիցս թիւրքիան՝ թօթելով նրա անտանելի լուծը, խայտառակեց անամօթ, անխիղճ դիպլոմատիան, ցոյց տալով՝ թէ որչափ մեղանշուած էր նա մարդկութեան և արդարութեան դէմ, երբ պաշտպանուած էր թիւրքերոյ ամբողջութիւնը, նրա շահերն ի վնաս իրեն:

Դիպլոմատիան հաստատուած է ներկայ անարդարութեան և բռնութեան վրա: Կոպիտ ոյժի օրէնք է դա. կամ լաւ ևս՝ նրա մարմնացումը: Մենք լաւ դիտենք, կոպիտ ոյժը միայն կարող է փոխել նրան, կարող է փչրել նրան, նա ամէն կերպարանք ստացող մի առասպելական գաղան է, նրան պէտք է խողաղեցնել...

Ապատութեան մէջ, քաղաքական և անտեսական ապատութեան մէջ միայն կարող ենք ապրել, վայելել մարդկային իրաւունքները, ստանալ մեր բացարձակ պահանջները: Դրանք ձեռք բերելու համար, մենք մղում ենք մեր կռիւը, մղում ենք անընդհատ, կատաղի:

Մեր դբօշակի վրա մտի կամ ազատութիւն կայ գրւած: Մենք չենք խաբւիլ կեղծ ու պատիր հաշտարար միջոցներից, մենք չենք կարող որեէ կերպ հաշտւիլ թիւրք կառավարութեան հետ, քանի որ դա իր էութեամբ թշնամի է մեր գոյութեան: Կարելի է մի առ ժամանակ լռենք, այդ նրա համար է, որ կրճանք նորոգ, թարմ ուժերով վերստին շարունակել մեր կռիւը, մինչև բաւարարութիւն տրւի մեր իրաւացի պահանջներին: Մեր կռիւը գոյութեան քնական կռիւ է, ազնիւ, նւիրական կռիւ է դա. դրա նահատակներին աստուածացնում ենք մենք: Մեզ համար սուրբ է նա, ով յանձն առած է ամէն շարշարանք, մահ՝ վրէժ պատմաներով սողորած, ընկնում է մարտի դաշտում:

Թիւրքիայի ճնշող լծի տակ մենք կը մեռնենք իբրև անասուն, բայց մենք վճռել ենք մեռնել իբրև մարդ, իբրև հերոս ապատութեան և մեր յաւիտենական իրաւանց: Թո՛ղ թիւրքիան իր անարգ, քանդիչ զինուորներով, իր վարքով քերթը հրտակներով վատարար կոտորէ մեր որդոց, մեր կանանց, մեր երեխաներին. թո՛ղ նա այդ անմեղ զոհերի դիակները ծածկէ աւերակների փլատակաց տակ, այսպէս սոսկացնէ աշխարհոս իր եղեռնագործութեամբ, բայց մենք դիտենք կուռլ միայն զինուորի հետ, և մեր զինուորաց սուրբ արիւնով ներկել Հայաստանը: Մենք ցնորքի չենք հետեւում, ինչպէս բարբառնում են աշխարհիս լրբ խաբերաները, դիպլոմատները: Հայաստանը Հայաստան զարձակ. մեր հին, դարաւոր իրաւունքները վայելել մեր հողի վրա, տարածել լոյս և քաղաքակրթութիւն, տալ հային և իր ինքնակոչ դրացիներին՝ թիւրքին և քերպլին մարդավայել կեանք, հանել նրանց արդի գազանային վիճակից, խել նոցա ձեռքից յափշտակութեան և շարութեան դէնքերը, հիննել ապատ, ժողովրդական մի արդար կառավարութիւն, — ահ մեր նպատակը. այդ բարձր, նւիրական նպատակին հասնելու համար, մարտ ենք հրատարակել թիւրքերոյ դէմ: Տէրութիւնները թոյլ մնացին, անտարբեր այօք տեսան մեր աղէտները, սակայն, մենք խորին գիտակցութեամբ, առանց երբեք լքանելու, շարունակում ենք մեր ժողովրդի պատմական կեանքը:

Արդէն սկզբէն ի վեր պատերազմ է եղել, անդուլ մի պատերազմ, մեր զոյրութեան ոտքների դէմ:

Այսօր, թէև մեր ուժերը շատ սկար են համեմատարար և տիրող պայմանները համարեա բոլորովին աննպաստ, սակայն, մենք մեր դբօշակը միշտ բարձր կը պահենք, կը յաղթենք և փառաւոր ապագայի կարժանանանք, կամ թէ դիւցազնական մահով կաներևոյթանանք պատմական բեմից:

Յառա՛ջ, քաղաքակրթութիւնը միշտ զոհ է պահանջել մարդկութիւնից. փառք է մեզ, եթէ նրա արժանաւոր զոհը լինենք:

ՎԱԶԳԷՆ

(«Դրօշակ», 1896թ. № 19)

# ԲԱԲԳԵՆ ՍԻՒՆԻ

(ՊԵՏՏՐՈՍ ՓԱՐԵԱՆ)

«Մենք սուրբաբան շատ խնդրեցինք  
կողովորդացին ու լացինք,  
Այլ-ալի արտասուեով ձեռքն ու  
նոտր լացինք,  
Բայց նա չամսաց պաղատանքի  
աղաթնիկ հայերուն,  
Այժմ՛ նայեմք, նա կը լսէ որստուր  
նումբերուն»:

Կեցցէ՛ յեղափոխութիւն, յարզա՛նք յեղափոխու-  
թեան նահատակներուն:

Մենք այս սրտարուի բացապանչութիւնը կընենք,  
րմբոնած ըլլալով ու ճշմարտութիւնը՝ թէ կեանքը ա-  
ռանց յեղափոխութեան արժէք չունի: Յեղափոխու-  
թիւնը տեղեկութիւն մէջ է սրղէն: Մարդկային պատմու-  
թեան մէջ մեծ զարգացումները յեղափոխութեան պղնձ  
պատանդաններուն վրա բարձրացած են: Երբ ազգերը  
բարոյական և խմացական անկման մէջ են, յեղափո-  
խական լծակը կոթնցնելու է անոնց, երբ թագաւոր  
աւագակները, տղրուկ իշխանաւորները կը քածեն ժո-  
ղովուրդին կենսականութիւնը, յեղափոխութիւնը բո-  
ցեղէն սուր մը կը դնէ անոր ափին մէջ:

Ազգերու ամենէն վսեմ արտայայտութիւնը յեղա-  
փոխութիւններն են եղած: Ով որ շունի այդ ոգին, դա-  
տապարտած է մեռնելու: Թիւրքիան չըմբռնեց՝ թէ  
Հայութեան մէջ ահեղ բարոյական ոյժ մը կար. անի-  
կա դիակնացած դաշուեր պարզեց, բայց սարսափահար  
կը տեսնէ այսօր՝ թէ շարաչար սխալած է: Դիակները  
ինկան, բայց յեղափոխական դադափարը կանգուն է  
աւելի անվեհեր և աւելի վճիտ ու իղէյայականացած:

Երեւէ՛ կ այն ազգին, որ իր ծոցին մէջ կը կրէ յե-  
ղափոխիչ ուժեր: Թիւրքիան իր անշարժութեան մէջ  
մղլեցաւ, ու փոտեցաւ, Հայութիւնը պիտի ապրէ,  
որովհետև իր խորքին մէջ Հրարուխի Հնոցներ կան:  
Այդ Հրարուխի Հնոցները այն բացառիկ անձնաւորու-  
թիւններն են, որոնց մահը մեծ պարսպ մը կը ձգէ.  
այդ պարսպը ալ աւելի զգալի է և ճնշող, երբ Հայ-  
շինիքը մեծ ճգնաժամ մը կանցնէ:

Այսպէս եղաւ Բարկէն-Միւնիի մահը:  
Ո՞վ է Բարկէն Միւնի (Սոսրով):  
Գաւառացի աղքատիկ երիտասարդ մէքր, Հազրե  
23 տարեկան, խանրով ու զգացումով լեցուն. մէկ  
խօսքով յեղափոխութիւնը իր մարմնացած և հոգին էր  
Պոլսոյ Դաշնակցութեան:

Այդ անդուգական երիտասարդ կեանքն է, զոր պի-  
տի գծենք Հոս: Զինքը մօտէն ճանչցողները անբաւա-  
կան պիտի գտնեն սոյն կենսաբանութիւնը, իսկ չճան-  
չցողներուն Համար ալ մենք անբաւական կը գտնենք.  
ուստի ապագային կը թողունք այդ անձակ երիտասար-  
դի խղճմիտ կենսաբանական գրքիւն Հոգաւ:

Բարկէն-Միւնի, բուն անունով Պետրոս Փարեան,  
Ակնի Բինկեան գիւղէն էր, շքաւոր ընտանիքի մը գա-

ւակ և Հին ազնական գերդաստանի մը մարած ցոլքը:  
Մանուկ Հասակէն ձգելով իր Հայրենի տնակը,  
ճնողական գուրդուրանքը ու վերջին մնաս բարովն  
լսելով Հայրենի սարերուն, Եփրատի սիրական ափե-  
րուն ու այլքներուն՝ պանդխտացաւ Պոլիս:

Պոլիս մտած օրէն աշակերտեցաւ թաղային վար-  
ժարանի մը մէջ և վերջապէս 1887-ին մտաւ Կեդրո-  
նական Վարժարանը:

Բարկէն միջահասակ երիտասարդ մէքր, քիչ գունտ  
ու կոլոր. անոր զօրեղ և պիտը կազմաւածքը՝ զոր իր  
Հետ բերած էր Հայրենի բնագաւառէն, չճանդոտեցաւ  
բնաւ Վոսփօրի Հեղկ վրանորտին մէջ: Մինչև վերջը  
մնաց լեբան կշտին միտ բուսած առոյգ ծաղիկը, որ  
քամիի ուժեղ Հեղով օրօրւած ու ուռնացած է: Օր մը  
իր ստօրէններէն մէկը օտարական այցելուի մը ներ-  
կայացնելով դանի կըսէր՝ «Հաս Հայկական տիպար  
մը»:

Դէմքը երազուն և խոհուն արտայայտութիւն մը  
ունէր, զոր թեթև ժպիտ մը կը բարեխառնէր, բայց  
ինչ որ յատուկ էր անոր Համակրելի կերպարանքին՝  
զսպած ուղեորութիւնն էր, որուն արժատը հոգիին  
խորը կը Հանգչէր: Բնաւորութեամբ յետին ծայր պար-  
զասէր էր. ժուժկալութիւնն ու շարժաւորութիւնը իր  
անբաժան ընկերներն էին, ապաստի մը կտորի վրա  
կրնար իր գլուխը Հանգչեցնել Հանգիստ կերպով. կար-  
ճամարէր պերճանքը և իր բոլոր գեղեցկագիտական  
ճաշակը բնականութեան մէջ կը կայանար. սակաւա-  
պետ էր և իր սիրտը կանաւոր դատողութեան ձայնին:

Կեդրոնական Վարժարանին մէջ սկսան փթթիլ  
Բարկէնի բնածին յատկութիւնները և իր հոգեկան կա-  
րողութիւնները այդ Հնոցին մէջ թրծեցան: Հետեւեցաւ  
չափական գիտութիւններին, որոնց Համար մասնաւոր  
կըլում ունէր: Այդ ցամաք գիտութիւնները ոչ միայն  
չծծեցին անոր դպրոցն սիրտը, այլ ընդհակառակը  
արամարանական մտուր ջըլըր Հիւսեակի անր զգացում-  
ներուն մէջ: Ի՛նչ կարդաց, բայց շատ խորհեցաւ և  
կարելի է ըսել՝ թէ Հեղինակութիւնը ինքը իր մէջ  
դտաւ:

Վերլուծող զլուսի մը ունէր, որուն մէջ միաթիւր-  
կան կամ վերացական դադափարներ սպանջականու-  
թիւն չէին գտներ: Երկնքին Հետ զորժ չունէր, մարդ-  
կային թշտութիւնները, գեղձմանքը, անիրաւու-

թիւները, արցունքները և հայրենիքի ցաւերն էին իր մտածման առարկաները:

Չէր կրնար ըմբռնել, թէ ի՞նչպէս բռնակալութիւնը այս դարուն մէջ չամչնալով դեռ կը սողար: «Կա-

տեսակ ապիկարներու, որոնց ձեռքին մէջ ամէն ազնիւներ շնչում ուշ կամ կանուխ մարդախոշոր դաշտին կը փոխի և պատուհաս կը դառնան խաղաղ ժողովուրդներուն»:



Բ Ա Ր Կ Ե Ն Ս Ի Ի Ն Ի

ուսմանը ինչ որ հանրային բարի իրավունք մարմնացումը և անոնց արդար դարձադրելը սիրտ ըլլար, կէտեր: Բայց այսպէս չեն ըլլար բռնաւորները, կը բացառանձր զայրազին ուրեմն հարկ է, որ հասարակութիւնը իր բարի ցանկութիւնները չխտանէ այլ

Ինչ ուսանող՝ անզուպ սասի մըն էր պնտականութեան և դրամատիրութեան, ճշմարիտ ուսմանակարական և արժատական սիրտը մը: Իր ազգասիրական զաղախարը մարդասիրութեան ոլորտին մէջ կը պտուտեցր: Կը սերէր ազգը, կը սերէր հայրե-

միջը, որովհետև անոր միջոցաւ կարող էր ընդհանուր ծարղկութեան ծառայել: Եթէ կասկած մը ունենար, որ հայ ազգին փրկութիւնը անտէր, որը ժողովուրդներու պատիժ պիտի ըլլար, ինչպէս դժոխք-թիրքեան, կը նախընտրէր, որ իր ազգը ստրուկ մտար: Չէ՛ սակայն, իր մէջ կը զգար հայութեան ազատ նկարագիրը, և բարեբախտ կը համարէր ինքզինքը խելզ, բայց լայն հայեացքով օտուած ազգի մը դաւակ ըլլալուն համար: Աշխարհի որ կողմն ալ ըլլար, դերութեան կապանքները փշրել նկրտող ժողովուրդներուն համար պաշտուած մը ունէր:

Կարիպալտի հոգին կը կրէր գրեթէ:

Ուսանողութեան վերջնի՞թեր ստարին վեց ամիս բանտ մնաց իր փախած մէկ ընկերով համար, որ նոյնպէս մեծ դեր պիտի խաղար ազգային կեանքին մէջ: Բանտէն ելնելէն վերջը յաջողութեամբ շարունակեց ուսումը և մինչև շրջանաւարտի օրը լուս մնաց:

Բայց հայրը, որ տաճիկներու տունը հաց կուտար՝ Պետրոսի բանտարկութենէ յետոյ աչքէ ինկաւ և հացէն կտրեցաւ:

Կեդրոնականէն հազիւ ոտքը դուրս դրած էր, վճռեց նաւապետ ըլլալ: Բայց հօր անզորք և ցաւագար վիճակը սրահ մը մտածել տուաւ իրեն, մինչև որ Յակոբ աղան — այս էր հօր անունը — պզտիկ խանութ մը վարձեց ջուր և սուրճ ծախելու համար: Բայց այդ խանութը հազիւ կապրեցնէր հայր ու տղայ, անդին կը մնային մայր մը և եղբայրներ, որոնք նմանապէս իրենց ձեռքը կը նայէին: Բարգէնը թշուառութեան մէջ անաճ ջղեր ունէր, գիտէր անոր ամէն երանգները, իր ընտանեկան թշուառութիւնը կը շփոթէր հասարակաց տառապանքին հետ: «Մինչ ընձ, կրէր, հայութիւնը իմ ծնողացս պէս շատ դժբախտներ ունի, անոնց ամենուն մէկէն դարման ընելու է»:

Տարի մը նաւի մը մէջ աշխատելէ յետոյ, մտաւ Ազգա-Գապուռի տաճկաց նաւային վարժարանը: Ընտրած ասպարէզին եռամսհով փակած էր: Տաճիկ ընկերներուն մտաւոր ըմբռնում վրա կը ծիծաղէր: Լրկար բարակ անոնց կը բացաշափական տեսութիւնները, որոնք բերանարաց կը նայէին, մըրքերնուն մէջ բուրով անշուշտ. «նէ՛ աբլըը կեալուր տըր»:

Խորհրդով ընտրեց նաւապետութեան ասպարէզը-վաճառք փոխադրել կամ հարստանալ չէր նպատակը, դանձ դիպելու ոչ շնորհք ունէր, ոչ իղէալ, աւելի բարձր գաղափար մը ունէր, բայց չի հասաւ իր մտաւորին:

Նաւային վարժարանի մէջ էր, երբ որոշեց յեղափոխական կրկէսը նետուել, աիճներու դէմ մաքառելէ առաջ, հարկ էր բռնութեան դէմ մարտնչիլ: Ուստի ինքը և համարոճ քանի մը ընկերներ միանալով կազմեցին «Միւնիք» խումբը և մտան «Պաշակցութեան» դրօշակին ներքև: «Պաշակցութեան» Պոլսոյ առաքելաւ առջի օրէն նշմարած էր անոր մէջ կամքի ոյժ և զործելու վառ մարմաջ:

Օր մը նաւային վարժարանի տնօրէնը կը կանչէ Բարկէնը և քաղաքավարութեամբ կը ճամբ դայն հայ ըլլալուն համար: Բարկէնի ուրախութիւնը չափ չուներ, անկից յետոյ հոգով սրտով փարեցաւ յեղափոխա-

կան շարժման: Որպէսզի թևերը աւելի շարժէ, հայրը, որ բորբոքին ուժաւորուող եղած էր այլևս, հայրենիք դրկեց և կրտսեր եղբայրն ալ անկիւն մը սզմեցուց, հացին փողը հանելու չափ, ինքը այլևս ազատ էր ամէն հոգէ: Ընդհանուրին սուզին առջև մտացաւ ամէն անձնականութիւնը:



Ա Ր Մ Է Ն Գ Ա Ր Օ

Բարկէնը յեղափոխութեան խորտակ ծաղկին էր, որ կը ծիլ ուղղակի թշուառ ժողովուրդին կուրծքին վրա: Մինչև վերջին րոպէն անորոտունը և անվրդով դործեց իր պաշտպան ժողովուրդին սիրոյն և փրկութեան համար: Բոլոր սրտով կատէր տաճիկ ապակաւած կառավարութիւնը և կը գտնէր գայն կառավարութիւններուն ամենէն դարձելի տիպար: Դիտողութեամբ ու փորձառութեամբ ըմբռնած էր, թէ սուլթանի ղիմակին ներքև ստակալի հրէջ մը կար: Վտանգի ահաւորութեան առջև հողիի վեհ թափ մը ունեցած էր, արի ու անվառ:

Երբ «Հ. Յ. Դաշակցութեան» Պոլսոյ կոմիտէի ծանր լուծը իր ուսերուն դրեցաւ, Բարկէն բազմապատկեց ինքզինքը: Անխուժ գործունէութեան լծորդեց Երկաթէ կամք և ծայրայեղ ինքնախտահութիւն:

Գործի մարդ էր: Դուռ ու դաղար չունէր, կը վազվղէր դէս ու դէն և անձամբ հրահանգներ կուտար: Մէկ օրւայ մէջ ծով ու ցամաք իւր կանչներ: Պոլսոյ ծակն ու ծուկն սերտած էր և ասոր հետ մէկտեղ տաճիկ ժողովուրդը լաւ ուսումնասիրած էր. գիտակ էր նաև անոնց հոգեբանութեան, իր սուր դիտողի յատկութեան շնորհիւն էր, որ ամենավտանգաւոր ձեռնարկներու մէջէն անվնաս և յաջող ուղարկ պրծաւ: Լրտեսներու ու ոստիկաններու ջթին տակ փոխադրումներ կրնէր հիանալի պաղարիւնութեամբ, մաղի չափ կասկած չհրուիրելով վրան: Կը սպրտէր տաճկաց խաւերուն մէջ, կը գտնէր դանոնք, կը հարցաքննէր և ճարպիկ որսորդի մը պէս ձեռնուճան իտ չէր դառնար: Անձանութ մը, երբ Բարկէնը տեսնէր այդ վիճակի մէջ,

անպատճառ լրտես մը պիտի կարծէր: Չափազանց դատրտնապահ էր, հոռոմայեցի զօրավարին պէս, երբ իմանար՝ թէ բաճկոնը իր գաղտնիքը գիտէ՝ կայրէր դայնի:

Ահարեկազան գործողութիւններ վարեց և աւելի վտանգաւոր դիմումներ ըրաւ կատարեալ ապահովութեամբ: Գիշեր ցերեկ կը տքնէր, ինչպէս կըսէր իր ընկերներէն մէկը, «Քաջնակցութեան արթուն պահակն էր»: Ձանձորով չէր թափանցած անոր մորթին մէջ, ամէն բոլոր ոգևորելու ընդունակ էր: Սիրտը լի էր ընկերական լայն զգացումներով, ուստի սնափառութիւնը, կեղծ ազգամոլութիւնը պարզ տեղ չէտաւ անոր մէջ: «Մարդիկ պարտապահութիւններ ունին մէկըմէկու», կըսէր, և ընկերային անկասցածան խորին հաւատացող մ'էր: Իրեն սիրական սկզբունք ընտրած էր, որը միշտ կը կրկնէր՝ «Մէջկը ամենուն համար, ամենը մէկուն համար»:

Արդար կը գտնէր բունութեան դէմ, անօրէնութեան դէմ բռնի ուժով կուել, հոն, ուր աղբարութիւնը և իրաւունքը կանխատել, ներելի էր ամենածայրայեղ մէջոցներ դործածել: Թիւրքիան անոր համար վիթխարի սատակ մ'էր, որ իր Փիլիքական ու բարյոյական դարձահաստութիւնով կը խամբեցնէր մտքի ամէն կենտունակ կարողութիւն և կապականէր ընկերական միջավայրը: «Բարութիւն չէ՞ միթէ, կըսէր, վտահ՝ չեւտով մը, մարդկութեան մէջէն այդ հոտած լէշը վերցնելը, թէ և քիչ մը պիտի քրտնիք»:

Ինկիկանի և շրջակայ դիւղերուն ակերման ժամանակ իր ծնողած սպանելը իմացած էր: Սյը տեսարանին առջև խշխշաց իր սիրտը՝ բայց անխուժ մնաց: Ամենուն վրէժը մէկէն պիտի լուծէր: Այս առթիւ ընկերներէն մէկուն կը զրէր՝ «Ծնողքս մեռան, տարտը քու ծնողացդ, ճշմարիտ դործչին համար ծնողք չիկայ առանձին»:

Վերջապէս, երբ հայութիւնը արցունքի տեղ իր ևրակներուն արինը կը պարպէր, երբ Հայաստանը ամալութեան և աւերակներու աշխարհ մ'էր, երբ վայրենացած քաղաքակրթութիւնը անդորոմ աչքերով կը նայէր մեր եղբայրներու խողովոյման վրա և թոյլ կուտար, որ Վոսթրիի ճիւղը լերան պէս դիակներ դիզէր, բովանդակ մարդկութեան արժանապատուութիւնը ոտնակոխ ընելով, «Քաջնակցութիւնը» վճուց ահեղ ու մահացու հարած մը տալ սուլթանի գահուն և տարադնել անոր կ'մըր: Սյը առթիւ Բարկէնը նախաձեռնութիւն ունեցաւ Պոլսոյ Կենտրոնական Կոմիտէի խորհրդակցութեան ներկայացնելու պանքի վրա յարձակելու միտքը, զոր եւրոպական կարգ մը թերթեր զգարուս մեծագոյն յղացումներէն» մին կանա-

նեն: Նոյնպէս ինքն էր, որ ամբողջ Պոլիսը վառելու խորհուրդը յղացաւ, թէ և մերժեցաւ իբր անագործին գործողութիւն մը, բայց իրողութիւնը ցոյց տուաւ, թէ Բարկէնը աւելի կրողվածիտ եղած էր:

Վերջին օրը՝ ժամադրեալայրին մէջ, ուր պիտի վճուէր մահու և կենքի հարցը, Բարկէնը համակ աւելի և յախճատալութիւն եղած էր: Երբ ամէն բան պատրաստ էր, ոգևորել խօսքերով յորդորեց իր ընկերները, շնորհակալ օրէ՛ք գոհուութեան առջև: «Հայկական հարցը կը թաղուի, պէտք է կուենք և յարութիւն տանք անոր, կըսէր, եթէ մեր նպատակին մէջ յաջողիք, ի գո՛ւր չեն մեր թափած արիւնները: Հաւատակ պարտազարին, մեր եղբայրները պիտի շարունակեն մեր սրբապան գառը աւելի ու աւելի կատարօրէն և աւելի հաւատքով»:

Բոլոր ընկերները ուխտեցին հաստարիմ մնալ մինչև վերջին շունչներին:

Յետոյ իր ձեռքով բաժանեց զէնք, փամփուշտ և ուսմբ: Տեսարանը սրտաշարժ էր: Բոլոր շարադուշակ նախազգացումները կը շքանային դործի վեհութեան առջև: Ահաւոր և փաստար բոլորն ժօռեցած էր: Սուլթանը թերևս այդ ժամուն հայերը բնաջնջելու ծրարները կը դարձնէր, Եւլտղի քարայրի մէջ, իսկ հայութեան արխարտը գաւակները իրենց թշուառ եղբայրներու կրած նախատինքի դերազոյն վրէժը լուծելու կը պատրաստէին: Ո՛րն էր աւելի արդար և աւելի մարդկային...

Ձիւնած խուճուր վճուողական քայլերով մեկնեցաւ: Բարկէնը հետեւեցաւ այդ քաջարի հերոսներուն, ուսմբերով զօտեպնդւած՝ ատրճանակը նւիրած էր ընկերներէն մէկուն:

Բայց աւա՛ղ, իր սիրած ու կատարած սուրբ գործին վերջնական յաղթութիւնը չտեսած՝ ինկաւ պանքայի սանդուխներուն վրա՝ երկրորդ և մեծ դոհն ըլլալով իր հոյակապ դադափարին:

Թշնամուն գնտակը անոր իրանը թափանցած էր և իր ձեռքի ուսմբերը պայթելով՝ բզիկ-բզիկ ըրած էր անվեհեր հերոսի մարմինը: Թշնամին՝ որ պատրաստ էր ներս խոժեղու, այդ անակնկալ ուսմբերու որոտումէն նահանջեց, որով Բարկէն իր մահովն իսկ գործին յաջողութիւնը ապահովեց գրեթէ:

Պանքի տէր դառնալէ ետքը, երբ ընկերները վերաւորեալները կը խնամէին, գայն արեան հեղեղներու մէջ գտան. իսկոյն փոխադրեցին պանքի գաւթիքը, լացին անոր ծաղիկ, արինով մկրտած դէմքը և արտասուլքը աչքերով համբոյրներ տւին ազգային մեծ նահատակին:

ՍԱՐԳԻՍ ՄԻՆԱՍԵԱՆ

# Ք Ա Լ Է

Եւրոպական խաղաղութիւնը վրդովելու սպառնացող վերջին մեծ տագնապին՝ թիւրք-յունական պատերազմին ամենէն մեծ ելեւէջներուն միջոցին, երբ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը դուրս կը կտորէր բան մը Հասկնայու Հելլենականութեան այդ «մահաբեր ոստիւնէն», երբ եւրոպական դիւանագիտութիւնը աչքերը շորս բացած դրաղած կը թւէր մէկ բանով՝ եթէ չէր կարող երկու կողմները իրարմէ բաժնել, զէթ մէկ ուրիշ ալ նոյն ասպարէզը մտցնէր — յանկարծ լուր մը հրապարակ նետուցաւ:

Ռէյթիէրի գործակալութիւնը մայիս 9-ին կը Հեռագրէր՝ թէ Եւրոպիոյ Գննիչ Յանձնաժողովը ճանաչած էր 14 մահաբեռականներու յանցապարտութիւնը Եւրոպիոյ ջարդին մէջ և դատապարտած էր անոնցմէ վեցը մահաւան և միւսները բանտարկութեան — մէթ 15 տարւան, հինգը՝ 10 տարւան, մէկը՝ 7 տարւան, մէկը՝ 2 տարւան:

Ռւրախառիթ անակնկալ մը եղաւ այս լուրը կարգ մը մարդոց համար, որոնց արդէն պակասած էր երեւոյթ մը դատելու կարողութիւնը. ստերեոյթ անմիջական՝ իրապէս պատահական զէպերը իրարու հետ չդժայեւումով, ամենէն անհեթեթ եզրակացութիւններու յանգած էին Հայ Յեղափոխութեան ընթացքն ըմբռնելու իրենց փորձին մէջ: Այդ փորձը ցոյց տուաւ, որ մէկ բան մը միայն պէտք է իրենց. ապաստովը իրենց համար անգործ կեանք մը, ինչ գնով ալ որ ըլլար, նոյնիսկ ժողովուրդին արիւնին զինով:

Իսկ հիմա Եւրոպիոյ դատավճիռներուն իրենց այդ գնահատումը ակնբեր ակասութիւն մը ի յայտ կը բերէ: Մէկ կողմէն կը մտնան, որ այդ Գննիչ Յանձնաժողովին գումարները և դատավճիռներուն արժահովմը կը պարտին Հայ Յեղափոխութեան, որ չեն ուզեր ճանչնալ, և միւս կողմէն նշանաւոր թւական մը կը կարծեն ողորմել, առանց նախընթացներու հետ բաղդատութեան զննել: Իրենց վրա առնելու, կը բաւէ, որ գումարներ չլողնի:

Եւ, արդարեւ, մինչ այս կարգի մարդոց մէկ մասը տիրող կարգերու զէմ բողոքելու ո՛չ պէտքն ու ո՛չ հնարաւորութիւնը կընդունէր, մինչ միւս մասը յեղափոխութեան ընթացքը վէպերու մէջ ընտանացած յատակադիժեղու համամաս իրագործած կերեւակայէր տեսնել, առանց իր գլխուն մէկ մագն իսկ գոհելու — բերանին բաց՝ սարսափած մնացին, երբ վարդազոյն երազներու տեղ՝ արիւնին կարմիրն էր, որ եկաւ իրենց ոչխարային աչքերը չըմբռնելու, արիւնին հոտն էր, որ զա՛ռն իրականութիւնը յիշեցնելու եկաւ իրենց:

Միտուն բառ էր սպգաբերութիւնը և, ասոր շնորհիւ, յեղափոխութիւնն ալ, բայց արբ՛ւնը... չէր նախատեսած իրենց հաշիւներուն մէջ:

Եւ... ետ ետ քաշուցանաւ:

Բնական էր այդ ըմբռնումը. քաղքեցիին և մահաւանդ պոլսեցիին համար, որ իր արին մէջ ունէր ամենագոր դրամը՝ տիրող կարգերու քառսին մէջ ուզածին պէս անաղաստելու. հայրենիքի անկախու-

թեան խնդիրը շա՛տ շա՛տ հոգիի երկորդական պահանջ մըն էր, տենչիկ մը միայն:

Ատոնք, այդ պարոնները, որ իրենց ժողովուրդին առաջնորդներն ըլլալու յաւակնութիւնն ունէին, այնքան տղէտ, այնքան կարճատես գտնուեցան, որ չկրցան տեսնել թէ փորը կուշտներու ցնորքը չէր Անկախ Հայաստանի զաղափարը, այլ հայ գիւղացիին անասնական-ստրկական դարաւոր կացութեան անխուսփելի հետեանքը: Թէ հայուն և կառավարութեան փոխարքած յարաբերութիւններուն ընդհարումն ու լարումը իր որոշ չափն ունէր և անդադոյն պրկումը աղէտ միայն կրնար յառաջ բերել:

Մարգարէ ըլլալու հարկ չկար. դանակը ոսկորին հասած էր և խորմը արիւնահեղ եղաւ:

Իսկ այդ կոյրերը, որ իրենք զիրենք առաջնորդ կը կոչէին, որ հեռէն ականատես եղած էին այդ խցումին, սկիզբը՝ իմաստասէրի ձևեր առնելով չգարմանալ կեղծեցին. ըսին թէ կեանքի օրէնքն է այդ: Ի՞նչ վնաս եթէ առանց իրենց մասն արիւնելու աւելի բարձր ատեններու վրա բազմէին — իրենց յոյսն էր այդ — իրերու այդ նոր կացութեան մէջ:

Բայց... արիւնի հոսանքը երկնցաւ, լայնացաւ և ոչ թէ անոր ցատկոտուցները, այլ անկող հոսանքները համայնափիւռ ծածկեցին ամենքը: Այդ կարծեցեալ առաջնորդներին շատերն ալ խեղդեցան հոն և ա՛յն ստեն է, որ սկսան լալի պոռտուցներ, թէ յեղափոխութիւնը այդպէս չպիտի՛ կատարէր, այդ չափ արիւն պէտք չէ՛ր, որ թափւէր... Տիմարնե՛ր. կարծեցին թէ յեղափոխութիւնը փրկաւ եփելու պէս կարելի էր պատրաստել ուզած վայրկեանին, և թա՛է իրենք իրենց ձեռքերով ու կոնակներով պիտի բաշխէին թուրք մը կանգնեցնելու դարբերով լծացած այդ ուժերուն զէմ: Եւ յուսահատ, սպրտնած այդ նախճիրներուն առջև, իրենց ողորմելի հոգեկան ուժին վերջին մասնիկն ալ կորսնցուցած՝ կորուսած համարեցին նաև ամէ՛ն բան հայութեան համար, ճիշտ այն վայրկեանին, երբ Հայկական Խնդիրը կը դուրէր այնպիսի հաստատ գետնի մը վրա, ո՛ւր դեռ երբեք գտնուած չէր:

Այո՛, մինչ թիւրքիան և ամբողջ Եւրոպան ա՛լ ուժասպառ կը կարծէր Հայ Պրոմէթէոսը այնքան արիւնահոս վէրքերէն ետքը. մինչ այնչափ կամ գոնէ ընդերկար դադրած կը համարէին անոր սարսեցուցիչ ջղաձգութիւնները գերութեան դարաւոր արիւնու շրթան խորտակելու, յանկարծ օր մը, պատմական օր մը՝ Սասունի դիւցազնական ընդդիմութեան տարեկարծին, կրակէ հոսանք մը տեսան պոռտուքիլ այդ արիւնաքամ կարծած հակայից երակներուն մէջ, և անոր կուսփին տակ փշուած շրթային շիկացած կտորները իրենց բնակարաններու անգործութիւնը խանգարելու եկան: Ջարմանքին շուտով յաջորդեց խոր մոմտուք մը շըռկային անսպառ և մշտնադադ կորովին ի տես. արհամարհանքը որ արգահատանքի փոխած էր, սպալանքի տեղի տուաւ. և խորհնցան, որ յառ աւելի խելօք բան մը ըրած պիտի ըլլան եթէ շոյնն ու փայտիային Հսկան,



Թեթևացնեն իր շղթաները, քան թէ անտարբեր գտնելով անախորժ անակնկալներու ենթարկւին: Այդ օրէն նպաստաւոր շրջան մը սկսած էր Հայկական Սնդրին համար:

Իսկ այդ կարգ մը պարոնները փոխանակ կատարած իրողութիւնն ընդունելու, շուրջեցին ճաննալ ժողովրդական շարժումին այդ հետեւանքները, որպէսզի խոյս տան շարկելէ իրենց պատկանած մասը ժողովրդին բռնէն:

Մալվաթօրի սպանիչը, Մագհար, դատարանէ դատարան քշելով, Արարիա աքօրթել տալու յաջողի՛ մինչ շատ աւելի քստմնելի փոհալոյտներու հեղինակները դաւադանի հարած մը անգամ չէրան — Եւզոկիոյ Յանձնաժողովը դեռ ամիս մը չանցած՝ իր տեսակի մէջ բոլորովին նոր ու ապշեցուցիչ վճիռ մը լոյս-աշխարհ բերաւ, մահուան դատաւճիռը «Ճիւղաւմանին» դէմ «կեանքովըն» սպանելուն համար:

Այդ առարկութիւններն ընողը և միայն յոյսերով



Վ Ռ Ա Մ Շ Ա Ն

Բայց Եւզոկիոյ հեռագիրը առեւեկոյթ փոփոխութիւն մը յառաջ բերաւ ատոնց կացութեան մէջ: Սթափւելով իրենց թմբութենէն՝ վրա ինկան այդ լուրին՝ իրենց ի նպաստ շահագործելու համար: Երկսայրի սուր մը եղաւ հիմա այդ լուրը իրենց ձեռքին մէջ. հեռագրին կարեւորութիւնը չափազանցեցին մէկ կողմէն համակիր ցոյց տալով իրենք զիրենք ժողովրդական շարժումին, որուն միայն կը պարտինք այդ դատաւճիռները. մեղմէն ուղեցին այն պաղութիւնը, որ արդէն իր վերջին աստիճանին հասած էր իրենց և ժողովրդին ստաւք մեծամասնութեան միջև, — որպէսզի միւս կողմէն նոյն գէնքով հարւածեն շարժումը, ըսելով թէ՛ ա՛յլ դադարեցնելու է յեղափոխական ամէն խլրտում և սպասելու է հետեւանքներուն, որ այնպիսի փայլուն սկզբնաւորութիւն մը ունեցաւ արդէն Եւզոկիոյ դատաւճիռներով: Մինչ, կրօնն այդ պարոնները, դեռ երկու տարի առաջ Սասունի կորիւնէն ետքը երկար ու ձիւղ ամիսներ անցան, մինչև որ եւրոպական յանձնաժողով մը կրցաւ երթալ շարդերուն վայրը նահատակներուն... ոսկրները համբելու. մինչ անկէ ետք ճիւղաւման անտարբերութեամբ շլտելու կուտային հարաւոր նահատակներու աղիողորմ աղաղակները Փոքր ու Մեծ Հայքի բոլոր անկիւններէն — տեսէ՛ք, հիմա, Եւզոկիոյ շարդին լուրը առնւածին պէս, Թիւրքոյունական պատերազմի ամենէն տաք միջոցին, Քննիչ Յանձնաժողովը արդէն շարդին վայրն էր, աղկտը հետազօտելու: Եւ մինչ Փրանսական դեսպանին, խեղճ Գաժպօնին, հողին բերանն եկաւ, մինչև կրցաւ Հար

պարարող պարոնները մոռցան, որ Թիւրքիոյ համար խոստում բառը, ինչպէս նաև օրէնքը, յիշողութիւն չունի: Ինչե՛ր շնորհակցան. յիշենք միայն, Մուսա պէյն ալ պիտի պատժէր, Մագհարն ալ, Պահիրն ալ, Կարինի, Սասունի և միւս բոլոր շարդերու հեղինակներն ալ, ամենքն ալ:

Օդոտոս 14-էն ետք Պոլսի Արտասովոր Առեւանքն ալ պիտի դատաւարաւէր շարդին հեղինակները, բայց ի՞նչ ընէր, որ միայն Հայեր դուռ ամբաստանեալներու նստարանին վրա:

Ուրիշ օրինակ մը. դեռ վերջերս, պատերազմը տակաւին չսկսած, Թիւրքիան Սերպիոյ խոստացաւ սերպական պատերազմութեան մը հաստատումը Իտալիայի մէջ (Հին Սերպիա, Մակեդոնիա): Սերպիան հաւատաց և խեղճ կեցաւ: Իսկ հիմա, որ պատերազմը արդէն վերջացած կը համարուի և ծանօթ է ուսուական ու աստրիական դահլիճներու ըրած ճնշումը պալքանեան տէրութիւններուն վրա, Թիւրքիան կը մոռնայ իր խոստումը և շլտում կընէ Սերպիոյ պահանջները:

Գալով Եւզոկիոյ խնդրին, արդէն մայիս 9-էն առաջ Յանձնաժողովը տւած էր իր վճիռը, անդաւանալի, կիթ նայինք այն յայտարարութեան, որ Հանօթօն ըրաւ. Փրանսական Երեսփոխանական ժողովի ապրիլ 3-ի նիստին մէջ: Բայց վճիռը գործադրութիւնն այնչափ ուշացաւ, որ Պոլսի դեսպանները մայիս 28-ին հարկ համարեցին այդ մասին ազդադարարելու Բ. Դրան. պատասխան դեռ չկայ. այնինչ ամիս մը անցած է, արդէն:

Թիւրքիան ա'լ վարպետ եղաւ, փոթորիկի ատեն ծռիւլ, տափակնալ, իսկ վտանգը անցնելէ հոք գլուխը տնկել — իր սկզբունքն է: Այլ ժամանակն է, որ մենք ալ օգուտինք անցեալի դասերէն և շխարհինք այն խաղերէն, որոնք առաջին անգամ մեր գլխուն խաղցեալու նորութիւնը շունհին ա'լ: Քիչ մըն ալ սեկստիկ ըլլանք: Եթէ Եւրոպիոյ դատավճիռները գործադրելն իսկ, միայն սա շափ հաստանք, որ շատ ուշանալու չէ մեր խնդրին մասնակի լուծումը. բայց այս շափ միայն, ո'չ աւելի: Գիտնանք, որ Թիւրքը քայլ առ քայլ միայն տեղի պիտի տայ և եթէ մինչև իսկ միևտրամաներ կախելու հարկադրել ջարդի վայրերուն մէջ, նորէն պիտի ջանայ ճամբան դարձնել առաջին առթիւ՝ եթէ իր գլխուն շճածանի յեղափոխութեան կարմիր դրօշը միշտ սպառնալին՝ Դամոկլէսի սուրբին պէս:

Տարակոյս չկայ, որ Հայկական Խնդիրը նպատակաւոր վիճակ մը ստացաւ օգոստոս 13-էն ետքը. վճռական քայլ մը ընելու մտադրութիւնը ակնեքե եղաւ բարենորոգումներու գաղանի ծրագրի մը մշակումով, որ առժամապէս յետաձգեցաւ Կրեմլի նորոգ ապրտամբութեան պատճառով: Կրետական խնդիրը սուր կերպարանք մը ստացաւ «հայկական ջարդերու սարսափին հետեանօք»: և իր կողմէն ազդեց մեր դատին աւելի լայն և անաշտ ըմբռնումին: Իսկ երկուքը միասին հայկրեստական նոր շրջան մը բացին արեւելեան խնդիրներուն մէջ, իրարու հետ կապած կացութեան ընդհանուր գծերով:

Ուրիշ նոր և հզոր ոյժ մը՝ Եւրոպայի հանրային կարծիքը, որ արդէն յուզւած էր վերջին հայկական դէպքերուն առթիւ, հետզհետէ աւելի բարձր սկսաւ լսելի ընել տալ իր ձայնը: Եւ այսօր, եթէ իրապէս

միութարական ոչինչ չկայ օսմանեան Հայաստանի մէջ, բայց քաղաքական տեսակէտէն նայելով երբեք այնքան լրջութեամբ ի նկատի առնւած չէ հայկական բարենորոգումներու խնդիրը, երբեք այնքան մօտալուտ կարծւած չէ համեմատական բարելուում մը մեր արդի կացութեան մէջ:

Բայց գերազանցապէս տենդային այս դրութեան մէջ, երբ հայ ժողովուրդը օրէ օր վերջնական լուծումի մը կը սպասէ, որ չի գար — որովհետև այդ խնդիրները այդքան շուտ չեն կրնար լուծուիլ — հայ ժողովուրդը ջանալու է պաշարելնով դիտել քիչ մը, չգիտովնալ պատիկ յաջողութիւններով և չընդել ճամբան:

Այդ յաջողութիւնները աննշան յաջողութիւններ են, ուր շունչ միայն կարելի է առնել:

Հող, այդ հանգրուանին մէջ չի՛ վերջնաբ անսպաստին աւազները բայց հեռո՛ւն... սրտտես և փորձ աչքեր կը նշմարեն դալարապէզ և ջրտի վայրերու ուրւագծերը, որոնք ա'լ կրկնութիւններ չեն հիմա...

Գիտեմ, եղբայրս, յոգնած ևս, ուժասպաւաւ արեւակէզ, բայց աշխուժով առաջ նետէ արիւնշաղախ ոտքերդ մինչև հիմա եկած ճամբովդ, եթէ չես ուզեր մրկիլ ու ոչնչանալ անսպաստին աւազներուն մէջ. ժի՛ր եղիր. հեռո՛ւն ովասիւնները կերելն, իսկ անկէ անդին...

Անսպաստին վերջն է արդէն: Քայլ՛, հայ ժողովուրդ, քայլ՛. տասնուչորս տարի այդ ճամբով քալեցին յոյները: Տասնչորս տարի, և այսօր խեղճերը ճամբուն մէկ մասը նորէն պիտի սկսին: Իսկ դո՛ւն, հայ եղբայր, ե՛րբ ճամբայ ելար... Քայլ՛...

Վ.ԱՄԻՆԱՆ



# 1898 - 1899

Հայի համար վաղուց է Նոր-Տարի շկայ. Թաւկանները իրար յաջորդելով՝ վաղուց է, որ նրա համար բերած են միայն հալածանք, կոտորած, արիւն-արտասուք...

Չմնաց աշխարհի երեսին ո՛չ մի տեսակ բարոյական կոկիծ, ո՛չ մի տեսակ մարդկային դժբախտութիւն, որ չտեսնէր հայը, մահու և աւերման սև ջօղը տարէց-տարի պատեց ամբողջ Հայաստանը, չթողնելով և ո՛չ մի անկիւն, որը ամայացած ու պղծւած չլինէր...

Դժւար է ասել, թէ ուր կարող էր հասնել այդպիսի պայմաններում հասարակական լքումը մեր մէջը, եթէ նոյն այդ տարիները միաժամանակ մեզ չթողնէին և մի անգին ժառանգութիւն — միևնոյն անսահման հաւատը, միևնոյն անվրդով յոյսը դէպի ապագան...

Այդպէս վերաբացւաւ և 1898 թաւկանը, որի մի քանի րնորոջ գծերը ուզում ենք յիշատակել այստեղ:

Հայկական խաչելութիւնը մահմետական Գողգոթայի վրա շարունակելով և այդ թշին, անկարող եղաւ, սակայն, որևէ չափով վնասել մեր արդար դատի անախճման կենսունակութեանը: Այո՛, ո՛չ Վասպուրականի անցեալ տարւայ սարսափները, ո՛չ Բաղէշի և Ոյաթի մահաբեր կոտորածները, ո՛չ քաջարի Սասունի և առիւծ Կիլիկիայի սովը և ո՛չ էլ Պարբերդի ու Բալուի դիւղերում տեղի ունեցած անդժութիւնները — չեն նւագեցնում մեր հաւատը դէպի դրօժը, դէպի յաղթանակը:

Այս ընդհանուր երևոյթը, որ յաջորդաբար մեր ծանր կուռի ընթացքում միշտ պահպանւել և պահպանւում է, ներկայումս մեր յոյսերի գլխաւոր դրաւականը, մեր գործունէութեան զօրեղ խթանն է: Եւ իրաւմի փոքրիկ ծանօթութիւն երկրի շրութեան հետ — և մարդ չի կարող չարտասփել այն ահագին վիճի առաջ, որի դիմաց խաղացում է հայկական անվերջ դրաման: Երկրի կուլտուրական և ազգաբնական պայմանները, սուլթանական ուժեղ միացած կոտորածների դիւական ծրագրի հետ, Եւրոպայի ոճրագործ քաղաքականութիւնը և նոյնիսկ հայութեան մի ահագին մասի անարգ անտարբերութիւնը դէպի իր եղբայրների դերմարդկային տանջանքները, — այս բոլորը այնպիսի խոշոր պարագայեր են, որոնցից իւրաքանչիւրը՝ նոյնիսկ առանձին վերջածով կարող էր մահաբեր լինել մեր դատի համար: Եւ, սակայն, շնայելով այս իրար հետ շողկալաւած պայմանների սպանիչ ուժին, հայը դեռ կանգուն է. նրա հայեացքը դեռ չի պղտորւել այն վիճակի անջ, որի մարտին նա գտնուում է. նրա գիտակցութիւնը դեռ օթող է, նա դեռ յոյս ունի վաղը միւս օրը մի հսկայական թռիչքով իր յետևը թողնել այդ անյատակ, մթին անդունդը... Նա այդ սուսկալի անդունդին արդէն անհամբեր, անհաշիւ գոհեր է տւել և այսօր՝ աւելի քան երբ և իցէ՛ նա համոզւած է, որ ազատութեան համար ո՛չ մի դին թանկ, ո՛չ մի գոհ ծանր չի՛ կարող համարւել...

Իայց դիմենք կեանքին:

Ինչպէս յայտնի է, անցեալ տարւայ ընթացքում

մեր զինատար խմբերից մի քանիսը հանգամանքներէ բերմամբ կուռի բունեցին թշնամու հետ: Ո՞վքեր էին դրանց անդամները. յափշտակող պատանիներ՞, տեղական պայմաններին անծանօթ օտարականներ՞, արհեստական զրգուտմներով առաջնորդող և ժողովրդի տրամադրութեանը անտեղեակ ցնորամիտներ՞: Ո՛չ երբէք:



Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ (Կննարանում կանգնած)  
(Փայտը ձեռքինը Ե Փ Ր Ե Մ Ն Է) \*

Նրանք բոլոր էլ ընդիլ թիւրքիացի էին, մեծ մասով եփուս, հասակ առած, ու երկրում ընտանիքներ ունեցող զիւղացիներ, որոնք ամենայն դիտակցութեամբ կուռի ճանապարհից դուրս՝ փրկութեան ուրիշ միջոց չէին գտնում հայի համար: Նայեցէ՛ք այս համարում տպւած մեր 9 նահատակ զինակիր ընկերների պատկերներին, կարդացէ՛ք նրանց անուններն ու ծագումը, մտաբերեցէ՛ք այն բարձր յեղափոխական գիտակցութիւնը, որով նրանք զոհեցին պարսկահայ գիւղացու շահերին. — և մեր վկայութեան ճշտութեան մասին կասկած չի մնայ ձեզանում: Միթէ՞ այդ ամենը սպացօրց չէ, որ թիւրքահայը դեռ հետու է յուսահատութիւնից և որ նա՛ ընդհակառակը՝ ունի միանգամայն որոշ, միանգամայն հիմնական պահանջներ...

Այդ բաւական չէ: Յիշեցէ՛ք հետեւեալ դէպքը այդ տեսած խմբերի անակնկալ ընդհարումների պատմութիւնից:

\*) Այս նկարը քաշւած է Բաշտում, երբ Սասնայ ապրտամբուքիւնից յիւռոյ Անդրամիկը Պարսկաստանի վրայով անցաւ Կովկաս:

Արածանիի արհերին մի խումբ շրջապատում է Քիւրք զորքով և բերդերով: Նայելով մահաւն աչքերին Ներոսի համարածկութեամբ, պատրաստ աւելի շուտ բաժանել իր կեանքից, քան հայրենիքի փրկութեան կռիւնքից, գէնքերից, խումբը մղում է այդտեղ ու շարք դիցարձական կռիւնք: Մի քանի օր տևող այդ կատաղի կռիւնքի մէջ մեծ կորուստներ կրելով հանդերձ՝ խումբը հակառակորդ բանակից հարիւրներ է խլում և խմբի մնացորդը թշնամու շարքերը պատուելով, կրակի և արիւնի միջով շարունակում է իր ճանապարհը՝ հասնելու այնտեղ, ուր անդէն է անպաշտպան ժողովուրդը հնծում և բոնութեան տակ, «գէ՛նք, գէ՛նք» աղաղակելով:

Այդպիսի հողեկան վէճ արամագրութիւն կարող է ունենալ կեռող կողմերից միայն նա, որը զոռում է, թէ յայժմովը ինքը պիտի լինի...

Իսկ ո՞վ է Սերբը, Աղբիւր մականանհատ սոխորոցի այդ հանրածանօթ գիւղացին, որի առջև սասանում են երկու ամբողջ գաւառներ, որի անունով թնդում են Բաղէշի և Սյարթի լեռներն ու ձորերը... Ո՞վ է այդ Սերբը, որին տարիների ընթացքում մի շարք վալիներ ու քրդական բէկեր շին կարող ձերբակալել, և որը, մ'իկ այստեղ, մ'իկ այնտեղ յայտնելով, պատժում է մեր ժողովուրդի թշնամիներին կամ ջախջախում է իր զէ՛մ ուղղած զորքերը և ցրելով նրանց անհետանում...:

Դա՛մ հայ ժողովուրդի բարկութեան սրբազան պագակն է, որ արտայայտել է իր գաւակի հրաշալի պատկերի մէջ: Դա ինքը հայ ժողովուրդն է, որը զոռում է իր ուժը և արհամարհում է ամենատուկարի պամաններին ծանրութիւնը: Դա արդար բողբոջ նոյն մարմնացումն է, ինչ Վասպուրականի համար Վաղգէնն էր — անցեալ տարի իր երկու բնիկերներ Նետ նահատակած յայտնի Վաղգէնը...

Թո՛ղ վատերը շարունակին շնջալ, որ Սերբները և Վաղգէնները վնասակար են, որ նրանցով են բացատրում շատ տեղերի սարսփները, սակայն, ո՞վ ծանօթ է թրքական բեժմին, ո՞վ ունի թէ՛կուզ ամենաթոյլ գաղափար, թէ՛ ինչպէս են զարգանում առհասարակ ժողովուրդները մէջ ազատասիրական շարժումները — նա գիտէ զՎալի ուր ուղղել իր գայրո՞թը, նա կը կարողանայ գնահատել այդ արդար գայրո՞թը մարմնացնող հերոսներին, ժողովուրդի վշտերը մուսգութեան չմտնելու համար ամէն բան զոհողներին, յայրթական կռիւ համար այդ ժողովուրդը կաղմակերպողներին...

Յեկավոխական գործի կենսունակութիւնն ու ժողովուրդականութիւնն արտայայտել նաև անցեալ տարի տեղի ունեցած Հայ Յեկավոխական Դաշնակցութեան ընդհանուր ժողովում: Ձանաթան տեղիքից կելած 32 ներկայացուցիչները և ո՛չ մէկը ժողովում և ո՛չ մի վճատութեան խօսք շարտասանեց: Դժւար է ենթադրել, որ այդքան հողու մէջ, որոնցից շատերը տարիների ընթացքում բաժանել են ժողովուրդի համ թշնամու հարածի ծանրութիւնը, իսկ միտները բնական մտն են եղել մեր ողբերգական դատի անօրինակ մանրամասներին, — դժւար է, ասում ենք, ենթադրել, որ այդքան հողու մէջ զոնէ մէկը չբողբէր, յանուն ժո-

ղովուրդի շահերի, կռիւ անհրաժեշտութեան կամ կարելիութեան դէ՛մ, և թէ՛ այդ կռիւը վնասակար կամ անհնարին լինէր: Բայց արձագանգ տալով իրերի դժւար դրութեանը ու երկչտոններին թողնելով դառն իրակառնութիւնը թագցնել իմաստակութիւնների ետև, ժողովը շատ երկար դառնեց իրեն հետաքրքրող հարցերով, որպէսզի այդ հարցերն անցնեն սուտ և հիմնական ջրննութեան լուծից:

Մենք ունենք տեղեկութիւններ, որ հիմն ու նոր «Նշակականները» նոյնպէս ընդհանուր պատգամաւորական ժողովներ են ունեցել անցեալ 1898 թւին իրենց գործունէութեան եզրանակը և կաղմակերպական հարցերը որոշելու համար: Համարձակ կարող ենք եզրակացնել ուրեմն, որ հայը զեւ հետև է ուժասպար լինելուց, քամելուց, նա ունի ուրեմն իր ինտելիգենտ գաւակները շրջանում ևս որոշ տարր, որը ամենալուրտանդատը ճանապարհի վրա չի՛ կամենում բաժանել իր ժողովուրդից, չի՛ կամենում թողնել նրան իր ճակատաւորին:

Չոկ հարց է, ի հարկէ, թէ այդ կուսակցութիւնները իւրաքանչիւրը որքան է համապատասխանում ներկայի պահանջներին: Ուրախալին այն է, որ այդ կուսակցութիւնների գոյութիւնը հայ ժողովուրդի ազատութեան գաղափարի վրա է հիմնած: Թո՛ղ լինի այդ տարրը, թո՛ղ շատնախ օրէջք: Հող չէ՛ միայն կամ այն կուսակցութիւնը այսօր կեղծ կամ սխալ հողի վրա լինի կանգնած: Հող չէ՛ նոյնիսկ, եթէ այդ կուսակցութիւնները շատ դէպքերում իրար աւելի աններդուրութեամբ են վերաբերում, քան նոյնիսկ տասնիկ կուսակցութեան: Այդ ամենը կը վերկացնէ, իր խորտակէ, կը ջախջախէ ինքը, կեանքը, ինքը գործը, և իւրաքանչիւր կուսակցութիւնից անբախտ, նահատակ հայ ժողովուրդը կը վերցնէ այն, ինչ համապատասխան է իր կարիքներին...

— Այս մի քանի դժերով, ի հարկէ, շին սահմանափակում ո՛չ այն բնորոշ երևոյթները, որոնք մեր դատի տեսակէտից արժանի են ուշադրութեան, ոչ էլ անցեալ տարւայ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունէութիւնը:

Բայց մի քանի կէտերի մասին թողնելով խօսքը միւս անգամին և միւսները մասին անյարմար համարելով խօսել՝ մենք վերջացնում ենք մեր տեսութեան այս մասը, ընդունելով որ այսօր՝ 1899 թականի ընկրին՝ հայ ժողովուրդի տրամադրութիւնը թշնամու դիմաց նոյնն է, ինչ վերջին տարիները:

Թէ ի՛նչ կը բերի հայի համար առաջիկայ տարին — այդ, ի հարկէ, դժւար է նախատեսել: Եթէ ժամանակի անիւր այնքան անշունչ և անդգայ չլինէր զէպի կենդանի աշխարհը կամ ժամանակակից դիւանագիտութիւնը այնքան անխիղճ չլինէր նոյնիսկ զէպի իր պաշտօնական պարտականութիւնները — այն ժամանակ, ի հարկէ, կարող էինք յուսալ, որ վաղը միւս օրը մի հարւածով վերջ կը տրէր մեր դժոխային դրութեան և հայը, ցնծութեան թիւերի վրա կը դիմաւորէր հետեւեալ տարին: Բայց ժամանակը անողոք է, մարդկութիւնը՝ անսիրտ... Այնտեղ զեւ լուում է ճճեալի, եթէ ընդունակ չես կուրելու՝ ամէն տեղ դեռ կենդանի է հինաուրց Բրէնի՛ դիւաշունչ բացազանչութիւնը, —

«վա՛յ յաղթւածներին»: Այդ գիտէ հայ ժողովուրդը և՛  
 չկամենալով ո՛չ մեռնել, ո՛չ յաղթուել կուտւմ է —  
 կուտւմ է, որովհետեւ ձևաւած ինքը թոյլ է տալիս  
 միայն կուտիւմ ձեռք բերել իրաւունքն ու արգարու-

թիւնը», — կուտւմ է, որովհետեւ դալիք տարիները կը  
 բերեն նրա համար միայն այն, ինչ նա կուտիւմ ու գտնուի  
 վերցրած կը լինի:

ՔՐԻՍՏԱՓՈՐ



# ԿԱՌԱՂԱՆԻՑ ԱՌԱՋ

ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Ահա այն մասակը, որ Արամ Արամեանը, իր ձեռքակալուսից քիչ յետոյ, գրել է բանտից սասմանագրի մեր կոմիտեանից մէջին: Տպագրում եմք առանց փոփոխման՝ բաց թողնելով մի էանի անուններ միայն:

Կարին, բանտը, 30 յուլիս, 1896.

Ձերբակալուելու օրէց ճիշտ մի ամիս յետոյ, յուլիս 2-ին ես, վերջապէս մի կերպ, ձեռք ձգեցի մատիտի մի կտոր, և ահա շտապում եմ գրել Ձեզ: Շտապում եմ ասել՝ որովհետև կարող է պատահել, որ այս ժամը, կամ բոպէն ինձ համար վերջինը լինի... Բայց սաստիկ պաշարւած է միտքս, հաղար ու մի հոգսեր, ընկերների մաշող կարօտը, անցեալը, քաղցը յիշատակները և այլն, խառն ի խուռն տակն ու վրա են անում յիշողութիւններս:

Գանդումս կատարեալ փոթորիկ է տիրում... Երևակայեցէք մի բոպէ թրքական բանտը, հաղորդակցութիւնից զուրկ վիճակ, բացարձակ առանձնութիւն և այնուհետև ձեզ հասկանալի կը լինի հոգեկան այն դրութիւնը, որի մէջ գտնուում եմ ներկայումս: Այնուամենայնիւ, ներքին մի սփոփանք, մի քաղցր մխիթարութիւն, իբրև պահպան հրեշտակ, շարունակ անբաժան է ինձանից: Իմ վիճակի ծանրութիւնը՝ ինձ չի ընկճում, միայն նրա համար, որ ես գիտակցաբար ընտրել էի հասարակական գործունէութեան այսպիսի սպաքէզ, որտեղ իւրաքանչիւր բոպէն սպասում էր ինձ բանտ կամ կախաղան, և կամ զմահաւիթ սպանիչ գնդակը... Ես ցաւում եմ, սրտանց ցաւում, որ բախտը շուտ գրկեց ինձ փշոտ ճանապարհներից, որոնց մէջ բոպէկ ոտներով ման գալ սիրելի էր ինձ, որոնց մէջ դեռ երկար, մինչև վերջին շունչս կամենում էի տանջւել, քանի չարջարտող հայ ժողովրդի համար էր ծագիլ նոր կեանքի նոր առաւօտ: Մուրաջս մնաց անկատար: Երկինքը գրկեց ինձ հրացանը ձեռիս կուր դաշտում ընկնելու բախտաւորութիւնից: Յիշում էք թանկագին Արթուր Կախանի մասին ձեզ գրելիս, ընկերներիս, և ինձ համար ինչ էի ցնկանում...

Գատմելուց առաջ՝ թէ ի՞նչ պատահեց ինձ, ասեմ՝ թէ որտեղ եմ գտնուում:

Ո՞րքա՞ գիւղացու քրքրւած տարագով նստած եմ Կարինի կենտրոնական բանտի ստորյարկ փոքրիկ խցիկներից մէկի մէջ, որ կոչւում է փոլիս: Այսպիսի տեղ գտնւում են այն մարդկանց, որոնց հարկաւոր է տանջել խոստովանեցնելու համար: Ուղիղ քսան օր է, որ այստեղ եմ: Դրանից առաջ, տաս օրի չափ վզիս մի երկար շղթայ անցկացրած շան պէս կապել էին նստեցնելով մի ուրիշ տեղ, թաց զետեղ վրա: Ոցելից, որի մէջ եմ, ոչ մի տեղից լոյս չէ ընդունում, միայն զրան վրա կայ մի փոքրիկ ծակ, որ բացւած է մի մուտք միջանցքի մէջ. խցի երկարութիւնը մէկ և կէս մետր

է, լայնքը մէկ, բարձրութիւնը մէկկէկէս: Ո՞րնաւորութիւնից օդը չափաքանց ճնշող է, խոտի մի փոքրիկ կտոր, ջրի մի աման, մի հատ թիթեղէ ճրագաման — ահա այն բոլորը, որոնցից կազմւած է խցիկիս կահ-կարասիքը: Իբրև մի առանձին շնորհ՝ թոյլ են տուել գիշեր ու ցերեկ վառ պահել ճրագը, որի արձակած ծուխը անելի հեղձուցիչ է դարձնում օդը: Դուռը միշտ փակ է: Բնական կարիքների համար 1-2 բոպէով դուրս են տանում Ձ՛ ժամում երկու անգամ, առանց թողնելու, որ մէկի երեսը տեսնեմ: Հայհոյանքին չափ չկայ: Այժմ գգում եմ՝ թէ բանտարկւողների համար ի՞նչ մեծ բարիք կարող է համարուել մարդասէր, քաղցրաբարոյ և ջեչ թէ շատ կրթւած մէկի բանտապահ նշանակելը: Ինչե՞ր ասէք, որ չեն թափում խեղճ բանտարկեալների զլխին, մանաւանդ քաղաքական յանցանքով նստածներին զլխին:

Ինչ որ է՝ այս վիճակում դարձեալ մի մխիթարութիւն ունեմ. կողքիս դրացին Ա...ցի Գ...ս է:

Լաւ է: Գաղտնի խօսակցում ենք ու մխիթարում միմիանց: Դրսի հայ բանտարկեալների հետ էլ սկսել ենք զաղտնի հաղորդակցութիւն, այնպէս որ հնար ունենք օրական մէկ երկու անգամ տոմսակներ փոխանակելու: Ի՞նչ էք սուտ, բարեբախտութիւն չէ՞:

Ամիսը լրանում է և դեռ այստեղ ենք. թէ երբ դուրս կը հանեն բանտարկեալները մէջ, այդ միայն Ալլահը գիտէ, այն Ալլահը, որի շնչքին փաթաթել ասմէն բարի ու չար, սիրում են հաւատացեալ մարդիկ: Իմ նախորդ նամակներից ձեզ յայտն է, որ տեղի ունեցած իրազեկ մատուցութիւնների շնորհիւ Սան-Արագուում սկսել էին խիստ խուզարկութիւններ. լաւ ապագայ չէին գուշակում, և հէնց դրա համար էլ գրել էի վերջին նամակներումս, յիշում էք, զգուցէ սա լինի մեր վերջին նամակը խօսքերէ: Դժբախտաբար, այդպէս էլ եղաւ: Իսկ առաջ, նախ քան ձերբակալուելս, Կարինում բռնուում է իմ մի նամակը և նամակաւարս ճշտիւ յայտնում է, թէ ո՞րտեղից և ո՞ւմ էի վերցրել նամակը և թէ որի՞ն պիտի տայ:

Այս յայտնութեան վրա կառավարութիւնը իսկոյն ձերբակալում է նամակի հասցեով — Ա...ցի Գ...սին և հեռագրով հրամայ է ուղարկում Հասան-Գալիէ գայմագամին անմիջապէս գնալ և խուզարկել Քէօփրիֆէօյի սոււած գիւղը...

Դժբախտութիւնը նրանումն է եղիլ, որ տանողը ուղարկողի և ստացողի անունները յայտնել է ճշտիւ, ի հարկէ, իր անձը ազատելու համար:

Յուլիս 2-ին, երեքշաբթի օրը, բորբոքի ճանգիտ նստած տանը, Քէօփրիֆէօյում, մենք ձեր հասցէին նամակներ էինք գրում: Առաւօտից ի վեր, թէև Ալլաք-բէկը «Ղըրսերտարներին» խմբով, թուով 40-50 ձիւաւոր, եկել էին դիւղ, բայց գիւղացիք վատահեցնում

էին, որ դրանք ոչ մէկ առանձին նպատակով չեն եկել և շուտով կը դնան: Ես էլ «արխիէին» շտապում էի վերջացնել նամակներս: Յանկարծ, մտնում է դիւղի գալմազամբ ութ-տասը ձիւտորներով, առաջինները արդէն շրջապատում են դիւղը: Ինձ յուր տւին այն ժամանակ, երբ թէ կտուրները, թէ դիւղի բոլորտիքը և թէ փողոցները պահապան զօրքերով բունած էին: Ես, ի հարկէ, ընդհատեցի դրութիւս, նամակների ծրարը պահեցի և ինքս կամեցայ դուրս գալ փողոց, դռնէ աջտեղ բռնելու համար:



Պ Ե Տ Ր Ո Ս Ա Լ Ե Ր Մ Ը Ե Ա Ն

Տանաէրերը և կանայք լալով աղաչում էին, որ դուրս դամ: Ասում էին, տները չեն խուզարկելու, հանդերը պիտի խուզարկեն, այս և այլ առարկութիւնները ինձ արգելեցին ուղղակի: Ես պահեցի տան մի անկիւնում: Ժօտիս փոքրիկ ատրճանակը հինգ փամփուշտներով յանձնած լինելով, բոլորովին անպէս էի, սանեք պէնք լինէր էլ՝ տան մէջ արձակելը կարող էր շատ աղէտարեւր լինել տանեցիների համար: Ոչ ոք տեղեկութիւն չունէր, թէ նամակը բունած է և թէ նամակների ցուցմունքով ամենքը առաջ այդ տունը պիտի խուզարկէ: Յանկարծ ներս թափեցին մի 15-20 հողի գինեալ արղեր և սկսեցին հայհոյանքով խուզարկել տունը: Այլևս հասկանալի է. ինձ հանեցին դուրս

և թևերս կապած տարան դալմազամի ներկայութեան: Որքան դգւելի, նոյնքան ծիծաղելի էր այդ անասունների ունեցած քէֆը:

Ինձ հետ ձիւտարկեցին տանուէրին և մի ուրիշ երիտասարդ՝ տարերք պատճառով: Այս էլ ասեմ, որ մի շարաթ դրանքց առաջ, նոյն դիւղում, արտի ջրի վրա կուում են երկու հողի և մէկը դնում է Հասան-Գալէ և հակաաւորդին պատճելու համար աջ ու ձախ մատնութիւններ անում: Հէնց այս խիստ խուզարկութիւնները սրա և ուրիշ մատնութիւնների հետեանք էր: Ին է, ինձանից բաւականացած խուզարկութիւնը դադարեցրին և պէտք է ճանապարհ հանէին ինձ, մէկ էլ տեսնեմ մի ուրիշ հայ էլ բերին:

Եղանք շորս հողի մեզ կապեցին իրար և քեցցին առաջ: Ինձ մօտ եղած ՅՌ ոսկի գումարը քամարիս մէջ առանձնապէս պահել էի թագ կացած տեղումս:

Զգրտեմ, դառն գինւորները և վերցրի՞ն թէ ոչ: Դեռ դիւղից դուրս չեկած Յ-ին մի կերպ լուր ուղարկեցի այդ մասին: Գուցէ յաջողի նրան տիրանայ այդ գումարին: Զորբորը ձերբակալւածի մօտ էլ չորսեկէս ոսկի կայ եղբւր քակում: բնող ստտիկանը, ընդունւած սովորութեան համաձայն, իւրացրել էր, ինչ որ դալմազամի ներկայութեանը ուրացաւ: Ի՞նչ արած: Յուզիչ էր Քէօփրի-քէօյից դուրս գալը. անկասկած, մեր վերջին հայացքը դիւղի վրա՝ թափանցում էր գիւղացիների սիրտը և յուզում նրանց զպացումները: Եղան թերևս մարդիկ, որոնց մտքից անցկացաւ ուժով մեզ ազատել, բայց այն փաստը, որ դրանով ամբողջ դիւղը սրի և կրակի ճարակ կը դառնար, նրանց ակամայ ետ էր կանգնեցնում: Մեր խմբի տղերքն էլ վաղ առաւօտից անդէն ցրւած գիւղացիների հետ հանդերը, բոլորովին անտեղեկ էին եղած անցուղարձից:

Վերջապէս, այդ օրը, երեկոյեան ժամը Թ-ին մեզ հասցրին Հասան-Գալէի բանտը: Սաստիկ յոգնած էինք: Մտաւկի և «զոնտաղի» շարածների հետքերը կապոյտ ակօսներով երևում էին իմ և միւսների մարմինների վրա:

Առաջին հարց ու փորձին ես ասացի, որ Պարսկաստանցի եմ, Թաւրիզ քաղաքից, անուն՝ Աւոտ Պետրոսեան: Առաջին դիւերը Հասան-Գալէի բանտում անցկացնելուց յետոյ՝ հետեւալ օրը 25 հեծեալ գինւորներով մեզ ճանապարհ հանեցին Կարին, հետիոտն, կէսուրայ սաստիկ տաքին: Մարդավայել վարմունք մի՞թէ կարելի է սպասել դրանցից: Չիաննելի արագ ջայիթի հետ ամբողջ ժամանակ մեզ շարաչարելուց յետոյ, վերջապէս երեկոյեան ժամը Թ-ին, 25 ձիւտորով հանդիսաւորապէս մուտք դործել տւին քաղաք: Պէտք էր տեսնել, թէ ինչ ցնծութիւն և դապանային հրճանք նմարելի էր այդ ողորմելիների երեսին. կարծես Կարաի արեւութիւնները դրուած՝ յազթական փառքով յետ էին դառնում:

Փողոցները լի էին միմիայն թիւրք հանդիսատեսներով: Մեզ առաջինը ներկայացրին նահանգապետին, որի մօտ, ի միջի այլոց, նկատեցի և մեր տիրապիշատակ Ազրայէլին\*):

\* Դառաճան Տիգրան Գեղարզան, Խնուսցի, այժմ աստիկան:

Պինդ բանտի ճոնչող դռները բացեցին մեր առաջ և այնուհետև այլ ևս իբրք երես չենք տեսել: Այս բուրբ մի կողմ, ես սաստիկ ջարդած էի, ոտներս ուռել և կաշի էին թողել, արեխնեբրիս վատութեան պատճառով:

Ոտներս բթմատների եղունկները պոկ եկան. մնացածներն էլ մինչև օրս ցաւում են: Ամառայ բարակ շորերի մէջ, բուրբոլին քրտնած, ես այդ դիշեր քնել անգամ չկարողացայ: Բանուպահս, մի կատարեալ ցածխանոս հրէջ, չղթան պարանոցս անցնելիս, էլ հայտնաբերեց չմնաց, որ չթափէր զլիսիս, մի քանի ուժղին ապտակներէ հետ: Ի՞նչ արած, ես միայն իմ բախտըն էի անխնայ... Հետեւեալ զիւրեք արդէն տարան ինձ ոստիկանապետի մօտ հացաքննութեան:

Այնտեղ էր Ագրայէլը — այդ օձ արարածը — այնտեղ էին և Կարինի յայտնի ոստիկանները: Պատասխանելով հարցերին՝ ես ասացի, որ անուս Աչոտ Պետրոսեան է, Թաւրիղեցի եմ, գնում եմ Ս. Կարապետ ուխտի. հազիւ մի օր եկած եմ եկել Քէօփրի-քէօյի, որ պատահամբ եմ գտնուել տան մէջ, որ անցաքիբս կրքրած լինելու պատճառով «ըպաշախ» անցել եմ սահմանը, Քէօփրի-քէօյի վրայից, որ զբեւ-կարդալ չգիտեմ և այլն և այլն:

Շատ կանոնաւոր: Եթէ Ագրայէլը շլինէր, նրանք ինձ չէին ճանաչի. երեկայեցէք, ամենից շատ ինձ տեսնող ոստիկան Ալիմ ինձ ընդունեց Ղարա-մէլեքի հետ եկած ջահէլ ռուսաստանցիներից մինի տեղ: Յանկարծ, Ագրայէլ առած թղկը ինչ որ փոփայց քօմիսէրի ականջին և ահա փոխեց տեսարանը:

— Դու Արամ Արամեանը չե՞ս, հարց տւին:

Ես ուրացայ:

Այնուհետև արդէն դիմեցին զօրեզ միջոցի: Երեք անգամայ ընդհատումներով մտրակի մօտ 50-60 հարած տեղացին կռակիս վրա և ես վերջապէս նկատելով, որ ուրանալը բոլորովին գորք պիտի լինի, ինձ ճանաչողները բազմաթիւ են, կարող են հաստատելու համար մինչև անգամ քաղաքը մէջ էլ մտնա ածել, Ագրայէլը՝ «Դու Արամը չե՞ս, ինձ չե՞ս ճանաչում» թափած խօսքերից մանաւանդ ընկճած, խոստովանեցի Արամ լինելս, և այնուհետև սկսեց բուն հարցաքննութիւնը: Ես համարեա ուշաթափ ընկայ մի աթոռի վրա և թէև խնդրեցի, որ քննութիւնը յարկող օրան թողնեն, լսող չեղա: Ինձ համար վերին աստիճանի ծանր ու ճնշող էր այն հանգամանքը, որ ես դատուում էի իմ երէկայ ընկերով առաջ, երէկայ յեղափոխական Ագրայէլը, ոստիկան քօմիսէրի փայլուն համապետի մէջ, դաւաճանելով ամենահասարակ պարտականութիւններին, ամէն միջոց գործ էր գնում քանալու մեր բոլոր դաղտնիքները: Իբրև գործօն, ծանօթ անձնաւորութիւն, նրա տուած հարցերը քիչ էր մնում ինձ դիչէին անել զբուժանք մէջ:

Ո՞րտեղ եմ եղել մինչև բունած օրս, և որոնց ճանաչել եմ Կովկասում, որո՞նց Բասխում, որո՞նց Կարինում: Ո՞վքերս են ընկերներս, Կերեկցեանին ինչի՞ եմ սպանել և այլն:

Ա՜հ հարցեր, որոնց չուրըր դառնում էին մնացեալները և որոնց համար երկու անգամ նորից մտրակի հարածներ տեղացին ինձ վրա: Մի քանի դիշեր

տեղի ունեցող հարցաքննութիւնների ժամանակ ես յայտնեցի, որ ես Արամն եմ, Կերեկցեանի սպանողը՝ անձնական պատճառներով: Եր նամակը իմս է, որ Թաւրիլը իմ կեղծ անունն է, որ Կովկասում ոչ ոքի չեմ ճանաչում, բացի փաստական կարների Փնջոյեան եղբայրներից, որ ես յեղափոխական եմ, անգամ Հ. Յ. Դաշնակցութեան, որ այդ կազմակերպութեան կենտրոնը Վիեննա է, օրգանը՝ «Երօջակ», որի նպատակն է... (ճիշտ ինչպէս ծրարում կայ), որ ես այդ կազմակերպութեան անունից զալիս էի յեղափոխական գործերի համար, որ Դաշնակցութեան ծանօթացել եմ Վիեննայից եկած Յովակիմեան Մուրաթ անուն մէկի միջոցով, որ ուրիշ ընկերներ չունեմ հետս, որ առաջին անգամ լինելով, ոտք եմ դրել այս հողը և հէնց երկրորդ օրում ձերբակալուել, Կարինում և չրջակայքում ոչ ոքի չեմ ճանաչում, որ ինձ այս ամիս անց կացնողներն եղել են մի յոյն և երկու հայ վալաղներ (մի որեէ անուն) . որ զրանց երեք ոսկի վարձ եմ տւել և այլն: Առ հասարակ այնպիսի հարցեր, որոնցից խոյս եմ տւել, «չգիտեմ», «չեմ ճանաչում» ասելով շարունակ: Եամակը կարող էի ուրանալ, բայց մտածեցի, որ դա առիթ կը լինէր նոր ձերբակալութիւնների և մերկացումների, աւելի լաւ համարեցի ուղղակի ինձ վրա վերցնել շատ բան:

Գործը այժմ փոխադրւած է ոստիկանութիւնից նախնական դատարան, երկու անգամ էլ այդտեղ հարցաքննեցին ինձ և զեւ չէ վերջացել:

Այստեղ արդէն աւելի համարձակ և կանոնաւոր զբի յեղափոխութեան նպատակի, միջոցների և պատճառների վերաբերեալ խնդիրները: Մեղադրում են ինձ, որ իբր թէ 150 հոգով անցել եմ այս կողմը, որ Շաքիր փաշային սպանելու համար Խնուս եմ դնացել և այլն:

Ես, ի հարկէ, բոլորովին հերքեցի: Հարցեր տւին նաև ինչ որ վանեցի Ատոմի, կարնեցի Արշակի, Սէրդարի, մչեցի Մէլքոնի, Ասատուր Յովոյի և այլոց մասին: Ես ասացի, որ ոչ մէկին չեմ ճանաչում:

Ինչպէս երևում է Խնուսից էլ մատնութիւններ են եղել մեր մասին:

Հաւանաբար, երկու երեք ամսից կը տան մեր վըճիրը: Ենթադրում են, որ ես կախաղան կամ ՆՊ արտայ քանտարելութեան կենթադրում: Ոչնչեմ, Կամք յեղափոխութեան օրհնեալ լինի... Առայժմ չտապեցէք փող հացնել մեզ, որովհետև ապրուստի և անմիջական կարիքների համար փող չունենք. հաւանական է, որ քիչ փողով անմեղներ ապտանեն. ինձ էլ, ջահնած ու զեռօ, ինչ ուղում են թող անեն: Կերեկցեանի գործը դատարանում փութեցի, որպէսզի քաղաքական յանցանք դառնայ բոլորովին: Ասացի, որ այդ տերորը կատարել է ռուսաստանցի Տիգրան Օթոյեանը և ես յանուն բարեկամութեան և ուրիշ պատճառներով (այնտեղ մանրամասն է ասուած) ինձ վրա առնելով փոխել եմ...

Առհասարակ, իմ քննութիւնների մէջ ես բռնել եմ այսպիսի մեթոդ — կամ բոլորովին ուրանալ և կամ՝ անխուսափելի հարկից առաջ տալ գոյութիւն չունեցող կամ մեղած մարդկանց անուններ: Լուր եմ տալիս ինձ,



որ գանազան տեղերից, ինչպէս նաև Վանից նամակներ են հասել, կարգադրեցի, որ շուտով հասցնեն ձեր ձեռքը. ի սէր Աստուծոյ, շտապեցէք Հանդակներու և Պան-Արաղի համար մարդիկ ուղարկել. գործեր շատ կան անելիք: Մեր վիշաք, տառապանքը կը կրկնապատկի, եթէ մեզանից յետոյ ոչ ոք լինի մեր տեղը բռնող: Համարձակներից Մ... ազատ է, նա կը շարունակէ պահպանել յարաբերութիւն մինչև յարմար մէկը ուղարկելներդ: Անտարակոյս, գործերի և տիրող դրութեան վերաբերմամբ մեզ էլ չէք զրկի տեղեկութիւններից: Բանտային կեանքում թանկ արժէն դրանք:

Յուսալից ենք, որ շուտով պայթող շարժումներ կը գան բանտի խորքերում դղրդացնել և մեր սիրտը: Ա՛խ, որքան անբախտ ենք. մի՞թէ անգութ երկինքը աշպխի կրիտիքական, աշպխի ծանր բողբոջում, մեզ սխտի գցէր թշնամու ճանկը:

Այսպէս, ուրեմն, թանկագին ընկերներ և ընկերուհիներ, երևի մեզ վիճակած կը լինի շուտով մեր գա-

ղափարների համար կախաղանի վրա տալ մեր վերջին ունեցածը, կամ մուսլ բանտում տանջել երկար: Կր լինի՞ առիթ նորից գրելու — այդ չգիտեմ... Մնաք բարով, աւել-պակաս հալալ արէք: Կտակում ենք ձեզ մեր վրէժը և այն դործը, որի համար մենք ստատաւ ենք կուռն մինչև վերջը: Վստահ եղէ՛ք, ձեր ընկերները ունեն բարոյական արիւթիւն՝ համարձակ քայլերով դիմելու դէպի կախաղան, որը անկասկած վաղ թէ ուշ մեր հետևորդներին կը բարձրացնեն դէպի ցանկալի վերածնութիւն...

Անյազ կարօտով համբուրում եմ բոլորիդ և ցանկանում յաջողութիւն ձեր դործին, ոյժ ձեր բազուկներին: Եթէ մի օր երկինքը բաց աչքերով նւիրի մեզ բախտաւորութիւն՝ տեսնելու մեր գաղափարների յաղթանակը, կարմիր օրերում, զւարթ արշալոյսին, մեզ էլ յիշեցէք... Մահկանացուների մէջ մեզ կը համարենք ամենաերջանիկը:

ԹԱԹՈՒԼ



# ԳԵՊԻ ԵՐԿԻՐ

Ամէն տեղ որսնում է Հայը ապաստան  
Բացի այն երկրից, որ կոչուում է Հայաստան :

Գնում է Հայը՝ կնճիւրը ճակատին, յոյգը սրտում :  
— Ո՛ւր, Հայ շինական :  
— Դարերու թիւն :

Գնաց, իսկ այնտեղ, Խնուսի կիսուեր գիւղում, պատու մայրը մէջքը կորացած, Հալ ու մաշ կինը՝ ծծկերը դրկին, և Հորս մատղանները, բորիկ և ցնցոտիապատ, նրան են սպասում : Նրան են սպասում, երբ պարտատէրերն են դուռը բախում կամ, երբ հարկահաներ, որոտալի ծայրով, շանթ ու կրակ է թափում : Երեխաների կանչը, «Տա՛ց» և դատարկած գոմից նւազած եզան բառաշինը «խո՛տ» — դաղար չունի : Տաչտում՝ Հաց, գոմում՝ խոտ, չկայ — նրան են սպասում : Գիշերը անձրև եկաւ, հողը փափկեց, արար վարող չկայ, նրան են սպասում : Տանեցու աչքը ջուր կորեց : Պառու տատը թոռների բողազից կտրեց՝ ձեռքը ժամ տարաւ, լուս վառեց — բայց էլի խարար չկայ : Ու ժամից դառնալիս՝ իր ցաւը նա այսպէս երգեց՝

Տուն կայ՝ պահող չկայ,  
Արտ կայ՝ վարող չկայ...

Գնում է Հայը՝ վերքը ճակատին, Երկիւղը սրտում :  
— Ո՛ւր, Հայ երիտասարդ :  
— Օտար աշխարհ :

Եւ Երկպտան ու Կիպրոսը, Կովկասն ու Բալկան հերթը շեղան հարածական պանդուխտին : Մովեր անցաւ, մինչև Ամերիկա հասաւ : Օտար աշխարհում նրա լեզուն բացեց, ցոյց տուց իր մարմնի վէրքերը, սրտի խոցերը :

Անպաճոյճ, բայց յուզիչ լեզուով պատմեց ծերուկ հօր սպանութիւնը՝ կաթածահար մօր առաջ, մատաղ քրոջ փախցնելը : Նկարագրեց հարեւանի թալանը, ամբողջ գիւղի աներումը և իր յուսահատ փախուստը : Մարդիկ յուզեցին, կսկծացին : Փախտականին ապաստարան տւին, քաջախիբքեցին :

Բայց նա ոչ առաջին էր և ոչ վերջինը :

Օր շանցաւ, որ պանդուխտ չգար : Ամիս շանցաւ, որ նոր քաղաքում չերկար : Հները նորերին գրաւեցին : Օտար աշխարհի ճամբան՝ ջրի ճամբայ չինեցին : Գիւղ չմնաց առանց փախտականի, օխող չմնաց առանց դարբականի :

Եւ ծերունի պապը՝ մարած օջաղի մօտ նստած, արտասուքը սրբեց ու հանգած օդային այս դանդաղ ուղղեց՝

Ման ունի՞մ՝ մանկալ չունի՞մ .  
Ընտանիք ունի՞մ՝ քանիլ չունի՞մ . . .

Գնում է Հայը՝ բողոքը ճակատին, վրէժը սրտում :

— Ո՛ւր, Հայ հայրենասէր :  
— Ազատ երկիր :  
— Ինչո՞ւ համար :  
— Գործելու համար :

«Այնտեղ, ազատների երկրում, ուր չեն կարում այն կոկորդը՝ որ բողոք է հնչեցնում, և այն ձեռքը, որ սարուկի շղթան է փշրում, այնտեղ մենք բարձրաձայն բարոյեցող վատ կը պահենք համապայտին վրէժի սրբազան կրակը, իբրև վերջին աւանդ անմեղ զոհերի . այնտեղ՝ ինչպէս մարմնացած բողոք, կը պատկերացնենք դիտածակ հայրենիքի սարսափները — սարսափներ, որոնց հարիւրերորդ մասը անգամ չգիտէ քաղաքակիրթ աշխարհը՝ ազատ ու անկախ այնտեղ մենք կուտամնասիրենք հայրենիքի փրկութեան ճանապարհները, կը կրթենք և կը պահենք տարագիր մատաղ Հայ սերունդը օտար արդեցութիւնից, այնտեղ, զգայուն մարդկանց առաջ, որոնք լսել, զգալ, ցամաք որոտ արձակել գիտեն, մենք բաց կանենք նահատակ ժողովրդի սիրտը, շանթ ու անէջք կը թափենք, մինչև որ արար-աշխարհ տանկ ու վրա կը լինի, մինչև որ մի որևէ տեղից մեզ օգնութիւն կը հասնի» :

Ու գնաց : Նա մենակ էր : Նրան հետեւեցին ընկերներ, ծանօթ ու անծանօթ գործիչներ իմբեր, տարբեր ծրագրներով, տարբեր ճանապարհներով : — Ակաւցին լրագիրներ, անգղէաներ, հիմնեցին զարոցներ, ընկերութիւններ. տեղի ունեցաւ ժողովներ, մերկացումներ, վերջապէս, աղբոսանքներ, դիմումներ : Եւրոպա, Ամերիկա, նոյնիսկ ստրկութեան երէկւայ հայրենիքը, փարաւոնների երկիրը՝ լեցեց ազգի ցաւը լացող գործիչներով ու բողոքներով : Միայն երկիրն էր, որ մնաց առանց բողոքի, առանց գործողների : Եւ այն ժամանակ, երբ օտար աշխարհում՝ ազգասիրական հողի վրա բուսած ագմուկն ու իրարանցումը սաստկանում էր՝ վերածելով հայրենիքի ու գործի ընդհանուր շահերը խմակարն և նոյնիսկ անհատական մանր հաշիւների, — նոյն այդ ժամանակ, Երկրի մէջ լուռ էին բողոքի բոլոր կենդանարար ձայները, հանգչում ապստամբութեան խարոյկները՝ վառուած անթիւ զոհերի ազատասէր շունչով : Երկրի խորքում՝ կուռ չմնաց, ժողովրդի առաջ՝ բողոքող : Եւ Մուշի Դաշտի կիսուեր գիւղերում յուսարեկ, մոռցած, անընկեր մնացած մայրիկը՝ գիւղի աշուղին կանչեց և խնդրեց այսպէս երգել իր ազգի վիշտը՝  
Ճրագ կայ՝ վառող չկայ,  
Ժողովուրդ կայ՝ սիրտ տուող չկայ...

Խնձ ժողովուրդ . . .

Ամենքը դնացին : Մէկը իբրև բողոք՝ ֆանդում օջաղի, միւսը՝ հայրասիրած աշխատմբի, երբորդը՝ հայածական գաղափարի :

Գնացին, որ աղերսին, վկայեն անտիրտ, կուրացած աշխարհին զո վիշտը, ստառապանքը, զո յուսահատ վիճակը: Իսկ դու՝ որբական մենակութեան մէջ՝ սպասում ես խարբրիկների, օգնութեան, ադատութեան...

Գնացին եւ էլի գնում են...

Եիսուն հազար գաղթականներ կողկասում, որոնք հինգ տարուց ի վեր մի անկիւն անգամ չունեն իրենց յաղած գլուխը վայր դնելու համար. անթիւ, անհամար հալածականներ եզկպոտոս, Կիպրոս, Ամբրիկա, Եւրոպա, ցնցոտիապատ, Թափառական, անտուն, անտէր՝ իբրև անխօս կենդանազիրներ հայրենիքի թշուառութեան ցիրուցան որբեր հայ աշխարհի բոլոր ծայրերից եւ այդ բոլորի հետ միասին՝ ամբողջ Հայաստանի մտածող, յեղափոխող տարբը՝ ուսուցիչ, զարգիչ, դուրդ, կուռղ, յեղափոխական, վարդապետ, ինտելիգենտ — բոլորն էլ Երկրից դուրս, բոլորն էլ Թափառական աղերսանքը բերնին, ձեռք մեկնած...

Որպի՛սի դարձ:

Պատմական վիթխարի դէպքերը միմիանց յալորդեցին, մենք արեան գետեր տւինք, մեր նահատակների թւով աշխարհ դղրդադրինք, իսկ այժմ... Այժմ արեան փոխարէն արտասուք ենք թափում, բորոքի տեղ՝ աղերսանք: Ժողովուրդ եւ հայրենիք պաշտպանելու փոխարէն՝ մեր թշուառ գոյութիւնն ենք պահպանում. թշնամու տեղ՝ իրար հետ ենք կուռում: Եւ կամ մեր խիղճը խարելու համար, այն միջոցին, երբ ամբողջ Տարօնում մի հատիկ դպրոց, մի այրենարան չի մնացել, հայ հայրենասէրները օտար երկիրներում, թերթեր են տպագրում, ճառեր են ասում, նոյնիսկ դպրոց եւ վարժարաններ են հիմնում: Հայաստանը — փառք այս նոր դիւտին — օտարութեան մէջ են փնտրում, իսկ նրա սպազան՝ աղերսականութիւն եւ տարագրութեան մէջ: Եւրոպան կշտացաւ, նոյնիսկ «յողեցնք» մեր լաց ու կոծից, մեր ցնցոտիներից, իսկ մենք՝ ինքնախաբէութեան դիմակի տակ, շարունակում ենք թափառել եւ աղերսել, աղերսել եւ թափառել:

Ժողովուրդ էինք՝ քափառական դարձանք, Կուռղներ էինք՝ աղերսողներ դարձանք...

Կա՛ց, հայ մարդ, կա՛ց:

Դա չէ այն ճանաչարհը, որ տանում է դէպի փրկուցութիւն, ազատագրական արեւը չէ, — նոյնիսկ այնքան սուկալի, ինչքան «Հայկական կոտորածները», որ սպանում է մի ազգ, այլ թափառական կեանքը, մուրացկանի պայուսակը, անվերջ տարագրութիւնը, մի՛ մոռցիր, որ քան տարուց աւելի է ինչ օսմանեան բռնապետութիւնը եւ՝ զրդեանձգութեամբ, ինչպէս վանում, ե՛՛ սովոր, ինչպէս Վասպուրականում, ե՛՛ կոտորածով, ինչպէս ամբողջ Հայաստանում, մի նպատակ միայն ունի, վերացնել, նապեցնել Հայերին, դաժմել Հայաստանը անհայաքանակ, որպէսզի այդպիսով վերջապէս մի ծանր գերեզմանաւաք դրի այն մեծ,

ողեւորէլ հարցի վրա, որ 22 տարուց ի վեր զբաղեցնում է ամբողջ Եւրոպան «Հայոց Հարցը» անունով եւ որը 600 տարւայ սարուկ ժողովուրդի սրտում ծնել է ե՛՛ յոյս, ե՛՛ հերոսութեան ձգտում, ե՛՛ մարդկային մեծ իդալներ...

Այո՛, իդէպներ, որոնց իրազորման համար հայութիւնը միայն մի վայր ունի — Հայաստան: Մայր հայրենիքից դուրս, հայ ժողովուրդը ազգ չէ՛, այլ փշրամբ, քափթըփուկ, անպէտք եւ անկարևոր: Երկիրն է նրա պատմական դերի բեմը, նրա կույտորական բաղձանքների հնձը: Թափառական, շրջիկ կեանքը, տարագրութիւնը սպանեց հրէական տաղանդաւոր ազգը. նա մեզ էլ կը սպանի՛՛ հասցնելով ազգը հայկական ջիւղուրքիան...

Եւ այն, ինչ որ շայնուցեց մեր թշնամուն իր միջոցներով, ժամանակակից հայ սերունդը կարծէք ուզում է, յաղոցացնել իր անմիտ ճշգրտաբանութեամբ, հայկական այս սպանիչ եւ յուսահատ թափառականութեամբ, այն ոգով, որ հային տանում է դէպի ամէն կողմ եւ երբեք դէպի Հայաստան... 500 տարւայ ստրկութիւնից յետոյ, հելլենի՛՛ հակառակ ամէն զոհերին, իր կուս զուրը տնկեց աւերակածով հայրենիքի կրծքում, այն ուղուց, որից մինչև այժմ էլ չի չբացել նահատակների արեան բուրմունքը: Արեւը նրան չըփախցրեց, այլ աւելի սերտ կապեց: Մէ՛թէ մենք պիտի փախչենք: Մեր ստրուկ, մեզանից աւելի հայածական, մզանից աւելի տղէտ նախնիքը՝ տանջանքների բովից անցնելով, մեզ թողին մի մեծ ժառանգութիւն — Հայրենիք: Ի՞նչ, մէ՛թէ մենք պէտք է մեր սպազայ սերունդին հայրենիքի փոխարէն թողնենք լոկ հայկական կոյունիաներ, ցիրուցան ովկիանոսի այս ու այն կողմը, չաղկապւած ոչ մի զլացուսով, ժողովրդական ոչ մի զաղափարով...

Մեր հայրենիք — դեռ 40 տարի առաջ՝ ասաց անմոռանալի հայրենասէրը —

Իր քոյիքը այդ կանչում է Հաննի վրէժ, քէն ու ոխ:

Եթէ 40 տարի առաջ կային «որդէք», որոնք խուլ էին եւ անընդունակ ըմբռնելու այդ կոչը, այժմ, 20 տարւայ անտոյր դէպքերից եւ անուր զոհերից յետոյ՝ չպիտի լինեն այդպիսիները: Այդ Վրէժ, քէն ու ոխ — կանչում է հային դէպի Մայր-Երկիր եւ ոչ դէպի Եւրոպա կամ Ամբրիկա:

Օտարները մեզ արդէն ճանաչեցին:

Այժմ Երկիրն է մեր ապրելու տեղը, զործելու սպարէզը: Այնտեղ թող հնչի մեր բազմը, այնտեղ լսել մեր սպառնալիքն ու աղերսանքը: Եւ այնտեղ, անխախտ, յուսահատ, տանջող ժողովուրդի մէջ թող նորից բոյն դնեն այն բոլոր ուժերը, որոնք այժմ՝ յաճախ սպարդիւն կերպով սպառւում են օտար երկիրներում, հայրենիքից շատ հեռու, օտար աշխարհներում:

Դէպի՛ Երկիր — ահա այսօրւայ մեր նշանաբանը: Եւ թող սրանից յետոյ մեր պրոպագանդի ամբողջ զգի վրա, պանդուխտների շրջանում թէ՛ գաղթականների A.R.A.R.®

մէջ, Պուլի խաներում, թէ կովկասեան թէյարաննե-  
րում, Ամերիկայի հայոց ժողովարաններում, թէ Բալ-  
կանի ձորերում, Ատրպատականից մինչև Նեղոս ու  
Նեղոսից մինչև Դանուբ՝ ամէն տեղ և ամէն ժամանակ

բարձրաձայն հնչի հայութեան ականջին նոյն յամառ  
հրաւէրը, նոյն ազգու կոչը՝

Դէպի՛ Երկիր, դէպի՛ Երկիր:

ԱԿՆՈՒՆԻ



# ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ \*

Լաւ կը յիշեմ այն երջանիկ օրերը... Աննախընթաց խանդավառութիւն մը կը համակէր ոռուսահայութեան բոլոր խաւերը և մթնոլորտը տողարած էր խորհրդաւոր շշուկներով: Թիֆլիսը և դաւառը արտակարգ իրարանցման մէջ էին: Ձեռքէ ձեռք կանցնէին արտասահմանէն ստացուող «Արմէնիա»ի հազազկետ թիւերը և Պետերբուրգի հայ ուսանողներու կարծիք բրոշիւրները...

Բայց ամենէն աւելի ցնցող էին «Երկրէն» տեղացող սարսկեցուցիչ լուրերը... Մուսա բէյի դազանային նախճիւրները և թիւրքական դատավարութեան եղբարհատակը, որ վերջացաւ չարագործի արդարացումով... Յաման փոթորիկ մըն էր ամենուրեք: Եւ ցատումը տեղի աւառ ցնծութեան, երբ քիչ յետոյ բռնկեցաւ էրզրումի արիւնալից ցոյցը...

Չայնը հնչեց էրզրումի լիաներէն...

Պատրու՛մը կընդարձակէր: Ամենքը յղափոխական էին: Անգամ «Փորձ»-ի խմբակները, կղերական-պաշտօնական Արզաբ Յովհաննիսեան, սկսեց տպել իր հանդէսին մէջ Գամառ Քաթիպայի մարտաշունչ երգերը, վանեցաւ Հայր Մէրը և այլն:

Գրիչը, սակայն, չէր բաւեր: Գրէի, խօսքի պրօպագանդը ոռուսահայոց մէջ ըրեր էր արդէն Բաֆֆին իր հրաբխալէժ վէպերով, ըրեր էր Սերիմեան իր բողաշունչ վանգոյժով\*\*, ըրեր էր Մեքենց իր Երկուցնով ու Թէոդորա Ռշտուհիով: Կը մօտենային վճռական օրերը, երբ ոռուսահայ երիտասարդութիւնը, հնազանդւելով մեծ Կախարդի հրահանգներուն, պիտի գնար խիտ շարքերով ստանձնելու զարհուրանքի երկրին մէջ Կարօներու և Աւլաններու առաքելութիւնը — պիտի գնար քարոզելու, կռուելու և նահատակելու...

Ամէն ոք կը խորհէր, թէ ժամանակ է խօսքէն գործի անցնելու: Եւ ամէն կողմէ զազափարական տարրերը կը մղէին դէպի Թիֆլիս, ոռուսահայոց մտաւոր կենտրոնը, որ 1889-90 թւականներուն զաղտնի, ալմիկայոց ժողովներու և զազափարային բարձունքներու թատերաբեմ էր:

«Դաշնակցութեան» ծնունդի երկուսն էր և բոլոր աչքերը յառած էին դէպի Թիֆլիս: Լուրերը այնտեղէն դաւառ կուգային, ըստ սովորութեան, խիտ դունձաւորում են չափազանցաւոր: Կընչէին, թէ այնտեղ, Թիֆլիսի մէջ ստեղծուել է համազգային հօդը «կոմիտէս» մը, կեդրոնական մարմին մը, Գրիգոր Արծրունիի նախադահուցութեամբ, որ գլուխ կը կանգնի Հայաստանի ազատագրութեան գործին և որուն հայ ուսնւորներն ալ տրամադրուր են միջկոնքը...

Կը յիշեմ այն բուռն ոգևորութիւնը, որ կը տիրէր այդ օրերուն — 1890-ի գարնան — Դարաբաղի մայրաքաղաքում, դպրոցական պատանիներու և ամբողջ

երիտասարդութեան մէջ: Կը յիշեմ Գարալագեագցի Տէր Գրիգորը, որ օր մը յանկարծ, սպառազինաւ, երեցաւ Շուշիի թօփխանէին վրա և վայրկեանաբար շքացաւ, դառնալով ողջ քաղաքի խորհրդաւոր զրոյցներուն առարկայ: Կընչէին, թէ «Հայաստան գնաց»...



Ս Ե Ր Ա Ս Ս Ս Ս Ի Մ Ո Ւ Ր Ս Ս

Կը յիշեմ ուրիշ նման խորհրդաւոր առաքելներ «ձեչեխ», «սասունցի» անուններով — նոր եկած Հայաստանէն — որ Շուշիի մէջ կը հաւաքէին աշակերտներս քաղաքէն դուրս, հեծեծալով կը պատմէին թիւրքական բարբարոսութիւնները և կը դիւնուրագրէին մեզի Ս. Գործին համար:

Կը յիշեմ երիտասարդներու, նոյնիսկ պատանիներու գլխապատառ վազը «դէպի Հայաստան»... Օր մը ստանեակ դպրոցականներ — ամենէն exalté-ներէն, անդէն, զաղտնի, դէշերով, առանց ծնողներուն լուր տալու, փախան յայտնի չէ ո՛ւր և ի՞նչ ուղղութեամբ — բոլոր ճամբաները «Հայաստան» կը տանէին — և 10—15 օր, անօթի, ծարաւ, Դարաբաղի անտառներուն մէջ թափառելէ ետք, վերադարձան: Չէին գտեր Հայաստանի ճամբան:...

Կը յիշեմ, վերջապէս, մեր խմորատիպ քոնցիկները, որոնցմէ մէկը մնացեր է մեր արշիվին մէջ այն հեռաւոր օրերէն. նմուշ մըն է, որ կը ցուցնէ այն օրերու տարամեթ հոգեվիճակը (psychose), որով համակած էր կովկասահայ երիտասարդութիւնը...

\*) Հատուած մը «Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութիւն»-էն, որ պիտի լայս տեսնէ յառաջիկային:

\*\*) Հրատարակուած Թիֆլիսի մէջ 1877-ին:

նը... Հարիւրներով են տպագրւել նման թուուցիկներ Անդրկովկասում, բայց չէին պահուել, տարաբախտաբար, ոչ մի տեղ, ո՛չ իսկ կուսակցութեան արշիվներուն մէջ, ինչպէս որ չէ մնացել և ոչ մի հատիկ արձանագրութիւն 1890-ի այն փոթորկոտ ժողովներէն ու վեճարարութիւններէն, որոնց բովիւն մէջ դարբներ է Ն. Յ. Դանապետութիւնը:

Հայ քաղաքական կուսակցութեան այդ երկունքի օրերուն Թիւրքիայէն և Թիւրքաց Հայաստանէն Թիֆլիս եկան շարք մը նշանաւոր Թիւրքահայ դէմքեր: Ամենէն նշանաւորները — Չաքիրան, Յուսի և Սարկաւազ:

Առաջինը, բնիկ Ձէյթունցի, ղեկավարող դեր խաղացել էր 1878-ի Ձէյթունի ծանօթ խողովութիւններուն մէջ, շրթայակապ Պոլիս տարւել էր ու բանտարկուել: Մօտ 40 տարեկան մարդ մը, բարձրահասակ, ջիւղտ, երկայն բեխերով: 1890-ին նա մէկէն ի մէկ, «Ձէյթունի իշխան» անունին տակ լոյս ընկաւ Թիֆլիսի մէջ, ներկայացաւ Գրիգոր Արծրունիին, ծանօթացաւ մտաւորականութեան բոլոր ականաւոր դէմքերուն հետ և իր պրոպագանդը ի նպատակ Թիւրքահայ ժողովան յաղթանակար պսակելու համար, կը դիմէր նոյն յախճան միջոցներուն, կը ճառէր նոյն պաթեթիկ լիզով, որով Շուշիի աշակերտները կը խմբադէտին իրենց ամպագոտ թողուցիկները... «Ձէյթունի իշխանը» կը թմբակահարէր ամենուրեք, թէ Թիւրքիան և Հայաստանը պատած են յեղափոխական կազմակերպութիւններու ցանցով, թէ ինքը կապ ունի ամենուն հետ, կը ղեկավարէ շարժումը և թէ եկած է ոռուսահայ եղբայրներու անկախութիւնը խնդրելու:

Արծրունի և դանապետական մտաւորականութիւնը սկիզբէն իսկ Թերաւաւու զոնեցան այդ տաքելուի մարդուն հանդէպ, որ ժամանակին Թերեւս ըրեր էր օգտակար ծառայութիւններ, բայց որ այդ օրերուն խիստ կը շափազանցէր Հայաստանի մէջ ստեղծւած յեղափոխական կացութիւնը և կը մշտնադրէր ազգային դատին: Այդ օրերէն ի վեր Յարութեան Չաքիրան, վարկաբեկւած, քաշեցաւ յեղափոխական հրապարակէն: Կը մնար, սակայն, անունին հմայքը որոշ տեղերում և երբոր ժամանակ դեռ կային շրջաններուն մէջ — չափընտանականը\*):

Նման արկածախնդիր տիպ մըն էր Մշեցի Սարկաւազը: Կովկաս անցնելով, նա ևս միւսին պէս սկսեց փողահարել, թէ Հայաստանի ժողովուրդը միանգամայն պատրաստ է ազատութեան կռիւ համար, թէ ինքը գործեր է 12 տարի գաւառներուն մէջ, լաւագոյն յարաբերութիւններ մշակել է զբարեկրուն հետ, կը հաւատացնէր, թէ խումբերով կարող է մեծ քանակութեամբ գնէր փոխադրել ու բաժնել ժողովուրդին... Սարկաւազ ակտիւ հաստ ներշնչեց կովկասցիներուն, օգտագործեց անոնց խանդավառութիւնը, խոշոր գուժամոններ հաւաքեց ասպատակային խումբեր կազմելու համար, որոնք միացան Կուկուշեանի համբաւաւոր ար-

շաւանքին մէջ: Ինքը, սակայն, կասկածելի ընթացք ունեց արշաւանքի միջոցին և եղբարական վարձան ունեցաւ:

Այաշկերտցի Յուսի, որ նոյնպէս եկել էր կովկասցի եղբայրներու օգնութիւնը խնդրելու «Դանապետութեան» ծնունդի օրերուն և որ իր կենսաքի վերջին տարին գործեց անոր դրօշակին տակ, բոլորովին տարբեր մարդ մըն էր, հակաստիպար Չաքիրանի ու Սարկաւազի: Կիսարկուղտ, յաղթ, առոյշ տղամարդ մը՝ որ Երկրի մէջ ասպատակային խումբ մըն էր վարել և արկածալից կենսք էր անցուցել հերոսական կռիւներում մէջ՝ զբարեկրուն հետ, ամբողջ ամիսներով մնացել էր թաղանթած մութ ու խոնոտ քանոնայարկերուն մէջ, խուսափելու համար գինքը հետապնդող իշխանութիւններէն: Մարդ մը, որ չէր թմբակահարէր միւսներուն պէս, չէր տարւել ինքնազով շատախօսութեամբ, տիպար հայրուկ մըն էր, որ կը գործէր լուկամիջիկ, լի հարկուկ վրէժխնդրութեամբ՝ Թիւրքերուն և մանաւանդ զբարեկրուն հանդէպ, որոնցմէ շատերն էր սպանել իր անվրէպ քնդակներով: Նոյնպէս, ի հարկէ, համոզւած էր, որ ժողովուրդը պիտի ապստամբի, եթէ ունենայ գէնք, դրամ, ռազմաթիւրք:

«Ժողովուրդը գէնք, գէնք կուզէ, ասպատակային խումբեր կուզէ, և երկիրը ազնաւնանի մը կը սպասէ ասպատակութեան դրօշ պարգելու համար»...

Այսպէս էր ընդհանուր հաւատն ու համոզումը 90-ական թուականներու սկիզբներուն, այդպէս էր իշխող հոգեբանութիւնը հայոց աշխարհի մէջ — վարդապետ, գահավէժ, խուճապահին հռչակախոսութիւն՝ որ կը վարակէր անգամ ամենէն զգաստ, պաղարիւն առաջնորդները...

Շարժումը տարեբային էր: Նոր կըստ մը կայեկոծէր հայ աշխարհը, նոր եկեղեցի մը — Հայ Մարտական Կազմակերպութիւնը — որուն առջև կուգային խոնարհելու բոլոր եկեղեցիներու հաւատացեալները՝ լուսաւորչական, կաթոլիկ, բողոքական, անկրօն ու անհաւատ... Վսեմ, հազարգիւտ տեսարան մը կը պարզէր հայկական Անդրկովկասը — գաղստաբային թրոնիցներու, շրթայակներ և աղնական կիրքերու կըրկէս մը: Ազգային ազատութեան գաղափարը վեց դարու գերութեանէն ետք, կը տարածէր հեղեղի մը կատաղութեամբ, զոր ոչ մի թումբ չէր կարող արգելել: Եւ որքան ակտիւ ուժեղ էր յափշտակութիւնն ու կռիւն տենդը մանաւանդ սինազրակէտ, պարզունակ, երիտասարդ տարբերուն մէջ, որոնց աչքին գաղափարը ամենազօր, անյաղթելի բան մըն էր... Հայոց ազատութեան գաղափարը այնքան ջինջ էր և արդար...

Եւ ո՞րպիսի գերզնահատում սեփական ուժերու: Եւ ո՞րպիսի արհամարհանք դէպի թշնամու ուժը... Շատերու աչքին — անգամ մտաւորականներու — Թիւրքիան մահամեծ պետութիւն մըն էր. բաւական էին քանի մը հարւած — և Եւրոպան պիտի միջամտէր և Մեծ Երազը պիտի իրադրուէր:

Հայութիւնը՝ անպարտիկ հակա մը, Թիւրքիան գահած մը... «Հեթիֆ որդեակի... Մեր բախերմ ալ կաննն նոցա շանաստակ»...

\*) Վերջին անգամ տեսայ «Ձէյթունի իշխանը» 1897-ին Վառնայի մէջ, ուր Քիթթ կը համեր: Ատիկ կարծեմ տարի մը յետոյ մեծաւ Ռուսամիտոյ մայրաքաղաքին մէջ:

Հայկական շարժման ուսմանտիկ շրջանն էր — անասճման պատրանքներու և դիւրին խանդավառութիւններու շրջանը: Բոլոր պատամբ ժողովուրդները ունեցեր են այն: Ինչպէս անհատի, նմանապէս իւրաքանչիւր ժողովուրդի կեանքին մէջ կայ «վերթէրեան»): «Հերոսական» այլ շրջանը — օրեր հսկայ, կենսաբար երազներու, օրեր անգուսպ, սնյազուրդ, պատանկական իղճերու, երբ արթնցող ժողովուրդը, տակաւին գիտակցութեան չմտքին վրայ, անհունօրէն յափաղանցնելով իր ուժերը, կը փորձէ խօլ թռիչքներով իրապօրծէյ անկարելին, կը ծառանայ խիզախօրէն վիթխարի արդիւններուն դճմ և կեանքի վառ տենչանքով՝ կոշում կընէ — Մահուն...

Այդպէս կը բնորոշէ այլ տարամբժ հոգեվիճակը ինքը Գիտթէ, ուսմանտիգմի հանճարեղ ուսճիրան:

Այո՛, վկայական շրջանն էր — և անոր բուն ու ծաւալուն արտայայտութիւնն եղաւ Կուկունեանի արչաւանքը: «Հայ շարժման հրապարակին վրայ լեզւին էին սէրվանտեսեան հերոսները, տարտարչնատիպ և վեհանման սուկտները, երազատես «սաքէլութիւնները» և ամէն տեսակ աղանդաւորներ ու մոլեռանդներ. մթնալուրտը լեցուն էր վառօդի գիտովցուցիչ բուրմունքով, թմբուկ ու ժխորով, ճաւերով, երգերով և թեւաոր նշանարաններով՝ «Ամենայն տեղ մահը մի է»... «Ազատութի՛ւն կամ մահ»... «Յարթէլ՝ կամ թէ պատուով մեռնիլ»... Եւ Դանտոնեան մարտակոչը — յան-

դգնութի՛ւն, յանդգնութի՛ւն և միշտ դարճեալ յանդգնութի՛ւն»...

Ա՛հ, խոհմները, հաւատարակչուած խլօքները, հանգիստ ու հրւշտ փրթողները, պորտաբոյժ անտարբերները կը զարճանան, անշուշտ, երիտասարդներու, «խենթ ու խելառ» տղաներու այլ սանճարճակ թռիչքներուն հանդէպ — անոնք չեն հայ շարժման կոչեցեալ դատախաղները: Ըսինք արդէն՝ գուտ հայկական երեոյթ մը չէ այդ, այլ յատուկ է ամենէն բարճր ազգերուն իսկ: Ամբողջ հոյակապ իտալական դիւցազնամարտը կատարեր են 25-30 տարեկան ջահէներ — ստէպ, այո՛, իննթ ու խելառ շարժումներով — և անոնց գրեթէ հասակակից էին Ֆրանսական Յեղափոխութեան մեծանուն դերակատարները:

Եւ նոյն այլ երիտասարդներն էին, որ օր մը — զարհուրելի, ճակատագրական օր մը — Դարաքիլիսի բարճունքներուն վրայ գրոհ տւին խենթ մոլեգնութեամբ թշնամու բանակին դճմ և փրկեցին հայրենի հողն ու պատիւը...

Երիտասարդութի՛ւնը — զազափարական շարժումներու և բոլոր սիսրստ ձեռնարկներու յստաջապուհ դրօշակակիրը:

Երիտասարդութի՛ւնը — խանդավառութեան և հերոսական անճազոտութեան, յոյսի, հաւատի և բոլոր արհիւ կիրքերու մարմնացումը:

Երիտասարդութի՛ւնը — բունակալական դնդաններու և կախաղաններու մշտնջենաւոր ողջակէզը, ազատութեան հրգեհիլ յաւիտենական վատելանթը...

Մ. ՎԱՐԱՆԴԻԱՆ

\*) Գեօթէ, «վերթէր»:

## ՄԵՐ ԲԱՌԱՍՆԱՄԵՆՅ ՊԱՅԲԱՐԻ ԷՈՒԹԻՒՆԸ

Հայ քաղաքական միտքը, երկար տարիներ դեգրելուց յետոյ, խիզախ և յանդուգն նախաճեռնութեամբ 1890 թւին կեանք տուց Հ.Յ.Դաշնակցութեան, որը ահա 40 տարի տէր է դարճել բովանդակ հայութեան մտքին և կամքին, նյայելով բազմաթիւ և բայմապիսի հասարակական հոսանքների գոյութեան մեր մէջ, որոնցից շատերը կեանքի և մահու պայքարով ճգտել են խլէլ Դաշնակցութիւնից առաջնութեան դափնիները, բայց միշտ էլ կը պարտուել են, իսկ Դաշնակցութիւնը շարունակել է իր ուղին, իր հետ ունենալով բովանդակ հայութեան լաւագոյն և առաջաւոր տարբերը:

Այսօր, երբ լրանում է Հ. Յ. Դաշնակցութեան քառասունամեակը, անհրաժեշտ եմ համարում կանգ առնել մի քանի պատճառների վրայ, որոնք նպաստեցին Դաշնակցութեան մեծանալուն և զօրանալուն և դարճրին նրան այնպէս կենսունակ, որ այսքան երկար տարիներ ոչ միայն գոյութիւն ունի նա այլ և տիրաբար դեկավարում է հայ քաղաքական միտքը և նրա բազուկը:

Պատմականօրէն այնպէս դասաւորուեց մեր կեանքը, որ մենք անկարող լինելով դիմադրել մեր երկիրը անդադար ասպատակող բազմաթիւ թշնամի ուժերին, կորցրինք մեր անկախութիւնը, ենթարկեցինք օտար լծին և կրեցին անպատ կեանքի դառնութիւնները և արհաւիրքները: Մեր ցեղը կոտորակուեց և փոշիացաւ, մեր հայրենիքը դարճաւ պատմական անուն, մեզ դուրս վտարեցին պատմական ազգերի շարքերից և մեր տեղը դրաւեցին ուրիշ ազգեր, ուրիշ ժողովուրդներ:

Հայ ժողովրդի խորշակահար հառաճները, կորցնելով հաւատը դէպի իրենց ուժերը և դառնալով անարժէք և անյոյս խմբակցութիւններ, ցրելցին Դօս գետից մինչև Դանուբ, Կասպից ծովից՝ Միջերկրական: Թուլացան և չքացան բոլոր ներքին կայերը, որոնք անհրաժեշտ էին ազգային մի ամբողջութեան կազմելու համար, և ամբողջ հայութեան այդ բաժան-բաժան հառաճները միացին միմիանց հետ կապուած միմիայն իրենց կրօնական ըմբռնումներով: Սա այլ ևս ազգ չէր, այլ մի կրօնական համայնք, որովհետեւ ամէն մի իրմ-

րակցութիւն, ամէն մի համայնք պարուս էր իր ուրոյն շահերով, միշտ դերադասելով իր բնակավայրի պայմանները և երբեք չգիտակցելով, որ այդ շահերը յաճախ վնասակար և հակոտնեայ կարող են լինել իր Մայր Հայրենիքի պահանջներին:

Այս խզճուկ, ամօթաբեր դրութիւնը տեսց երկար դարեր մինչև, վերջապէս, անցեալ դարի երկրորդ կէսերին մի դարձանայի հրաշքով, վերաւոր, զխառտեալ և ծառուած հայութիւնը նորից կենդանութեան նշաններ ցոյց տուց և դուրս գալով իր մեռելային պատանից, սկսեց շնչել նոր կենսութիւն և նոր յոյսերով:

Գիրը, գիրքը, դպրոցը, հասարական զանազան խնդիրներ դարձան նորագործ հայութեան հոգեւոր առարկան. ոտկոծեց հայ գրականութիւն, հայ մամուլ և հայ մտաւորականներըց ոմանց զլլտուած ծնունդ առաւ հայ քաղաքական միտքը, որի գլխաւոր առանցքը կազմում էին տաճկահայ հատուածի ողբերգական վիճակը և նրա փրկութեան ճանապարհները:

Այսպէս էր սկսել դարձելով մեր հասարակական կենսքը, երբ անցեալ դարի վերջին ջառողջում տեղի ունեցան մի շարք գէպեր, որոնք ճակատադարական դեր կատարեցին մեր քաղաքական վարքագծի վրա և գծեցին այն ուղին, որով պիտի դարձանար հայ քաղաքական միտքը:

1878 թիւ ուս տաճկական պատերազմը, մեր երկիրը կոխան դարձած բազմահազար զօրքերի արշաւանքներին, արհաւիրքներ և աւերներ Տաճկահայաստանում, գաղթ, կոտորած, ուսական բանակներ յաղթական ընթացքը, բալկանեան աղբերի ապատաղումը տաճկական լծից, Ս. Ստեփանոյի և Բերլինի 16 և ՅԱ յօդուածները, Ռուսաստանի յեղափոխական շարժումները, Աղեքսանդր Բ-ի սպանութիւնը, սուլթան Աբդուլ Համիդի և Ալեքսանդր Գ-ի բռնակալ կառավարութիւնները, հայերի բնաջնջման ճիգերը Տաճկահայաստանում և ուսացման փորձեր Կրճկաստանում—սահ այն երևութիւնները, որոնք անդադար յուրում էին նորագործ հայութիւնը, մերթ ներշնչելով նրան յոյս և ուրախութիւն և մերթ մատնելով նրան յուսալքման և վճատութեան:

Հայ քաղաքական մանուկ մտքի առջև նորանոր հարցեր էին յարուցում և հրամայաբար պատասխան էին պահանջում հայութեան ապագայ գոյալիճակի մասին... Հայութիւնը կամ պիտի գերադասէր մնալ իր նախկին մեռեալ դրութեան մէջ, շարունակելով քարոտալ իր ստրկական, անպատիւ ու ամօթաբեր կացութիւնը, կամ պիտի ձգտէր միւս աղբերի նման ունենալ իր ուրոյն կենսքը և տեղանքները՝ ապրելով իբրև մի ազատ և անկախ ազգ՝ սեփական միջոցներով բանալով իր քաղաքական ապագայ ուղին:

Վերագործող հայութիւնը, որ արդէն սկսել էր գիտակցել իր կացութիւնը, չէր կարող այլ ևս մնալ իր նախկին ստրկական վիճակի մէջ, այդ իսկ պատճառով նա փնտրում էր նոր ձևեր և նոր միջոցներ դուրս գալու համար իր անպատասխար վիճակից:

Այն ժամանակայ գոյութիւնը ունեցող հասարակական դէմքերը և եթէ կարելի է ասել հասարակական հոսանքները՝ արդէն գունատուել էին, նրանց խօսքը

դարձել էր հին և անարժէք, նրանք այլ ևս չէին կարող հայութեան նոր խօսք ասել, հասարակական նոր ուղիներ ցոյց տալ...

Այդ նոր խօսքը, նոր պատգամը վիճակած էր Հ. Յ. Դաշնակցութեան, որը վերջնականապէս ձևակերպելով ինստիտուցիոնալ թաւանները շէմքին, զարմանալի արագութեամբ իր վրա կենտրոնացրեց ամբողջ հայութեան համակարանքը և՛ դեռ իր առաջին տասնամեակը չըրոյրած՝ արդէն տէր էր բովանդակ հայութեան մտքին և կամքին:

Այսպիսով ուրեմն, Հ. Յ. Դաշնակցութիւնն էր, որին պատմականօրէն վիճակեց ձևակերպելու հայութեան մէջ եղած տենչանքները, բանալու նրա առջև նոր ճանապարհներ, նոր օրիդրներ: Այդ ուղղութեամբ Դաշնակցութիւնը կատարել է հայ կենսքի մէջ խոշորագոյն և երակի դեր:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իր կազմակերպման օրից մինչև այսօր, կանգնած լինելով մեր պայքարի առաջաւոր դիրքերում, դարձանալի զրուշտութեամբ կարողացել է գէպի ինքը քաշել հայութեան լուսագոյն գաւակներին և մղել նրանց մարդկային պատմութեան մէջ իր նմանը չունեցող զոհարարութիւնների: Ստըրկացած հայը, որ կորցրել էր իր բոլոր առաջնութիւնները, որ վաղուց փչնդ էր իր սուրբ ու նիգակը, որ կտրել էր իր դիմարբական բազուկը, որ իբրև թոյլ և անզօր արհամարհանքի առարկայ էր դարձել բոլորի կողմից, որ իր հարեաններից անարգուած էր «վատ» և «վախկոտ» անականներով, շնորհւա Դաշնակցութեան էր, որ հիմնաւորապէս կերպարանափոխեց «վախկոտ», «ստրուկ» և «վատ» հայի ժառանգներն էին, որ կազմեցին թանաքներ, Բանկ Օտոմաններ, Մասունի, Տարոնի և Վանի ճակատամարտները, Սարգաթապատի կռիւները, Շապին Գարաճիսարներ, Բազուկի հերոսամարտերը և հազար ու մի սքանչելի հերոսական պայքարներ ու մենամարտեր, որոնց թիւին իսկ անկարելի է:

Այդ ստրկացած հայութեան գաւակներն էին, որ քաջաբար սուրում էի նթնամու վրա, յանդուզն և աննկարագրելի հերոսութեամբ շեշտակի հարածներով ոշնչացնում էին հակառակորդին, խեղախօրէն դիմադրում էին դարանամուտ Տակաթեան ուժերին և նոյնպիսի հերոսութեամբ ընդունում էինամու գնդակները կրծքին կամ ճակատին, և երբե՛ք, ոչ մի ժամանակ, վատաբար թիկունք չէին ցոյց տալիս թշնամուն:

Այդ ստրկացած հայութեան գաւակներն էին, որ բանտի նկուզներում, սոսկալի տանջանքների ժամանակ, կախաղանի վրա ոչ մի տատանում չունեցան դէպի իրենց սրբազան զորքը, երբե՛ք չկորցրին իրենց հաւատը հայութեան ապագայի վերաբերմամբ, և միշտ էլ աննման հերոսութեամբ մահը դիմաւորեցին՝ ընկնելով հերոսի երջանկութեամբ:

Հայութիւնը, բաժանւած բազմաթիւ խմբակցութիւնների ու հասուածների, ապրում էր միմիայն անհատական խզճուկ շահերով. նրա հասարակական երևոյթները ձևակերպուում էին մանր և անարժէք խնդիրների շուրջ: Հ. Յ. Դաշնակցութեանը յաջողեց ոշնչացնել այդ կենտրոնախոյս օղակները, մոռացնել տալ մանր մունք հաշիւները և ողևորել համայն հասարակական խզճուկ շահերով:



յութիւնը միանման մեծ և համապարփակ ձգտումներով:

Ենորհիւ Գաշնակցութեան էր, որ վերացաւ հայութեան մէջ գոյութիւն ունեցող ներքին անտազոնեղութիւնը, լցւեցին անջատական և համոճանակա խրամասները և հայութիւնը, լծւած մի գաղափարի, դարձաւ մի մարմին և մի սիրտ, չնորհիւ որի հայութեան մի վայրի ուրախութիւնն ու վիշտը միանման արժանագ էին դառնում հայկական բոլոր շրջաններում՝ Հայկական Բարձրաւանդակից մինչև Կոչկաս կամ Միջերկրական: Այսպիսով անջատւած, փոշիացած հայութիւնը դարձաւ արգ՝ իր ընդհանուր ձգտումներով և պահանջներով:

Հայութիւնը երկար ժամանակ չունենալով իր ուրույն քաղաքական կեանքը, ցրւած լինելով երկրագնդի զանազան մասերի վրա, անյուսօրէն կորցրել էր «Հայրենիք» գաղափարը՝ մի գաղափար, առանց որի չի կարող գոյութիւն ունենալ և ոչ մի ազգութիւն: Գաշնակցութիւնն էր, որ խորացրեց և կոնկրետացրեց հայ պահպանման իր մէջ այդ գաղափարը: «Հայրենիքը» դարձրեց մի սրբազան ուխտատեղի հայ երիտասարդութեան համար. աներևակայելի և զարմանալի հերոսամարտեր կազմակերպելով Հայրենիքի փրկութեան համար և սովորեցրեց հայ ժողովրդին պաշտել իր Հայրենիքը, ինչպէս վայել է ամէն մեկ կուլտուրական ազգի:

Հայ լեզուն և գրականութիւնը՝ դեռ ևս չգարգացած, վտանգի տակ էին և դուցէ ենթարկէին կորուստան կամ, լուսազոյն դէպքում, մնային դանազան վանքերի չորս պատերի մէջ, լինելով կղերի կամ կղերամիտները սեփականութիւն: Գաշնակցութիւնն էր, որ պաշարեց բոլոր խոչընդոտները դէմ և փրկեց մեր լեզուն, մեր գրականութիւնը, ստեղծեց մի հսկայական սերունդ հայ գիրք, հայ լեզուն սիրողներին, երևան բերեց գրական նոր դէմքեր ևս նոր ստաղանդներ և այդպիսով ազատելով հայ լեզուն կորչելու վտանգից, դրեց նրան ամբողջ պատանդանի վրա, որ այլ ևս ոչ մի մրրիկ չկարողանայ նրա հիմերը խախտել:

Հ. Յ. Գաշնակցութիւնն էր, որ սիրացումիտ հայ հասարակութիւնը հանց էր նեղ լճացած վիճակից, կապեց նրան եւրոպական լուսամիտ գաղափարների հետ, հայ աշխատաւորութեան առջև բացեց նոր հորիզոններ, սովորեցրեց նրան դուրս գալ իր նեղ շրջանակից և ողևորել համամարդկային լայն գաղափարներով և իրէշխներով:

Գաշնակցութիւնն էր, որ միշտ կարողանում էր վտանգւած հայ հայրենիքի, նրա մշակութի փերկութեան համար, մի գերբնական ուժով, մի զարմանալի առնականութեամբ ոտք է հանել ամբողջ հայութիւնը և լարել նրա բովանդակ ուժերը իր արդար երաւունքի պաշտպանութեան համար:

Գաշնակցութեան յարգութեան գլխաւոր պատճառն այն էր, որ նա արագորէն և վերջնականապէս դէն շարունց հասարակական ասպարէզից կղերմիտ, կեղծ լինելով տարբերին և զանազան անկող, անընդունակ ու պատահական անձնաւորութիւններին, որոնք մինչ այդ հայ ժողովրդի դատը իրենց սեփականութիւնը համարելով, անօրինակ էին ցանկանում իրենց թահաճույթ

համաձայն: Եւ ազատագրելով հայ ժողովուրդը իր արդարական և էֆենդիական տարբերից, հայ հասարակական շարժման ղեկը յանձնեց հայ դեմոկրատիային, որի չնորհիւ հայ ժողովրդական լայն զանգւածներից կարողացաւ երևան բերել անյայտութեան միջևեց հազարաւոր նոր ուժեր և նոր դէմքեր, որոնք խիզախորէն մարտնչեցին հայ դատի և հայ հայրենիքի համար... Գաշնակցութիւնը ապրելով և սնւելով հայ զանգւածների մէջ, միշտ իրագրել մնաց նրա ցանկութիւններին և իրէշխներին և ըմբռնեց հայ հասարակական կեանքի զարկերակը, որի չնորհիւ նա կարողանում էր մշտ իր ձեռքին պահել հայութեան շարժումների ղեկը և մեծ հմտութեամբ ուղղութիւն տալ նրան, իսկ կարելու դէպքերում կարծիս մի դիւթական դաւազանի չնորհիւ, կարողանում էր դործի մղել ամբողջ հայ հասարակական զանգւածները:

Այսպիսով Գաշնակցութիւնը խտացնելով իր մէջ հայ ժողովրդի ցանկութիւնները և իրէշխները, կարելի է ասել, ձուլեց հայութեան հետ, և նրա հետ միասին ընթացաւ հայ պատմական և քաղաքական ուղիով: Այս է պատճառը, որ ոչ մի այլ հոսանք, լինի դա ծընւած Գաշնակցութիւնից առաջ կամ յետոյ, չի կարող խլել նրանից առաջնութեան իրաւունքը մինչև շրջադարձի նոյն աշխարհասկացքը և չզօրացրէ նոյն վարքագիծը, որով անա թառախում տարի ընթանում է Գաշնակցութիւնը:

\* \* \*

Սակայն, մեր պատմութեան մէջ չտեսնւած դաւաճանութեամբ, Մոսկուայի գործակալների մի խրմբակ, յինւած ուստական աւինների և թրքական եաթաղանների վրա, ներս խուճից մեր երկիրը և վանդալականութեամբ ահա տաս տարի է ինչ ոտնատակ է տալիս մեր կուլտուրան, ջանում է կանգնեցնել հայութեան զարգացման ուղին:

Եւ ինչ՞որ ասես չարեցին նրանք այս տաս տարւայ ընթացքում, ճգմելու համար հայ ժողովրդի կամքը, շղկելու համար նրա զարգացման ճանապարհը: Թւենք այդ սև և սնայտիւ գործերից մի քանիսը միայն:

Ահա Հայաստանի մեծամասնական նոր վարչիները, որոնք դեռ ևս երևան չմտած, Հայաստանի սահմանազլից հրաման են արձակում՝ հարիւրաւոր հայ մտաւորականներին բանտարկել լցնել, ցանկանալով դիմագործի զարթնել հայ հասարակութիւնը՝ հանդիսանալու համար թաթար նարիմանովին և թիւրք Մուստաֆա Քեմալին:

Ահա Ալեքսանդրապոլի քաղաքի նորակազմ Ռեվկումը, որ ցնծութեամբ ընդունում է կարա Բեքերի փաշային և նրա զօրքերին Ալեքսանդրապոլում ու մեծ հաճութեամբ հաղաբաւոր հայ երիտասարդներ յանձնում փաշային՝ Սարըղամիշի խորքերը ուղարկելու, որոնք բոլորն էլ իրենց գերեզմանը դառն աշտոնը: Նոյն այս հրէշներն էին, որ պահանջում էին երևանի կառավարութիւնից սկսել զարգացողական կուրս և կուտորել բոլոր դաշնակ փաղափաղաներին և գիւղացիներին, մասնաւոր տանգահայ տարբեր, որպէսզի վերանայ չազգային չովինիզմը» և հայութիւնը ընկնի կուտուրի մի գրիւնը:

Ահա ինչիւր փայլայի և Մուստաֆա Քեմալի մի գործակալ, Մուլէյման Նուրի անունով, որ ճարպիկութեամբ բազմած Հայաստանի արդարադատութեան նախարարի ըստմոտոմ հրամաններ է արձակում կոտորելու հայ մարտական ուժերին և մտադրականներին, իսկ հայ կոմունիստը, ինքնադժոժ բթամտութեամբ, իր կացիներն էր անխղճօրէն փորձում մեր ազատութեան համար պայքարող հարիւրաւոր մարտիկներին և մտադրականներին վրա:

Ահա մի քրէական տիպ, որ ոճիրներ գործելով դիրք էր գրուել ըրլլեիկեան աշխարհում, հայ Հազարաւոր սպաներին ձմեռային ստոնամանիքներին Սիրբբիայի խորքերն էր քնքրում, դրիկում համար հայ պետութիւնը իր զինական ինքնապաշտպանութիւնը:

Ահա մի խումբ զեկալար մեծամասնականներ, որոնցից ոմանք հայ զիրն են տղաւազում, որպէսզի հայութիւնը կարէ իր անցեալից, անջատելի զազութներում ապրող հայութիւնից: Մի ուրիշը պահանջում է ուսուցնել հայ զպրոցը, հայ մանուսարները, իսկ մի երրորդը կոչ է անում հայութեան՝ ձուլել ուսական մեծ ազգի հետ, ապրել նրա իլճով և գործածել նրա լեզուն, որով միայն կարելի կը լինի հասնել համարողեային բարձր գաղափարներին: Ահա, մի նոր բախտախնդիր արարած, որ հայ գորբիւրի շորհիւ ազատել էր թրքական եւթազանից, իր նախորդներին գերազանցելու համար, ամենամեծ անխղճութեամբ լըցունում է բանտերը հազարաւոր անմեղ երիտասարդներով, զնշահասարում շատերին, աքտորի և սովի մատնում ամբողջ շրջաններ, հեռաւոր Սիրբիի անմարդաբնակ վայրերը զարձնում հայկական կենտրոններ, պրովոկացիոն ձևով անմեղ և խաղաղ ազգաբնակչութեանը մղում ապստամբութեան, որպէսզի ջարդելով նրանց, միանալու մեղացի հայ ժողովրդի մէջ ամէն մի բողբոջէ ձայն, դիմադրական ամէն մի ոյժ և այս բոլորը այն սինիք պատրուակի տակ, թէ համաշխարհային յեղափոխութեան համար անհրաժեշտ է իրականացնել «հինգամեայ ծրագիրը», «կոլեկտիվ տնտեսութիւնները» և այլն:

Այսպիսով, այս տասը տարւայ ընթացքին, ամէն մի բախտախնդիր հայ, ուս, վրացի, թիւրք կամ թաթար, որ կարող էր յենել ուսական և թրքական ուժերի վրա, ամէն տեսակ ըռնութիւններ գործադրեց հայ ժողովրդի վրա հայ Հայրենիքում՝ ձեւակերպած հայութեան մէջ մեղացնելու նրա ազգային իղջալինքը, բայց ոչ մի արդիւնքի չհասաւ: Գեռ աւելին, հայ կոմունիստները շատերը, որոնք գիտակցաբար և անկեղծութեամբ մօտեցան հայ ժողովրդին, իրենք վարակեցին հայութեան ձգտումներով և իրենց ընկերների կողմից հալածանքների և պատիժների ենթարկեցին իբրև «զաշնակցականներ», իբրև «հակաիզափոխականներ»:

Մեծամասնականները մնայով հայութեան մէջ և հայ այս տասը տարին, բոլոր ժամանակ մնացին օտար և թշնամի հայութեան համար. նրանց բոլոր ջանքերը կապել իրենց հետ գոնէ երեսասարկ սերունդը, միշտ էլ վերջացաւ անյաջողութեամբ, որովհետև նրանք չէրտակ-

ցեցին, թէ հայութեան հետ կապելու համար անհրաժեշտ է մասնակից լինել նրա հոգեկան ձգտումներին և իղճերին: Նրանք չգիտակցեցին, թէ այն զազափարները, որ ստաշարում է Դաշնակցութիւնը, ոչ թէ պատահական կամ ստացական զազափարներ են, այլ ծնունդ են հայ ժողովրդի: Դրա համար էլ որքան նրանք աշխատում են զլիսատել Դաշնակցութիւնը իրենց բարբարոս և պրովոկացիոն միջոցներով, Դաշնակցութիւնը նորից ստասպեկական Ֆենիքիսի պէս ծնունդ է և մինչև իսկ վարակում է իրեն զլիսատել փորձողին...

Ի՞նչ տարբերութիւն նախկին ցարական պաշտօնեաների և այժմեան մոսկովեան սատրապների գործելակերպի միջև: Այն միայն, որ սրանք իրենց զամանութեամբ և բարբարոսութեամբ զերազանցում են նրանց և մտացնել են սալիս ցարի լուսակալ կոսովարութիւնը: Նրանք ևս չհասկանալով հայ ժողովրդի պատմական գարգացում մի նպատակ միայն ունէին. որքան կարելի է արագութեամբ զիմացուրդ զարձնել հայութիւնը և ձուլել նրան ուսական մեծ ազգի հետ: Սակայն, նրանց բոլոր ճիշդը մնացին անհետանք: Հսկայ Ռուսաստանի պայքարը փոքրիկ հայութեան հետ վերջացաւ ի վնաս Ռուսաստանի, և պայքարի յաղթանակը, վերջ է վերջւոյ, տարաւ հայութիւնը:

Այս պայքարներն աւելի են խորացրել հայ ժողովրդի գիտակցութիւնը և հայութիւնը այժմ աւելի է զնահատում իր ազգային արժէքները: Չուր են վանում Մոսկովայի և Անդրաշխի գործակալները ալլասերել, զիմացուրդ զարձնել հայութիւնը. յաղթանակը, վերջ է վերջւոյ, լինելու է հայութեանը:

Չանազան բախտախնդիր կարիներաններ, ինչպէս կրբան Գուլիյնիւրը և կոլեկտիվիզները:

Այդ է պատմական երկաթեայ տրամաբանութիւնը: Գիտակցում են արեւօք այս պատմական ճշմարտութիւնը հայ մեծամասնականները: Եթէ այո՛, այն ժամանակ պիտի փոխեն իրենց գործելակերպը և զման հայ ժողովրդի պատմական ուղիով: Եթէ չեն գիտակցում, աւելի վատ նրանց համար: Պատմականորէն նրանք զատապարտած են մահան, որովհետև հասարակական հոսանքները սրընթաց գետի պէս զնում են միշտ առաջ և փշուր փշուր են անում բոլոր արհեստական խոչընդոտները, որոնք նրա ընթացքը կը խանգարեն: Չանազան բախտախնդիր անհատներ ռեժիմիս վէր է հայ հասարակական կենսքի կանոնաւոր ընթացքը չեղել: Հայութիւնը կը ինքնայ իր պատմական ուղիով, որովհետև այդպէս է թելադրում փաստերի արամբանութիւնը: Եւ այդ փաստերի տրամաբանական ծնունդըն է Հ.Յ.Դաշնակցութիւնը, որը անցնելով չորս տասնեակ տարիների վրայով, նոյն եռանդով է նոյն դիտակցութեամբ թեւակոխում է յաջող չհինգերորդ տասնեակը, միշտ իր հետ ունենալով բովանդակ հայութեան միտքը և կանգ ու կրկնում մի նշանաբան՝ «ԱՄԷՆ ԻՆՉ ՀԱՅ ԺՊՂՈՎՊԴԻ ԵՒ ՆՐԱ ՍՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶՍԱՌԻԹԵԱՆ ՀԱՄԱՐ»:

Ռ. ՍԵՒՆԱՆ

# ՔԱՌԱՍՐԱՄԵԱՅ ՏԻՏԱՆԸ

Քառասուն տարի կանգնած է նա արթուն պահակի դերում Հայկական իրականութեան մէջ: Քառասուն տարի է, նա կտրոճ է տալիս բոլոր սե ու մուժ ուժերին, որոնք, գաղտնի դաւերով թէ բացայայտ թշնամութեամբ, ձգտում են անհնարին դարձնել Հայ ժողովրդի ազգային կեանքը և նոյնիսկ Ֆիդիքական դոյութիւնը Հայրենի արևի տակ: Ու այս թառառուն տարւալ Հայկական պատմութեան մէջ, անկարելի է արձանագրել Համազգային նշանակութիւն ունեցող մի շարք-տում, մի Երեսօթ, մի դէպք, որի վրա նա գրած էլինի իր կնիքը:

Այսպէս պիտի բնորոշ ապագայ պատմագիրը Հ. Յ. Դաշնակցութեան դերը մեր ժողովրդի կեանքում, երբ աչքի անցնէ 1890—1930-ի ժամանակաշրջանը: Այսպէս պիտի բնորոշէ, պիտի հարկադրի բնորոշելու, ինչ էլ լինի նրա վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը: Որովհետև անբարեխիղճ պատմագիրն իսկ չի կարող հաշիչ չառնել պատմական իրականութեան փաստերը. շատ-շատ նա կարող է, այդ փաստերի ծուռ մեկնութեամբ, խեղաթիւրել նրանց իմաստը և աղաւաղել ճշմարտութիւնը, բայց պարզապէս անգիտանալ նրանց գոյութիւնը չի կարող:

Եւ իրօք, վերջին շորս տասնամեակները պատմութեան մէջ ո՞րն է այն փոքր ի շատէ կարևոր Համագալին շարժումը, երեսօթը կամ դէպքը, որ Դաշնակցութեան ազդեցութիւնից դուրս եղած լինի:—

Թիւրքահայ ժողովրդի ազատագրական պայքարը:— Ամենքը գիտեն, որ Դաշնակցութիւնը կեանքի է կոչել այդ պայքարը ղեկավարելու Համար և, մասնաւորապէս 1895-ից ի վեր, իր ուսերի վրա է կրել նրա բովանդակ ծանրութիւնը:

Կովկասահայ ժողովրդի տագնապը հայ-թաթարական կռիւների ժամանակ:— Մեր կոյր Հակոբակորդներն իսկ չեն կարողանում ուրանալ, որ կովկասահայ գանդաւաններն ապաստեցին այդ տանապից միմիայն չնորհի Դաշնակցութեան կազմակերպած դիմադրութեան:

Հայ ժողովրդի մտանկցութիւնը ռուսական, պարսկական և իւրիքական յեղափոխութիւններին:— Ո՞վ չլիտէ, որ այս գործերում Դաշնակցութեան դերը եղած է բացարձիկ:

Թիւրքահայաստանի համար սահմանադրական Թիւրքիայից բարեփոխումներ պահանջելը 1912 — 1914-ին:— Բաւական է, թէկուզ հարեանցիորէն, ծանօթանալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատրիարկութեան և Պոլսի Պատրիարքարանի աշխատանքներին՝ Համոզելու Համար, որ այստեղ ևս Դաշնակցութիւնը չա՛տ աւելի կենդանի մասնակցութիւն է ունեցել, քան ո՛րեւէ այլ կուսակցութիւն կամ Հոսանք:

Կամաւորական շարժումն՝ըը համաշխարհային պատերազմի ժամանակ:— Կարիք կա՞յ փաստելու, որ այս շարժումների ոգին և մղիչ ոյժը Դաշնակցութիւնն է եղել:— Երբ Հանրածանօթ իրողութիւն է, որ կամա-

ւորական վեց ղեղերից հինգը դերադանցորէն, իսկ Ընդհանուր Կարգադրիչ Մարմինը ամբողջովին դաշնակցականներէջ էին կազմած:

Հայկական ինքնապաշտպանութեան կազմակերպումը 1914—1918-ի թռի ու բռնի մէջ:— Բաւական է մտաբերել Վանի, Շապին-Գարահիւարի, Ուրֆայի և Բազալայ Հերոսամարտերը, Ռուսահայ և Թիւրքահայ Ազգային Պորտուգոներ կազմելը և 1918-ի թիւրքահայ ատաղնապայքութեան դէմ պայքարող մարտական ուժերը՝ իսկոյն սեռնելու Համար, որ այս տատանելի ու զուհաստ աշխատանքների ծանրութեան կենտրոնը ընկած է կղև Դաշնակցութեան մէջքին:

Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը:— Մի՞թէ երկու կարծիք կարող է լինել այն մասին, որ սկսած Հայաստանը ներքին թշնամիներից մաքրելուց մինչև նրան անկախ յայտարարելը և այդ օրակնից մինչև Հայաստանի խորհրդայնացումը, մեր մանուկ Հանրապետութեան բովանդակ կեանքը անցել է Դաշնակցութեան ղեկակցող ղեկավարութեան տակ:

Փետրարեան ժողովրդական ապստամբութիւնը բոլշևիկեան բուհապետութեան դէմ:— Ո՞վ էր կանգնած այդ օրերին շարժման զլուխը, ո՞վ էր ուզողութիւն տալիս ժողովրդական արդար ցատումի արտայայտութիւններին, եթէ ոչ Դաշնակցութիւնը:

Հայոց ազգային-քաղաքական ինքնապաշտպանութիւնը:— Այդ մարզի մէջ ո՞վ կայ քայքայ Դաշնակցութիւնից: Ովքե՞ր են պայքարում այդ ինքնապաշտպանութեան դէմ Երկրում և արտասահմանում. ովքե՞ր են բախում բուլըր դռները, ովքե՞ր են արամադրում իրենց նիւթական միջոցները և մինչև իսկ կեանքը այս դրոժի Համար, եթէ ոչ դաշնակցականները և նրանց Համակիրները...

Արտասահմանեան հայ բեկորների պաշտպանութիւնը ազգային այլաներում:— Ակնյայտի իրողութիւն է, որ ոչ մի կուսակցութիւն կամ Հոսանք կամ կազմակերպութիւն այնքան միտք և սիրտ է մաշում այս վտանգի դէմ պայքարելու Հարցում, որքան Դաշնակցութիւնը: Նրա արտասահմանեան մարմիններն ու ժողովները ղեկաղանցորէն այս պայքարի միջոցները մշակելով ու կիրարկելով են գրաւած: Էլ չենք խօսում այն մասին, որ Դաշնակցութիւնը, իր գոյութեամբ իսկ, փրկարար դեր է կատարում այս դրոժում՝ իրար շողկակելով ցաք ու ցրիւ Հայկական բեկորները և նրանց աչքը յարած պահելով Հայրենիքի ապաստութեան փարոսին:

Վերապէս, եթէ բոլոր քաղաքական խնդիրները մի կողմ թողնելով, ճննութեան առնենք Հայ ժողովրդի ազգայն-մշակութային կեանքը, նորէն կը տեսնենք Դաշնակցութեան Հակալական ազդեցութիւնը: Այս ազդեցութիւնը չափուում է ոչ միայն նրանով, որ Հայկական նորագոյն մշակութիւնը ամենակարևոր ճիւղերից մէկը, գրականութիւնը՝ իր բնաստեղծական, վկայա-

գրական և հրատարակագրական բաժիններով՝ հեղեղ-  
ած է դաշնակցական գաղափարաբանութեամբ, այլ և  
նրանով, որ, մեր մշակոյթը տարածելու և պաշտպա-  
նելու գործում, Դաշնակցութիւնը թայտ առաջին զօր  
վրա է կանգնել: Ոչ ոք այնքա՞ն եռանդով չէ հետա-  
պնդել, որ հայը հայերէն խօսի ու գրի, ոչ ոք այնքա՞ն  
ոյժ չէ սպառել հայ դպրոցներէ ստեղծման, զարգաց-  
ման ու պահպանման համար, ոչ ոք այնքա՞ն հոգացո-  
ղութիւն չէ ցոյց տուել մեր ազգային հին մշակոյթի  
մնացորդները վանդալական աւերածութիւններէ փր-  
կելու գործում — որքան դաշնակցական մարմիններն  
ու անհատները:

Իր պատմական դերը հայկական մշակոյթի պաշտ-  
պանութեան մէջ Դաշնակցութիւնը կատարել է ոչ մի-  
այն խօսքով կամ գրչով, այլ և զէնքով: Ո՛վ չէ յիշում  
այն արիւնահեղ կռիւները, որ Դաշնակցութիւնը, հայ  
ժողովրդի զլուխն անցնելով, մղեց ցարական կառա-  
վարութեան դէմ, երբ վերջինս, բռնադատելով մեր  
կեկեղեցական կալածածները, կամենում էր անհնարին  
զարծնել նրանցով պահպանուող հայ դպրոցների գոյու-  
թիւնը՝ Անդրկովկասի հայութեան ուսուսցումն ա-  
րագացնելու համար:

Այս բոլորը ակնյայտ փաստեր են, որ ոչ մի պատ-  
մագիր չի կարող ուրանալ, եթէ չուզենայ կամաւոր  
ողտն ձեւանալ: Այլ քան է՛ն հարկէ, նրանց զնահա-  
տութիւնը, որի մէջ ամէն մի պատմագիր իր ըմբըր-  
նումները կարող է ունենալ:

Մեզ համար այս գնահատութիւնը իր հիմնական  
մասի մէջ կանխորոշած է այն իրողութեամբ, որ Դաշ-  
նակցութիւնը, 40 տարի հայ ժողովրդի ճակատա-  
գիրը վարելուց յետոյ, այժմ, համատարած յուսա-  
լքումի այս օրերին, թևակոխում է իր դոյութեան  
հինգերորդ տասնամակեր կառ շարքերով և գործի  
պտորաստակամութեամբ:

Փաստերը հրապարակի վրա են:

Ահա՛ մեզ երկիրը, ուր բոլոր ընդդիմադիր կու-  
սակցութիւններն ու հոսանքները անյուսօրէն անդամա-  
լուծւել են կամ հալւել տիրող բռնակալութեան որո-  
վայնի մէջ, բացի Դաշնակցութիւնից, որ մնացել է նրա  
որկրում: Տարւ տարուց ի վեր բոլշեկիկեան մեխատի-  
րութիւն է յայտարարած Հայաստանում: Այդ մենա-  
տիրութիւնն ապահովելու նպատակով, օրաց իշխանու-  
թիւնը կանգ չէ առնում ո՛չ ստացւածքի բռնադատման,  
ո՛չ բանտի, ո՛չ աքօրիի և ո՛չ իսկ զնդակահարութիւն-  
ների առաջ. բաց և այնպէս Դաշնակցութեան մղձա-  
անջը հանգիստ չէ տալիս նրան: Իր հոգեկան հաւա-  
սարակչութիւնը վերականգնելու կամ իրեն ինքնա-  
վստահութիւն ներշնչելու համար, խորհրդային իշխա-  
նութիւնը երբեմն-երբեմն պաշտօնական թաղումներ է  
կազմակերպում Դաշնակցութեան զլխին. սակայն, ան-  
ողք էրականութիւնը հարկադրում է նրան աւելի յա-  
ճայ իրաշնակցական վրանգի՞ր ազարանող հնչեցնել  
կառավարական ամբիոններից և մամուլի էջերից: Իսկ  
անողք էրականութիւնն այն է, որ Դաշնակցութիւնը,  
չնայած բոլոր ճնշումներին ու հալածանքներին, կան-  
գուն է մնում Երկրում՝ իր վրա սեւեռելով փրկութիւն  
հայրող բոլոր աչքերը...

Ահա մեզ և արտասահմանը: Կոտորածներից ու տու-

րագրութեան արհաւիրքներից ճողոպրած բազմութիւն-  
ների հետ զորք ունինք այստեղ, որոնք հոգեբանօրէն  
խիստ աննպաստ հող են ներկայացնում ուէ՛ հանրային,  
բաց մանուսեղ զարգացական դործունէութեան հա-  
մար: Այս հանգամանքն աչքի առաջ ունենալով՝ հա-  
կադաշնակցական բոլոր կուսակցութիւնները, խմբակ-  
ցութիւններն ու հոսանքները միացրել են իրենց ճիգե-  
րը՝ Դաշնակցութեան գոյութիւնն արտասահմանում  
անհնարին դարձնելու նպատակով:

Մեր հակառակորդներն այստեղ ևս, իրենց մի-  
թարելու համար, յաճախ յայտարարութիւններ են ա-  
նում Դաշնակցութեան մահուան մասին: Ի հարկէ,  
նրանք չեն կարող ծիծաղելի դարձնել իրենց՝ Դաշնակ-  
ցութեան զլխին յուզարկուորութիւններ կատարելով,  
ինչպէս անում է խորհրդային իշխանութիւնը Հայաս-  
տանում: Բայց բուսական է, որ մի երկու հոգի զուրս  
զան կամ զուրս նեւուէն Դաշնակցութիւնից, որպէսզի  
մեր կուսակցութեան կազմալուծման կամ ինքնաքա-  
ջայման շարախիղդ դրոյցները չբջան ստնեն ամէն մի  
հովի ուղղութեամբ:

Այս բոլորի արդիւնքը: Արդիւնքն այն է, որ այս-  
օր արտասահմանում 50-100 տուն ունեցող մի գաղութ  
չկայ, ուր Դաշնակցութիւնն իր կազմակերպութիւնը  
չունենայ: Արդիւնքն այն է, որ արտասահմանեան հայ  
թերթերի ու հանդէսների շախմատիչ մեծամասնութիւ-  
նը Դաշնակցութեանն են պատկանում: Արդիւնքն այն  
է նաև, որ մի հատիկ հայ կուսակցութիւն կամ հո-  
սանք չկայ, որ համարձակի մենակա շախիւլ Դաշնակ-  
ցութեան հետ ո՛ւէ՛ ազգային ընտրութեան ժամանակ...

Դաշնակցութեան այս անժխտելի կենսունակութիւ-  
նը, ինչպէս ասացինք, մեզ համար ամենապերճախօս  
փաստն է հանդիսանում այն դրական վերի, որ նա, իր  
ընդհանուր դործունէութեամբ, կատարել է հայ ժո-  
ղովրդի կեանքում: Կենսունակ է Դաշնակցութիւնը,  
որովհետև զնահատուած է հայ ժողովրդի կողմից: Եւ  
դրականօրէն զնահատելով է, որ հայ ժողովրդը կա-  
պել է իր սիրտը Դաշնակցութեան հետ անխզելի  
կապերով: Առանց ժողովրդական սիրտց և համա-  
կրանքի, անհնարին է, որ Դաշնակցութիւնը կարողա-  
նար դիմանալ այն ծանր փորձութիւններին, որոնց նա  
քանի՞ քանի՞ անգամ ենթարկւելց էինց միայն վերջին  
երկու տասնամակներին:

Սակայն, այս ժողովրդական սէրն ու համակրանքը,  
կողմնակի դիտողի համար, առեղծւածային մի բան  
ունին իրենց մէջ, որի վրա, Դաշնակցութեան քա-  
ռասնամեակի կապակցութեամբ կը ցանկանայինք փոքր  
ինչ լոյս սփռել:

Իր տաժանելի գործունէութեան ընթացքին, Դաշ-  
նակցութիւնը, մի շարք յաջողութիւնների հետ, ունե-  
ցել է և շատ լուրջ ձախորդութիւններ, որոնք ցաւալի  
անդրադարձումներ են ունեցել ոչ միայն դաշնակցա-  
կանների, այլ և հայ ժողովրդի վրա: Մանրամասնու-  
թիւնների մէջ չմանելու համար, վերցնենք երկու խո-  
շոր դէպք. Թիւրքահայկական յեղափոխութեան եղե-  
րական վախճանը և Հայաստանի Հանրապետութեան  
անկումը: Երկու դէպքում էլ Դաշնակցութիւնն է եղել  
գործի զլուխը կանգնած, և, երկու դէպքում էլ, ժո-  
ղովրդական սրայխում, պարճունակ մտածողութիւնը

նրան պէտք է վերադրել փութումները բովանդակ պատահանատուութիւնը: Վտասօրէն կարելի է ստել, որ, նման պայմաններում, ո՛րքէ կուսակցութիւնն ո՛րքէ ժողովրդի մէջ մի օր իսկ չէր կարող պահանջել իր դուրսը: Ժողովրդական ցատումը, արդար թէ անարդար, բղիճ-բղիճ կանչել արդար յայպիսի ծանր անյալոգութիւնների մասունած կուսակցութիւնները, անգամ եթէ նրանց անյալոգութեանց հետեւններն աւելի՛ տանելի լինէին ժողովրդական կեանքի համար, բան թէ եղանակական սպիտակութիւնը:

Արա փոխարէն, ստիպան, մենք ի՛նչ ենք տեսնում: Այն, որ այստեղ, արտասահմանում, թիրախային կանխարձեռնութեան վիժման պատճառով եթէ անպատիկ խաչած հայ ժողովուրդը ոչ միայն կապուած է մնում Դաշնակցութեանը, այլ և, իր կենդանի աջակցութեամբ, յուժկու թափ հաղորդում նրա բոլոր ձեռնարկներին: Իսկ այնտեղ, Հայաստանում, Հանրապետութեան անվանում պատճառով բոլոր կենդանի անարդ զերութեանը ենթարկուած, սովահար և իրաւագործ հայ ժողովուրդը ոչ միայն յամբարձն շարժումներում է «իր հետադարձութիւն» մասին երազել, այլ և, ամէն վտանգ յանձն առնելով, նեցուկ է հանդիսանում Դաշնակցութեան աշխատանքներին:

Ժողովրդական այս անօրինակ սէրն ու խանդաղատանքը, որոնցով պարուրուած է Դաշնակցութիւնը և որոնք նրա կենսունակութեան հիմքն են կազմում, երկու բացատրութիւն ունի:—

Առաջին՝ որ հայ ժողովուրդը, եթէ ոչ յստակ գերտակցութեամբ, դէթ անողջ ընդգրով, ըմբռնում է, որ Դաշնակցութեան անյալոգութիւնները մեծ մասամբ պայմանաւորուած էին այնպիսի զօրաւոր գործօններով, որոնց նախատեսելը և յաղթահարելը վեր էին ոչ միայն Դաշնակցութեան, այլ և ամբողջ հայ ժողովրդի ուժերից:

Եւ իրօք, ո՞վ կարող էր կանխադուշակել համաշխարհային պատերազմը — այն էլ չորս տարւայ տեղութեամբ— Թուրքիայի մասնակցութիւնն այդ պատերազմին, ռուսական կայսրութեան փութումը, բոլշևիկներին հանդէս դալը, ռուս-թուրքական զինակցութիւնը և այլն, որոնք այնքա՛ն օրհասական դեր կատարեցին վերոյիշեալ երկու ծանր անյալոգութիւնների մէջ: Եւ ի՛նչ կարող էր անել այս ահաւոր ջրապտոյտի մէջ ընկած Դաշնակցութիւնը, անգամ եթէ նա տեղն ու տեղը կրակ կորէր: Կատարուած իրողութիւնից յետոյ, շատ հեշտ է, ի հարկէ, իմաստունի սքեմ հարգել և ճշտալորներին՝ մասին խօսել, ինչպէս որ խօսում են Դաշնակցութեան անդաբնիկ զինազատները: Բայց դէպքերից աւագ կամ նրանց ընթացքին ո՛րք էին այդ ուշացած «իմաստունները» և ի՛նչ արին սխալները կանխելու կամ շտկելու համար: Եւ յետոյ, եթէ աշխարհաստան այս փոթորիկները ընթացքի մասին հեշտ էր հէնց սկզբից ճիշտ դատողութիւն կազմել և համապատասխան գործեակներով որդեգրել, ինչպէ՞ս է որ Դաշնակցութիւնից հազարապատիկ աւելի՛ ջաղաքազէտ և աւելի՛ փորաւոր կազմակերպութիւններ — մեր խօսքը մեծ է գործը պետութիւնների կառավարութեանց մասին է — չկարողացան խոյս տալ հազարաւոր սոս-

կալի սխալներից, որոնց հետեւանքով ամբողջ բանակները զուր տեղը ոչնչացան, երկիրներ աւերեցին, զահար խորտակեցին և միլիոնաւոր մարդիկ զոհեցին...

Այսպիսի հարցերի առաջ դրած հայ ժողովուրդը, որ արդարութեան զգացում ունի իր հոգու խորքում, չի կարող, ի հարկէ, ձայնակցել վերոյիշեալ «քննադատներին», որոնք ժամանակից ու սարածու-թիւնից զուր մեղադրանքներ են ձեռնկերպում Դաշնակցութեան դէմ՝ նրա գործունէութիւնը ամէն գնով սևացնելու համար:

Արանով չենք ուզում ասել, թէ Դաշնակցութեան գործունէութիւնը անթերի է եղել, թէ նա չէ կատարել այնպիսի սխալներ, որոնք ոչ այնքան արտաքին ազդակներով, որքան սեփական անիրաւութեամբ, անհուստեութեամբ կամ զանազան տեսակի թերացումներով էին պայմանաւորուած: Հին խօսք է, որ չին սխալում նրանք միայն, որոնք չեն գործում, — այսինքն իսկական և կենդանի մեռելները: Իսկ Դաշնակցութիւնը, որ իր գոյութեան առաջին օրից սկսած համակ գործ է եղել, չէր կարող չսխալուի:

Եւ եթէ հայ ժողովուրդը, որ այս սխալներից հստակ յամար տուժել է, նրանց պատճառով չէ նազեցնում իր սէրն ու համակրանքը դէպի Դաշնակցութիւնը՝ որա պատճառն այն չէ, որ նա անգիտատում է կատարուած սխալները, այլ որ նա մարդկային վերաբերմունք ունի նրանց հանդէպ — մի բան, որից զուրկ են մեր անարժան հակառակորդները:

Այդ մարդկային վերաբերմունքը, որ Դաշնակցութեան վայելած ժողովրդական սիրոյ և խանդաղատանքի քրկարող բացատրութիւնն է հանդիսանում, առաջանում է նրանցից, որ Դաշնակցութիւնը իր կատարած կամայ թէ ակամայ սխալների առաջին զօրք ինքն է եղել: Նա երբեք ժողովրդի հաշիւն փորձեր կատարելու մտադրութեամբ ձեռնարկներ չէ արել, ինչպէս որ անում են, դիցուք, բոլշևիկները՝ իրենց ասպնովելով և ժողովուրդը թնջանթախել միւ ղարմախելով: Դաշնակցութիւնը իր բոլոր ձեռնարկներին — անգամ եթէ նրանք անխճճ կամ վնասակար լինէին — միշտ մօտեցել է անկեղծօրէն և, զբա համար էլ, ամէն մի գործի համար տեսել վայրի ամենակարեւոր ընկերներին է կանչեցնելու առավել զօրի վրա: Համարձակօրէն կարելի է պնդել, որ ոչ մի կուսակցութիւն այնքա՛ն անխնայ վերաբերմունք չէ ունեցել դէպի իր ընկերները և առաջին հերթին ամենակարեւոր ընկերները, որքան Դաշնակցութիւնը: Սուլթանի մահափորձը կարելի էր երկրորդական ուժերով ևս նախապարտասուլբայց, ըստ Դաշնակցութեան աւանդութիւնների, պէտք էր, որ այդ գործի համար մի Գրիստափոր զոհէր... Ապրիլեան եղեռնի օրերին, Դաշնակցութիւնը, սխալ թէ ուղիղ, կանգնած էր այն տեսակէտի վրա, թէ հայ ժողովուրդը Թուրքիայի հանդէպ պէտք է օրհնական քաղաքացիութեան տեսակէտի վրա մնար. և այս տեսակէտին նա զոհ բերեց այնպիսի ընկերներ, այնպիսի ղեկավար ուժեր, որոնց մոլորքը ամառ պէտք է մընայ ամէն մի զաշնակցականի սրտում:

Նմանօրինակ փաստերի մի-մի շարան են ներկայացնում և՛ կամաւորական շարժումները, և՛ ինքնապաշտպանութեան հերոսամարտերը և՛ անկախութեան

կրնենք թիրբերի և բուլեիկների դէմ և՛ մնացած բոլոր ազատագրական ձեռնարկները, որոնք տեղի են ունեցել Դաշնակցութեան որոշմամբ կամ կենդանի մասնակցութեամբ: Բոլոր գէպերում էլ պայքարի առաջին դիրքերը դաշնակցականներն են բռնել՝ զիմագրակելով ամենամեծ վտանգները և կործք տալով ամենածանր հարածներին:

Այս ամենը տեսել և գիտել հայ ժողովուրդը: Նա գիտէ, որ Դաշնակցութիւնը միշտ կանգնած է եղել իր վճռած կամ պաշտպանած գործի յետևը ամբողջ հասակով, կատարեալ անկեղծութեամբ և բոլորանէր անձնագործութեամբ: Նա համոզած է նաև, որ եթէ վաղը նոր գոհարբութեան և նոր արևելի հարկադրանքն ստեղծուի Հայկական Դատը զմեռեալ կէտից շարժելու համար՝ դարձեալ դաշնակցականներն են շարժելու վտանգաւոր դիրքերի վրա, դարձեալ նրանք են ներարբերելու ատաղին լուսման — լինի դա շարժաչ և խառանք, դրամ թէ արծաթ — որպէսզի գործը քայլէ:

Բնականից արդարամիտ և ողջամիտ այսպիսի համոզում ունենալուց յետոյ, երբեք զարմանալի չէ, որ հայ ժողովուրդը՝ արհամարհելով մեր փոքրոգի հակառակըների թմրակահարութիւնները և Դաշնակցութեան երևակայական սխալների մասին և նոյնիսկ անտես աննելով այն իրական զրկանքներն ու կորուստները, որոնք ինքը ենթարկուել է այս կամ այն վայրում Դաշնակցութեան ձեռնարկների պատճառով՝ պահում է նրա հանդէպ այն համակրանքն ու զուրգութեանքը, ո-

րոնք Դաշնակցութեան տոկոնուժեան ու կենսունակութեան դիտարար ազդակն են եղել այս քառասուն տարեայ վերվայրումների ժամանակ:

Այսպայս պատմագիրը պարտաւորւած պէտք է զգայ այս ամենն արձանագրելու՝ զորւած ոչ թէ բարձրագոյն թիւնից, այլ ճշմարտութիւնից: Եւ ով ունի այդ ճշմարտասիրութիւնը թէկուզ տարրական չափերով, չի կարող չխոստովանել, որ Դաշնակցութիւնը, այնքան փորձութիւններն ու կորուստների ենթարկելուց յետոյ էլ, այսօր, հայ իրականութեան մէջ, այնպիսի ոյժ և արժէք է հանդիսանում, որպիսին ո՛չ ներկայացրել են և ո՛չ կարող են ներկայացնել նրա բոլոր հակառակորդները միասին առած:

Այս ոյժն ու արժէքը Դաշնակցութեան քառասնամեայ գիւցազնայատուժի հերոսներից են գալիս: Նրանք են հիմնադրել Դաշնակցութեան գործը իրենց բոցավառ հայրենասիրութեամբ, նրանք են կերտել այդ գործը իրենց արեան շաղկապով և նրանք են օտուել Դաշնակցութիւնը իրենց զբանտեալ կամքով, որի վրա փշուրել են մեր աշխարհի բոլոր հողմերն ու փոթորիկները:

Ահա այս բարոյական տիտանների ժառանգորդն է հանդիսանում դաշնակցական ներկայ սերունդը:

Հարկ կայ արեւօք աւելացնելու թէ այս պատկանելի ժառանգական տիտղոսը յեղափոխական ի՛նչ պատրաստակամութիւն և պատրաստակամութիւն է պարտադրում ամէն մի դաշնակցականի...

Ա. ԶԱՄԱԼԵԱՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՓԱՌՔՆ ՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(խորհրդածութիւններ)

Դարեր շարունակ փառքի ճանապարհից դուրս մղւած մի ժողովրդի վերածնութեան ճիգերի խոսքումն է՝ Յ. Դաշնակցութիւնը:

Նա ծնունդ առաւ պատմական այսպիսի մի վայրկեանում, Էրբ անցելի մեծ ոգորումները դարձել էին հայ կեանքի հետ այլ ևս օրգանական կապ չունեցող քարացած յիշատակներ, երբ խաւարելու աստիճան աղօտուել էին հայկական էութեան գունազեղ երանգները: Սեղմ ասած՝ երբ դեռ կը շարունակէր մեր ցեղի հոգևոր նաճանջը, և այլ ևս սկիներէ էր նրա գլխովին ոչնչացումը:

Դաշնակցութիւնը հսկայ մի փորձ էր՝ կանգնեցնելու հայութեան անկման անիւր. մի փորձ՝ ի մի ձուլելու հայ էութեան միմիանց լրացնող բեռները — Մամիկոնիան ռազմաօդայինութիւնը և Բագրատունեաց կուլտուրական ոգին: Նա մի վճռական ճիգ էր՝ համազբնու մեր ժողովրդի կամքն ու ստեղծագործ հանձնարը. մի ճիգ՝ կրօնական համայնքը — որին բռնութեան քահանայութիւնը վերածւած էր հայութիւնը — վերստին դարձնելու պետութիւն և պատմութիւն կերտող մի ազգ:

Այն օրէն, երբ Մերձաւոր Արևելքի կրկնափ վրա երկայ մոնղոլ թուրքը՝ մեր պատմութեան մէջ անպակաս դարձան պարբերական կոտորածը, բռնի մահմեղականացումն ու արտազայթը: Եւ որովհետև տիրապետող ազգը սեփական մշակոյթ չունէր, և նաև՝ անձաճ ազգերին ուայս էր համարում, նա տիրեց ոչ միայն նաճաճի վեհասկտական իրաւունքներին, այլ և ժողովրդի կեանքին, պատւին և ինչքին: Ասիայէն մեր հայրենիքը խուժած բարբարոս կը ձգտէր ո՛չ միայն դիմափոխել և զիմազրկել քաղաքակրթական արժէքներ ստեղծելու կարող ամէն ժողովուրդ, նա կը մտէր ո՛չ միայն ազգերի հողին՝ աղարտել և արմատախել ամէն մշակոյթ, նրա մահացու հարածն ուղղւած էր ո՛չ միայն իր նաճաճ ցեղերի գոյութեան այս կամ այն ձևի դէմ, այլ և նրանց Փիղիթական գոյութեան արմատին իսկ: Նման միջավայրում և նման վտանգի հանդէպ, մեր վերածնունդը անխուսափելիօրէն պիտի ստանար բռնի յեղափոխութեան բնոյթ:

Եւ սկսեց հարց ազատամարտը:  
Այս անհաւասար դուպարի մէջ հայութիւնը ցուցահանեց զձեզ, որոնց մէջ արտացոլում են մեր ժա-

մանակակից պատմութեան փառքն ու ողբերգանքը: Պատմութեան հանդիսավայրն ինձ հերոսների ամբողջական համաստեղութիւններ, որոնք ըստ բանի ե գործի մի հոգեկորով շնչու մտցրին մեր դունստ կեանքում: Հսկայական էր հոգեկորով յեղաշրջումը: Եթէ մինչ այդ հայը կրաւորականութեան մի տիպար էր, հիմա, նա կեանքի էր կրում ներգործօն հերոսականութեան դէմքեր:

Դաշնակցական հայրուհին ու իղէլայիտ մուսուրահանը ո՛չ միայն պատմական երևոյթներ կ'են Հայաստանում, այլև հոգեբանական գաղափարապետներ մի ամբողջ ժամանակաշրջանի համար: Մրանց անձնուրաց ներքուք հայապէս է ժողովրդները կեանքում: Բարոյական հսկանք կ'են սրանք, որոնց գործը բաւական է փառապարգևելու նոյնիսկ ամենամեծ ազգերի պատմութիւնը: Ա՛հ, քանիներ սրանցք մեր աշխարհի Նաղովրդեցիները հանդիսացան: Եւ ինչպէս Նաղովրդացու մեծութիւնը նրա մէջ չէ, որ պատմութեան մէջ մի քանի փաստեր թողնել, այլ որ զգայապաշտ մարդկութեան նոր իղէլայինք աւաւ ե մի այլ աշխարհի կայտոյ՞ հոգեկորով վառել, այնպէս էլ մեր նորագոյն պատմութեան այս հերոսներն ու աստեղանները արժէք գալձան ո՛չ թէ իրենց յաջող կամ անյաջող կրիներով, այլ նրանով, որ աստեղեկութիւնների մի նոր աստեղի դրին իրենց ժողովրդի առջև: Նրանց գործի մեծութիւնը ոչ թէ փաստերի արձանագրութեամբ պիտի արժէքաւորուի, այլ այն գորութեանական բարոյականով, որ կը բխի իրենց գործի հուշիւնից:

Դաշնակցութիւնը մեր կեանքում ոչ թէ հասարակարկիտական մի սոսկական երևոյթ է, այլ ամենից աստղ ե ամենից աւելի մի բարոյական յեղափոխութիւն: Արժէքների գնահատման նոր չափանիշ է Դաշնակցութիւնը, որով՝ ե նոր արժէքներ ստեղծագործող: Առանց ներքուի չկայ բարձր ստեղծագործութիւն, իսկ ներքուի գաղափարը հայութեան համար հոգեբանութիւն դարձաւ Դաշնակցութեան մարտիրոսացութեան ե հերոսականի շնորհիւ միայն: Այդ է պատճառը, որ Դաշնակցութիւնը, իբր ցեղի ներքին հոգեկան կայտոյթութիւն, չի խորտակում անգամ արտաքին պարտութիւնների դէպքում. այդ է պատճառը նաև, որ անկախ պատմական դէպքերի դասաւորումից, նա ծնում է իր ստեղծագործ ապագային հաւատացող իղէլայիտ հայութեան հոգեկոր կրողը: Հայութեան հողերարոյական այս յեղաշրջման մէջ է ահա՛ Դաշնակցութեան փառքը:

\* \* \*

Դաշնակցութիւնը, սակայն, պիտի ունենար նաև իր ողբերգանքը: Չի որ ամէն հերոսական ըստ էութեան ծնունդ է մի ողբերգականի, ինչպէս վերջինս յաճախ արդիւնք է հերոսական մի տաղանայի: Մերձատրիին ճառայելու, նրա կեանքը յեղաշրջելու ստաքելութիւն ունեցող հերոսականը չուի աւելի ծանր ողբերգութիւն, քան իր, որ բանձնեւ է աւետարանիչը՝ «Յերուս կէն ե իւրքն գնա ոչ ընկալանս... Ա՛հ, սա պատմական մի դէպքի եղերականը չէ միայն, այլ ե ճակատագիրը բոլոր ներթախան վարդապետութիւնների, բոլոր անձնուէր աստեղանների: Ոչինչ, ոչինչ

է այնքան խոր, որքան տառապանքը գոհարբողի, որը իր գործի պաշտամունքը չի տեսնում, որը գոհարբում է իր նմանների համար ե մնում չհասկացած:

Երկար դարեր մեր պատմութիւնը չէր արձանագրել մի շրջան, ուր այնքան հերոսներ իրենց կեանքը երկիրագործին պատարագէին իրենց ժողովրդի փրկութեան գործին. բայց չէ եղել ե մի շրջան, ուր հայութեան որոշ խաւերը այնքան ապերախ գտնէին սևփական ժողովրդի ազատարական փոթորումների հանդէպ: Այդ տարրերը, ճիշտ է, չսպանեցին Դաշնակցութիւնը, բայց յաճախ խաչեցին նրա գաղափարն ու գործը: Հին սարսիկի մէջ մի շարութիւն կար, որ վերջի վերջոյ մեծապատմութեան յանգեց: Հայութեան մէջ շարն ու բարին ստեղծածային մի քառ էր, լի կարելիութիւնների, որ, սակայն, իր բեկնացումով խանգարում էր հայ գրանգամների միտնացումը կամեցումը ե դայն, իբր ամբողջութիւն, որբերով կրաւորականութեան ե ակտիվիզմի միջև, մղում էր չգիտակցած ինքնասպանութեան: Ընկերարանօրէն այստեղ շօշափում է մեր վերածնութեան խոյրերը, որ, ահա՛, թերի մնաց, ե որի հետեւեցով մեր Գողգոթան կգաւ անստելիօրէն մեծ, իսկ մեր նւաճումը՝ համեստ: Հայ յեղափոխութեան երէկայ տապալար պայմանաւորւեց ոչ թէ թշնամու անպարտելիութեամբ՝ ինչպէս այսօր էլ բարբարոյում է հակադաշնակցական ստրկամտութիւնը — այլ հայութեան հոգեբանական հատուածականութեամբ: Ի՞նչ ճակատագիր կարող էր ունենալ մի ժողովուրդ, որի գաւակները մի մասը՝ սրտի իւղը բորբանսէր ազատութեան կանթեղը լեցրած՝ կը ճնճեցրէր, իսկ միւսը, ոչ թէ միայն անընդունակ գոհարբելու, այլ ե յաճախ, որպէս թէ ազգը խարոյկից փրկելու միամտութեամբ, ասպարէզ էր իջնում հրէջիլ դերում՝ հայ յեղափոխութեան կրաւոր մարերու: Այդ եղբերական կացութեան շնորհիւ, հայութիւնը ներքուտ ասարանջատեց երեք մասերի՝ գաղափարի ակտիվիստներ՝ իմա՛ յեղափոխականները, կրաւորական ստրկականութեան ջատագովներ՝ հակա-յեղափոխականները, ե կարելիութիւններով յղի, բայց դեռ այդ երկու բեկների միջև երբեք չսկայ բազմութիւնը: Ահա՛ կարկորագոյնը պատճառներից, որ հայ յեղափոխութիւնը շատ դէպքերում մնաց անվճարական ե պատմութեան ընձեռած նպաստաւոր վայրկեանները չկարողացաւ օգտագործել:

Այստեղ է ահա՛ մեր քաղաքական դժբախտութեանց եմթականական կողմը:

\* \* \*

Այսօր, 40 տարի յետոյ, կանգնած ենք պատմութեան առաջ: Շատ դէպքեր եկան ու անցան հայոց աշխարհով, դէպքեր, որոնք պիտի ցնցէին վերապրող սերունդը, որոնք, սակայն, հայութիւնը իբր ամբողջութիւն, դեռ ես չկանգնեցրին իր փրկութեան ճանապարհին:

Դեռ այսօր էլ հայութիւնը մնում է պառակտւած, այնինչ, չկորչելու համար, հրամայողաբար, նա պիտի դառնայ մի ե անբաժանելի հոգեւոր օրգանիցմ:

Կան ե պայքարի մէջ երկու կողմեր:

Մէկը՝ Նոզեփոսեւ՝ իր հեռուոր անցելի է երկհեայ հերոսականի պաշտամունքն ունի: Միւսը՝ հայ սորիականութեան աւանդապահը՝ որ սեփական պատմութեան մէջ միայն տկարութիւն ու պարտութիւն է տեսնում:

Մէկը ձգտում է ինքնահորացման և նւաճումների՝ յանուն ապագայի: Միւսը՝ երևս է դարձրած անցելից, չի հաստում ապագային. ցեղի հին փառքը թըրում է նրան հեզանք, իսկ յոյսը՝ արկածախնդրութիւն:

Մէկը՝ վրէժի ծարաւ ունի, սակայն, միայն իրը նախադրեալ իր ազգային դոյութեան և մշակոյթի: Միւսը՝ թէև թօթովում է մշակոյթի մասին, բայց հայրենի հողի համար մի կաթիլ արբուն չունի:

Մէկը ճիշդ է թափում կենտրոնացնելու ցեղի ուժերը մեր հաւաքական դոյութեան սպառնացող թշնամու դէմ, միւսը՝ թշնամի մեր ազատագրական պայքարին, զոհարերութիւնից խուսափելու մտահոգութեամբ, ներքին ճակատ է ստեղծել, որի վրայ տարիներ է ինչ ընդունայն ուժասպառում է հայութիւնը:

Հերձախրութեան հին վեր դործի վրա է այսօր: Դա տարբեր անան և ձևերի տակ — նոյնիսկ Հայաստանից դուրս — շարունակում է օտարի հայասպան դերը, մեծապէս դժարացնելով մեր ինքնապաշտպանութեան գործը:

Տեսնել ու զգալ թէ ինչպէս մտակոյր հայը գէնքեր է դարձնում իր հարազատ եղբոր դէմ, ընդհանուր թշնամու դործը հեշտացնելու համար — ա՛հ, այդ դարհուրելի ողբերգութիւնը դեռ այսօր էլ բաժին է հայ յեղափոխականի:

Այդ պատճառով դեռ այսօր էլ հայութեան քաղաքական ճակատագրէն աւելի՛ դառն է նրա ներքին ճակատագիրը:

Ահա՛, դեռ ևս չյաղթահարած հայութեան որոշ տարբերի այս սորիամտութեան մէջ է Դաշնակցութեան որբերգութիւնը:

Բայց ի՞նչ, դի՛մ, հակադաշնակցական անարիութեան: Ո՛չ, ո՛չ, դա պիտի նշանակէր ազգասպանութիւն կատարել: Ձէ՛՞ որ մեր կուսակցութեան հիմնադիրներն էլ, երբ առաջին անգամ ձեռք կը դարկէին մեր ազատագրական դործին, խորապէս կը գիտակցէին, թէ դարբի սորիականութիւնը մեծապէս տկարացրել է հայ զանգւածների ազգային գիտակցութիւնը: Սակայն, նրանք հաւատացին մեր վերածնունդին, որ պիտի Նոզեփոսէր մեր ժողովուրդը իր ամբողջութեան մէջ: Եւ եթէ այսօր տխուր պատմութիւնը մեր ժողովուրդի հոգում մի երկուութիւն է ստեղծել, քնա՛ւ չի նշանակում թէ մենք պիտի լքենք մեզ վիճակած ատաքելութիւնը՝ մեր հոգեբանութիւնը բովանդակ հայութեան հարազատել տալու: Դա չի նշանակում նաև, թէ մենք կարող ենք մոռանալ, որ մերազնեայ ներքին ամէն մի հակառակորդ անծանօթ մի եղբայր է, որին հոգեփոխելու պարտականութիւն ունինք:

Հասարակական իդէալներ հետապնդող ամէն անհատ կամ կազմակերպութիւն վերջ ի վերջոյ յանգում է ինքնախիտման:

Դաշնակցութիւնը ցայսօր ձգտել է այդ ստեղծել: Աւելի պարզ՝ նա ձգտել է ազգ դառնալ, այսինքն հայութիւնը կաղապարել ըստ իր էութեան: Ազգի մէջ ձուլելու, ազգն իր մէջ ձուլելու մի փորձ է Դաշնակցութիւնը:

Յանգել այս տեսչալի նպատակին՝ նշանակում է վերանալ իր կազմակերպութիւն և մարմնաւորել իր պաղութիւն:

Ահա՛ թէ ինչու՛ կուզենք, որ իր քառանամեակից յետոյ Դաշնակցութիւնը, իրը իր ցեղի առաջապահը, աւելի մեծ թափով ու ներրումով շարունակէր Հայոց Ազատամարտը, ընդունելով, որ միայն ազատ և անկախ հայրենիքում հնարաւոր է մեր ամբողջական ժողովրդի կատարեալ Նոզեփոսութիւնը:

Գ. ՆՓՊԵ Հ.

## Դաշնակցութեան Էութիւնը

Հայոց քաղաքական պատմութեան թիւը խզում է Լուսինեանով, բայց սկսում է Դաշնակցութեամբ և շարունակում է նրանով:

Լեոն վերջինը հին հայոց հարստութեան արխտոկրատ միակեան էր, իսկ Դաշնակցութիւնը նոր հայի դեմոկրատ վեհապետը:

Առաջինը սոսկ անհատ էր, իսկ երկրորդը՝ հաւաքականութիւն:

Ինչպէս բոլոր ժողովուրդների՝ նոյնպէս և Հայոց հին պատմութիւնը անհատների մի երկար շարան է, նրանցով սկսած և նրանցով վերջացած՝ անհատներ, որոնք բազմում էին ժողովրդի շինքին, ստորադասելով զանգւածների շահն ու փառքը՝ իրենց շահերին ու փառքին:

Սակայն, մեր օրերի հայոց պատմութիւնը, պատմութիւնն է ժողովուրդի, հաւաքականութեան, Դաշնակցութիւնով սկսած և նրանով շարունակուող:

Այստեղ ևս ցցուն անհատներ կան, բայց այս անհատները, ժողովուրդից ինքնով, վերադարձել են նրան, ձուլել նրա հետ, դառնալով արտայայտիչ զանգւածների ցանկութեան և նրա դերազոյն շահերի:

Առաջին դէպքում անհատն էր կիզակէտը, իսկ հաւաքականութիւնը՝ նրա լրացուցիչ մաս և երկրորդական գործոն:

Երկրորդ պարագային զանգւածն է առանցքը և բլիւտար գործօնը, իսկ անհատը լոկ բաղկացուցիչ մասնիկ այդ հաւաքականութեան:

Հին պատմութիւնը պահպանողական է և միակե-



տական, իսկ նոր պատմութիւնը յառաջդիմական է և յեղափոխական: Վերջինիս արտայայտիչն է Դաշնակցութիւնը:

Դաշնակցութեան զազափարը պատկանելիութիւնն է ժողովրդական լայն խաւերի ու գանգաւածների, հեռակարար, նա զազափարն է հայութեան, ամբողջութեան: Դաշնակցութիւնը հայութեան միտքն է և նրա գործադիր կամքը միաժամանակ:

Հայութիւնը ամբողջ հարիւրաւոր տարիներէ ըստրիւթիւնից յետոյ, առաջին անգամ լինելով, որպէս ազգութիւն, բողոքեց և ըմբոստացաւ: Դաշնակցութիւնը նրա առաջին պոթիկումն է, նրա արդար գայրոյթը բունութեան դէմ և դիմադրող ոյժը:

Դաշնակցութիւնը հայոց բողոքական, ընկերային և մշակութային որոնումների կուռ բանաձևն է և զործարութիւնը միանգամայն: Նա հայութեան կազմակերպչած օրգանիզմն է և կենդանութեան չափանիշը:

Դաշնակցութիւնը հայութեան նոր կերպարանն է: Հին հայութիւնից նա ժառանգել է խիղախութիւն և արիւթիւն, իսկ նորից ճիւղնութիւն և ստիւնութիւն: Հետևաբար, նա Հին ու նոր հայութեան համադրութիւնն է: Դաշնակցութիւնը հայութեան պատուհասող և անձնըող ոյժն է, երբ զօրծ ունի բունաւորների, հըզօրների ու ժողովուրդի դահիճների հետ, բայց նա միաժամանակ հայ խիղճն է, ներդրածի ու մարդասէր սիրտը, եթէ իր առջև տեսնում է թոյլերը, ճնշածները և իրաւագործները:

Նա հայկական մարդկայնութիւնն է և արդարամտութիւնը, իր դաժանութեամբ և ներդրամտութեամբ:

Դաշնակցութեան ոյժը միայն իր զազափարի մէջ չէ, այլ նա ուսանելի է և հմայիչ իր գործունակութեամբ, զոհարբութեամբ և զբակասութեամբ:

Բաճիճին հայ ժողովրդին դաժանօրէն ձեռնոց նե-

տեց, իսկ հայ ժողովուրդը նրան պատասխանեց Դաշնակցութեամբ: Դաշնակցութիւնը, ապախտով, դառնում է հայութեան «ես»ը, նրա արժանապատուութիւնը: Դրա համար էլ Դաշնակցութեան պարտութիւնը, հայութեան պարտութիւնն է, իսկ նրա նւաճումը՝ հայութեան յաղթանակը:

Շատ դժուար է ճշտորոշել ու գտնել հայութեան և Դաշնակցութեան տարբերութիւնը, որովհետև նրանք զօղւած են իրար, մէկը միւսից բողոքացած, մէկը միւսով լրացւած, ամբողջացած:

Դաշնակցութիւնը պարտադրութիւն չէ՛ այլ պարտակնութիւն, այդ իսկ պատճառով, որքան պարտաճանաչ է հայր, այնքան պաշտպակն է. և ինչ չափով դաշնակցական է, նոյն չափով հարապատ է իր ազգութեան, իր ժողովրդին և նրա զազափարի իրականացման:

Դաշնակցութիւնը, որպէս ձև, կարող է մաշւել, անհետանալ պատմութեան բեմից, բայց, որպէս բովանդակութիւն, որպէս զազափար, դաշնակցակնութիւնը կը մնայ և զոյութիւն պիտի ունենայ, քանի զեւ կայ և պիտի աղբի հայութիւնը:

Դաշնակցութիւնը սէտք է, որ ծնւէր, եթէ չճնւէր՝ պիտի ստեղծէինք:

Հայութիւնից բխած՝ նա հայութեան մէջ է թափուում. հայութիւնից ելնելով, նա հայութեան է վերադարձած:

Այս է պատճառը, որ հայութեան երդեալ թշնամիները, նրան դատող ու նրա կործանումն երազող անհատներն ու ցեղերը, առաջին հերթին, իրենց հարւածը ուղղում են Դաշնակցութեան դէմ. որովհետև Դաշնակցութիւնը հայութեան խոսացած և իրացած գոյութիւնն է:

Հայութիւն և Դաշնակցութիւն, ահա՛ երկու տարբեր անուններ՝ մէկ և ամբողջական էութեան:

ՌԻՆ

## Ք ա ո ա ս ն ա մ ե ա կ ի ա ո թ ի ո

Փառքեր ու դափնիներ չէ, որ կուզենք ստանալ հայ ժողովրդէն: Փառքեր ու դափնիներ չատ է տեսած հերոսական Դաշնակցութիւնը, տակաւին իր պատանութեան օրերէն: Կուզենք միայն որ, որոշ այս հանդերանին, վերադնահատութեան ճամբով, ճանչցել մեր կուսակցութիւնը, մասնաւորաբար մեր նորահաս երիտասարդութիւնէն, որ Դաշնակցութեան ղեկավարութեամբ կամ Դաշնակցութեան հետ ձեռք ձեռքի, նոր ուժերով պիտի առաջնորդէ հայ ժողովուրդը դէպի միւս մեծ հանգրանը — Միացեալ և Անկախ Հայաստանը:

Կուզենք, որ հանդիսաւոր այս օրերուն, ամենքը, դաշնակցական ու հակադաշնակցականը, մեկուսի կամ հրապարակաւ, յետադարձ ակնարկ մը նետեն քաղա-

քական-յեղափոխական այս մեծ կազմակերպութեան ճառասուն տարիներու երկար ու փոթորկոտ անցեալին վրա՝ լրջօրէն վերադնահատութեան ենթարկելու համար անոր դերը մեր կեանքին մէջ և յատկօրէն բանաձևելու համար մեր ժողովրդի վաղայն ուղեգիծը:

Մասնաւորապէս կուզենք, որ զուգակշիռը կատարել երէկւայ և այսօրւայ հայութեան, աւելի որոշապէս հասնելու համար Դաշնակցութեան պատմական դերն ու նշանակութիւնը:

Ուրիշ՞ սկսանք, ո՞ւր հասանք և ո՞ւր պիտի երթանք վաղը, ամօրը ու կուլւած քայլերով:

Այս հարցումները պարտադիր են ոչ միայն անոնց համար, որոնք Դաշնակցութեան գործին ու անունին շուրջ ճներբողներ միայն գիտեն հիւսելը, այլ և մա-

նաւանդ անոնց համար, որոնք, տղիտօրէն կամ զլուսակցաբար, Դաշնակցութիւնը հայհոյելէ, գրպարտելէ ու խաչելէ անդին չեն անցներ:

Ընդունած է, յորելաններու պարագային, զլուսակցաբար մոռացութեան տալ յորելարի պակասութիւնները և լուսագոյնս դրատել անոր ատաքինութիւնները:

Դաշնակցութեան բոստանամեայ «յորելան» ինտիլի, մենք կուզէինք, որ չյարգէր այս պայմանագրական կանոնը և, իւրաքանչիւր հայ, ու մանաւանդ հակադաշնակցականը, ուղղամտօրէն հրապարակէր Դաշնակցութեան պակասութիւնները:

Մեծ ինքնալստահութիւն կայ, գիտենք, այս խօսքերուն մէջ: Իայց ինքնալստահութիւն և ոչ թէ յանձնապատանութիւն:

Ինքնալստահութիւն նախ այն պատճառով, որ մեր կուսակցութեան համար ինքնին հազարդէլ բարիք մըն է լսել ուղղամտ բնադատութիւններ: Հազարդէլ, որովհետեւ ա՛յլ յափաքած ենք, նոյնիսկ դաւնացած, «քննադատութիւն» պիտակին տակ ամբողջ տանամեակներէ ի վեր լուսլ հասարակ բանարկութիւններէ, տղէք մտամարգանքներէ և պառաւական բաժնասանքներէ:

Յետոյ, իրաւունք ունինք ինքնալստահ ըլլալու նաև անոր համար, որ բաւական յստիօրէն կը ճանչնանք Դաշնակցութեան զորոն ու բարոյականը: Գիտենք, որ վերջին ստիօսան ու յետին ուրացողն իսկ չի կրնար ցոյց տալ մէկ հատիկ վտանգ ու փորձութիւն՝ փորձութիւն՝ նեւաւած բոլորէն՝ հայութեան զլսուել կրբ Դաշնակցութիւնը հայ ժողովուրդէն բաժնուած ըլլայ, կամ՝ առաջին զիրբերուն վրա նետելով՝ վերջին նահանջողն ու նահատակը դաւած չըլլայ:

\* \* \*

Երէկեայ և այսօրեայ հայութեան զուգահիշիտի մասին կը խօսէինք ու հա՛ա մեր համոզումներու ամբողջ ուժովը կրնանք յայտարարել թէ Դաշնակցութիւնը ստեղծեց մեր հայւստի պարը:

Բառատուն տարի առաջ, հատածական և հազար ու բիւր մանր ետերու բաժնուած էր հայութիւնը, զուրկ ազգային հաւաքականութենէ, զուրկ մարտական ինքնապաշտպանողական նկարագրից, քաղաքական ձեւակերպուած իղէպէ և հայրենիքի դադափարէ: Ու, մանաւանդ, անընդունակ էր ան հաւաքական զոհարարութեան այն կենսագոյն ատաքինութեան, որով այ-

գերը ոտքի կը կանգնեն և դէպի գալոց դարերը կը քաշեն, փառքով ու պակով:

Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին տուա ճիշտ այն ամենը, որ եղբարկանօրէն կը պակսէր անոր, քառասուն տարի առաջ:

Յիւրտի համար չնչին ֆլաչ էր հայը, թուրքի համար սոսկ ռայքա, Պուշկինի Ռուսաստանի աչքին վախկոտ արմեաշկա, Եւրոպայի ակնոցով զբոստոնեայ նուսայ մը, իսկ ինքն իր աչքին հայը խաչապաշտ մըն էր լոկ, որ թշնամիներէն ջարդուած իր ոսկորները պիտի հանգստացնէր յետ մահու միայն, մեղաւան այս աշխարհէն անդին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի հայրական բարեկեանքուն մէջ...

Դաշնակցութեան պատմական առաքելութիւնը հոն է, որ երէկեայ հայը հոգեփոխած է անձանաչելի բոլորու աստիճան:

Նախկին ցեղը, նախկին կրօնական համայնքը, նախկին անհայրենիք «Տրեան», այսօր դարձած է ազգ և քաղաքական միասոր, ու բոլոր տեսակներն ունի վաղը դաւանալու իր ազգային սպաս ու խաղաղ դարացման միակ վեհապետը:

Դաշնակցութիւնը կ'իմա՞մ հայութիւնը առաջնորդեց մինչև Սեփր և հաւասար սեղանի շուրջ նստեցուց Եւրոպայի հետ:

Զինեց ու հոգեփոխեց երէկեայ ռայքան այնքան, որ թիւրքն ու թիւրքիան, այսօր հարկադրուած են հաստան անանկ մեր երկիրը և ճանչնալ մեզ իբրև հաւասար կողմ:

Վախկոտ արմեաշկային հայրենիք տուա ու ստիպեց, որ Պուշկինի Ռուսաստանը դաշնակցային կապիտով կապուի մեզ հետ:

Մարտական ու քաղաքական այնպիսի ոյժ ու հըմայք տուա երէկեայ արհամարհելի ֆլաչին, որոն այսօր զբարը զինակցութեան և զործակցութեան թախանձադին կոչեր կուզէ:

Իսկ երէկեայ միայն ծխական ու խաչապաշտ, բայց անկազմակերպ ու հատածական բաղմութիւնը վերածեց ճշմարիտ ազգային հաւաքականութեան մը, ուխտուած ու մարտունակ վրիժակ սերունդներ պատրաստեց անկէ, մղեց զանոնք կենդանի զոհարարութեան, և քաղաքական իղէպէ մը, հայրենիք մը տուա անոնց:

Ասկէ աւելին, կը կարծենք, ոչ ոք տաւ չէ վեց հարիւր տարւայ սորիութիւն ապրած հայ ժողովուրդին:

ՕՆՆԻԿ ՄԻԻԹԱՐՆԱՆ

# ՀՆԵՐԻՑ ՍԵԿԸ ՀԻՆ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Ծնել եմ Թաւրիզում, 1870 թւին: Սկզբնական կրթութիւնս ստացել եմ Հին Թաւրիզիցիներին յայտնի Նաւարաբում:

1878 թւին, ուսումնական պատերազմից անմիջապէս յետոյ, ընտանիքով տեղափոխեցինք Քիֆլիս: Մի քանի ժամանակ յաճախեցի Ներսիսեան Դպրոցը, որտեղից հայրս հանեց ինձ և դրեց մի դերձակի մօտ աշակերտ: Վարպետս ազուլիսեցի էր: Յաճախ նրա մօտ էր գալիս Ստեփան Թաղէոսեանը, որ այդ ժամանակ սովորում էր քաղաքային արհեստաւորաց դպրոցում: Նրա հետ ժամանակի ընթացքում մտերմացանք և դարձանք ընկերներ:

1889 թւին երբք ընկերներով՝ ես, Յովհաննէս Բիթլիսեցին և Ղարաբաղի Արքայազմը անցանք Տաճկահայաստան, ուր, մի տարի առաջ, իմ եղբայր Ռաֆայէլն էր անցել, նոյնպէս երկու ընկերներով: Բուլանջիում ես բաժանեցի իմ ընկերներից և գնացի Մուշ, ուր, Ս. Յովհաննէսի վանքում, հանդիպեցի Ռաֆայէլին, որ ուսուցչութիւն էր անում վանքի դպրոցում: Երկար քարոզ կարգալով գլխիս, եղբայրս համոզեց ինձ վերադառնալ Քիֆլիս:

Քիֆլիս դալով՝ հանդիպեցի Արքայազմին, որի հետ մտածեցինք մի հրոսակային խումբ կազմենք և անցնենք նորից Տաճկահայաստան՝ ազատելու համար մեր եղբայրներին ու քոյրերին, որոնք հեծում էին տաճկական ծանր լծի տակ: Մեզ միացաւ Եփրեմ գանձակեցին, Պարսկաստանի սպառայ արտադրման հերոսը: Բացի Եփրեմից՝ մեզ միացաւ նաև Վիրաբ Դաշոսան, որ նոյնպէս գանձակեցի էր և Արքայազմ դաղէթեցին, որը տասներկու տարեկանից, մի թուրքի սայանութեան պատճառով, փախտական կեանք էր վարում:

Նախ ուզում էինք անցնել Ղարաբաղի և Գանձակի կողմերը, մեր խումբը աւելի սուսարացնելու կուր հշմուտ ընկերներով: Բայց այդ օրերում, Քիֆլիսում յայտնեց մշեցի Յակոբ Մարկաւազը, որ եկաւ մեզ դուռ և համոզեց, որ աւելի լաւ է միասին գործել, քան թէ նսանձին առանձին: Դրա համար էլ մեզ տարաւ և ծանօթացրեց Կուլուենանի հետ, որը մեզ ընդունեց զրկարաց: Նա մեզ բացատրեց, որ Քիֆլիսում կազմակերպւում է մէկ մայր կուսակցութիւն՝ այն է Հ. Յ. Դաշնակցութիւնը, որը նպատակ է դրել ամէն կերպ աշխցել Տաճկահայաստանի ազատագրմանը:

Մեզ համոզելով և աննելով մեր սեփական զէնքերը, հրահանեցին դնալ Ալեքսանդրապոլ և սպասել իրենց գալուն: Ճանապարհելու ժամանակ, կայարանի ժանդարմը մօտեցաւ Արքայազմ Դաղէթեցուն և թեանցունի անելով ձերբակալեց, կադոնի ոտտիկանի ցուցմունքով: Արքայազմը միւս ձեռքով, որ սպառ էր, ատրըճանակի մի հարածով ժանդարմին դեմին փռեց, իսկ երկրորդ հարածով ժողովրդի մէջ խուճապ առաջացրեց և փախաւ: Մենք վերադառնում էինք քաղաք, երբ յուսանկարիչ Ստեփան Ստեփանեանին հանդիպեցինք, որ եկել էր մեր մասին տեղեկութիւն իմանալու

և հաղորդելու Կուլուենանին: Յաջորդ գիշեր մենք ճանապարհեցինք և անվտանգ հասանք Ալեքսանդրապոլ: Իսկ Արքայազմ դաղէթեցին էլ ձիով մեզ հասաւ:

Արքայազմ դարապոլցուն թողնելով Ալեքսանդրապոլ, որպէսզի նա շտապեցնի մեզ հասցնելու Կուլուենանին և Մարկաւազին, մենք ուղևորեցինք զէպի Եփրակի գիւղերը:



Յ Ո Վ Ս Ե Փ Մ Ո Վ Ս Ե Ս Ե Ա Ն

Մենք այդ գնացինք ուսումնական սասնակի մօտ, Բասենի Շաղրան և Չուրուկ գիւղերը, որտեղ մեզ զրկարաց ընդունեցին: Քիֆլիսից ուղարկւած զէնքերը հասան Մարզլամիչ, որտեղից փոխադրեցինք Չուրուկ և, աչխոտէրի գիտութեամբ, թաղեցինք խորանում:

Այդ ժամանակ էր, որ լուր ստացանք թէ զօրք էր գալիս Բաշքեօցի Չուրուկ փախտական բունչու և դէնքեր զբաւելու համար: Գիշերով գիւղից դուրս եկանք, բայց Արքայազմ Դաղէթեցին մեզ հետ չեկաւ: Երբ առաւօտեան զօրքը գալիս է և ոչինչ չգտնելով, ընօխին դանակոծում՝ Հէնց այդ րոպէին նկատում են Արքայազմին, որ դէպի ձորն էր գնում: Պահանջում են անձնատուր լինել, բայց նա անձնատուր չի լինում: Համազարկով վերաւորում են Արքայազմին, որը մահամերձ վիճակում, երկու դնչակ արձակելով ասում է. «Ձեզ հետ չէր իմ կուրը, դուք ինձ իդուր սպանեցիք»: Վերաւորին ասնում են Բաշքեօյ, ուր և մեռնում է հերոսութեամբ, չթողնելով դէմքից փայտը:

Մենք դէպքը լսելով, սաստիկ դրզուեցինք: Եւ, Եփրեմը և Վիրապը ճանապարհուեցինք Սարըզամիչ, ուր Կուկունեանին տեսանք, տաժանակիր աշխատանքից փախած դիլիջանցի աւաղակ Սարգարի հետ: Հէնց այդ օրերին էր, որ եկա Յովսէփ Արզուիթեանը: Նա եկել էր մեզ ճամփելու, որ մեր խումբը ցրենք. բայց մենք չհամաձայնեցինք:

Սեպտեմբեր 23-ին, հարիւր տասը հոգուց բաղկացած մեր խումբը Չուրուկից, Շահնօի վրայով անցաւ տաճկաց սահմանը... (Բաց եմք թողնում սահմանից այն կողմը տեղի ունեցած ղէպէքը, որոնք ծանօթ են մեր ընթերցողներին Դրօշակի վերջին քննից ԽՄԲ.): Վերապարճանք Կաղզանի շրջանը ցրւելու համար:

Սեպտեմբեր 26-ին էր, որ կողակները մեզինց ձերբակալեցին 36 հոգու: Մտացածները փախան և ապաստեցին: Քեռին ճիշտ իմ ծօտից փախաւ և նոյնպէս ապաստեց: Ձերբակալածներին տարան Կաղզան, ուր մեզ միապարէն Մատուսի կուրն ժամանակներից հինգ հոգու, որոնց մէջ էին Յարհատը և Մկրտիչ Վարդուհանը, և երեք հոգի էլ մեր վաղակներից, որոնք Արմաշի գիւղից էին: Կաղզանից մեզ փոխադրեցին Կարսի բերդը, ուր երեք տարի բանտում պահելուց յետոյ, 26 հոգուս գատապարտեցին տաժանակիր աշխատանքի: Կուկունեանին իբրև խմբապետի՝ 20 տարով, չափահասներին 15 տարով, անչափահասներին 8 տարով: Դատապարտածներից տասը հոգու իբրև վատառողջներ, քնեցին դէպի Միքեր, իսկ 16 հոգու՝ Սախալին կղզին: Դրանց մէջ էինք եւ, լուսանկարիչ Ստեփանը և Եփրեմը: 1895 թւի Մայիս 1-ին հասանք Սախալին, 40 օրւայ ծովային ճամբորդութիւնից յետոյ, անցնելով Բաթումից Օռէսա, Օռէսայից Դարբանդելով Պորոս Մայիտ, ապա Ալա, Մինդապուր, Կուլումբ, ձայտնիախ Նալաասակի նաւահանգիստը և այնտեղից էլ Սախալին կղզին:

Սախալինում Եփրեմին ուզում էին բաժանել ինձնից և տանել Կորսակովի բանտային բաժանմունքը, մինչդրէն ես պիտի մնայի Արեւանդրովսկի պոստում: Այն-

քան սիրով և սերտ կապերով էինք կապւած մէկ-մէկու հետ, որ մեր բաժանումը շատ ծանր կը լինէր մուկ համար: Այս համարմանը ստիպեց մեզ հինգ օրւայ մէջ պատրաստութիւն տեսնել և փախչել: Մեր փախուստի յաջողութիւնը պարտական ենք 18 տարի Սախալինում ապրող Ստեփան Կալցիացուն: Մեզ միացան նաև երկու հայ և մի ոտու ռեմազործներ, որոնք մի քանի անգամ փորձել էին փախչել և չէին յաջողել: Երկու ամիս կղզու անտառում ղեզբերելուց յետոյ՝ յաջողեց մեզ, մեր շինած լաստով, ուժք օր քաղցած ծով վրա մնալով Թաթարեան պրովիլը անցնել և դուրս դալ Սախալին կղզու հակառակ կողմը, կիսալայրների դէլակներէի մօտ, որոնք մեզ կերակրեցին հում ձուկով:

Մի քիչ կազդուրելուց յետոյ, շարունակեցինք մեր ճանապարհը Ամուր գետի վրայով, որտեղ բաժանուեցինք ես ու Եփրեմը մեր երեք ընկերներից և շարունակեցինք Ամուր գետի վրայով մեր ճանապարհը:

Մեր փախուստից ճիշտ հինը ամիս յետոյ, ձմեռը ինձ և Եփրեմին ձերբակալեցին Վերինի Իւլինսկ թաղաքում, Բայկալ լճի մօտ: Նորից շղթայ և նորից բանտ: Քննութեան մէջ մենք ասացինք, որ Թաւրիդեցի ենք և Ռաֆայէլը մեր բարեկամն է: Ռաֆայէլի աջակցութեամբ ստացանք կեղծ անցագրեր ես և Եփրեմը: Ազատելով բանտից, իբրև ազատ մարդիկ, շարունակեցինք մեր ճանապարհը, և 1896 թւի հոկտեմբեր 13-ին, վերջապէս, հասանք Թաւրիդ: Այստեղ Եղորս Ռաֆայէլի և շ. Յ. Դաշնակցութեան արժանացանք: Այդ օրը Յովսէփ Արզուիթեանը և Ստեփան Թաղուհանը, որ կեղծ անունով Սամսոն էր դարձել, ճաշկերոյթ կազմակերպեցին մեր հիւրասիրելու համար, ուր մենք պատմեցինք մեր կրած ստաւապանքը... Իսկ Սեքարեցի Մաքոն գլու հաղա նախանձում էր մեզ և ստում. «Ախտս, որ մեզ հետ չէիք...»

ՅՈՒՎՍԷՓ ՄՈՎՍԷՍԵԱՆ  
(Կեղծանունը՝ Արզամ Պետրոսեան)

## Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԱՔՈՒՄԸ ԲՈՒԼՔԱՐԻԱՅՈՒՄ

Պուրկարեան իր աշխարհագրական դիրքով ամենալարմար երկիրն էր հայ յեղափոխական զործուհեութեան համար: Այս իսկ պատճառով, Հ. Յ. Դաշնակցութիւնը շատ կանուխէն իր առաքելանքը դրկած է պուրկարահայ զարութիւնը կազմակերպելու և յեղափոխականացնելու համար:

Ատոր նպատած է և այն, որ Թիւրքիոյ ստրկական և անարդ լուծը իր ուսերէն դնու նոր Թօթափող պուրկար ժողովուրդը և իբր յաջորդող կառավարութիւնները ոչ միայն բարեացակամ և հաշտ աչքով դիտեր են հայ յեղափոխական շարժումները՝ Պուրկարիոյ մէջ՝ ուղղած տանկի բռնապետութեան դէմ, այլ և

ուղղակի և անուղղակի կերպով Թանկադին օժանդակութիւններ ցրած են յաճախ:

Պուրկարահայ զարութիւնը՝ ազատ թրքական վայրայ տիրապետութիւնէն՝ չէ դադարած երբեք մտածելու տանկահայ երբայրներու մասին, որոնց ազատութեան համար իր սիրտը միշտ բարբախել է: Դեռ 1878-ի ոտու թրքական պատերազմի ատեն, պուրկարահայերը շարժումներ փորձած են ի նպատակ տանկահայ զատին և Աղբիւնապոլսոյ առաջնորդ Ռուսնուքեան վարդապետի միջոցաւ ղեկումներ կատարւած են ոտու բարձրաստիճան զորակազմներու և ղեկանաղէտներու քով: Եւ այնուհետև ալ պուրկարահայ զարութիւնը անընդհատ

հարողակից զուեան է Քիւրքիոյ մէջ տառապող իր ցեղին ցաւերուն հանդէպ: Այս է դիւստր պատճառը, որ ժամանակին հնչակեան և դաշնակցական գործիչները, առանց դժուարութեան, պարարտ հող են զտեր պուրկարահայ գաղութին մէջ, կազմակերպելու համար յեղափոխական մարմինները:

Պուրկարիս այրելիք առաջին գործիչը եղած է: Բարա-Գոսպար (Գ. Պատակ), որը կը տեսնէր Եամպուլի մէջ 1894 թիւ վերջերս: Անոր շուրջ կը հաւաքուի Եամպուլի և Սիլվէնի հայրենասէր և արտօն ազգակիցներու ընտրեալ խումբ մը: Յետոյակալ Սիլվէնի կը հրաւիրեն ազգայիններ, և Պատակ բոլորին ներկայութեան, Ամբակում աղայի տան մէջ, կը խօսի հրաշունչ ճառ մը, կը մատնանչ թքքահայութեան անտանիքի վիճակը, կը նկարագրէ Սասնոյ կոտորածը և կամտպնդէ ներկայիսը՝ ցոյց տալով թէ բոլոր քրիստոնէայ ազգերը, որուն նոյնպէս կը հեծէին Քիւրքիոյ բռնակալութեան, աշխատաւորական կեանք կը վարեն, շնորհիւ յեղափոխական պայքարի: Ու կեղբակցից, թէ, հայն ալ պիտի թօթաիկ ստրկութեան լուծը ազատ և անկախեող ապրելու և հայ մշակոյթը դարգացնելու համար:

Պատակի ճառը մեծ ոգևորութիւն և խանդավառութիւն կը ստեղծէ ներկայներուն մէջ: Բուռն ծագահարութեան տակ աւարտելով իր խօսքը՝ Պատակ անմիջապէս կը սկսէ խորհրդակցութիւն մը ընել ներկայներու հետ մարմինը մը կազմութեան համար, որուն ղեկավարը և անմիջական նպատակը պիտի ըլլար կազմակերպել Եամպուլի և Սիլվէնի հայութիւնը, Հ. Յ. Դաշնակցութեան դրօշին տակ, ինչպէս նաև երիտասարդ անձնագրահներ: Խումբ մը կազմել և դրամական հաւաքումներ ընել յեղափոխական նպատակներու համար:

Եամպուլի և Սիլվէնի ազգայիններէն կը կազմուի խառն մարմին մը հետեւեալ անձերէ բաղկացած. Ստեփան Գանարեան, Ամբակում աղա, Պայիկ Տօմաքճեան (Սիլվէնի), Միքայէլ Մայիֆօֆ, Կարապետ Գարակէօղեան, Յակոբ Փափաղեան և Սիբրան Սէյտարեան: Ու նորընտիր մարմինը գործի ձևոնարկելով՝ կարծատեսան մէջ Եամպուլի և Սիլվէնի կը նստակցաներ կարճամտաբէ, դրամահաւաքութիւն մընչ հասարակութեան լայն խաւերու դիմելով, ինչպէս նաև երկաթուղիի դժին երկայնքը բոլոր կայարաններու մէջ աշխատող հայ բանուորներու մօտ հանգանակութիւն կընէ ի նպատակ Սասնոյ աղէտահաններուն: Բացի այդ, խառն մարմինը, հարողակցութեան մտնելով Փիլիպէի հետ, այնտեղէն կը բերէ սիրողներու խումբ մը, որ շուտով ներկայացում մը կուտայ՝ բարոյական ուժեղ տպաւորութիւն թողնելով Եամպուլի և Սիլվէնի հայութեան վրա: Այլ և կրկին զուստ մըն ալ կը մնայ, որ կը յատկացուի Սասնոյ կարօտեաններուն:

Այս խառն մարմինը, որ «ընկերութիւն» կը կոչուէր հասարակութեան մէջ, կը շարունակէ անսայթաք իր գործունէութիւնը, միշտ հաւատքով և եռանդով լեցուն:

1895-ի կէսերուն, Պատակ կայացել Վառնա, որ Պուրկարիոյ հայաշատ կեդրոններէն մէկն էր, դուրսէ և առաջինը: Սասնոյ կոտորածը արդէն ցնցած էր և Վառ-

նայի հայութիւնը, որ ո՛չ միայն պատրաստ էր, այլ և կը սպասէր յեղափոխական առաքելի մը, որ զինք յեղափոխական մկրտէ: «Ճրօշակ»-ը, որ Պատակէն առաջ հատով կուզար Վառնա, այս ուղղութեամբ յեղափոխական սերմեր ցնանք և իր թափանցումները ըրած էր արդէն որոշ մատուրական երիտասարդներու հոգիներէն ներս: Թէև Պատակի Վառնայի մէջ երկնային ամիսներ առաջ հնչակեան գործիչ Միհրան Տամատեան Վառնա գալով՝ կազմած էր հնչակեան մասնաճիւղ մը, այնու ամենայնիւ կարգ մը անհատ ազգայիններ կը համակերէին ու կը սերէին «Ճրօշակ»-ը: Ահա թէ ինչու Պատակը հոս յիսկատար և, փայլուն յաջողութիւն կունենայ:

Կիրակի օր մը, հոծ բազմութեան մը ներկայութեան, Ազգ. Վարարանի արահին մէջ, Պատակ իր խօսի յեղափոխական և քաղաքական ճառ մը՝ պարզելով հայոց վիճակը, որ հետզհետէ անտանելի դարձած էր Տաճկահայաստանի մէջ: Իր ճառը խորունկ տպաւորութիւն կը զործէ ներկայներու վրա: Պատակ կուռաջարկէ, որ փափաքողներ անպէ՛ս արձանագրեն Հ. Յ. Դաշնակցութեան: Ներկայներին շատեր կարճամտաբերին, իսկ հետեւեալները կը կազմեն մարմինը. պ. պ. Մուրատ Երանտեան, Մարգար Էսիհճեան, Հաճի Դոնիէլ Գալպագճեան և Միքայէլ Միքայէան:

Նորակազմ մարմինը եռանդով աշխատանքի կը փարի՝ սկսելով անդամագրութեան, դրամահաւաքութեան և ներկայացումներ սարքելու: ՅՅական թեւակներէն, բարեկատու ազգային հաստատութիւններու ներթապէս օգնելու համար, զոյութիւն ունեցած է սիրողներու խումբ մը, այն ամենուան մատուրականներէն բաղկացեալ, որոնք ազգային ներկայացումներ կը սարքեն, տաճկերէն լեզուով: Նորակազմ մարմինը նոյնպէս յիշակներու դիմելով ներկայացումներ կը սարքէ:

Պատակ կը կարգադրէ նաև, որ ծրարով «Ճրօշակ» դայ, ինչպէս նաև զբըրկներ՝ շատերու ցրելու համար, ու ինք շարաթ մը Վառնա մնալէ յետոյ կը հեռանայ: Իր Վառնայի մէջ անցուցած մէկ շաբաթը կըլլայ բարողութեան շարաթ մը Հ. Յ. Դաշնակցութեան համար:

Երբ դաշնակցական կազմակերպութիւնը զոյութիւն կտնէր Վառնայի մէջ, ինչպէս ըսի, հնչակեան գործիչ Տամատեան եթէ ամիս առաջ եկած ու կազմած էր հնչակեան մասնաճիւղ մը: Այդ թեւակներուն և անկէ առաջ Վառնայի մէջ գոյութեան ունէր «Ճրաւունք» թերթը, որու միջոցով հնչակեանները իրենց բարողութիւնը կընէին: Շուտով կը բացուի քաղաքաբական պայքար դաշնակցական և հնչակեան մարմիններու միջև: Հնչակեանները արտայայտելու միջոցը և դիւրութիւնը ունէին, իսկ դաշնակցականները զբըրկած ըլլալով մամուլէ՝ ստիպուած էին պատասխանել խմորատիպ թուրքիներով, որոնք կը պատրաստէին Մարգար Էսիհճեանի խանութի մէջ: Այս պայքարը կարևոր պատճառներէն մէկը կըլլայ, որ Վառնայի հայ հասարակութեան մեծամասնութեան համակրութիւնը դառնայ դէպի Դաշնակցութիւնը:

1895թ. աշնանը, Հ. Յ. Դ. Բիւրօն, յատուկ առաքելութեամբ, Պուրկարիս կուղարկէ Վարդօն (Վարդ

Պատրիկանը), որ աքոստէն նոր վերադարձած էր կողմէս: Ան է ու, Խաթալի նման, նախապէս Եսմպուլ կանցնի, Պոլիս մեկնելու մտադրութեամբ և, սակայն, կը Հարկաբար մնալ Եսմպուլ և նոյն շրջանին մէջ, մօտաւորապէս մնալ ամիս: Իր անցարդի մէջ անուէր Իսաք Արվարի և մազերն ու մօրուքը դեղին նշանակած ըլլալով՝ սոփիւած էր ծուլուի, իր մօրուքը դեղին ներկել, թիւրք ոստիկանութիւնը խաբելու համար: Պահանջած դեղին ներկը չէր գտնուէր այն ատեն Պուլկարիդ մէջ, ուստի Վարդօ Պոլսէն բերել կուտայ ու մօրուքը ներկելով՝ կը գտնուայ իսկական հրէա Իսաք Արվարի:

Վարդօն, իր սպասողական շրջանին մէջ ձեռքերը ծալլած չի նստեր, այլ կը նիւրի կազմակերպական աշխատանքներու — մասնաւորապէս կը կազմակերպէ երկաթուղի բանօրները, որոնք բուրն ալ Միեցիներ և Վանեցիներ էին: Մինչև այսօր ալ նոյն այդ աշխատաւորութիւնը ուղղամտօրէն կապուած է Հ. Յ. Դաշնակցութեան հետ և ամէն անգամ ալ չէ զլացած իր բարոյական և նիւթական օժանդակութիւնը բերել Դաշնակցութեան բոլոր ձեռնարկներուն:

Արեւմտեան Բիւրօի հրահանգով Վարդօն կը մեկնի Վիէննա: Վերադարձին կրկին հրահանգ կը ստանայ անցնելու Սոֆիա, ուր պիտի ստանար շՏ սնտուկ հրացան և 20 սնտուկ դամփուշ, որոնց Երկիր փոխադրելու ծախքերը Պուլկարի զաշնակցական կազմակերպութիւնները պիտի հոգային:

Վարդօի Եսմպուլ, Սիլվէն և երկաթուղի երկայնքը բրած աջերութենէն յետոյ, որ վեց ամիս կը տեւէ, այդ կողմերու «Քնկերութիւն» անամբ ճանչցած կազմակերպութիւնները կը ստանան որոշ և յստակ դիմագիծ, մասնաւոր ուղղակի յարաբերութեան Արեւմտեան Բիւրօին հետ, որուն կը զրկեն հասարած գումարները:

1896թ. մարտ կամ ապրիլ ամիսներուն, դեղին մայրերով և դեղին մօրուքով Վարդօն, որպէս Իսաք Արվարի, Երեցաւ Վառնայի մէջ, ուր երկար շմաց, բայց իր սուղ ժամանակը օգտագործեց կազմակերպական աշխատանքի համար և Խաթալի կազմած մարմնոյ նախաձեռնութեամբ բանախօսեց Սիւսեան ընթերցարանին մէջ:

Նոյն թւականին Վառնա էր նաև Գրքօ, որը Պուլսոյ գործող ընկերներէն եղած է և գործակցած Եսմպուլի և Երեցաւի, Երեցաւի, Վառնայի և Թորգոմի: Կային նաև շատ մը Նշակական գործող զէմքեր, որոնք վտանգուած փախտական յեղափոխականներէն՝ Պոլսէն Բ. Դրան ցոյցին կամ այլ յեղափոխական գործերու մասնակցած ըլլալու ամբաստանութեամբ:

Վառնայէն Վարդօն զնա Պոլիս, Իսաք Արվարի անցարդով մասնակցելու համար Պանք Օթթօմանի գրաւման կազմակերպութեան, սպա կրկին և անցաւ Պուլկարի և Հատատուեցաւ Վառնայի մէջ:

Նկատի ունենալով, որ շատ մը քաղաքներ արզէն ունէին իրենց օրինաւոր տեղական կոմիտէները, անհրաժեշտ կը զատնար կազմել և Կեդք. Կոմիտէն, բայց որովհետև մէկ քաղաքի մէջ անհար կը կիզր. կոմիտէի յարմարագոյն անձերը ճարել, միև կողմէ, սկզբնական շրջանի մէջ, աւելի օգտակար ու նպատա-

կայարմար էր քանի մը քաղաքներէն առնել Կ. Կ. — ի անդամներ, Վարդօն կը նշանակէ հետեւեւ անձնաւորութիւններէ Պալքանեան առաջին Կեդրոնական Կոմիտէն. Եսմպուլէն Ստեփան Գանարեան, Վառնայէն Յովհաննէս Բայազատ և Արսէն Էսարաշահեան, Տիրիւպէն Յակոբ Երկանեան: Սոյն Կեդք. Կոմիտէն կը գործէ մինչև 1897 սկիզբները՝ համարատու ըլլալով Վարդօին, որպէս Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանի ներկայացուցիչ:

Պանք Օթթօմանի ցոյցէն յետոյ, Պուլկարիա կը խուժէ Պոլսէն ստար թիւով հայութիւն, ինչպէս նաև կուգան դաշնակցական անհատներ և գործիչներ: Վառնան եղած էր գրեթէ գաղթականական կայան: Այդ թոճ ու բոճին մէջ կուսակցական աշխատանքները կանոնաւոր ընթացքով չը չեն կրնար ընթանալ, բնականաբար, մինչև որ հաղի կը ստեղծի բնականօրէն վիճակ մը զաղթականներու համար: 1897-ի սկիզբները, անգլիական բարեօրակաւն-նպաստամատոյց ընկերութեան մը կողմէ օգնութեան կը հասնի միտք Ատամ, որը հայ գաղթականներուն, որոնք բոլորն ալ արհեստաւորներ էին, գործ կը հաթխթէ, գանազան այր հետններու վրա աշխատանքներ բանալով և անոնց արտադրութիւններն ալ Ազգիւս զրկելով, այլ և շատ մը անհատներու, աշխատելու համար դրամադրութիւն կուտայ:


1897 թիւ մարտ ամսուն Վառնա կուգայ Պոլսոյ գործիչներէն Վառնեան, որը, որպէս գործնական մարդ, իսկոյն տեղեկանալով տեղական կուսակցական վիճակին, իր մօտ, օթել Մոսկա, կը հրաւիրէ հետեւեւ ընկերները՝ Յարութեան Փափազեան, Յովհաննէս Գալաշահ, Վարդան Վէպուքեան, Յակոբ Արապեան և Արսէն Էսանկաշահեան ու անոնցմով կը կազմէ կոմիտէ մը, առաջին երեք ընկերները դիւան ընելով ատենապետ, գանձապահ և ատենադպիր: Վառնեան շատ թէչ կը մտայ Վառնա:

Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանի կազմակերպութեան առաջին շրջանի գործունէութիւնը կը փակի առաջին շրջանային ժողովով, որ տեղի ունեցաւ Վառնայի մէջ, ընկեր Յարութեան Փափազեանի (ատամնարոյտ) տունը: Կր մասնակցէին Եսմպուլի, Տիրիւպէնի, Վառնայի, Սիլվէնի, Թուսճուքի, Պուլկարի և Եսմէնի ներկայացուցիչները: Վարդօն կը մասնակցի, որպէս Պալքանի ներկայացուցիչը Բիւրօի կողմէ:

Շրջանային ժողովի օրակարգը հարուստ էր. կային շարք մը կազմակերպական ընդթ կողմ անյետաձգելի խնդիրներ, որոնք անյայպաղ լուծումի կը սպասէին: Կային և ընկերական անհասկացողութիւններ և թիւրբամացութիւններ, որոնք նոյնպէս պէտք է հարթելէին: Դրամական հաշիւներու վերատուգման խնդիրը, Արիւրի և իր ընկերներու կողմէ ստեղծուած յեղափոխութիւնը, որ հասկնալէ լայն ծաւալ կը ստանար և կը սպասնար գաղթականութիւնը, նոյնիսկ մտաւորականութիւնը և կուսակցական շարքերը բարոյալքելու: Պէտք էր միջոցներ կազմակերպել այս շարքերն առջին ատենու, պէտք էր լուծել 28 սնտուկ զէնքերու խնդիրը, պէտք էր որոշել յետագայ կուսակցական գործունէութեան ուղղեգիծը: Այս հարցերու կարգադրութեամբ և Կ. Կ. — ի ընտրութեամբ Հ. Յ. Դաշնակցութիւնը Պալ-

քանի մէջ նոր թափ ստացաւ և հասաւ այն շրջանը, զոր պէտք է կոչել Դաշնակցութեան զօսիկ դարձը, երբ Ռոստովի ներկայութեամբ, անոր երկաթէ կամքով և անյոզնելի աշխատութեամբ ու յետոյ, Քրիս-

տափորի շունչին տակ Պուլիպրիան դարձաւ մեր կուսակցական ամենաուժեղ կեդրոններէն մէկը:  
Վ. Գ. ՄԱՋՄԱՆԵԱՆ



Վ. Գ. ՄԱՋՄԱՆԵԱՆԻ ԵՌԻՎԱՆԻ ԿԵԴՐՈՆՆԵՐԷՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՄՔՎՈՒԹՅԱՆ ԿԱՆԿԱՐԳՈՒՄԸ

# ՄԱՄՈՎԱՐԻ ԽՈՐՀՐԳԱՆՈՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

1895 սեպտեմբերի սկիզբի օրերէն մէկն էր: Տրապիզոնի մէջ թէլլալ Ալեքսան Իր գոռ ձայնով շուկայի մասերը կը թնդացնէր՝ աւետիլով թէ յասէր հասարակութեան, որ առաջին անգամ ըլլալով Ռուսիայէն ժամանած է թուրք քաղաքի սամովարի գործարաններու ներկայացուցիչ այսինչ այսինչնան, սամովարներու ձորի մթերքով մը և շատ աման գներով, ուստի ո՛վ որ կը փափաքէր չըրկելի պատեհ առիթէն, պէտք է փութար Եննի խանի թիւ այս ինչ սենեակը:

Շատեր փութացին և զեղեցիկ սամովարներ զրկած դուրս ելան: Ես ալ կը փափաքէի ունենայ զեղեցիկ սամովար մը, բայց իմ մէջ աւելի բուռն կը ցանկութիւնը, վայրկեան մը առաջ, տեսնել սամովարի մեծ վաճառականը, որը բացի սամովարներէն, բերած պետի ըլլար նաև շատ թանկագին և հետաքրքրի տեղեկութիւններ Կողիտաէն և պետի հարթէր շատ մը տարակարծութիւններ, որ մէկ կողմէն ծագած էին Արեւեան Բիւրօի և Տրապիզոնի կոմիտէին միջև, և միւս կողմէն մեր մէջ հետեւիլք թաքթիքի շուրջ: Բայց ինչպէս կրնայի հակառակ երթալ մեր իսկ դրած արեւելին: Ու երանի կուտայի մեր ընկեր Վրէնի, որ իր յարմարութիւններէն առաջին օրէն իսկ ելեմուտ ունէր սամովարի մեծ վաճառականին մօտ, որ ուրիշ մէկը չէր, բայց եթէ մեր մեծ ընկեր Ռոստոմը, որ պարտական անցազրով և սամովարի մթերքով Տրապիզոնի դժով Կարին կը մեկնէր:

Տրապիզոնի Կոմիտէի հետ նախապէս թղթակցելով՝ յարմար տեսնած էր այդ ձևը, կրակածի տեղի շտալու համար: Կոմիտէի որոշումով, ընկեր Վրէն, իբրև յանձնակատար՝ կը պահէր եղալը Ռոստոմի հետ, մինչև յարմարութիւն առնէր տեղ մը հաւաքելը:

Ընկեր Վրէն ինձ համար ալ գնեց սամովար մը, զոր առանձին զուգուրանքով տարի տուն՝ զարմանք պատճառելով մերիններուն:

Սամովարի թէլլը յայտնի է, որ այտորմիլի է, բայց ինձ կը թուէր թէ այս սամովարի թէլլը առանձին համ պետի ունենայ: Ի՞նչ որ Ռոստոմի բեբաճն էր և զաւազրական ապրանք: Ատկէ գաա, իմ պատանեկան հոգու մէջ հպարտութիւն մը յառաջ բերած էր այն հանգամանքը, որ այդ սամովարը սովորական ապրանք չէր, ինչպէս և գայն ծախող վաճառականը, և ես ծանօթ էի զաղտնիքին, ամբողջ քաղաքին մէջ միայն քանի մը ընկերներով: Որոշած էի սամովարը առաջին անգամ վառել որեւէ նշանակալից օր մը և ընկերներու հետ լաւ ժամանց մը ունենալ:

Ռոստոմ իր գերը լաւ տարաւ: Պարզ կեցածքը, թաթարական աղճալ լիզուն և, մանաւանդ, դիմազոծերը կը փարատէին ամէն կասկած: Բայց ոստիկանութիւնը անտարբեր չէր դէպի նա: Զէ՞ որ Տրապիզոն եղած էր ուսուսակող գործընտես յաճախով վարչ: Ռուրէն իրանպատեան, Ս. Չաւարեան, Ե. Արղութեան, Լ. Թաղէտեան, օր. Ժէնիա և ուրիշներ հոն բըռնւած և կամ անկէ արտաբըւած էին (Ե. Երուստիմեան անկապ գործեց և անցա Պոլիս): Դեռ նոր արտաբը-

ւած էր յայտնի մանկավարժ և Տրապիզոնի հայ դպրոցներու տեսուչ Ե. Տէր Միրաբեան: Բայց ատոնք ամենքը եկած էին իբրև տեսուչ կամ ուսուցիչ և չըրփում ունեցած տեղական յայտնի հայերու հետ, ուստի սամովարի վաճառականին դէմ հետապնդումը խիստ չէր, մանաւանդ որ ոչ մի յայտնի հայի հետ յարաբերութիւն ունէր և յանձնակատարներու հետ կանցընէր իր ժամանակը:

Ռոստոմ, սակայն, կաճապարէր. պէտք էր օր առաջ հաւաքելի: Մեր աւագ և զգուշութեան մասնագէտ ընկեր Արսէն (Մանուկ Թաղէտեան) վճռեց, որ առաջին ժողովը կայացնելու ամենայարմար վայրը . . . . բաղնիքն է: Քաղաքին կեդրոնը, մէյտանի բաղնիքը ժամադրութիւն տրուեցաւ կիրակի օրույ համար:

Որոշած ժամին դացի բաղնիք: Ներկայ էին Արսէն (Մանուկ Թաղէտեան), Տաշրացի (Վրէն Գասպարեան նահատակած 1915-ին) Զաւէն (Եակոբ Գարուկեղեան, 1897-ին Պոլսոյ մէջ ձերբակալուելու ատեն անձնասպան եղած), Մուրէն (Օննիկ Թումանեան) քաշած էին բաղնիքի խուռնաներէն մէկու մէջ: Անոնց մօտ թարը ձեռքին նստած էր լայն ու թուի դէմքով, խոշոր ճակատով, տափակ զիթով և արտայայտել աչքերով անձանօթ մը. խօսք չկար, որ Ռոստոմն էր ան: Մանօթութիւնը կարճ տեսեց. ժողովը սկսաւ խիստ ծիծաղելի պայմաններու մէջ. թէև բաղնիքին մէջ բաղմութիւն չկար, բայց զգուշութեան համար, շուրս ու սապոնը և թասերու ձայնը կը խառնէին մեր օրուկարգի հարցերուն, որոնք, սակայն, շատ լուրջ էին:

Կարծիքներու փոխանակութիւնէ յետոյ տեսնեցաւ, որ այդ հարցերը, յամենայն դէպս, բաղնիքի մէջ լուծուելք բանէր չէին, մանաւանդ որ տարակարծութիւններ կային մեր մէջ ալ: Ընկեր Արսէնի գիւտը հանձարեղ էր՝ զգուշութեան տեսակետով, բայց գործի համար անպէտք: Ռոստոմ իր քաղցր զմեծիմազով միացաւ ընկերներէ մէկուն առաջարկին՝ անպայման տուն մը հաւաքելի և լրջօրէն զբաղելի: Ընկեր Արսէն, ի վրէժ իր բաղնիքի ծրագրի անյաջողութեան, առաջարկեց իր տունը զուգարբել ժողովները. բոլորը համաձայնեցան և ալ սկսաւ սովորական լուպանքը: Ռոստոմին հետ երկար խօսեցայ: Իր պարզ, անպաճոճ խօսածքին մէջ զգացի հոգու մեծ ճարտասանը և բարձր մարդը:

Անկէ յետոյ շատ տեղ և բազմաթիւ գործերու մէջ մենք իրար պատահեցանք, բայց առաջին՝ բաղնիքի մէջ ստացած տպաւորութիւնս մնաց ամենէն ուժեղն ու քաղցրը:

Այս տողերը գրած ատենս, 35 տարիներէ յետոյ, դեռ իմ առջև կենդանի գոյներով կը ներկայանայ բաղնիքի խուռնային մէջ թարը ձեռքին բռնած սամովարի մեծ վաճառական Ռոստոմը, շրջապատած պարզափարի մտերմներով:



# Հ. Յ. Գ. «ԽԱՐԻՍԽ» ԳՈՐԾԱՐԱՆԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ծնունդ առնելով Հայ ժողովրդի անհատ տառապանքներից՝ առաջին իսկ օրից գործնական աշխատանքներից է դիմում այդ տառապանքների դէմ պայքարելու համար:

Նրա գլխաւոր գործնական աշխատանքներից մէկն էր Պարսկաստանի Թաւրիզ քաղաքում գինազործարան բանալը: 1891-ին գինազործներ Բաթմանեանին, Ռոստոմի փոքր եղբորը՝ Արիստակէս Զօրեանին (Կարօ) և Երևանի Տէր-Աւետիքեանին յանձնարարում է գնել հարկաւոր գործիքներ և անցնել Թաւրիզ, ուր այդ ժամանակ գտնուում էր Ռոստոմը: Չինազործների գործիքների հետ հասնում են Թաւրիզ և բացում արհեստանոց այն տեղում, ուր կենտրոնացած էին Թաւրիզի բոլոր գինազործները և որը կոչւում էր «Ջարախանա» — գինազործարան, ռազմամթերանոց: Ջարախանան համարում էր մասամբ պետական, որովհետև բոլոր գինազործների վրա հսկում էր կառավարութիւնից նշանակւած մի պաշտօնեայ: որ կոչւում էր «Ջարադարաչի»: Բացի այդ, բոլոր գինազործները պարտաւոր էին հարկաւոր դէպքում, նորոգել, մաքրել պետական զէնքերը չնչին վարձատրութեամբ:

Այն աղետոյ մեր գինազործները, Ռոստոմի մասնակցութեամբ, վարձում են երկու կից խանութներ, որոնք միանում են իրար փոքրիկ դռնով: Առաջին խանութը յատկացւում է մեքենական աշխատանքների համար, ուր և դարսւում են մեքենաները, մանգանները և կարեւոր գործիքները, իսկ երկրորդը յատկացւում է դարբնոցին: Արհեստանոցը պատրաստ է, և սկսում է աշխատանքը: Կարօն միտում է նրան Հ. Յ. Գ. «Նաւրիսի» գինազործարան անունով:

Արհեստանոցը հետապնդում էր գլխաւորապէս ևրեք նպատակ. առաջին՝ որ նա դիւրութեամբ կարողանայ սահմանափակին այդ մօտիկ վայրում ռազմամթերք գնել, երկրորդ՝ նորոգել և պատրաստի ռուսական սլետական գինազործարաններից գնած ու փոխադրած կիսապատրաստ զէնքերը և երրորդ՝ պատրաստի Երկրի համար գինազործներ: Եւ նա կատարեց այդ երեք պարտականութիւնները ամենայն ճշտութեամբ:

Գաթանեանը, կարճ ժամանակից յետոյ, վերադառնում է Կովկաս: Արհեստանոցում մնում են Կարօն, Երևանդը և մի աշակերտ՝ Ռուբէն Կոնոնով՝ որը դերիկցի էր և այնտեղի գառնարածը: Նրան արհեստանոց է ուղարկում գինազործութիւն սովորելու համար Սև-Քարեցի Սաքօն:

Գաթանեանի տեղ ուղարկում են Կովկասից Միհրանին, որը շատ հմուտ երկաթագործ էր և լաւ ծանօթ զէնքերին:

Որոշ ժամանակից յետոյ, հրահանգի համաձայն, Կովկաս է դառնում Կարօն՝ ռազմամթերքի զննման գործը կազմակերպելու և այնտեղից անցնում է Ռուսաստան:

տան: Երևանդը նոյնպէս, համաձայն հրահանգի, վերադառնում է Երևան՝ աշխատելու Գալուստ Այօբանի մօտ, որը ունէր իր արհեստանոցը: Արհեստաւորների թիւը աւելացնելու համար, ուղարկւում են Շամախեցի Միքայէլը և Գանձակեցի Լեոնը: Աւելանում է նաև մի աշակերտ-պատանի՝ Սալմաստի Փայալուկ դիւղացի Յովհաննէս Համփօեանը:

Երկու տարի աշխատելուց յետոյ՝ Միհրանը վերադառնում է Կովկաս՝ այնտեղ աշխատելու համար:

Կարօն իր միտան մեծ յաջողութեամբ կատարուող յետոյ՝ վերադառնում է Կովկաս, ապա անցնում Թաւրիզ: Արհեստանոցը այդ ժամանակամիջոցում նորոգել և պատրաստել էր Կովկասից փոխադրած կիսապատրաստի հրացանները — բերդան և մօսին: Տեղում գնել էին գլխաւորապէս բերդան հրացաններ (մօսինի հրացանը դեռ մուտք չէր գործել Պարսկաստան): Գնել էին նաև բերդանի փամփուշտներ, ռուսական № 12 ատրճանակներ, որ կոչւում էր «կագոնին», և այն ժամանակ մեծ յաջող ունէր: Կարել էր տրեւ ճաւականին քանակութեամբ փամփուշտակներ, կաշէ փոքր շանթաներ, գործիք և հրացանի մասեր պահելու համար, և հրացանի կաշիներ: Այս բոլոր կաշէ աշխատանքները տարիներ շարունակ, առանց որևէ կասկած ունենալու ու ամենայն հաւատարմութեամբ պատրաստել էր թուրք իշկակար, ուստա Սաթարը: Արհեստանոցը շինել էր տեւ նաև զոնդակներ՝ կիսապատրաստի հրացանների համար: Ռուսաստանից կամ Կովկասից զոնդալ համարուա չէր փոխադրւում, որովհետև կապոցների մէջ մեծ տեղ էր բռնում և ծախսի տեսակէտից էլ համարւում էր աննպատակայարմար մանուակ, որ տեղում մատչելի գներով կարելի էր շինել: Այդ աշխատանքը արհեստանոցը յանձնել էր նոյն Ջարախանայում աշխատող տեղացի երկու Հայ արհեստաւորների, որոնցից մէկն էր յայտնի զոնդալ շինող ուստա Հայրապետը, իր որդի Եգորի հետ, իսկ միւրը՝ ուստա Աւազը:

Ջարմանալի թող չբւայ զէնքի այսքան բացայայտ աշխատանքը: Պարսկաստանում, մանուակը, առաջներում, զէնքի գործածութիւնը արգելւած չէր, և զէնքը համարւում էր շուկայի ապրանք: Այդ է պատճառը, որ շուկայում կը հանդիպէիք բազմաթիւ գինափաճառների, որոնք վաճառւում էին ամէն տեսակի հրացաններ, փամփուշտներ, ատրճանակներ և, առհասարակ, զէնքին վերաբերող մասեր: Միայն արժէքները խիստ բարձր էին:

Արհեստանոցը բերդանները գնում էր աւելի մատչելի գներով: Նախ, որ գնում էր ուղղակի մաքսանենգներից և այն էլ մի քանի հատը մի անգամից: Զի կարելի ասել, թէ կառավարութիւնը միանգամայն աջակցող էր արել զէնքի վաճառումը, նա միշտ հըս-

կում էր: Երբ զնուս էր մէկ շատ, նա ուշադրութիւն չէր դարձնում, բայց երբ զնուս էր աւելի, կամ փոխադրուում էր բուսականին թուով՝ նա հետապնդում էր և գրաւում:

Արհեստանոցը իր այս ընթացքով շարունակեց մինչև 1895-ի վերջերը: Կարօի զնած և փոխադրած կիսապատրաստի մասին էր արացանքը, իրենց մասերով, արդէն ապահով հասել էին Թուրքի: Նրանց պատրաստելու համար անհրաժեշտ էր արհեստաւորների թիւն աւելացնել, մանաւանդ, որ Միջբայէլը հեռացել էր Կովկաս: Նման ցանկութիւն յայտնել էր նաև Լեւոնը: Մնում էին միայն Ղզիբրտները — Ռուբէնը, Յովհաննէսը և մի երրորդը՝ Վոլքը, որ նոր էր ընդունւած: Նա Վաղաշապատի չրջանից էր: Կարօն այդ ժամանակ ձերբակալուել էր պարսկական Ջուզֆայում և բանտից փախել: ուստի, իրբէ փոխտանկան, արհեստանոցում աշխատել էր կարող: Շ. Յ. Դ. Բիւրօն Գարուսա Ալեքանին, որ յայտնի էր Թուրքս կեղծանունով և հմուտ զինագործ էր (սովորել էր Տուլայի պետական ցինպարծարանում Քաթանեանի հետ միասին) յանձնարարում և շուտափոյթ կազմել արհեստաւորներ և մի խումբ և անցնել Թուրքից: Թորստի յաջողում և գտնել միայն երկու արհեստաւոր — Բաբրատ Յովհաննիսեանին՝ որ ծանօթ է Պետրոս կեղծ անունով՝ աւարտած Թեֆլիսի արհեստաւորաց զպրօքը, և Երևանցի Թաղէոսին, Մարգար կեղծանունով: Ոգևորութեան շրջան էր: Հայ երիտասարդութիւնը, սոգորւած հայրենիքի ազատութեան գաղափարով, դանազան տեղերից գալիս էր անվերջ՝ Երկիր անցնելու, թշնամուն հուրօք տայու համար: Եկողներին, մինչև Երկիր անցնելը, յանձնարարում էր որոշ աշխատանքներ կատարել, մասնաւոր արհեստաւորներին, որոնց անմիջապէս արհեստանոց էին ուղարկում: Այդպիսի եկողներից մէկը տողերիս փրոզն էր, որ 1896-ի մարտին Գրիգոր Միլլաթեկեանի (կեղծանունը Ջարվազար Խէջօ, Մածուն Խէջօ) և Միսակ Տէր-Դանիէլեանի (Արամայիս կեղծանունով) հետ միասին Բազուից հասանք Թուրքի: Ապա եկան Գանձակեանի Փոքր Թորոսը և Փոքր Կարօն, Տրապիզոնցի Միսակը և այլն:

Արհեստանոցը կենդանութիւն ստացաւ: Աշխատում էին եօթը վարպետ և երեք աշակերտ: Աշխատանքը ետում էր: Անընդհատ պտուում էին խառտի և ծակելու մեքենաները, դիկում էր շտամը, հարկաւոր ձևով երկաթներ կտրելով, փշում էր դարբնոցի փուջը, զնգում էր սալը մուրճի ամէն մի հարւածի տակ, խարտոցները միալար խռում էին մանդանաներում սղմած երկաթի վրա: Այդ բոլոր ստորոքելի ձայները միխառնուելով իրար, կարծես կազմում էին մի քառաձայն մեղեդի, որ երգում էր աշխատանքը, հայրենիքի ազատութեան աշխատանքը: Գոհ և աշխոյժ էին արհեստաւորները. նրանք կատակում էին իրար հետ, խնդում և ծիծաղում: Կամ մէկը պտուում էր որևէ դէպք՝ միւսները լսում էին: Բոլորը հասաւոր էին, բոլորը երբարարաբար սիրում էին իրար, համարնական աշխատանք էր. դրամի, ոռճիկի խնդիր չկար: Ամէն մէկը տարբեր տեղից, տարբեր կրթութեամբ, բայց հաւաքուել, մտնեցել էին իրար մի վեհ գաղափա-

րի համար: Նրանք կապուել էին իրար հետ ընկերական ջերմ սիրով: Այդ բոլորի օգակը հանդիսանում էր արհեստանոցի դիտաւոր վարպետը, Թորոսը, իր բարոյական բարձր ազդեցութեամբ, իր անկեղծ ընկերասիրութեամբ, իր հայրական վերաբերմունքով: Նա մաքուր էր իր աշխատանքի մէջ, նա ամբիժ էր որպէս մարդ, որպէս յեղափոխական: Նա երկար տարիներ աշխատել է Ատրպատականում ու սիրել ոչ միայն իր արհեստաւոր ընկերներից, այլ և աշխատող բոլոր ընկերներից, նա սիրել է և ժողովրդից և հասարակութիւնից: Նա իր բարի, հեղ, բայց իր համոզմունքների և աշխատանքի մէջ զրական ու անշեղ քննադրութեան շնորհիւ, ձեռք էր բերել, անխախտ բոլորի կողմից, մեծ համակրութիւն: Մեր երջանակ հակաարկորդներն անգամ յարգում էին և հաշիւ առնում նրան: Յաւելով պիտու սսած, որ մեր Ատրպատականի ընկերները, որոնց թուում և ևս, շա՛տ շուտ մոռացանք այդ անբիծ ու ներկած ընկերը: Ոչինչ չգրեց, ոչինչ չխօսեց նրա մասին: Հանդիսա ոսկորները, պաշտելի ընկեր, որ ընկար գաղափարի ճանապարհին...

Չինապրծական աշխատանքները չէին սահմանափակում միայն արհեստանոցում: Արհեստանոցն ունէր իր բաժանմունքներ և հայկական թաղերում: Մի բնակարանում, ուր սպրում էին Լիլաւ թաղի դըպրոցի ուսուցչուհիները՝ Մարօն և Կասարինէն՝ այդ բնակարանի ներքնայարկում, աշխատում էր Կարօն, որին ընկերացայ ևս, ամբողջ երկու ամիս: Մեզ հետ աշխատում էր նաև սանտէրը՝ Բայասան Եղանեանը, մի շատ համակրելի և հաւատարիմ անձնաւորութիւն: Այդտեղ էին կենտրոնանում արհեստանոցում պատրաստւած հրացանները՝ բաժան-բաժան մասերով: Այդտեղ թէ խողովակներում և թէ սուփերին սե զոյն էր տրւում, յատուկ պարտատուած հնդուկով, ապա մասերը հաւաքւում, ամբողջացւում ու յարմարեցւում էին շոնդաղները վրա:

Մի այլ բնակարան բերդանի փամփուռ լցնելու գործարանի էր վերանուած, Այնտեղ մի կողմում կապարից զնդակներ էին ձուլւում, մի այլ տեղ դատարկ փամփուռի (գիլգի) վրա կապուել էր դրւում, ապա այդ փամփուռները շափով լցւում էին վառօղով և զնդակներն ամբարնում: Գործարանը ղեկավարում էր Ջալալ Ջալալեկեանը, երևանցի, մի շնորհալի ու սիրւած ընկեր, որը հենց նոյն գործարանում վառօղի ուժեղ պայթուցից ծանր վերաւորեց և մի քանի օրից վախճանեց սոսկալի տանջանքների մէջ: Նրան օգնում էր Գանձակեցի Փարսաղանը, նոյնքան շնորհալի, նոյնքան սիրելի: Վառօղի պայթուցից նա ևս վերաւորւում է, սակայն, շատ թեթեւ: Վերաւորում են նաև Պետրոսը և մի տեղացի ընկեր, որոնք պատահաբար գրանւում էին այնտեղ, սակայն, նրանք բժշկւում են: Փարսաղանը, 1897ին, խնամատրի արշաւանքից առաջ, Գուրգէնի և Անդրանիկի հետ միանում է Վազգէնի զինատար խմբին և անցնում է Վան, ապա Մուշ, ուր սպանւում է Գուրգէնի հետ Յրոնք զիւղում:

Թորոսը, իր աշխատանքների ընթացքին, կարողացաւ ծանօթութիւն հաստատել զարաբազից յայտնի մաքսանիդների հետ, որոնցից զնում էր թէ՛ փամ-

փուշտներ, թէ՛ հրացանի կարևոր մասեր, և թէ՛ դատարկ փամփուշտներ (գիլգի), կապուիւ, վառօղ և այլն: Այդ մաքաննեզներէց յայտնի էին Մաշադի Սադրըլը, Քեամբայի Ալասկեարը և Մաշադի Մահմադ-Ալին: Նա այնքան սիրեց նրանցից, որ նրանց մէջ կատարեալ մտերմութիւն հաստատեց և նա կարողացաւ նրանց միջոցով բաւական ապրանք փոխադրել Սալմաստ: Իսկ արհեստանոցից հայկական թաղը պատրաստի հրացան տանելը սովորական բան էր: Բացի այդ՝ իրենց ծախած փամփուշտները իրենք էին փոխադրում հայկական թաղը և այնտեղ յանձնում մեզ:

Այսպէս, աշխատանքը առաջ էր գնում յարևած մեքենայի նման: Իւրաքանչիւրը գիտէր իր անելիքը, և մէկը միւսին չէր խանգարում: Պատրաստի բոլոր գէնքերի վրա խիւում էր Հ. Յ. Դաշնակցութեան գինանշանը և Հ. Յ. Դ. տանիքը, ինչպէս և արհեստանոցի անունը «Պարբուխ»: Մինչև 1895 թիւը արհեստանոցում պատրաստած բոլոր գէնքերը փոխադրում էին Սալմաստ և ապա գինատար խմբերի միջոցով փարւում Երկիր: Տարել են Պետոս և Տաօն իրենց փոքրիկ խմբով, տարել է Տարհադի (Սարգիս Օհանջանեանի) խումբը, ապա Դուամնի խումբը:

1896-ի այդ տեղոտ աշխատանքների սքողունքը եղած մօտ 400 պատրաստի մօտինի հրացան, որը փոխադրել էր նաև Կարօն: Այստեղ էլ կատարում էր թաւրիգի ներքնայարկ արհեստանոցի աշխատանքները, որպէս աւելի ազատ վայր: Այստեղ ոչ միայն կարելի էր ազատ աշխատել, այլ և կարելի էր ազատ փորձել հրացանները և ուղղել նրանց նշանառութիւնը: 1897-ի առաջին կիսամեակի աշխատանքը աւելի տենդոտ էր. որոշած էր իննասորի արշաւանքը. հարկատու էր պատրաստել մնացած հրացանները: Բերդան հրացանները կամաց կամաց տեղի էին տալիս, նրանք այլ ևս մուտք չէին դրծում մեր արհեստանոցը և ո՛չ էլ գինաւորներն էին վերցնում:

Կարօի աշխատանքները Սալմաստում շատանում էին, նրան օգնում էր միայն տեղացի ընկեր Սարգիս Սարուխանեանցը: Կարօի պահանջով Մարգարը ևս պնաց Սալմաստ: Ուղարկեց այնտեղ նաև ղոնդաղ պատրաստող ուսուսա Հայրապետը իր որդի Եգորի հետ: Արհեստանոցը, վերջացնելով իր ձեռք իտակ ունեցած բոլոր կիսապատրաստի հրացանները, մօտ 200 հատ, փոխադրեց Սալմաստ: Եւ որովհետև աշխատանքն այնտեղ շատացել էր, կենտրոնական Կոմիտէի որոշման համաձայն՝ Քորսը, Փոքր Քորսը, Ռուբէնը և Յովհաննէսը, կարևոր գործիքների հետ, փոխադրում են Սալմաստ, և Փայաշուկ գիւղում բացում նոր արհեստանոց՝ մի մասնաւոր տան մէջ: Թաւրիգում մընում են Պետրոսն ու աշակերտ Գէորգը: Տրապիղոնցի Միսակը Հիւսնդութեան պատճառով վերադառնում է Կովկաս, իսկ Փոքր Կարօն հեռանում է արհեստանոցից: Մենք պատրաստում ենք հրացանի մանր մասեր և ուղարկում Սալմաստ: Կարճ ժամանակից յետոյ, Պետրոսը նոյնպէս դադարում է արհեստանոցը յաճախել:

Սրտաբորով սպասում ենք արշաւանքին, որ ձեռք ձգում էր որոշ անհամաձայնութիւնների պատճառով,

որոնք վերջ է վերջոյ հարթեցրին հանդուցեալ Յարութիւն Շահրիկեանի միջամտութեան շնորհիւ:

Կատարեց իննասորի պատմական արշաւանքը, վրէժը լուծեց, սակայն, այդ արշաւանքին զոհ դնաց բոլորից սիրւած, բոլորից յարգւած, յանդուգն աշխատանքներ կատարող ու կարմախերպող, անվիճելի կուռղ ու խելացի տառածող յեղափոխական Կարօն վըլտի ու տանջանքի մէջ թողնելով ընկերներին. «Չկայ կարօն, ևս սուգ պատեց քամակին» — Քորսոսի երգն է գրւած 1898-ի փետրւարին, Սալմաստի Փայաշուկ գիւղում:



Ք Ր Ւ Ս Ս Ա Փ Ո Ր Մ Ր Ք Ա Ս Ե Լ Ե Ա Ն

Իննասորի արշաւանքից յետոյ, գնեցրը նորից նորոգում են Սալմաստում և փոխադրում Երկիր:

Արհեստանոցի աշխատանքները նւագեցին, արհեստաւորներից ոմանք, որպէս գործիչներ, կատարում էին այլ աշխատանքներ, ոմանք անցան Կովկաս: Մնացին Պետրոսը և Գևորգը: Հինների տեղը բռնում են նորերը. գալիս է Ալեքսանդրապոլցի Մտօն, որը մի տարի աշխատելով արհեստանոցում, լաւ ծանօթանում է գնեցի հետ և անցնում Վան, որպէս գինաւոր: Ապա գալիս է 1901-ին Շահրապ-Վարդանը, որը նոյնպէս աշխատում է արհեստանոցում և յետոյ անցնում Վան, դարձեալ որպէս գինաւոր: Ապա եկան գինաւործ Իրանդը և ուրիշներ:

Որովհետև այլ ևս կարիք չէր գոյացում կիսապատրաստի գէնքեր գնելու, կամ տեղում դնելու, քանի որ Դաշնակցութեանը յաղուէն էր Ռուսաստանում ձեռք բերել բաւական մեծ քանակութեամբ բոլորովին պատրաստի հրացաններ, փամփուշտ և այլն, և յաջողել էր ապահով փոխադրութիւն կատարել, արհեստանոցի աշխատանքները կամաց-կամաց դադարում էին:

Նրա վերջին աշխատանքները տեղի ունեցան պարսկական յեղափոխութեան ժամանակ: 1909 թ.ին

Ռոստոմի զեկավարութեամբ պատրաստում էին ոսկեաներ և ուումբեր: Նրա գլխաւոր աշխատակիցն էր Բուլղարացի Գէորգը, որը հէնց արհեստանոցում գոհ չէաց:

Արհեստանոցն այդ ժամանակ իր նախկին տեղից, Ջաբախանայից, փոխադրել էր Ղալա հայկական թաղը: Մի օր, պայթուցիկ նիւթեր խառնելու ժամանակ, պայթում է նիւթը և անշնչացած զժախտ գոհին շարտում գետին, որից յետոյ դադարում են արհեստանոցի աշխատանքները, իսկ գործիքները պահում են: Ջաբանայի զուգարիպութիւն. արհեստանոցի բացումը կատարում է Ռոստոմի մասնակցութեամբ, փակում է, մօտ քսան տարի անց, դարձեալ նրա մասնակցութեամբ:

1916-ին գաղթականներին օգնող Պետրոզրադի կոմիտէի լիազօր Սիրական Տիգրանեանը զնում է այդ գործիքները և փոխադրում Վան՝ այնտեղ արհեստանոց բանալու նոյն կոմիտէի հաւելին, տեղի աշխատուորներին համար:

Ահա՛, այսպիսի աշխատանք և վախճան է ունենում

«Ուարիս» զինագործարանը: «Ուարիս» զինագործարանը, բացի իր կատարած խոշոր աշխատանքից, բարոյական մեծ նշանակութիւն է ունեցել նաև իր շէրքապատի վրա, պրոպագանդի տեսակէտից: Ժողովուրդը տեսնում էր կենդանի յեղափոխական գործը և կապում նրա հետ: Այդ արհեստանոցում էր տեղացին նորոգել տալիս իր հրացանն ու ատրճանակը, և մատչելի զննելով զէնք զնում ինքնապաշտպանութեան համար: Աւելի ևս արժէքաւոր էր նրա բարոյական ազդեցութիւնը, և դեռ երկար տարիներ Ատրպատականի հայը, մասնաւորապէս Թաւրիզցին, կը յիշէ նրա կատարած յեղափոխական մեծ աշխատանքը:

Մի քանի խօսք ևս: Թող ներեն ինձ, թէ ողջ, և թէ՛ նահատակած ընկերները, որոնց իսկական անունները և ազգանունները չեմ յիշել և չեմ գրել: Թող ներել, որ «Դրօշակ»-ի սուղ էջերը թոյլ չեն տալիս գէթ փոքրիկ կենսագրական տեղեկութիւններ տալ նրանց մասին: Այդ թերին կը լրացնենք մի այլ առթիւ:

Թաւրիզ .

ՍԱՐԿՈՆ

# ՇՓՐԵՄԻ ԱՐՇԻԻՑ

Հ. Յ. Դանակցութեան պանծալի քուսանամակին ներքած վերջիւումները շարանում, անշուշտ, խոշոր ու պատուաւոր տեղ ունի և եփրեմը՝ Պարսկաստանի յեղափոխութեան անդուզական հերոսը:

Սակայն, պատմական տեսակէտից եփրեմը զեռ չափազանց նոր դէմք է, որպէսզի հնարաւոր լինէր գրել նրա պատմութիւնը ու տալ նրա գործունէութեան անկանխակալ գնահատումը:

Թէ հայ և թէ պարսկական կենքում բարձրաթիւ անձնաւորութիւններ, որոնք գործել են նրա հետ կամ նրա դէմ, դեռ ողջ ու առողջ են, իսկ ժամանակակից պատմական անցուղարձերի մասին եղած յիշողութիւններն այնքան թարմ են ու այնքան դիւրին կերպով կրքեր բորբոքող, որ, բնականօրէն, վաղժամ են դարձնում ամէն փորձ՝ պատմական ուսումնասիրութեան առարկայ դարձնելու Պարսկաստանի յեղափոխութիւնն ու նրա հերոս եփրեմի գործունէութիւնը:

Բայց, միև կողմից, մենք միշտ այնքան անհոգ ու անտարբեր ենք գտնուել զէպի մեր անցեալը, որ անգամ մեր մեծ պատմական դէմքերի կենքում ու գործունէութիւնից մեզ մնացել են միայն հատ ու կտոր յիշողութիւններ... Եւ ահա՛՛ այսօր, երբ ուզում ենք մի յետադարձ հայացք ձգել մեր քառասնամեայ անցեալի վրա, սրտի խորին դառնութեամբ պիտի արձանագրենք, որ մեզ պակասում են բարձրաթիւ էջեր և, թերևս, ամենարժէքաւորներն ու կարևորագոյնները...

Արդե՞օք նոյն տխուր վիճակին չեն հանդիպելու եփրեմն ու նրա պատմաւրջները, և մենք չենք լինելու

պարտազանց զէպի մեր յետնորդները, և թէ՛ այսօր չօգտագործենք ամէն առիթ՝ դրի առնել այն ամենը, ինչ վերաբերում է այդ հերոսին ու նրա հերոսամարտին:

Ահա՛՛ այն դրդիչ գրաքննութիւնը, որ մեզ համակեց, երբ մի երջանիկ պատահականութեան շնորհիւ, առիթ ունեցանք ծանօթանալու եփրեմի մահից յետոյ մնացած նիւթերին:

Ահհարին եղաւ չափակղել ու գրի շառնել այն ամենը, ինչ որ դեռ չի ենթարկուել ժամանակի բարձրաթիւ ազդեցութեան, չի մասնուել անդարձ կորուստի ու մնացել է անձեռնմխելի:

Արդէն ամենաթիւթեմ ծանօթութիւնն իսկ այդ նիւթերին կասկած չէ թողնում, որ մի ինչ որ ձեռք պլերպտել է նրանց մէջ, մինչև մեզ հասնելը, և, թերևս, ամենարժէքաւոր վաւերագրերը պակասում են...


Ինչպէս սասցցենք, դեռ վաղժամ է և միանդամայն անհնարին եփրեմի դիւանը իր ամբողջութեամբ հրատարակութեան տալ, և այդ մեր նպատակից էլ յուրս է: Սակայն, կան նիւթեր արդէն պատմութեան դիրկը անցած անձնաւորութիւնների մասին, կան տեսչներ, որոնք չափազանց բնորոշ են մեր ազգային-հասարակական կենքի համար. այդ ամենը հրապարակելու համար չկայ ո՛չ մի արեղեք:

\* \* \*

Երբ դուք պրպտում էք հարիւրաւոր նամակներ և ձեր աչքի առջևով անցնում են իրար ետևից բազմաթիւ դէմքեր, որոնք խօսում, դատում, քննութեան են

առնում գործող անձնատրութիւններն ու երեւոյթները, և ապա դատապարտում են կամ զօվարանում, իւրաքանչիւրն իւրապատուկ ձեւերով ու տարբեր մղումներով, — ձեր առջև ակամայ բացւում են նրանց սրտի ու մտքի ամենանորր թելերը, նրանց «սրբութեան սրբոցը»...

տոմին ուղարկելու շնորհատրանճներ թէ ոչ, միայն տխուր փաստը այն է, որ նա շուտով դարձաւ Դաշնակցութեան կատաղի հակառակորդներից մէկը, անվերջ խռովութիւնների պատճառ դարձաւ պարսկահայութեան հասարակական կեանքի մէջ, և նրա աստղը մարեց...



Ե Փ Ր Ե Մ

Ահա՛ ձեզ, օրինակ, մէկը:

Դեռ երէկ նա Հ. Յ. Դաշնակցութեան կառկառուն ղէմքերից էր և մեծ յոյսեր ներշնչում թէ կուսակցական և թէ ընդհանրապէս հայութեան լայն շրջաններում: Ռոստոմը իր մի նամակում (1909թ.), ուղղած նրան, գրում էր. «... Ստացած կը լինէք թաւրիղից ուղարկած մեր շնորհատրութիւնները\*): Շատ կուզենայի մի այդպիսի շնորհատրութիւն էլ զեզ ուղարկել սպասում եմ»:

Մեզ յայտնի է, թէ այդ անձը առիթ տւեց Ռոս-

Ահա՛ մի ուրիշը:

Սա երկրորդական դերակատարներից է, սակայն, միշտ վայելել է Եփրեմի Հովանատրութիւնը, միշտ հայցել է նրա միջամտութիւնը իր անձնական գործերը կարգաւորելու համար. իր նամակների մէջ միշտ արտայայտում է մտերմական ջերմ գզացումներ դէպի Եփրեմն ու նրա գործը. — իսկ այսօր մոռացութեան է տւել ամէն սրբութիւն և դարձել բոլշևիկեան գործակալ...

Ահ, որքա՛ն երկար է այս բացասական ղէմքերի շարանը... Սար ու ձոր կայ նրանց անցեալի ու ներկայի միջև... Թերեւս յուսահատական լինէր ու ամուլ յոռոտեութեան գոհ դառնայինք, եթէ սրանց կողքին

\*) Խօսքը Եփրեմի տարած յաղթութիւնների մասին է:

չտեսնէինք նաև մի շարք լուսաւոր դէմքեր, որը թէ մեռած:

Յիշենք վերջիններից մի քանիսին:

Ահա՛ ամենից առաջ մեր սիրելի ու անդուգական Ռոստոմը: Նրա նամակներից միայն երկուսն ունինք մեր ձեռքի տակ: Երկուսն էլ կարճ ու կարուկ: Սա- կայն, և այնպէս, նրանց մէջ Ռոստոմը արտացոլած է իր ամբողջ հոգով՝ իր յեղափոխական գաղափարա- կան վեհ մտածուհիներով ու հայեացքներով, իր միշտ մեղմ ու հմայիչ հիւմորով... Կարողւմ ես, և թուում է, թէ Ռոստոմը կանգնած է առջևդ իր դիւթական ժպիտը երեսին և խօսում է, ըստ իր սովորութեան, որպէս հայր որդու հետ... Հետեւեալ կտորը, մանա- ւանդ, շատ բնորոշ է Ռոստոմի յեղափոխական հայ- եացքների համար:

«Բոլոր այստեղի ընկերների կողմից, — գրում է ևս Եփրեմիմ Թաւրիզից, 909թ. յուլիս 26-ին, — սըր- տանց շնորհաւորում եմք քո յաջողութիւնները. միայն թէ անյարմար պաշտօն է\*» վիճակիւն էնք: Լաւ կը լինի. եթէ յեղափոխական խառը դրութիւնը անցնելու լինի և քիչ թէ շատ խաղաղ կեանք ստեղծւելու լինի. հրատարական տաս ոստիկանապետի պաշտօնից»...

Ոչնչա՛յի լատիւնական են այս սողորը Ռոստոմի համար: Յեղափոխական ու ոստիկանապետ, — անհաստ գաղափարներ էին 80-90ական թվականների յեղափո- խական գործիչների համար: Ռոստոմը սնւել էր այդ ժամանակաշրջանի իդէալներով և այժմ տալիս էր տուրքը յեղափոխական այդ աւանդութիւններին, թէ և նա ի բնէ առհասարակ, օտուած էր բացառիկ հոտա- ոտութեամբ ըմբռնելու վայրկեանի իրական պահանջնե- րը և նրանց համապատասխան գնահատելու երեւոյթ- ները:

Ահա՛ և մեր բարեհամբոյր, հեղ, խոհեմ ու խոհուն Յովնան Դաւթեանը: Անկարելի է կարգալ նրա նա- մակը և չյուզւել: Դաշնակցութեան լուսազոյն աւան- դութիւններն էին մարմնացել նրա ջինջ ու քնքրոշ հո- գու մէջ, և նա ողբում է կենդանի պահել այն իր բոլոր կուսակցական ընկերների մէջ:

Խօսքը տանք իրեն. յիշենցենք միայն, որ նրա նամակը գրւած է Թաւրիզից Եփրեմիմին 1910թ. դեկտ. 25-ին, այսինքն՝ պարսկական յեղափոխութեան ամեն- նածանը ըլաննում, երբ բոլոր յետաջրական ու մեծ ուժերը ծառայել էին յեղափոխութեան և Եփրեմիմի դէմ, երբ պարսկահայութիւնը գտնւում էր կտորածի սպառնալիքի տակ և երբ, միւս կողմից, Կովկասում տիրահաշակ քննիչ Լըժիքը շարունակում էր նօսրա- ցնել Դաշնակցութեան շարքերը բազմաթիւ ձեռքակա- րութիւններով: Այս ամենը անդրադարձել էր Պարսկաս- տանի դաշնակցական մարմինների կազմի ու գործու- նելութեան վրա և անհրաժեշտ էր մի հեղինակաւոր ձեռքի միջամտութիւնը — սեղմելու կազմակերպչա- կան շարքերն ու համերաշխ գործակցութեան հրաւի- բելու: Եւ ահա՛ հնչում է Յունանի հմայիչ ձայնը: — «Մեքոնց ասա՛, գրում է նա Եփրեմիմ, որ շատ ձևական չլինին. գանազան իրաւունքների ու արձու- նութեանց ետևից էլ չընկնեն: Որտեղ կենդանի գործ

կայ, պէտք է կատարել. դաշնակցական այս լայն ու սիրուն տրադիցիան պէտք է պահպանել. — ամենից առաջ գործը»:

Սակայն, ծանր ու պատասխանատու խնդիրներում Յունանը պարտադիր է համարւում ընկերական խորհրդ- դակցութիւնը:

«Քաղաքական փափուկ խնդիրներում, շարունա- կում է նա, մամաւանդ, երբ ամբողջ կուսակցութեան յանձնառութիւնը կայ, բնական է, ընկերների համա- ձայնութիւնը պէտք է ստանալ. խնդիրը այս դէպքում ձևական բնատրուքիւն չունի և իրաւունքի էլ հարց չկայ: Ընկերները պատասխանատուութեանը շատ գոյշ պիտի վերաբերեն»:

Այսպէս, Եփրեմիմի դիւանը պրպտելիս, ձեր առջև պատկերանում է մի ամբողջ շարք ծանօթ ու անծանօթ դէմքերի, իրենց մեծ ու փոքր գործերով, իրենց վեհ կամ ստոր հոգիներով, իրենց լուսազոյն ձգտումներով ու վատթարագոյն կրքերով: Մտիկ անցեալի կեանքն է ետում ու այնկոծւում ձեր առաջ, և դուք յուզում էք նրա դերակատարների հետ վերապրելով անցած- գնացածը:

Սակայն, այդ խայտաբղտ դէմքերի ու դէպքերի խորքերից միշտ ծառայած կանգնած է ձեր աչքերի առջև Եփրեմը, որպէս մի հսկայ, որպէս մի հերոս, որ անյուզող կամքով դեկավարում է փոթորկոտ կեանքի ընթացքը, լաւ ըմբռնելով նրա իրական պա- հանջները և խոր դիտակցելով թէ՛ իր պատասխանա- տուութիւնն և թէ՛ կատարած գործի վեհութիւնը:

Միշտ խորատուգլած անթիւ գործերի ու հոգւերի մէջ, նա ո՛չ գանգատւում է, ո՛չ քարոզում կամ խրա- տում, ոչ էլ պարծենում է իր արածով, (հաւազի՛ւտ դիմ հայի մէջ): Նա միայն հրամայում, կարգադրում ու պայքարում է առանց մի վայրկեան անգամ թուլնա- լու կամ տեղի տալու բազմաթիւ անօրինակ արդէլք- ների առջև...

Նայեցէ՛ք, թէ ի՛նչ պայմանների մէջ է գործում այդ հսկան:

Ինչքան մուժ ու յետադէմ ուժեր կան, ամենքը դուրս են եկել նրա ու նրա մեծ գործի դէմ... Երկրում և երկրից դուրս ամենուրեք՝ ակնյայտի թէ դաշտնի որոգայթներ են լարւում նրա անձնատրութեան դէմ, ճշնում վարկարեկել և անզամ մատնել նրան թշնա- մուն... Պրոտիպաստինն ու սև սաղարանները, բամբա- սանքն ու զրպարտութիւնը, նախանձն ու փոքրոգու- թիւնը թև առած՝ պար են բռնել նրա շուրջը՝ պատ- րաստ ամէն վայրկեան կլանելու հերոսին և նրա հետ միասին նրա հերոսական գործը... Միւս կողմից՝ չեղ- կիլը մատնած է կատարեալ անարխիայի ու տիրում է մտքերի չփոթութիւն» — այսպէս է բնորոշում, օ- րինակ, Սալմաստի գործիչ Սամսոնը 1910թ. նոյեմբե- րին Եփրեմիմ գրած մի նամակում: Այսպիսի վկայու- թիւնները բազմաթիւ են:

«Այժմ, գրում է մէկ ուրիշը, նոյն 1910թ. յուլիս 21-ին, աւելի դժուարին կացութեան մէջ է մտնուկ Պարսկաստանը»: — սպա թւում է մի առ մի Ասրպա- տականի բոլոր գաւառներում տեղի ունեցող մասնակի պատամարկան կռիւները, ընդգծում ուռանների ու տաճիկների կատարած պրոտիպաստին գործողութիւն-

\*) Ընդգծումները ամեն տեղ մերմ են:

ները... Բայց ամենից զազրելին էլի մեր հայկական շրջաններից է բխում...

Ահա՛ ինչ ենք կարողում մի նամակում, որ գրւած է Եփրեմին 1910թ. հոկտ. 27-ին, ինդիկից.

«... Զգիտեմ «Երիտասարդ Հայաստան»-ը կարգացել է՞ս քէ՞ ոչ. այդ... հնչակեանները քա դէմ մի յօդւած են գրել և վերջումն էլ աւելացրել են՝ «Եթէ Եփրեմը հրաժարակամ չտայ և չհեռանայ Պարսկաստանից, մենք ստիպւած կը լինենք նրա մութ անցեալը բաց անել. ինքը գիտէ թէ ինչ ենք ակնարկում»):

Այս ամենը բնկերներն ու բարեկամները տեսնում են ու, խիստ մտահոգւած, անընդհատ նախազգուշացնում են Եփրեմին, աղբւրսում շրջանայեց լինել, միջոցներ ձեռք առնել իր կեանքը ապահովելու համար: Ետևորը նոյնիսկ խորհուրդ են տալիս հետանալ արտա-

\*)Յօդւածագիրը, «մութ անցեալ» ասելով, նկատի ունի Եփրեմի մասնակցութիւնը Ս. Կուկունցի մատմական արշաւանքին, որ, ինչպէս յայտնի է, անյաբողութեան մասնուցեց և մասնակցողները դատապարտեցին ախարի Սիբիր, իբրև քրէական յանցարարներ... Միայն կոյր թայփայկան հոգեբանութեամբ տարածները համար այդ լուսաւոր գաղափարակամ ու բուռն հայրենասիրական զգացումով կատարած գործը կարող է անւանել «մութ»:

սահման: Սակայն, նա անհող է և, վստահ իր ուժին, շարունակում է գործել... Մահն ու երկիւղը յեղափոխական մարտիկի համար գոյութիւն չունին... Նա լաւ գիտէր, որ սկսւած կռիւն ու պայքարը, որքան էլ դատան լինեն, անհնար է կիսատ թողնել...

Եւ երբեք չլքեց, երբեք չվարանցեց...

Ապշեցուցիչ է միտմամանակ հմայիչ է, թէ ինչպէս այդ պարզ հայ յեղափոխական հայրուհի, հզոր դիկտատորի դերում, տարիներ շարունակ ամուր ձեռքով կառավարեց մի յետամնաց երկիր, խորտակեց մտնանալ ազգարնակութեան համալը դարաւոր սովորութիւնները, ստեղծեց նոր հասարակական-քաղաքական կարգեր ու բաց արաւ լայն ճանապարհ երկրի վերածնունդի համար:

Անշուշտ, իւրաքանչիւր հայ մարդ, որ ունի ազգային արժանապատուութեան զգացում, չի կարող չհրճուել ու չհիանալ Եփրեմով ու նրա կատարած մեծ գործով: Նա հիմք դրեց Պարսկաստանի վերածնութեան, մասնակից արաւ պարսկահայութիւնը երկրի շինարար ու ստեղծագործող աշխատանքներին յօդուս համայն ազգայնակութեան:

Փա՛ռք Եփրեմին և նրա անմահ յիշատակին:

QUIDAM

ժընել.

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԷՁ

(Համառօտ ակնարկ Բաւասմամեայ անցեալի վրայ)

Հ. Յ. Դաշնակցութեան քառասնամեակի առթիւ, երբ քննական ակնարկ մը կը նետենք հայ ազատագրական յեղափոխական շարժման պատմութեան վրայ, մեզի ներկայացող կարևորագոյն խնդիրներէն մէկը (եթէ ոչ ամենէն կարևորը) կը հանդիսանայ ընդհանուր ապստամբութեան խնդիրը, որ կարօտ է քննութեան և վերլուծման:

Պատմական խիստ կարևոր նշանակութիւն ունի դիտնալ թէ հայկական ազատագրական շարժումը ի՞նչ ելոյթներ ունեցաւ և ի՞նչ էին անոնց բնոյթը: Յոյցե՞ր էին, ապստամբութի՞ւն, թէ՞ ինքնապաշտպանութիւն. և ի՞նչ պատճառներով:

Այս համառօտ ակնարկին մէջ պիտի սահմանափակուինք ընդհանուր ապստամբութեան խնդիրը քննելով, աւելի լայն ուսումնասիրութիւն մը ապագային կը մնայ:

1890-ին, Հ. Յ. Դաշնակցութիւնը հրապարակ կուզար հիմնական նպատակով մը, — հայոց ազատագրական գործը գլուխ բերելու: Եւ այս համազգային նպատակին հասնելու համար՝ կենդանիներէ երեք հիմնական միջոցներ, որոնք համազգային բնոյթ ունէին: 1) Ձէնքի քաղաքականութիւնը, որ կը նշանակէր սեփական

ոյժի կարևորութիւնը շարժման մէջ. 2) Ազգային-յեղափոխական բոլոր ուժերու կեդրոնացումը՝ միևնոյն գործելակերպի շուրջ. 3) Ընդհանուր ու կազմակերպւած ապստամբութիւն՝ ընդդէմ թրքական բռնակալութեան:

Հ. Յ. Դաշնակցութիւնը համազգային բնոյթով (նկատի առէք 1890-ի առաջին թուացիկը, ուր Դաշնակցութիւնը իր կողմ կուղղէր հայ ժողովուրդի բոլոր խաւերուն) հրապարակ կուզար ճիշտ այն շրջանին, երբ տեղի կուենային Պոլսոյ, էրզրումի բռնկումներն ու ցոյցերը, և Կոնկոնենանի արշաւանքը կարճապահէր Ռուսական Հայաստանի սահմաններուն վրայ: Այս շրջանը հայ յեղափոխութեան գէնքի գործածութեան այրուքների շրջանն է: Ետտեղն այդ բռնկումները կը նկատէին ապստամբութիւն մը. անոնց կարևորութիւնը չէին կրնար սահմանափակել իրենց տեղական բնոյթով և ցոյցական արժէքով: Ձէնքի առաջին ձայներն էին, որոնց արժէքը ընդհանրութեան կողմէ կը չափազանցէր:

Սակայն, Հ. Յ. Դաշնակցութեան նորակազմ դեկամբար մարտիկը եղած ոգևորութիւնը չէր բաժնէր: Ուրախութեամբ դիմաւորելով տեղի ունեցած շար-

ժուճանքը, որպէս զարթօնքի նշան, որպէս ըմբոստ-  
կան տրամադրութեան ապացոյցներ, — միևնույն ժա-  
մանակ կը դիտակցէր թէ՛ զինական ապստամբութիւնը  
պէտք է տեղի ունենար աւելի լաւ կազմակերպւած և  
աւելի լայն սահմաններու մէջ, բաղձալի նպատակին  
հասնելու համար: Այս վերապահումի առաջին փաստը  
մենք կը գտնենք այն ճիզին մէջ, որ Դաշնակցութեան  
հիմնադիրները թափեցին՝ արդիւնու Կուղուսնանի ար-  
շաւանքը, որ, սակայն, տեղի ունեցաւ հայրենասիրա-  
կան բուն մղումներէ զբւրւած:

Դաշնակցութեան կազմութեան օրերէն մինչև 1892ի  
Ա. Ընդհանուր Ժողովը, կուսակցութեան ձևակերպած  
որոշումներէն կերևի որ ընդհանուր ապստամբութեան  
խնդիրը հիմնական կարևորութիւն մը ունեցած է հայ  
յեղափոխութեան հիմնադիրներու աչքին: Հ. Յ. Դաշ-  
նակցութեան առաջին ծրագիրը, որ ձևակերպւած էր  
հիմնադրութեան օրերուն և աւելի մշակւած առաջին  
երկու տարւան փորձի շրջանին, հայոց ազատագրու-  
թեան նպատակը որոշէին յետոյ, այդ նպատակին հաս-  
նելու համար՝ ապստամբութեան խնդիրն ալ ձևակեր-  
պած է:

Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը (մշակւած և  
վաւերացւած 1892-ի Ա. Ընդհանուր Ժողովի կողմէ),  
քննութեան առնելով Թիւրքիոյ տնտեսական դրութիւ-  
նը, դասակարգային յարաբերութիւնները, տնտեսա-  
կան կեղեքումներն ու քաղաքական անիրաւունութիւնը՝  
կեզրակացնէ:

«Այս ընդհանուր տեսութենէն պարզ է, թէ քիւր-  
տաց Հայաստանի դուրսիւնը միանգամայն սարսափելի  
է շատ կողմերէ: Ազատի ժողովուրդը այդ անտանելի  
դուրսեմէն, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք  
թալլ տան անոր մտնել ընդհանուր մարդկութեան գար-  
գացման շաւղի մէջ՝ կարելի է միայն յեղափոխու-  
թիւնով:»

Որով յեղափոխութեան նպատակն է՝ «ապստամ-  
բութեան միջոցով քիւրտաց Հայաստանի մէջ ձեռք  
լերել քաղաքական և տնտեսական ազատութիւն»:

Այս հիմնական պարտականութեան հրապարակ  
եկող Դաշնակցութիւնը հոգեբանական նպատակուր մը թը-  
նորդաւ մը ունէր: Հայ ժողովուրդն արթնցած էր, լա-  
ւատութիւնը համակած էր բոլորին, մասնաւոր փորձ-  
նական կենսի դժուարութիւնները տակաւին կշիռի մէջ  
առնւած չէին: Փոքր միջոցներով, մեծ յաղողութիւն-  
ներ ձեռք բերելու նախնական տրամադրութիւնները  
տիրական էին: Սակայն, հոգեբանական այս նպատա-  
ւոր մթնոլորտէն դուրս, հայ ժողովուրդը Ֆիդիքապէս  
(կուսուրու ընդունակութեամբ) և զինապէս (անդէն էր  
հայ ժողովուրդը) նպատարաստ էր բոլորովին և այդ  
ուղղութեամբ Հ. Յ. Դաշնակցութեան խնդիրները կը  
գտնէր մեծ դժուարութիւններու առջև:

Հայ ազատագրական շարժումը իր նախապատրաս-  
տական անցեալը չունէր (կուրի և ապստամբութեան  
տեսակէտներէն ժուռեցած): Անփորձ ու անդէմ՝ սլաւո-  
նագրի բեմը կը նետէր հայ յեղափոխութիւնը, ու ա-  
ռաջին օրէն՝ հարկադրւած կըլլար վճռական ճակատա-  
մարտը ընդունել: Մինչդեռ, իրական տեսանքերը կը  
թելադրէին նախապատրաստական շրջան մը բոլորել:

Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ իրապաշտ ու պատասխա-  
նատու, մէկ կողմէ նկատի կ'առնէր յեղափոխութեան  
միջովայն և ներկայացած դժուարութիւնները, միւս  
կողմէ՝ կը կարծէր շատ շուտով լրացնել նախապատ-  
րաստութիւնները և պատրաստ գտնուի ընդհանուր ա-  
պստամբութեան մը համար: Դաշնակցութիւնը վրճ-  
ոսաբար կ'անգնած կը մնար ընդհանուր ապստամբու-  
թեան տեսակէտի վրա, բայց միևնույն ժամանակ գգոյշ  
էր և մեծ կարևորութիւն կուտար զինական պատրաս-  
տութեան: Այս գոյալիճակը լիովին փաստող Թուրքիի  
«Դրօշակ» մը հրատարակուեցաւ 1891-ին, Դաշնակցու-  
թեան հիմնադրութիւնէն մէկ տարի յետոյ: Այդ յատ-  
կանչական փաստաթուղթի մէկ քանի կարևոր կէտերը  
կարծէ վկայութեան բերել:

Թուրքիի («Դրօշակ»-ի Թուրքիի Թերթը, № 3,  
1891) վերնապէրն է «Պատրաստութիւն», ուր խմբագրու-  
թիւնը կը գրէ.

«Շարժումն ընդհանուր է, անյաղքելի: Ով գզաց-  
մունք ունի՝ արձագանգ է տալիս այդ ընդհանուր շարժ-  
մանը: . . . Դաշնակցութեան գործակալները անդա-  
դար հարցնում են մեզ. «Ի՞նչ պատասխանել այժմ  
գրգռւած ժողովուրդին, ի՞նչ ելք պետք է տալ նրա վեհ  
գզացմունքին»:

«Եւ ան ալ մինչև «Դրօշակ»-ի հրատարակելը, ըս-  
տիպաւ եմք ներկայ թուրքի քերթն ուզով բոլոր  
հայրենասէրներին:

«Հայ ժողովուրդը անսահման անձնիրութեան ա-  
պացոյցներ է տալիս. դա արդէն անհերքելի է:

«Բայց լոկ անձնիրութիւնը բաւական չէ այդ մեծ  
ու սուրբ գործի համար, որ ձեռնարկի է հայ ժողո-  
վուրդը:

«Անհրաժեշտ է լինել հեռատես և գզոյշ:  
«Պէտք է խնայողութեամբ գործ դնել մեր ունե-  
ցած ուժերը:

«Եւ ան ալ ինչ եմք հասկանում «գզոյշ և հեռատես»  
լինել անելով:

«Կը դժարամեք իրագործելու մեր վեհ նպատա-  
կը, եթէ մեր ամէն մի խայր որոշուած և հաշուած չլինի  
վաղօրօք: Իսկ յաղթարթիւնը կը տանեմք այն ժամա-  
նակ, երբ մեր ուժերը խմբեմք մի ընդհանուր դրօշակի  
տակ, մեր կամքը հպատակեցնեմք մի որոշ կարգի, ան-  
հրաժեշտ դիսցիպլինայի:

«Բայց եթէ գործեմք բաժան բաժան, առանց մի-  
միանց արածի իմանալու, եթէ ամէն մի իւր մը ունե-  
ցայ իր առանձին ծրագիրը, իր կամքով որոշի գործե-  
լու եղանակն ու ժամանակը, սուրբ գործը կեճարակի  
վտանգի: Ազերսում եմք ամէն մի հայրենասէր հայի  
այս յօսքերը դրոշմել իր սրտում:

«Թող ամէն մի հայրենակ կենտրոն շարունակ  
պատրաստի եռանդով, հաստատուն կամքով, բայց  
ընդհանուր գործ սկսելու համար թափ սպասի մի ընդ-  
հանուր հրաւերի: Իսկ Դաշնակցութիւնը կը տայ այդ  
հրաւերը, որով ևս ցոյց կը տայ և ընդհանուր ապս-  
տամբութեան ժամանակը Տանկա-Հայաստանում:

«Մեր գզուշութիւնը ո՛չ վնասույն նշան է, ո՛չ թու-  
լութեան և ո՛չ մանաւաճի՝ երկիրի: Մեմք միայն իսկա-



ցիւր-իւմ եմք քարգում յամուսն սրբազան գործի անպայաման յարգութեան :

Այս թուրքիկի բովանդակութենէն, ինչպէս նաև առաջին ծրագրէն եղած մէջբերումները լիովին ցոյց կուտան, որ Դաշնակցութիւնը կը հետապնդէր ընդհանուր ապստամբութեան մը ծրագիրը և ըստ ամենայնի կը զգուշանար անկատ ու փորձիկ ձեռնարկներէ :

Արդ, հետաքրքրական է գիտնալ թէ՛ առաջին տասնամեակին, ինչո՞ւ տեղի չունեցաւ ընդհանուր ապստամբութիւն մը, և թէ՛, ինչո՞ւ յետագայ դէպքերը ընթացան այն հոռւով, ինչ որ պատմութիւնն արձանագրեց :

\* \* \*

Հ. Յ. Դաշնակցութիւնը արագորէն ծաւալեցաւ Հայաստանի երկու հատուածներուն մէջ : Ու երբ կուսակցութեան կազմակերպական արմատները սկսան արմատաւ ժողովուրդի մէջ, գործնական կենսիկ ընթացքին, Դաշնակցութիւնը սկսաւ հաշի առնել ցուրտ խրակահունդները : Թշնամին շատ զօրաւոր էր, իսկ հայ ժողովուրդը՝ անպատրաստ : Անկէ գատ, որքան զօրացաւ Դաշնակցութեան կազմակերպութիւնը, նոյնքան ըացորոշ եղաւ, որ բոլոր դասակարգերը ազգային յեղափոխութեան հետ չէին : Դաշնակցութիւնը արմատ կը բռնէր հայ աշխատաւորական զանդաւաններուն մէջ և նորախիզ կը գտնէր հայ յեղափոխական մտաւորականութեան ջուր : Հայ հարուստ դասակարգը, կղերը և թուլամորթ ու հակայեղափոխական տարրերը մէջ կողմ կը քաշէին, կամ յեղափոխութեան դէմ ճակատ կը յարգարէին : Այս պայմաններուն մէջ, տարէ տարի, Դաշնակցութեան զործը կը բարդանար, ու փորձառութիւնը ցոյց կուտար որ ապստամբութեան գործնական լուրջ պատրաստութիւն կը պահանջէր, քան կը նախատեսէին սկզբնական տարիներուն :

Հայ ազատագրական շարժումը այս մտահոգութիւններու և մտածումներու մէջ էր, երբ պայթեցաւ Սասնոյ մահակի ապստամբութիւնը (1894 ին), որ սաստնցիներու համար իսկապէս ըմբոստութիւն մըն էր՝ տուրք չտալու, և շրջակայ զիւրտ աշիւրները հեռու վանելու : Մինչդեռ դուրսէն դացած ղեկավարներու համար, (Մուրաս), քաղաքական ցոյց մըն էր, հայկական հարցը արժանաւերջու մտահոգութեանը : Հնչակեան կուսակցութիւնը միայն տասը դէնք կը ցանցէր հարցնել Սասուն, ինչ որ ցոյց կուտայ թէ՛ որքան թեթիւ մտեցած էին ժողովուրդական բռնկումին :

Այս դէպքը կուզար աւելի շեշտելու Դաշնակցութեան մտահոգութիւնները, լրջորէն պատրաստելու, ընդհանուր ապստամբութեան մը պարագային անակնկալի ձգալու : Ու այդ բանի համար Դաշնակցութիւնը պէտք ունէր, 1) գէնքի, և 2) վարժեցնել ժողովուրդը կռիւ :

Նախ ըսենք, որ Հայաստանը կը ներկայացնէր աշխարհի ամենէն աննպաստ վայրը, որ կարելի ըլլար դիմել ղերութեամբ և յարատրէն : Այս աշխարհագրական դժբարութեան վրա կանխար դրամի բացակայութիւնը : Հայ յեղափոխութիւնը դիմելու համար, Դաշնակցութիւնը պէտք ունէր միլիոններու : Ունեւոր դասակարգը ամուր փակեց իր դրամարկի դռները : Օտար

պետութիւնները դրամով և դէնքով չօգնեցին : Մնացին Դաշնակցութեան կուսակցական տուրքերը և նշէրները : Ծով կարիքի դիմաց՝ կաթիկներ : Ու Դաշնակցութեան պատրաստութիւններն ընթացան տասը կամ քսան դէնքով, արտակարգ դէպքերուն՝ մինչև հարիւր դէնք : Բաղձանքներն ընդարձակ, շարժումները խիստ պատասխանատու, իսկ միջոցները՝ սահմանափակ :

Թիւրքերը, յեղափոխութեան առաջին օրերէն ըսկած, նախորշած ծրագրով մը, միշտ նախարարական եղան և թոյլ չտուին, որ յեղափոխական ուժերը կեդրոնանան և ամուր ղերքեր պատրաստեն շարժման համար : Աւելին, 1895ին և 1896ին, թրքական կառավարութիւնը ձեռնարկեց հայութեան արմատական բնօրինակ : Հայ յեղափոխական կազմակերպութիւնները, այդ վճռական ճակատամարտին, բոլորովին անպատրաստ էին ընդհանուր ապստամբութեան պատասխանելու թրքական շարժումին : Անցած հինգ տարիներու պատրաստութիւններն ու փորձառութիւնները օգնած էին միայն այն չափով, որ շարք մը վայրեր կը ցան դրամի ինքնապաշտպանութեան և փրկելեցան նազապոյն կորուստներով :

Մանր փորձութեան շրջան էր 1895-96ի փոթորիկը հայկական ազատագրական շարժման համար : Այդ ծանրը հարւածը հայ երիտասարդ յեղափոխութեան մէջ կը կտրէր : Վերջնականօրէն հրապարակէն քաշեցան այլ յեղափոխական կազմակերպութիւնները և մէջտեղ մընաց միայն Հ. Յ. Դաշնակցութիւնը :

Հայ յեղափոխութեան գործելակերպը խիստ կարևոր փոփոխութեան մը կենթարկէր :

Ընդհանուր յուսալքման այդ շրջանին, Դաշնակցութիւնը կամփոփէր իր ամբողջ ուժը, կուրծք տալու տեղատուութեան, և յեղափոխական զանի մը խիզախ հարւածներով, զգեստած բազմութիւններու կորովը կը գտնէր բարձրացնել, երկրի մէջ ծայրէն միւսը հնչեցնելով նոր կարգախօս մը, — ինքնապաշտպանութիւն : Ինքնապաշտպանութեան տեսակէտը, դերագնացապէս 95 է շարժելու թելադրանքներէն ծնունդ առաւ և ստացաւ առաջնակարգ նշանակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան ընթացքին, մեծ մասով, փոխարինելով ընդհանուր ապստամբութեան ծրագիրը : 95-96ի դէպքերը ցոյց տուին, որ ընդհանուր ապստամբութեան համար, երկար տարիներու աշխատանք և դիմական պատրաստութիւն հարկաւոր էր :

Դաշնակցութիւնը, փաստօրէն, 1895 ի կտորածներէն յետոյ, երկրի ներքը կը սկսէր հայ յեղափոխութեան այր ու բէն : Կորովի և խիզախ անհատներու թիւը կուենաւոր : Անհատական ջանքերը հետզհետէ ձև կը ստանար և կը դառնար Փետառական խիզախ խումբ մը : Ու Դաշնակցութիւնը իր ընդարձակ ցանցի միջոցաւ կը ձգտէր ոչ միայն դիմել ժողովուրդը, այլ և անոր վարժեցնել խիզախութեան, ճիշտ Փետառիներու օրինակով : Այս արդէն, աստիճանական գարգացման կը կարօտէր, ու կը պահանջէր երկար տարիներու տեսական աշխատանք : Ընդհանուր ապստամբութիւնը կը դառնար հեռուոր նպատակ մը :

Այս ընդհանուր յուսալքումներէն յետոյ, երբ 1898ին տեղի կունենար Դաշնակցութեան Երկրորդ

Ընդհանուր ժողովը, գլխաւոր հարցը ու կը ներկայա- նար, յեղափոխական գործելակերպի խնդրին էր, որ զինուժեան առնւեցաւ: 1898ի Ընդհանուր ժողովի ուրուումներէն և արձանագրութիւններէն կերևի, որ Եր- կրի ինքնապաշտպանութեան խնդրը առաջնակարգ նշանակութիւն ստացած էր: Ինքնապաշտպանութեան նպատակով զէնք ու զինամթերք պիտի զրկէր Հայաս- տան, զինատար խումբեր պիտի անցնէին սահմանը: Այդ զինատար խումբերը, միևնույն ժամանակ, պիտի ներկէին ինքնապաշտպանութեան գործին, երբ ան- հրաժեշտ պարագաները ստիպէին: Երկրի ներքը պիտի կազմակերպէին տեղական խումբեր, ոմանք փախստա- կան, ոմանք անչարժ ու գաղտնի: Յեղափոխական կազ- մակերպութիւնը չմտնեց հարւածներով պիտի պատ- ժէր դահիճներն ու դաւաճանները: Իսկ ժողովրդական շարժման մէջ՝ նախալարձակ չպիտի ըլլար, այլ իր ու- շաղրութիւնը պիտի կեդրոնացնէր կազմակերպութեան լայն ծաւալման և սպառազինման վրա: Ու եթէ թիւրք կառավարութիւնն ու խումբանը յարձակողական քայլեր առնէին, փախստական խումբերն ու կազմակերպած ժողովուրդը պիտի ղեկմէին ինքնապաշտպանութեան, որ անշուշտ, այս բերումով, տեղական բնոյթ պիտի ստանար:

Հ. Յ. Դաշնակցութիւնը ձեռնարկելով Հայ ժողո- վուրդի ինքնապաշտպանութեան մեծ աշխատանքին, կը յուսար աստիճանաբար Հասնել հետեւեալ նպատակնե- րուն: 1) Զէնք կեդրոնացնել Երկրի, զուրտէն կամ ներ- սէն զննել: 2) Ֆետայական վարժ խումբեր հասցնել կարևոր կեդրոններ՝ տեղական խումբերը զօրացնելու համար: 3) Պատժողական և ինքնապաշտպանողական շարժումներով՝ ժողովրդական լայն զանգաւածները բըռ- նութեան ղէմ ծառայակն և վարժեցնել ժողովուրդը, որ իր իրաւունքները պահպանէ: 4) Այս գործունէութեան աստիճանական զարգացումով՝ Հասնել տեղ մը, ուր կազմակերպութիւնը իր զինական և բարոյական ուժով ոչ միայն յաղդի ինքնապաշտպանութեան գործին մէջ, այլ տարերային թափ ստանալու պարագային, ինքնա- պաշտպանութենէն անցնի ընդհանուր ապստամբու- թեան: Այսպիսով, 1897 էն յետոյ, Դաշնակցութիւնը 7-8 երկար տարիներու պատրաստութիւն մը կը նախա- տեսէր, ընդհանուր ապստամբութեան մը յանգելու հա- մար: Այս պատճառով, ինքնապաշտպանութեան գործը թէ՛ Բիւրօին և թէ՛ Կեդրոնական Կոմիտէներուն կը ներ- կայանար որպէս ամենօրեայ օրակարգ մը և գործելը կընթանային ծրագրած ձևով: Մինչդեռ, ընդհանուր ապստամբութեան խնդիրը կը ներկայանար ընդհանուր գծերով, միշտ ստորոշ ժամանակի թողնւած:

Հ. Յ. Դաշնակցութիւնը ճիշտ ճանապարհը գտած էր: Սակայն, այդ ճանապարհը շատ դժնշակ էր ու երկաթէ կամք կը պահանջէր: Դաշնակցութիւնն ունե- ցաւ այդ կամքը: Բայց յեղափոխական շարքերէն դուրս գտնուող ունեւորն ու հակայեղափոխականը, 95ի զէպ- քերէն յետոյ, ոչ միայն զօգնեցին ազատագրական շարժման, այլ թշնամացան: Ու Դաշնակցութիւնը ըս- տիպակցաւ մէկ զէնք Երկրի հասցնելու համար, մէկ ընտիր Ֆետայի գոհնել: Այսպիսով, Հայ յեղափոխու- թիւնը դրամի և զէնքի պակասը ուզող լրացնել մարդ-

կային Ֆիդիբեկան ուժով, և հազարաւոր ընտիր ու արի ընկերներ կորսնցուց այս ճանապարհին վրա: Այ- սու հանդերձ, պատրաստութիւնները շատ դանդաղ ընթացան:

Հայ յեղափոխութեան միշտ պակասցաւ դրամը, ու ասոր հետեւանջով՝ զէնքը: Հայ ժողովուրդի, այսպէս լսենք, վերին խաւը աղապախի յեղափոխութեան մեծու- թիւնը չըմբռնեց և ասոր համապատասխան միջոցներ չարամաղրեց: Դաշնակցութիւնը և չքաւոր Հայ գիւ- ղացիութիւնը քաղցին մարդկային դերագոյն գոհողու- թեան ուղիէն: Ու Դաշնակցութիւնը անցեալ փորձա- ութեանէն օգտուելով, երկար տարիներ մնաց ինքնա- պաշտպանութեան և պարտիզանական խիզախ կռիւնե- րու սահմանին մէջ. և թիւեւութեամբ չմտնեցան լայն- պատրաստից բռնկեցնելու ընդհանուր ապստամբութիւն մը:

\* \* \*

1896էն մինչև 1902ը, մօտ 7 տարւայ տևական աշ- խատանքներէն յետոյ, հետեւեալ ժողովուրդի անձնա- վստահութիւնը վերականգնեցաւ: Դաշնակցութիւնը տիրական կազմակերպութիւն մը կըրցած էր ստեղծել Վանի, Բիթլիսի և Տարօնի շրջաններուն մէջ: Յիշուալ երեք շրջաններու յեղափոխական պատրաստութիւննե- րը տեսնալին ձև մը ստացան: Յեղափոխութեան երթը կը մօտենար ընդհանուր ապստամբութեան: Հ. Յ. Դաշ- նակցութեան Երրորդ Ընդհանուր ժողովի (1903, Սօ- Փիս) արամաղրութիւններն ալ ցոյց կուտան, որ կու- սակցութիւնը մասնակի կռիւններէն և ինքնապաշտպա- նողական դիրքէն՝ կուզէ անցնել ապստամբական լայն շարժման մը: Երկրի ամենէն կարկառուն և պատաս- խանատու ղէմքերէն մէկը, Հրայրը, վճռապէս կան- գնած էր ժողովրդական ընդհանուր ապստամբութեան տեսակէտին վրա, և կը պահանջէր, որ Վանի, Բիթ- լիսի և Տարօնի կազմակերպութիւնները զգուշանան ամէն տեսակ աւելորդ շարժումներէ, ոյժ կուտակեն, ժողովրդական լայն զանգաւածները պատրաստեն և երբ աղբաշնաւը տրել Սասունէն, ապստամբութիւնը բռնկի յիշեալ երեք շրջաններուն մէջ միևնույն ժամանակ: Այս ուղղութեամբ, Հրայրը մեծ աշխատանք կատարած էր: Անձամբ խորհրդակցելու եկած էր Վան և Վարդգէսի հետ համաձայնած էին միատեսակ գործունէութեան մը ծրագրին շուրջ: Ըստ Հրայրին, զեռ քանի մը տա- րիներ ու նախապատրաստական աշխատանքները պիտի շարունակէին, զինամթերումը բաւարար չափի հաս- ցնելու համար: Սակայն, Ֆետայիներէն ոմանք, մաս- նաւորապէս Անդրանիկը, կը մնային պարտիզանական կռիւ տեսակէտին վրա:

Երբ այժմ նկատի կուռնեք Անդրանիկի յուշերը, այդ առթիւ գրւած (1905ին), պարզօրէն կը տեսնեք, որ իր մեղադրանքները Հրայրի հասցէին, աւելի կը մեծցնեն Հրայրի արժանիքը և ցոյց կուտան, որ Հը- րայրը շատ լայն հորիզոն ունեցած է և հեռատեսօրէն գործը ուղած է վարել, մինչդեռ Անդրանիկը ողկուր- ւած է անմիջական փոքրիկ յաղդութիւններով: Այս ներքին տարակարծութիւններէն գատ, կարևոր նշա- նակութիւն ունեցաւ թիւրք կառավարութեան նախա- յարձակ լինելը: Այսպիսով, տակուրի յեղափոխական

պատրաստութիւնները չլրացած, թիւերքեր ձին-ձեռնով, 1904ին, յարձակեցան յեղափոխութեան միջնաբերդին, Սասնոյ վրա: Կուէ խուսափելը կարելի չեղաւ: Սասունը նորէն նետուեցաւ մասնակի ապստամբութեան գիրկը: Վանը, Բիթլիսը և Մշոյ դաշտը չկրցան շարժել: Պէտք է հոս շեշտել, որ Վանի և Բարձրաւանդակի Պատասխանատու Մարտիները ընդհանուր ապստամբութեան հրամանը չունին, նկատի առնելով պատրաստութիւններու անբաւարարութիւնը:

Հրայրը, նման շարժում մը կը նախատեսէր երկու տարի յետոյ, 1905 ի ամռան: Բայց ղեպքերը դահալէժ ընթացան և 1904ին, Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնի երկու անդամները Հրայրն ու Վահանը սպանեցան ապստամբական կռիւներու ընթացքին Սասնոյ մէջ, իսկ երրորդ անդամը, Երևաթը, սպանեցաւ նոյն տարին, առանց Սասուն հասնելու, Արճէշի շրջանին մէջ, զինատար խմբին հետ:

Անշուշտ, Սասնոյ այս ապստամբութիւնը մեծ ցնցում մըն էր. անշուշտ, իրիզախ կռիւները մեծ արձազանդ տւին հայկական երեք նահանգներուն մէջ: Կռիւնները երկարաձուլեցան մինչև ամառ: Պարտիզանական կռիւները փոխադրեցան Մշոյ դաշտը, արշաւանքի ձևով՝ խուճրներ անցան մինչև Ախլաթ, անկէ Այսթամար, ու բազմաթիւ կռիւներէ յետոյ՝ կարեցին սահմանը ղեպի Պարսկաստան և Ռուսաստան: Բայց Սասնոյ մասնակի ապստամբութիւնը յետագեց ընդհանուր ապստամբութեան կարկիւրութիւնը: Սասունը, երկար կռիւներէն յետոյ, ընկճեցաւ. այս անգամ թեթիւ վնասներով (մօտ 700 զոհ): Իսկ միև շրջաններու մէջ յեղափոխական կազմակերպութիւնը կանգուն մնաց և շարունակեց նոր պատրաստութիւններ տեսնել:

Մէկ քանի տարի յետոյ Սահմանադրութիւնը հռչակեցաւ (1908 ին): Ազատագրական շարժումը մտաւ աւելի խաղաղ ճանի մէջ:

Ուրեմն, 1895ի ղեպքերէն մինչև 1915ի Ապրիլեան Եղեռնը, մօտ քսան տարի, Հ. Յ. Դաշնակցութիւնը ըստ ղեքեր պահանջապէս ինքնապաշտպանութեան ճանապարհով և անընդատ պատրաստութիւններ տեսաւ, փորձառութիւններ ձեռք բերաւ, ժողովուրդը կազմակերպեց և վարժեցուց հաւաքական դիմադրութեան: Հայ ժողովուրդը ինքնապաշտպանութեան շնորհիւ շատ անգամ փրկեցաւ: Կառավարութիւնը այլ ևս անզէն ու սարուկ բազմութեան մը դիմացը չէր գտնուէր: Սահյն, գէնջի, միայն գէնջի պակասութեան պատճառով, Դաշնակցութիւնը մեծ ու փոքր բռնկումներէն և մասնակի կռիւներէն՝ չկրցաւ անցնիլ ընդհանուր ապստամբութեան: Մնացեալ կռիւներու արժէքաւորումը արդէն տարբեր խնդիր է, որ չի մտնէր այս քննութեան մէջ:

Տաճկահայաստանէն դուրս, կողմասան Հիյաստանի մէջ ապստամբական բնոյթ կրող կարևոր ղեպք մըն է հայ-թաթարական կռիւը, 1905 ին: Կարժէ քանի մը խօսքով քննութեան առնել յիշեալ կռիւները, անոնց հետիւնը բնորոշելու, երնելով հայկական ապստամբական շարժման տեսակէտներէն:

1905ին, ղեպքերու դասակարգումով, հայ և թուրք-թաթար ժողովուրդները դոյրամարտի բռնեցան իրա-

րու հետ: Թուս կառավարութիւնը դիտողի դերն ստանձնեց արտաքինապէս, իսկ ներքինապէս՝ ազգամիջեան կըռիւր հրահրեց: Թուրք-թաթարական տարրը Կովկասի մէջ տիրական էր, և ռուս տիրապետող ժողովուրդէն յետոյ, կը հանդիսանար բնավայրի տիրապետող ժողովուրդը, սահնակով հարեր տարի առաջին արտոնութիւնները: Թուրքերը հայկական կրեթըը հաշտաչեղով չէին կրնար դիտել: 1905 ի կռիւները պայթեցան թուրքերու նախաարձակումով: Թուրք-թաթարական ազգայնական տարրերը կուզէին ճգմել հայկական նորակազմ ոյժը, հարածել հայ ժողովուրդը անտեսապէս, և վերջնականօրէն սպառնովիլ իրենց դերակալութիւնը Կովկասի մէջ՝ ընդհանրապէս, իսկ հայկական շրջաններուն մէջ՝ մասնաւորապէս:

Հ. Յ. Դաշնակցութիւնը և հայ ժողովուրդը առաջին օրէն հրապարակ եկան ինքնապաշտպանութեան անմիջական մղումով: Մեր կուսակցութեան ինքնապաշտպանողական անցեալ քաղաքականութեան դաստիարակութիւնը արդէն բաւականի պատրաստ դետին հասունեցուցած էր այդ ուղղութեամբ: Հ. Յ. Դ. ն արդէն 15 տարւան անցեալ և հարուստ փորձառութիւն ունէր: Բացի այդ, Կովկաս հաւաքած էին 1890 էն մինչև 1905 թւականը գործող զինուորական ուժերու և ղեկավարներու մեծ մասը: Կարող ենք ըսել, որ Կովկասի և Տաճկահայաստանի յեղափոխական կուռղներու սպայակոչող, այդ ժամանակ, փորձաբարձ էր Կովկաս (Ն. Դուման, Վարդան, Քեռի, Կորիւն, Մուրատ, Սեպուհ, Արմէն-Գարօ, Սմբատ, Դրօ, Կոտոյի Հաճին, Մշեցի Մլօ, Արամ և բազմաթիւ ուրիշներ): Դաշնակցութիւնն, ուրեմն, և վիճակի էր ցուցահանելու իր 15 տարւան կազմակերպած և կուռտակած ոյժը, մանաւանդ որ կովկասեան շրջանի մէջ, այդ թւականներուն, ժողովուրդը կրնար արագօրէն զինել:

Հայ ժողովուրդի ինքնապաշտպանողական կռիւները համաժողովրդական բնոյթ ստացան, ու դարձան հայ-թաթարական պատերազմ մը: Դաշնակցութիւնը իր վրա վերցուց կռիւներու ղեկավարութիւնը և շատ տեղերու մէջ անցաւ հակալարձակողականի: Դեպքերը իմբնապաշտպանութեան մեղ ստիմուսէն դուրս եկան, տարերային ոյժը աւելցաւ և հայկական ընդհանուր ապստամբութեան մը կերպարանքը ստացաւ: Հայ ժողովուրդը կը բռնատանար թուրք-թաթարական տարրի տիրապետութեան և գերակալութեան դէմ. և գէնջով իր տեղն ու դիրքը կը ճշտէր Կովկասի մէջ:

Ճիդիքական և բարոյական յաղթանակը կը մնար հայութեան կողմը: Դաշնակցութեան 15 ամեայ աշխատանքներու լաւագոյն արդիւնքն էր 1905 ի կողմասան հայութեան յաղթանակը, որ կը պատրաստէր այն մեծ հիմքերը, որոնց վրա, տասներեք տարի յետոյ, 1918ին կառուցեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը:

\* \* \*

Ռուսական յեղափոխութենէն (1905) և Թիւրքիոյ Սահմանադրութեան հռչակումէն (1908) յետոյ, հայութեան երկու հատուածները տարւեցան աւելի լայն հասարակական և ազգային-մշակութային գործերով: Մօտ տասնամեակ մը զուտ ազատագրական յեղափոխական շարժումը իր գործնական արտայայտութիւնները կը

կորսոցն էր: Ֆետայական շրջանը կը միակէր, և հասարակական աւելի լայն խաւեր կազմակերպութեան շուրջ կը հաւաքէին, նոր պայմաններու համապատասխան գործունէութիւն մը ունենալու համար:

Հայութիւնը այդ շրջանին օգտուեցաւ համեմատական խաղաղութենէն, բարոյապէս և նիւթապէս կազդուրեցան: Կազմակերպութիւնները ծաւալեցան և աւելի արմատացան: Հայկական վերածունդի խնդիրը աւելի ընդհանրացաւ: Ժողովրդի ստրկական մասշնութիւնը տեղի տուաւ ազատ քաղաքացու դիտակցութեան: Բայց խաղաղութեան այդ շրջանը կուսակցական պառակտումներու, վէճերու և անհամաձայնութիւններու տխուր շրջան մը եղաւ: Կիրք տիրապետեց ու հայկական անհամաձայնութիւնը անտանհետքէն իր թեւերը տարածեց: Դրական կողմէ յետ մօտեանք այդ երեւոյթին, պիտի բռնէք, որ հայ քաղաքական մտածողութիւնը վերադնահատական շրջան մը կը բոլորէր: Սաւակյն, վերազնահատական մտաւոր շարժումը տակաւին չյստակացած, դիրքերը չճշտած, սխալ ու կարծրացած միտքերը չլուսարանւած՝ պայթեցաւ համաշխարհային պատերազմը: Հասարակական և մտաւոր շարժումով տարած հայութեան երկու հատածները ինքզինքնին կը դռնէին զինուորական ծանր շարժման մը դիմաց: Անցած եօթ-ութ տարիները հարուստ չէին յեղափոխական զինուորական գործողութիւններով (բացի պարսկական յեղափոխութեան մասնակցութենէն):

Պատերազմի և ընդհանուր ապստամբութեան մասին զմտածող հայութիւնը հարկադրւած էր ճշտորոշել իր դիրքը պատերազմի և ապստամբելու: Խնդիրը շատ բարդ կը ներկայանար և հարկադրանքը հայ ժողովուրդի կամքէն անկախ՝ իր ճնշումը կը բանեցնէր: Խուսափին անհնար էր: Հայ ժողովուրդի ազատագրութեան խնդիրը և ազդի ֆիզիկական գոյութեան պահպանման հարցը, հասարար չափով ու միևնոյն ժամանակ, զլիսաւոր օրակարգի նիւթերն էին: Այդ խնդիրները մէկը միւսով պայմանաւորուած էին: Հայ ժողովուրդը, ո՛ր կողմէն ալ մօտեանք խնդրին, ստիպուած էր պատասխանել թէ՛ կուզէ՞ պատերազմիլ, կամ՝ կուզէ՞ ապստամբիլ, թէ՛ նեթարկելիլ, կրաւորական դիրք բռնել և բնաջնջելիլ: Վտանգի ծանրութիւնը անփոփոխ կը մնար հայկական հորիզոնի վրա: Հայութեան կը մնար դիմաւորել նազազոյն վտանգը:

Ռուսահայ հատուածը և Կովկաս ապստամանած տանկահայերը, պատմական այս վճռական վայրկեանին, անվարան նետուեցան պատերազմի բեմը, կամաւորական շարժումով, (որ կը ներկայացնէր հայ յեղափոխութեան կազմակերպւած բանակը, որպէս 25 տարւան փորձառութեան արդիւնքը), պատերազմի մէջ միտակցով այն դերազոյն շահը, որ պիտի ունենար հայկական ազատագրական գործը, որ կամ նազազոյն չափով, կամաւորական շարժումը պիտի օժանդակէր Տանկահայաստանի ինքնապաշտպանութեան, ժողովուրդի ֆիզիքական գոյութեան ի խնդիր: Հայոց առաջնակական պատմութիւնը ոչ միայն պիտի արդարացնէ այս շարժումը, այլ և իր ակաբոյն էջերը պիտի նւիրէ այդ շարժման բարոյական և ֆիզիքական օգուտները վերահանելու:

Տանկահայ հատուածը, փոթորակի այդ շրջանին, տատանուեցաւ և ճակատագրապաշտ սպասումի մը մատուցեցաւ: Դաշնակցութեան և հայութեան առջև դրւած էր ընդհանուր ապստամբութեան խնդիրը, որու մասին, սակայն, ոչ ոք կը խօսէր: Կը մտածէին բոլորն ալ, բայց ժխտական պատասխանը զուգահեռ կընթանար մտածումին: Լուսութիւնը բարիք մը նկատուեցաւ, իսկ խոհեմ սպասումը՝ առաքելութիւն:

Ճիշտ է, որ Հայաստանը պատերազմի թատերաբեմ դարձած էր ու թիւրք գորքը ողորդած էր ամբողջ երկիրը: Ճիշտ է նաև այն, որ բաւարար չափով զինւած չէր հայ ժողովուրդը (թէ և նախապահմանադրական շրջանին անհամեմատելիօրէն աւելի զինւած էր և կուէր յանդգնութիւն ունէր): Քաղաքական հեռանկարներն ալ մասամբ անորոշ էին: Բայց ամենէն ճիշտը այն էր, որ հայ ղեկավարներն ու հայ ժողովուրդը կը զգային թէ՛՝ այս անգամ աւելի սոսկալի կոտորած պիտի տեսնէին, և այդ սարսափին դէմ, փոխանակ ապստամբութեան մասին մտածելու, հեռաւոր ու չըհաշուած յոյսերով՝ ինքնախաբէութեան կը մղէին: Ընդհանուր ապստամբութեան խնդիրը ոչ մէկ ատեն այնքան հրամայական և հարկադրական եղած է, որքան այս անգամ կը ներկայանար: Քասնըհիշք տարւան յեղափոխական անցեալը բաւական փորձառութիւն տրւած էր Դաշնակցութեան, այդ ճշմարտամային օրերուն, մտիկ չընելու հակադաշնակցական բոլոր հոռուները, կշիռն ու պահպանողականը, և բացարձակ վարիչը հանդիսանալու զուրիւր կրօնցուցած հայ ժողովուրդին:

Դաշնակցութիւնը այդ քայլը չառաւ. բռնեց համերաշխութեան ճամբան, խոհեմ դարձաւ բոլոր խոհեմներուն հետ: Իր ամեն մէկ քայլը նետեց հայութեան բոլոր հոսանքներու քայլերուն հետ: Զոհեց ինքզինքը, որպէսզի հայ ժողովուրդը փրկւի: Ականջ կախեց հայ պահպանողականութեան և հակադաշնակցական ամբողջ մթնոլորտի ձայնին, և փոխանակ ամբողջ ազգը իր ետէն քաշելու, ինքը ազդի հաւաքականութեան ետէն քաշեց: Ազդին ամբողջ հաւաքականութիւնը խաբեցաւ ու տրորեցաւ: Դաշնակցութիւնն ալ այդ հաւաքականութեան հետ խաբեցաւ, զլիսաուեցաւ և ընդհանուր ապստամբութեան դրօշը չպարզեց: Այս ծանրակշիռ արարքին համար, Հ. Յ. Դաշնակցութիւնը ո՛չ մէկ քննադատութիւն լսեց մեր բոլոր տեսակի հակառակորդներէն (միակ պարագայ, որ կրնանք արձանագրել մեր քառասուն տարւան պատմութեան մէջ, ուր Դաշնակցութիւնը չի խաչեր իր ընթացքին համար, որովհետև, հայութիւնը այս անգամ լիովին զգաց, որ ինքը յանցաւոր է Դաշնակցութեան առջև), սակայն, պատմութիւնը խստորէն պիտի քննադատէ մեզ մեր անմիճոռական կեցածքին համար: Պատմութիւնը Դաշնակցութեանէն դուրս եղած հոսանքներն ու տարիքը պիտի նկատէ անպատասխանատու ամբոխ մը և դատապարտութեան դատաճիւղը չպիտի կրնայ այդ իրական յանաւորին վրա ծանրաբեռնել այլ, պիտի փնտէր ու վստէ իրական ոյժը, կազմակերպւած ու պատասխանատու (Դաշնակցութիւնը), և իր խօսքն ուղղէ անոր:

Հ. Յ. Դաշնակցութեան Երկրի հատուածը, հայկա-

կան քանի մը նահանգներուն մէջ, յեղափոխութեան անցեալ ականդներուն անսալով՝ փարեցաւ ինքնապաշտպանութեան, ապակեզրոնցման ձևով: Ինքնապաշտպանութեան և զոյսամարտի փառաւոր ցնցումներ տեղի ունեցան այդ դատան օրերուն: Այդ խնդիրները չենք զննել: Միայն այսքանն ըսենք, որ այդ բոլոր բնկումներն ու անհասարակ կոչւնները ինքնապաշտպանութեան փայլուն ու փրկարար հերոսամարտեր էին, որոնք կուգային մասամբ արդարացնելու հայ յեղափոխութիւնն ու Դաշնակցութիւնը, որ մասնակի ապրուստամբութիւններուն մէջ՝ կուտար իր քանակիւ տարւան յեղափոխական տուրքը:

Այս կարևոր և ճակատագրական շրջանի դէպքերու պատճառաբանութեան և քննութեան մէջ չեմ մտնել լայնօրէն, որովհետև այդ խնդիրները հանգամանօրէն քննած եմ «Ապրիլեան եղեռնը քննական ակնոցով» աշխատութեան մէջ, որ լոյս տեսաւ «Երօջակ»-ի այս տարւան համարներով:

Ապրիլեան եղեռնէն յետոյ, դատան իրականութիւնը շատ յաճախ ներկայացաւ հայ ժողովուրդին: Իայց ստիչ յետոյ՝ հայութեան և Դաշնակցութեան առջև ապտամբութեան և յեղափոխութեան խնդիրները սեղանի վրայ չեկան: Իրականութիւնը հիմնապէս փոխւած էր: Հայութիւնն ու Թրքութիւնը վերջնականապէս իրարմէ բաժնուած՝ իրարու դէմ ճակատ յարադարած էին: Անկէ յետոյ, կեանքի և մահուան պատերազմ մըն էր, որ տեղի կունենար այս երկու ազգերու միջև: Ու Հ. Յ. Դաշնակցութիւնը գիտցաւ ամփոփել իր ուժերը, կեանքի կոչել անցեալ ամբողջ փորձառութիւնը, և ղեկավարել հայ ժողովուրդը 1916—1920-ի պատմական մեծ փոթորիկներու ընթացքին և որպէս երեսուն տարւան ազատագրական արեւնալի կուռնեցուն վերջնական արդիւնքը, դժնդակ պայմաններու մէջ, հիմնեց Հայաստանի անկախ Հանրապետութիւնը: Աստիք Դաշնակցութեան պատմութեան ամենէն փայլուն էջերը կը կազմեն, որոնք այս յօդուածի զննութեան սահմանին մէջ չեն մտնել:

Ազդ ու պետութիւն դառնալէ յետոյ, հայ ժողովուրդը դժբախտութիւնն ունեցաւ ենթարկելու Թրքական և ռուսական միացեալ հարւածներուն՝ և ընկճեցաւ անհասարակ կուռնի մէջ: Անկախութեան կորուստէն զատ, հայ ժողովուրդը կրեց բոլլեքիկեան բռնակալութեան ծանր լուծը: Երեք ամսան տիրապետութիւնը ժողովուրդի համբերութեան բաժակը լեցուց, ու Հ. Յ. Դաշնակցութիւնը, ամբողջ հայ ժողովուրդին հետ, բարձրացուց համաժողովրդական ապրուստամբութեան դրօշը՝ ընդդէմ բոլլեքիկեան իշխանութեան: Հարւածը եղաւ շրջեցիղ, ու Հայաստանը 24 ժամուան ընթացքին մաքրեցաւ բռնակալներէն: Հայ ազատագրական շարժման ամենէն վերջին, բայց ամենէն ժողովրդական մեծ ապստամբութիւնն է Փետրուար 18-ի շարժումը, որ կրցաւ վերականգնել Հայաստանի անկախութիւնը և վերջնականօրէն ճշտել իր դերը Թուրքաստանի և Թիւրքիոյ հանդէպ: Հայ ժողովուրդը երեսուն տարւան յեղափոխութեանէն յետոյ, արդէն հա-

տուեցած էր, զինւած էր և անկախութեան գաղափարին փարած հոգեկն: Այս մեծ ապստամբութեան պատճառներու և հետևանքներու մասին զբաժ եմ «Երօջակ»-ի 1926-ի № 3-ի մէջ, որով, կրկնութիւններէ խուսափելու համար աւելի ընդարձակ քննութեան նիւթ չեմ դարձնել զայն:

\* \* \*

Այս ընդհանուր և համառօտ ակնարկէն պարզ կերևի, որ հայ ազատագրական շարժումը մեծ ու վճռական ապստամբութիւն մը չկրցաւ բարձրացնել Տաճկահայաստանի մէջ: Հայ յեղափոխութեան այս տկարութեան գլխաւոր պատճառը գէշքի և նիւթական միջոցներու բացակայութեամբ պէտք է բացատրել: պակասներ, որոնք Հ. Յ. Դաշնակցութեան վճռական կամքը կը ջլատէին:

Ու երբ հայ հասարակական հասանքները պատմութեան առջև դատաստանի կը կոչուին, մենք կը տեսնենք հայ ազատագրական շարժման բոլոր տեսակի հակառակորդները թշնամի գինական յեղափոխութեան, ջատագով՝ հլու հնազանդութեան և ջլատող՝ կազմակերպւած ուժին: Արդիւնքը, պատմութիւնը բազմաթիւ անգամներ չոր կերպով արձանագրեց.— ով որ գէշք ունէր և գիտցաւ դիմել ինքնապաշտպանութեան, փրկեցաւ իսկ անոնք, որ անմուռն հնազանդեցան դահլճին, կոտորուեցան անգթօրէն:

Դաշնակցութեան հակառակորդները, քառասուն տարի անընդհատ, քննեցին ու քննադատեցին հայ ազատագրական շարժումը, միայն մէկ եզրակացութեան համար,— Թելադրելու հայ ժողովուրդին՝ որ հրատարի յեղափոխութեան, ու ձեռքերը ծայլած՝ յանձնել ճակատագրին:

Իսկ Դաշնակցութիւնը գերազոյն ճիշդ թափեց հայ բազուկը կազմակերպելու՝ զեռնատարած ժողովուրդի մը Ֆիդիքական գոյութիւնը փրկելու համար: Երբ այսօր քննութեան կառնենք քառասուն տարւան անցեալը, կասկածէ՛ զուրս կը գտնենք այն պատմական ճշմարտութիւնը թէ՛ մնացորդ հայութեան գոյութիւնը և անոր քաղաքական թէկուզ քիչ յաջողութիւնները կը պարտինք անցեալ յեղափոխական աննկուն ճիշդութեան:

Դաշնակցութեան անցեալ գործունէութիւնը զնահատելով և վերադնահատելով, մեր նպատակն է գիտնալ թէ՛ ի՞նչ աւելին կրնայինք ընել, և պարտաւոր էինք ընել:

Այժմ, երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը կանգնած է իր քառասնամեակի սեմին, արդէն, ոչ միայն հարուստ է անցեալ փորձառութիւններով, այլ լիովին վերադնահատելով հայկական ազատագրական շարժման բարդ ծալքերը, հաստատուն ու վճռական քայլեր պիտի առնէ՝ յեղափոխութեան արժամ ճանապարհէն քալելու՝ անայտնաբերելու ու առաջը ընկրկելու: Ու այս անգամ պիտի գիտնայ ունկնդրել միայն ու միայն պատմութեան թելադրանքներուն:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

# Ք Ա Ռ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Կ

Հ. Յ. Դաշնակցութիւնը մի քանիսն երևոյթ է: Եւ ինքնաբերաբար է. հայոց պատմութեան օրինական ծնունդն է նա: Եւ ձեւակերպած է հայ ժողովրդի քաղաքական պահանջները և հետամուտ է նրանց իրացման: Քառասուն տարի նա մի որոշ հունով վարած է հայութեան քաղաքական մտածումը և գործնական ճիգը:

Մինչև 1918 թ. Մայիս 28 նա կարծում էր, որ հայ ժողովուրդը թիւրքի և ռուսի հետ կարող է նոյն քաղաքական յարկի տակ ապրել, ուստի պահանջում էր հայրենակ ինքնավար շրջաններ՝ դաշնակցորէն կապած ռուս և թիւրք պետականութեան: Հիմա նա կարծում է, որ հայոց ազգը իր սեփական քաղաքական յարկը պէտք է ունենայ՝ անկախ ռուսից և թիւրքից: Նրա կարծիքով հայ ժողովուրդը մի յարանուն համայնք է, ինչպէս կարծում ու կարծել են ամենուր. բոլոր յարանունութեանց հետևորդ հայերին նա համարում է միևնոյն ազգի գաւակ և աշխատում է բոլորին մկրտել մի նոր — քաղաքական — ազգանքի մէջ, յանուն Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստանի: Ամէն ոք, որ նայում է Հոռո, Ամերիկա կամ Եմբիսածին բայց չի նայում Մասիին՝ դրանով իսկ ժխտում է հայութեան քաղաքականութեան ապագան և յամառում է տիրացու մնալ: Եւ ընդհակառակն՝ ամէն ոք, որ ասում է «Մասի» և ձգտում է տիրանալ նրան, մնացածը թողնելով անհատական խղճին և իմացութեան՝ դրանով իսկ բարեկամ է Հ. Յ. Դաշնակցութեան և իր հետապնդած նպատակին:

Հայը պէտք է իր քաղաքական հայրենիքն ունենայ իր պատմական հողերի վրա — ահաւասիկ Դաշնակցութեան քաղաքական դաւանանքը, նպատակը, կարգախօսը և պայքարի հիմունքը: Ով հակառակ է այս մտածումին ու ձգտումին — լինի հայ թէ օտար — դրանով իսկ հակառակ է հայութեան և թշնամի Դաշնակցութեան:

Քառասուն տարի է արդէն, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը — յամառ և անձնէր — պայքարում է այս քաղաքաբարի համար, նա դեռ չէ հասած իր նպատակին: Իայց հիմա աւելի քան երբ և ինչ հայն դրում է ազատ և անկախ քաղաքական գոյութեան արժէքը: Այս գիտակցութիւնը դնալով պայծառանում է և շատ շատերի հոգում դարձած է խորին համոզում: Հայաստանի աւերածութեան և հայ ժողովրդի կոտորակման ծանր գնով ձեռք բերեց այս համոզումը: Դարաւոր ստրկութեան դիրտը շատ էր թանձր. օրհասական աւերներով և արեան գետերով միայն մաքրեցաւ այդ դիրտը: Եւ դեռ շատ ժանգ է նստած ազգային քաղաքական գիտակցութեան ոսկու վրա: Իեռ շատերն են խարխափում ստրկամտութեան ճախճախտութի մէջ:

«Անցաւ քառասուն տարին և մենք նստած ենք մոխիրներէ վրա», քրթմնջում է անարին և աւաղում թուլամորթը: Մինչդեռ պէտք էր երկաթէ վճիռներ արձակել և պողպատէ գործեր հանձնարել: Յիշենք ան-

ցեալը, բայց մանաւանդ յիշենք նորեկ սերունդին: Յիշենք ու յիշենք, բայց չմոռնաք, որ անցածն անցած է. նա պատմութիւն է արդէն: Պատմութիւնը կարող է խորհուրդ տալ, բայց ստեղծագործել չի կարող: Ներկան է, որ պէտք է յղանայ և իրագործէ՝ պատմական փորձառութեան կոթնած: Եւ ներկան պէտք է արդիւնաւորել՝ ապագային նայելով: Քաղաքական ազատ և անկախ կեանքի մեր պահանջն օրինաւոր է մարդկօրէն և անհրաժեշտ՝ ազգօրէն: Մենք չենք կարող խուսափել նրա հարկադրանքից, քանի դեռ ազգովին մահւան վճիռ չենք տւած մեզ համար: Ընկրկում չունի և ունենում չի կարող հայութիւնը. կարող են փոխել գործի ուղիները և գործող անձերը, բայց գործն ու նպատակը պէտք է յարատեւն մինչև իրացում: Ուստի այս պատմական քառասունամեակին ոչ այնքան պէտք է նայել հերոսական անցեալին, որքան պէտք է մի նոր «հերոսական անցեալ» ստեղծել:

Պայծառացեալ ազգի քաղաքական գիտակցութիւնը, մարցել նոր սերունդի կամքն ու սիրտը անվհեր գործերի համար, կազմակերպել հայութեան կամքը՝ քաղաքական հայրենիքին տիրանալու — սրանք են այսօրւան հիմնական խնդիրները: Ե՛քե՛ք է Հ. Յ. Դաշնակցութեան անցեալը, նա է, որ պարզում է հայոց նորագոյն պատմութեան երեսը, բայց անփառունակ ներկան պէտք է լեցնել հերոսական գործերով՝ շեղադոյն ճանցեալը կտակելու համար յետնորդ սերունդին:

Հինն ու նորը միասնաբար և համերայն՝ պէտք է շարունակեն Հին գործը՝ Հին նպատակին հասնելու համար, որ միշտ նոր է և նոր կը մնայ՝ քանի դեռ չէ իրացած: Տարբեր ուղիներով, տարբեր նահատակներով, ու հերոսներով, բայց միևնոյն ուղղութեամբ և նոյն հիմնական նպատակին ձգտելով — Միացեալ և Անկախ Հայաստան:

Քանի դեռ ապրում է հայ ժողովուրդը և քանի դեռ չունի քաղաքական հայրենիք, անմահ է Դաշնակցութիւնն և իր գործը: Մեր ազգային գոյութեան պայմաններն այնպէս են դասաւորւած, որ բովանդակ ազգն ստիպւած է յեղափոխական վճիռ արձակել — Մահ կամ Ազատութիւն. որովհետեւ եթէ ազատութեան չլահանենք՝ անխուսափօրէն մեռնելու ենք իբր ազգ: Հայոց պատմութիւնը պարտադրում է պայքարել. պէտք է արիւարար դիրքեր գրաւել: Չկայ ուրիշ ճանապարհ իբր մարդ ապրելու և իբր ազգ ստեղծագործելու: Այս կացութիւնը պայծառօրէն գիտակցած են Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրները և մարտիկները և քառասուն տարի պայքարած են դիրքերի վրա: Նոր սերունդի խուններամ մուտքը Դաշնակցութեան մէջ, և հարաւոր հայերի աջորդ, բանտն ու գնդակամազը մեր հայրենիքում՝ վկայում են թէ հայ ժողովուրդը շարունակում է Դաշնակցութեան դաւանանքն ունենալ և իր պատմական ճակատադրին հնազանդել: Սա մի երաշխիք է, որ քառասունամեայ շեղ անցեալին յաջորդելու է նոյնքան փառահեղ մի նոր ապագայ:

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

# Ք Ա Ռ Ա Ս ՈՒ Ն Տ Ա Ր Ի

Քառասուն տարի կանգուն է Դաշնակցութիւնը իր դիրքերի վրա, աննկուն և աննահանջ:

Քառասուն տարի առաջ հայ Հասարակական և Հանրային մտքը կապուէր թէև բեղուն և փոթորկալի, բայց չփոթ չըջան մը. հայրենիքի ազատութեան զաղափարը գրաւել էր բոլորի մտքերը, բայց պարզ չէր ո՛չ ուղին և ոչ եղանակը գործունէութեան, որ պիտի բերէր այդ գաղափարի իրականացման:

Երիտասարդութիւնը տենդորէն կաշխատէր, կը կազմէին զանազան խմբակցութիւններ, որոնք կը ձեռնարկէին տարբեր գործողութիւնների, առանց ընդհանուր ծրագրի, առանց ընդհանուր ղեկավարութեան:

Ի մի հաւաքելու, մի ծրագրի, մէկ ուղի մշակելու կարիքը դարձել էր հրամայական: Բոլորը կը զգային, որ մի ընդհանուր կազմակերպութեան ստեղծումը անխուսափելի է: Եւ ահա այսպէս ստեղծեցաւ «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն»ը, որ ի մի ձուլեց գոյութիւն ունեցող և ցաքուցրի եղած ու գործող խմբակցութիւնները:

Բոլորին միացրեց մի գաղափար — Հայրենիքի ազատութիւնը ամէն դնով և ամէն միջոցով, — և մի գործելակերպ՝ ամէն ինչ ժողովրդի համար և ժողովրդի միջոցով: Հիմը դրեցաւ հայ ազատագրական յեղափոխական և ժողովրդական ընդհանուր կազմակերպութեան: Նրան միացան բոլոր անկեղծ և ժողովրդասէր տարրերը:

« Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն »-ը քալ առ քալ զարգացաւ, ուռնացաւ, ոսկր ու արիւն առաւ. և դարձաւ հայ Հասարակական օրգանի մի ողնաշարը: Այլևս նա զանազան տարբեր խմբերի միութիւն մը չէր, այլ միաձուլ մի մարմին, մէկ ընդհանուր աշխարհայեացքով, մէկ ընդհանուր գործելակերպով յեղափոխական ժողովրդական կուռ կազմակերպութիւն, որ առաւ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» անունը:

Հայ ժողովուրդը նրա մէջ կենտրոնացրեց իր բոլոր նշքները, իր բոլոր երազները, իր բոլոր ուժերը, նրան տւեց իր անվերապահ վստահութիւնը և հաւաքեց նրա մէջ իր բովանդակ ընդունակութիւնները՝ ստեղծագործական, յեղափոխական, մտային, հոգեկան բոլոր ասպարէզների մէջ: Եւ սկսեցաւ երկար շարանը այն մեծ գործերի հայ ազատագրական շարժման ընթացքին, որոնց մէջ առաջադասական հայ ժողովրդի

ամբողջ կեանքը վերջին քառասուն տարեայ ժամանակաշրջանում: Հայ ժողովրդի բոլոր կենսունակ ուժերը, լաւագոյն երիտասարդութիւնը, գաղափարական և յեղափոխական ամբողջ շունչը, որով միայն մի ժողովուրդը լուկ անհատների միութիւնից կը դառնայ ազգ և ինքնադիտակից մի հաւաքական անձնաորութիւն — այս բոլորը կենտրոնացան Դաշնակցութեան մէջ: Հայ ժողովուրդը ապրեցաւ Դաշնակցութիւնով, Դաշնակցութիւնը սնւեցաւ և գործեց հայ ժողովրդով:

Այն բոլորը, որով հայ ժողովուրդը կրնայ պարծենալ վերջին կէս դարի մէջ, որով կապրի և կը զգայ իրեն մարդկութեան մի զիտակից ինքնամփոփ միասոր, արել է հայ ժողովուրդը Դաշնակցութեան միջոցով: Այն բոլորը, ինչով Դաշնակցութիւնը կը պարծենայ, ինչով նա կապրի և մինչև այժմ էլ աննկուն և աննահանջ կը գործէ, արել է նա հայ ժողովրդի համար և հայ ժողովրդի միջոցաւ:

Այն դրօշակը, որ բարձրացրին Քրիստափորը, Սիմէոնը և Ռոստոմը, և որի շունչի տակ կուսեցին վերջին երեք սերնդի հայ հերոսները, սկսած փրջրիկ իւրմբական պարտիզանական և ինքնապաշտպանողական կռիւններից մինչև խոշոր ճակատամարտները — Ղաւրաքիլիսի և Բաշարաբանի, — այդ դրօշակը մինչև հիմա կը ծածանի նրանց յաջորդների ձեռքերին մէջ, մնացած է անբիծ և նւիրական հայ գաղափարական երիտասարդութեան համար և նրա վրա դրած գաղափարը — Անկախ, Ազատ և Միացեալ Հայաստանի գաղափարը — դեռ կը վառի լաւագոյն հոգիներու մէջ

Ու քանի դեռ իրականացած չէ ամբողջութեամբ Անկախ, Ազատ և Միացեալ Հայաստանի գաղափարը, քանի դեռ հայ ժողովրդի հոգին ստրկացած և մեռած չէ, քանի դեռ հայ երիտասարդութիւնը ընդունակ է սպարելու իր ժողովրդի ազատութեան գաղափարով, պիտի ապրի և Դաշնակցութիւնը:

Դաշնակցութեան ներկայ սերունդը, որ անսասն կը պահէ Քրիստափորի ձեռքէն ընկած դրօշակը, հաւատ և վստահութիւն ունի, որ գաղափարական երիտասարդութեան հետեւալ սերունդը պատրաստ է իր ձեռքէն առնելու այն դրօշակը և այնպէս անբիծ և անփոփոխ հասցնելու մինչև վերջնական յաղթանակը — Անկախ, Ազատ և Միացեալ Հայաստանի Հաստատումը:

ՀԱՄ . ՕՉԱՆՁԱՆԵԱՆ

## ՍԱԹԵՆԻԿ ԵՐԿՈՒԹԵԱՆ

Ուրբաթ գիշեր, դեկտեմբեր 12-ին, երկարատե ու ծանր հիւանդութիւնից յետոյ, Պարիզում վախճանեց ընկերուհի Սաթեմիկ Արշալուսեանը, որ մեր կուսակցութեան մէջ, սկզբնական շրջանից ի վեր, անմուկ ու երախտաւոր մարտնչող է եղել:

Հանգուցեալի նկարը եւ կենսագրականը կը գտնելի «Իրօշակ»-ի յաջորդ քուռ:

# Ք Ր Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Քրիստափորի Մաքերից . . . . .	257
Հ. Յ. Դ. Մարմիններին և ընկերներին ( Հ. Յ. Դ. Բիւրօ ) . . . . .	258
« Դրօշակ »-ն իր դիրքի վրա ( «Դրօշակ» ) . . . . .	260
Մեր Քառասնամեակը ( Հ. Յ. Դ. Լեոնավայրի Կեդր. Կոմիտէ ) . . . . .	261
Պիտի ապրի Դաշնակցութիւնը ( Հ. Յ. Դ. Ատրպատականի Կեդր. Կոմիտէ ) . . . . .	261
Միշտ նոյն նպատակին համար, միշտ նոյն կորովով ( Հ. Յ. Դ. Եւրոպայի Կեդր. Կոմիտէ ) . . . . .	261
Հ. Յ. Դ. Քառասնամեակը ( Հ. Յ. Դ. Կարպատի Մեկուսի Կոմիտէ ) . . . . .	262
Յարգանք գաղափարիդ, յարգանք հերոսներուդ ( Հ. Յ. Դ. Ովաստի Մեկուսի Կոմիտէ ) . . . . .	264
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Առաջին Մտնիֆեստը . . . . .	264
Կռիւն սկսած է . . . . .	265
1892թ. № 3-ի խմբագրականը (Քրիստափոր և Զաւարեան) . . . . .	268
Վերջին դէպքերի առթիւ (Գ. Ուստի) . . . . .	273
Բեֆորմները (Յովնան Դաւթեան) . . . . .	275
Հրայրի յայտարարութիւնը . . . . .	277
Վնասակար տարրեր (Ռոստոմ) . . . . .	280
Նամակ Վանից (Վազգէն) . . . . .	282
Բարգէն Սիւնի (Սարգիս Մինասեան) . . . . .	284
Քալէ՛ (Վասմեան) . . . . .	288
1898 — 1899 (Քրիստափոր) . . . . .	291
Կախաղանից առաջ (Թաթուլ) . . . . .	294
Դէպի Երկի՛ր (Ակնունի) . . . . .	298
Դաշնակցութեան Արշալոյսին (Մ. Վարանդեան) . . . . .	301
Մեր քառասնամեայ պայքարի էութիւնը (Ռ. Սեւեան) . . . . .	303
Քառասնամեայ տիտանը (Ա. Զամարեան) . . . . .	307
Դաշնակցութեան փառքն ու ողբերգութիւնը (Նժդեհ) . . . . .	310
Դաշնակցութեան էութիւնը (Ռէն) . . . . .	312
Քառասնամեակի առթիւ (Օննիկ Մխիթարեան) . . . . .	313
Հներից մէկը հին օրերի մասին (Յովսէփ Մովսէսեան) . . . . .	315
Հ. Յ. Դաշնակցութեան ծագումը Բուլգարիայում (Վ. Մազմանեան) . . . . .	316
Սամովարի խորհրդաւոր վաճառականը (Կարէն) . . . . .	320
Հ. Յ. Դաշնակցութեան «հարիսխ» գործարանը (Սամսոն) . . . . .	321
Եփրեմի Արշիվից (QUIDAM) . . . . .	324
Ընդհանուր ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ (Կ. Սասունի) . . . . .	327
Քառասնամեակ (Ն. Աղբալեան) . . . . .	334
Քառասուն տարի (Հ. Օհանջանեան) . . . . .	335



« Դ Ր Օ Շ Ա Կ » Ի Հ Ա Ս Ց Է Ն .

M-lle Agobian, 5, rue des Gobelins. PARIS (XIII).